

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ
ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆՏՐԱՆԻ

2013-2014

ՀԱՏՈՐ II

Երևան
Փրինթինգո
2015

ՀՏԴ 347.992
ԳՄԴ 67.410
Հ 247

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի
Քաղաքացիական և վարչական գործերով միջանկյալ դատական
ակտերի վերաբերյալ որոշումների ընտրանի (2013-2014). -Եր.:
Փրինթինֆո, 2015. Հատոր II. –192 էջ:

Կազմող՝ **Աշխեն Ղարսլյան**, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի
խորհրդական, իրավագիտության թեկնածու
Անի Համբարձումյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական
փորձաքննությունների ծառայության կրտսեր մասնագետ

ՀՏԴ 347.992
ԳՄԴ 67.410

ISBN 978-9939-831-86-2

© Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան, 2015
© Աշխեն Ղարսլյան (բովանդակության համար), 2015
© Անի Համբարձումյան (բովանդակության համար), 2015



german
cooperation

DEUTSCHE ZUSAMMENARBEIT

giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH

«Չարավային Կովկասում իրավական և դատական
բարեփոխումների համար խորհրդատվություն»
ծրագիր

Programm "Rechts- und Justizreformberatung im Südkaukasus"

Սույն ընտրանին հրատարակվել է Գերմանիայի միջազգային
համագործակցության ընկերության (GIZ)
օժանդակությամբ

Սույն ընտրանում արտահայտված տեսակետները պարտադիր չէ,
որ արտացոլեն ԳԴՅ կառավարության տեսակետները

ՆԱԽԱԲԱՆ

Արդի հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները նոր հրամայական պահանջներ են ներկայացնում նաև ՀՀ բարձրագույն դատական ատյանի գործունեությանը: Դրանից, թերևս, կարևորագույններից է ՀՀ վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) գործունեության հասանելիության և թափանցիկության ապահովումը, ինչը վերջին տարիներին հիմնականում իրականացվում է դատական այս ատյանի որոշումների ընտրանիների լույսընծայմամբ: Այս ճանապարհին, անշուշտ, առաջընթաց քայլ էր Վճռաբեկ դատարանի՝ միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումների ժողովածուի հրատարակումը, որի առաջին հատորն իրավաբանական հանրության գնահատականին հանձնվեց 2013 թվականին: Շարունակելով սկիզբ դրված ձևաչափը՝ այսօր արդեն երկրորդ անգամ Ձեր դատին ենք հանձնում ստորադաս դատարանների միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումների հերթական ժողովածուն:

Իսկ ի՞նչով է առանձնանում այս ժողովածուն:

Այն ընդգրկում է 2013 թվականից 2014 թվականը ներառող ժամանակահատվածում Վճռաբեկ դատարանի կայացրած այն որոշումների ընտրանին, որոնք ոչ միայն ուղղորդող նշանակություն են ունեցել դատական պրակտիկայի համար, այլև որոշ դեպքերում դատավարական նոր կանոնակարգումների մշակման և ընդունման հիմք են հանդիսացել՝ ծառայելով օրենսդրական բացերի և հակասությունների հաղթահարման նպատակին:

Այսպես, Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները, մի շարք քաղաքացիական գործերով կայացված որոշումներում դարձյալ անդրադարձել է պետական տուրքի գծով արտոնությունների սահմանման հարցին, այդ թվում՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու և տարաժամկետելու վերաբերյալ դատական պրակտիկայում առկա խնդիրներին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, արձանագրելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում առկա օրենսդրական բացը, որոշումներից մեկում դիրքորոշում է հայտնել այն մասին, որ պետական տուրքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ միջնորդությունը դատարանները պետք է քննարկեն և այդ հարցով որոշում կայացնեն որպես պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն:

Մեկ այլ որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը, կարևորելով կասեցման ինստիտուտի կայացման անհրաժեշտությունը, անդրադարձել է արդեն իսկ վերաքննության փուլում գործին մասնակցող անձի մահվան հիմքով գործի վարույթի կասեցման առանձնահատկություններին և ընդգծել է, որ գործին մասնակցող շահագրգիռ անձի կողմից առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը՝ հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում, վերաքննիչ բողոք չբերվելու պայմաններում վերջինս ըստ էության համաձայնվում է իր մասով իր իրավունքների կամ պարտականությունների վերաբերյալ կայացված նշված ակտի հետ, ուստի նրա փոխարեն վերաքննիչ դատարանն իրավասու չէ իրականացնել դատավարական գործողություններ, այդ թվում՝ վերաքննիչ վարույթում այդ անձի մահով պայմանավորված նրա մասով կասեցնել գործի վարույթը, եթե, իհարկե, դա չի խոչընդոտում գործին մասնակցող մյուս անձանց մասով գործի քննության հետագա շարունակմանը:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հանգամանալից ուսումնասիրության առարկա է դարձրել անգործունակ ճանաչված անձի կողմից իր նկատմամբ կայացված դատական ակտի բողոքարկման իրավունքի առանձնահատկությունները, մասնավորապես, նշելով, որ յուրաքանչյուր դեպքում անձին անգործունակ ճանաչելու դիմում քննելիս դատարանը պարտավոր է քաղաքացուն ծանուցել դատական նիստի ժամանակի և վայրի մասին՝ վերջինիս հնարավորություն տալով անձամբ ներկա գտնվելու, անհնարինության դեպքում՝ իր շահերը դատարանում ներկայացնել իր կողմից ընտրված փաստաբանի միջոցով, ինչպես նաև պարտավոր է քաղաքացուն ծանուցել անգործունակ ճանաչելու վերաբերյալ վճռի մասին՝ հնարավորություն տալով օրենքով սահմանված ժամկետում բողոքարկելու տվյալ վճիռը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձի ներկայությունը դատական նիստին կօժանդակի դատարանին պարզելու նաև, թե արդյո՞ք դիմում տված ընտանիքի անդամները վարվել են անբարեխիղճ՝ ակնհայտորեն նպատակ ունենալով քաղաքացուն անհիմն գրկել գործունակությունից:

Հարկ է նկատել նաև, որ վերը նշված խնդրի կարևորությամբ պայմանավորված այդ հարցին հետազայում անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա 2015 թվականի ապրիլի 7-ին կայացված ՄԴՈ-1197 որոշմամբ, որի շրջանակում ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվել քաղաքացիադատավարական այն դրույթը, որով գործունակ ճանաչվող անձին հնարավորություն չի ընձեռվում անձամբ իրացնել լավելու իր իրավունքը և հանդես գալ որպես դատավարության մասնակից:

2013-2014 թվականներն առանձնացել են նաև վարչական գործերով միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումներով: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վարչադատավարական օրենսդրությամբ նախատեսված ժամկետները հաշվարկելու խնդրին, դրանց բաց թողնելու հիմքերին և բացթողումը հարգելի համարելու դեպքերին: Այսպես, Վճռաբեկ դատարանը վարչադատավարական օրենսդրությամբ նախատեսված ժամկետները բաց թողնելու հիմքերը պայմանականորեն բաժանել է երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ, և, միաժամանակ, նշել է, որ բոլոր դեպքերում, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, բաց թողնված ժամկետը հարգելի համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ՝ դատարան դիմելու, դատական պրոցեսին մասնակցելու, պահանջը և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով նշված ժամկետը չի բավականացրել համապատասխան դատավարական գործողությունները կատարելու համար:

Որոշումներից մեկում անդրադառնալով վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով հայցային վարույթի անցնելու դեպքում պետական տուրքի վճարման առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով դիմողներն ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից, իսկ անցումը հայցային վարույթի կատարվում է վճարման կարգադրության վարույթում հակընդդեմ հայց ներկայացնելու հիմքով, գտել է, որ հայցային վարույթը վճարման կարգադրության վարույթի շարունակությունն է, հետևաբար, այդ դեպքում նույնպես արդեն իսկ հայցվորի կարգավիճակ ստացած անձը չի կարող կրել պետական տուրքի վճարման պարտականություն:

Հիշատակման է արժանի նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձ է կատարել հանրային իրավական դրամական պահանջ պարունակող վարչա-

կան ակտի վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերով պարտապանի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վարչադատավարական ինստիտուտի և դրա կիրառման առանձնահատկություններին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասով օրենսդիրը սահմանել է հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերով պարտապանի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու առանձնահատուկ վարչադատավարական ինստիտուտ: Ընդ որում, ստորադաս դատարանների կողմից քննարկվող վարչադատավարական ինստիտուտի պատշաճ կիրառման համար կարևոր է այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերում վարչական մարմինը հանդես է գալիս պատասխանողի դերում: Այլ կերպ ասած՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումների շրջանակներում պարտապանի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունքն օրենսդիրը վերապահել է հենց գործով պատասխանողին, իսկ պարտապանը տվյալ դեպքում հանդես է գալիս գործով հայցվորի դերում:

Վարչական դատավարության կարգով կայացված մեկ այլ որոշման շրջանակներում էլ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել դատարանի կողմից մահացած անձին որպես դատավարության մասնակից, այդ թվում՝ երրորդ անձ ներգրավելու և վերջինիս մահվան հիմքով գործի վարույթը կասեցնելու իրավաչափության հարցի վերաբերյալ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ֆիզիկական անձինք կարող են մասնակցել վարչական դատավարությանը, այսինքն՝ հանդես գալ հայցվորի, պատասխանողի կամ երրորդ անձի դերում իրենց ծննդյան պահից մինչև մահը: Հետևաբար, անձի մահվան հիմքով գործի վարույթը կասեցնելն իրավաչափ է այն պարագայում, երբ ֆիզիկական անձը մինչև իր մահը հանդիսացել է դատավարության մասնակից: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը չունի հնարավորություն կասեցնել գործի վարույթը մահանալու պահի դրությամբ դատավարության մասնակից չհանդիսացող ֆիզիկական անձի մահվան հիմքով: Դատարանը, գործով երրորդ անձ ներգրավելու որոշում կայացնելով, անձի վրա չի կարող դնել դատավարության մասնակից դառնալու պարտականություն, իսկ վերջինս էլ չի կարող ձեռք բերել դատավարության մասնակցի իրավունքներ, քանի որ մահվան փաստով վերացել են անձի այդ ունակությունները (իրավունակությունը):

Ուշագրավ է նաև դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու համար անհրաժեշտ պայման է հանդիսանում դատարանի կողմից կիրառված հոդվածի կամ հոդվածի դրույթի հակասահմանադրական ճանաչումը կամ սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող՝ այլ մեկնաբանությամբ կիրառումը: Հետևաբար, եթե դատարանը չի կիրառել այն դրույթը, որը ՀՀ սահմանադրական դատարանը ճանաչել է հակասահմանադրական կամ կիրառված դրույթի վերաբերյալ դատարանի մեկնաբանությունները և այդ դրույթի կիրառումը դրա սահմանադրաիրավական բովանդակության համատեքստում է, ապա դատական ակտը ենթակա չէ վերանայման նոր հանգամանքի հիմքով:

Իհարկե, վերը թվարկված որոշումներն ամբողջը չեն և առկա են նաև բազմաթիվ այլ որոշումներ, որոնք ուղղորդող նշանակություն են ունեցել և ունենալու դատական

պրակտիկայի ձևավորման համար: Դրանք առավել ամփոփ ձևով ներկայացված են սույն ընտրանում:

Միջանկյալ դատական ակտերի վերաբերյալ կայացված որոշումների այս ընտրանին կազմված է նույն սկզբունքով, ինչ նախկինում հրատարակված ժողովածուն: Որոշումները դասակարգված են ըստ դատավարական հարցերի պատկանելիության, իսկ բովանդակային ցանկում ներկայացված է կոնկրետ որոշման համառոտագիրը: Ժողովածուն ներառում է նաև լազերային սկավառակ, որում ամրագրված է գրքի էլեկտրոնային տարբերակը:

Ամփոփելով՝ հարկ է փաստել, որ սույն ժողովածուն, ինչպես և նախորդը, հնարավորություն կտա առավել համընդգրկուն պատկերացում ունենալ ՀՀ քաղաքացիական և վարչական դատավարությունների շրջանակներում ծագող տարատեսակ խնդիրների և դրանց լուծման հնարավոր եղանակների վերաբերյալ:

Ե. Հ. Խունդկարյան
ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և
վարչական պալատի նախագահ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԻՋԱՆԿՅԱԼ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

Թիվ 2

2013-2014

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ	1
ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ.....	17
ՀԱՅՑԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ.....	24
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ.....	30
ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ	36
ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ	43

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ.....	83
ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ	102
ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ.....	106
ՊԱՐՏԱՎՈՐԵՑՄԱՆ ՀԱՅՑ	120

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ..... 126

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ԵՎ
ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔԵՐՈՎ.....106

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ
ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ..... 137

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

07.08.2013թ.

1. Հայկ Դունամալյան v. Վարդան Սարգսյանի և մյուսների, քաղ. գործ թիվ ԷԶ ԱԲԱԳ/0043/02/12 1-7

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է պետական տուրքի վճարումը տարածամկետելու իրավական ինստիտուտի կիրառման հարցին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ պետական տուրքի վճարումը տարածամկետելու հասկացությունը և կիրառման կարգը ենթակա է սահմանման «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Մինչդեռ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է (27.12.1997 թվական) մինչև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունումը (17.06.1998 թվական), սահմանելով (հոդված 21) պետական տուրքի գծով արտոնությունների տեսակները, որպես այդպիսին չի նախատեսել պետական տուրքի վճարման ժամկետի տարածամկետումը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդրական նման բացը դատական պրակտիկայում որոշ դեպքերում, ինչպես սույն գործով, հանգեցնում է այդ հիմքով պետական տուրքի վճարումը տարածամկետելու վերաբերյալ միջնորդությունների մերժման:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ եթե իրավական ակտում նախատեսված նորմի պահանջի կատարում կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա իրավական ակտն այդ նորմի մասով գործում է համապատասխան իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վկայակոչված իրավադրույթի հիմքով պետական տուրքի վճարումը տարածամկետելու ինստիտուտը չի գործում, քանի դեռ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում համապատասխան լրացումը չի կատարվել: Մինևն այն ժամանակ այդ հիմքով անձի դատական պաշտպանության իրավունքը սահմանափակելը Վճռաբեկ դատարանի համոզմամբ չի բխում ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթներից, ուստի պետական տուրքի վճարումը տարածամկետելու իրավական ինստիտուտի կիրառման հարցը պետք է նախ և առաջ դիտարկել դատական պաշտպանության և արդար դատաբանության իրավունքի բովանդակային տարր հանդիսացող արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդուհանդերձ, կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (լրեն, օրինակ, «Վիկտորիա Կոնցեն» ՍՊԸ-ն ընդդեմ «Ալվարեխալկոնարիկա» ՓԲԸ-ի թիվ ԵԷԳ/1080/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.03.2013 թվականի որոշումը):

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրական բացի հիմքով անձի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումը չի կարող ապահովել ողջամիտ համաչափություն օգտագործվող միջոցների և նպատակի միջև, ընդհակառակը, կարող է անհաղթահարելի խոչընդոտ հանդիսանալ արդարադատության

մատչելիության իրավունքի իրականացման տեսանկյունից: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ ներկայացվել է պետական տուրքի վճարումը տարածամկետելու վերաբերյալ միջնորդություն, Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ դատարաններն այն պետք է քննարկեն և այդ հարցով որոշում կայացնեն որպես պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն:

30.06.2014թ.

2. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ v. Հասմիկ Ափիյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵԳԴ/0536/02/13,

Էջ 8-12

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի առաջին պարբերության «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից և այդ արտոնությունները ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը, որն ուղղված է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (տե՛ս, Արմենակ և Գուլյա Սահակյաններն ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի՝ նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդի գումարը փոխհատուցելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008 թվականի թիվ 3-734(ՎԳ) որոշումը):

Վճռաբեկ դատարանը վերը նշված դիրքորոշմանը հավելել է նաև, որ յուրաքանչյուր դեպքում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառումը պետք է հիմնվի դատարանի ներքին համոզման վրա (*սուբյեկտիվ չափորոշիչ*), որը, սակայն, ձևավորվում է ապացույցների օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի հետազոտման վրա (*օբյեկտիվ չափորոշիչ*): Բացի այդ, ներքին համոզման հիման վրա ապացույցների գնահատումը, որպես ապացուցման գործընթացի բաղկացուցիչ մաս, չպետք է լինի կամայական, այլ պետք է ուղղված լինի քաղաքացիական դատավարության նպատակների իրականացմանը, որոնցից ամենահիմնականը՝ իրավունքի սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է:

22.01.2014թ.

3. Շամամ Կարապետյան v. Արայիկ Միրզոյան, քաղ. գործ թիվ ԱԲԴ/0913/02/12,

Էջ 13-16

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով սահմանվող արտոնություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման երկու ընթացակարգ՝ օրենքի ուժով և դատարանի հայեցողությամբ: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սպառնիչ ամրագրել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում դատական պաշտպանու-

թյուն հայցող սուբյեկտն օրենքի ուժով ազատվում է պետական տուրքի վճարումից: Նման հիմքերից որևէ մեկի առկայությունը չի պահանջում շահագրգիռ անձի կողմից պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության հարուցում և դրա քննարկում ու լուծում դատարանի կողմից: Միաժամանակ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը նման արտոնություն կիրառելու հնարավորություն ընձեռել է դատարաններին կամ դատավորներին այն դեպքերում, երբ թեև բացակայում են նույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված հիմքերը, սակայն, ելնելով կողմերի գույքային դրությունից, անհրաժեշտ է սահմանել նման արտոնություն՝ երաշխավորելու համար անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը:

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

03.12.2014թ.

4. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ v. «ՄԻԼԼԱՐ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2628/02/13

Էջ
17-23

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը դատավարական ժամկետները բաց թողնելու հիմքերը պայմանականորեն բաժանել է երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ի կետի իրավակարգավորումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքի գնահատողական ֆունկցիան թողնելով դատարանների հայեցողությանը: Այնուամենայնիվ, ժամկետը բաց թողնելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները:

Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ, երբ ֆիզիկական անձը զրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից երկարատև հիվանդության կամ գործուղման մեջ գտնվելու պատճառով:

ՀԱՅՅԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ

24.09.2014թ.

5. «Եվրոպա» ՍՊԸ v. «Սպիտակ կամար» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԱԲԴ/1020/02/14

Էջ
24-29

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հայց հարուցելու իրավունքի իրացման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նշված դրույթի վերաբերյալ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին: Մասնավորապես, *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է բոլոր անձանց քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին վերաբերող յուրաքանչյուր հայց դատարանին ներկայացնելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է «դատարանի իրավունքը», այսինքն՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը քնություն սկսելու իրավունքի միայն մի մասն է, ինչի սահմանափակումը դատարանների կողմից ընթացակարգային օրենքների գուտ խիստ մեկնաբանման հետևանքով կառաջացնի իրավունքի խախտում և անձի այդ

իրավունքը կկրի վերացական բնույթ, հետևաբար քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում, ինչի արդյունքում տեղի չի ունենա դատավարություն և առհասարակ կարծեգրվեն այդ վարույթի արդար, հրապարակային և արագ քննության բնորոշումները: Ընդ որում, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակը ոչ թե տեսական կամ վերացական, այլ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորումն է: Դ-ա, մասնավորապես, վերաբերում է դատարան դիմելու իրավունքին՝ նկատի ունենալով այն զգալի դերը, որ արդար դատաքննության իրավունքն իրականացվում է ժողովրդավարական հասարակությունում (*յուն ս, Կրեուզն ընդդեմ Լեհաստանի թիվ 28249/95 գանգաբաղվ Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը*):

Եվրոպական դատարանը մի շարք այլ գործերով նշել է նաև, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում են «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքները, բացարձակ չեն և կարող են ենթարկվել սահմանափակումների, սակայն կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորման ապահովմամբ (*յուն ս, Ալ-Ադասինն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 35763/97 գանգաբաղվ Եվրոպական դատարանի 21.11.2001 թվականի վճիռը, պարբ. 53, Իսախանովն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 34791/97 գանգաբաղվ Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, պարբ. 35, Ռասպոն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 4210/00 գանգաբաղվ Եվրոպական դատարանի 25.07.2002 թվականի վճիռը, պարբ. 90, «Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի թիվ 21638/03 գանգաբաղվ Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը, պարբ. 44*): Միաժամանակ, Եվրոպական դատարանը նշել է, որ թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է դատարան դիմելու արդյունավետ իրավունք, այնուամենայնիվ, պետության հայեցողությանն է թողնված նշված նպատակի համար անհրաժեշտ միջոցների ընտրության հարցը (*յուն ս, Էյրին ընդդեմ Իռլանդիայի թիվ 6289/73 գանգաբաղվ Եվրոպական դատարանի 09.10.1979 թվականի վճիռը, պարբ. 26*):

Վճռաբեկ դատարանը վերը նշված իրավական մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով ներպետական քաղաքացիադատավարական օրենսդրության կարգավորումներին՝ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Հ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետով և 92-րդ հոդվածով նախատեսված իրավադրույթների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ *դատարանի հայց ներկայացնելը և քաղաքացիական գործի հարուցումը* քաղաքացիական դատավարության առաջին և ինքնուրույն փուլն է, որից հետո միայն սկսվում է գործի շարժը, և հնարավոր է դառնում դատավարական հետագա բոլոր գործողությունների կատարումը: Դատարանը քաղաքացիական գործի քննությանը և վեճի լուծմանը ձեռնամուխ է լինում իրենց իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը պաշտպանելու համար դատարանի մոտ անձանց դիմումի հիման վրա («Հ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 3-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածներ): Հայցային վարույթի գործերը հարուցվում են դատարանի հայցադիմում ներկայացնելու միջոցով, որն իրավունքի պաշտպանության վարույթի հարուցման դատավարական միջոց է, թեև հայց ներկայացնելը գործի հարուցման նախապայմանն է, այդուհանդերձ ինքնին բավարար չէ քաղաքացիական գործի հարուցելու համար: Անհրաժեշտ է, որպեսզի հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումը համապատասխանի օրենքով սահմանված դատավարական պահանջներին: Դատավորը հայցադիմումը վարույթ ընդունելու որոշում կարող է կայացնել միայն այն դեպքում, եթե հայցադիմումն ընդունելիս ստուգում և պարզում է, որ հայցվորը հայց հարուցելու իրավունք ունի, այսինքն՝ երբ առկա են հայց հարուցելու իրավունքի նախադրյալները, և հայցվորը պահպանել է այն հարուցելու (դատարանի դիմելու) օրենքով սահմանված կարգը, այլ կերպ ասած՝ պահպանվել են *հայցա-*

դիմումի գրավոր ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հակառակ դեպքում այդ պահանջների չպահպանումը հիմք է հայցադիմումը վերադարձնելու համար, և հայցվորի մոտ ծագում է անհրաժեշտություն վերացնել համապատասխան հայցադիմումի թերությունները (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդված):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությանը սահմանված կարգով դատավորը միանձնյա կատարում է հայցադիմումը վարույթ ընդունելու և քաղաքացիական գործ հարուցելու բոլոր գործողությունները: Հետևաբար, դատավորը պետք է ձեռնամուխ լինի կատարելու բոլոր անհրաժեշտ դատավարական միջոցներն իրականացնելու ճիշտ գործողություններ՝ ապահովելով շահագրգռված անձի դատական պաշտպանության իրավունքն ամբողջությամբ: Հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը յուրաքանչյուր անձի իրավունք է վերապահում դատարանում պաշտպանել Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, դատարանները պարտավոր են քաղաքացիական գործերը ժամանակին և ճիշտ քննելու միջոցով ապահովել այդ պաշտպանությունը, որը սկսվում է հենց հայցադիմումը (դիմումը) վարույթ ընդունելու և գործ հարուցելու պահից:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ բոլոր այն դեպքերում, երբ առկա են **հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջների** ձևական խախտումներ, ինչպես նաև պրակտիկ խոչընդոտներ, որոնք հնարավոր է շտկել գործը դատարանության նախապատրաստելու փուլում, ապա դատավորը պետք է ձեռնամուխ լինի հայցադիմումը վարույթ ընդունելու, իսկ դրանում առկա անհստակությունները շտկելու գործը՝ դատարանության նախապատրաստելու փուլում, ինչը բխում է անձի «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքներից:

Միևնույն ժամանակ անդրադառնալով հայցադիմումում պահանջվող գումարի հաշվարկը ներկայացնելու պահանջին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ գումարի հաշվարկը չի կարող նույնացվել գումարի գոյացման հիմքերի և դրանք հիմնավորող ապացույցների հետ: Նման մոտեցման դեպքում անձի վրա դրվում է պարտականություն յուրաքանչյուր դեպքում գումարի բռնագանձման պահանջ ներկայացնելիս գումարի բռնագանձման հիմք հանդիսացող ապացույցները ներկայացնել բացառապես հայցադիմումին կից, մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի տրամաբանությունից չի բխում ապացույցները բացառապես հայցադիմումին կից ներկայացնելը՝ նկատի ունենալով նաև գործը դատարանության նախապատրաստելու փուլի առկայությունը:

Սույն գործով Դատարանը հայցադիմումը վերադարձնելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Ընկերությունը ներկայացրել է 51.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջ, սակայն չի ներկայացրել վիճարկվող գումարի հաշվարկը: Հայցադիմումին կից ներկայացվել է փաստաթուղթ, որտեղ կատարված հաշվարկի ընդհանուր գումարը կազմել է 7.910.815 ՀՀ դրամ, և նշված չէ 51.000 ՀՀ դրամ գումարի գոյացումը:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայցադիմումում չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետում սահմանված բռնագանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը ներկայացնելու պահանջը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Ընկերությունը, ներկայացնելով 51.000 ՀՀ դրամ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ բռնագանձելու պահանջ, հայցադիմումում նշել է բռնագանձման ենթակա գումարի չափը, պարտավորության առաջացման հիմքերը, ինչպես նաև հայցադիմումին կցել է ապացույցները՝ ապրանքների մատակարարման 11.06.2013 թվականի թիվ Ա 7205103296, 18.07.2013 թվականի թիվ Ա 6536658650, 26.08.2013 թվականի թիվ Ա 4235150884, 27.08.2013 թվականի թիվ Ա 7605338041, 27.08.2013 թվականի թիվ Ա 5477888062, 10.09.2013 թվականի թիվ Ա 4272704291 հարկային հաշիվները, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների հաշվարկը՝ սկսած Կազմակերպության կետանցի օրվանից մինչև 28.03.2014 թվականը: Ըստ էության՝ հայցադիմում ներկայացված 51.000 ՀՀ դրամը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով

նախատեսված տոկոսները բռնագանձման ենթակա գումարի հաշվարկն են:

Մնան պայմաններում Վճարել դատարանը գտել է, որ սույն գործով ներկայացված հայցադիմումի ընդունելիության հարցը լուծելիս Դատարանը պետք է առաջնորդվեր անձի իրավունքների խախտման վերաբերյալ դատարան դիմելու անձի սահմանադրական իրավունքի ապահովման գերակայությամբ, ուստի ստորադաս դատարանների այն պատճառաբանությունը, որ Ընկերության կողմից ներկայացված հայցադիմումում չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետում սահմանված բռնագանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը ներկայացնելու պահանջը, անհիմն է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարել դատարանը գտել է, որ ստորադաս դատարանը, հայցադիմումը վերադարձնելով, իրականացրել է ընթացակարգային օրենքի ներմեկնաբանում՝ չապահովելով Ընկերության՝ «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքների իրականացումը և խախտելով քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս իրավունքի գերակայությունը:

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՄԵՑՈՒՄԸ

17.09.2014թ.

6. «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ v. «ԱՐԳՈ կոմպ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/3221/02/13 Էջ 30-35

Խնդիր. Այս որոշմամբ Վճարել դատարանը վերահաստատել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը:

Վճարել դատարանի դիրքորոշումը. Վճարել դատարանը նախկինում կայացրած բազմաթիվ որոշումներում արձանագրել է, որ դատարանի պարտականությունն է կասեցնել գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պարտավոր է նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն, ինչպես նաև պարտավոր է նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը (փն՝ս, օրինակ, Վերսա Ազիզյանն ընդդեմ Նունե Սարգսյանի թիվ ԵԱԴԿ/0452/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 13.01.2010 թվականի որոշումը):

ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

24.05.2013թ.

7. Ըստ Շենգալիթ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի դիմումի՝ Վլադիմիր Օհանովին անգործունակ ճանաչելու պահանջի մասին, Էջ 36-42
քաղ. գործ թիվ ԵՇԴ/0938/02/10

Խնդիր. ա) Որո՞նք են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ «**Քաղաքացին կարող է կանչվել դատական նիստի,** եթե դա թույլ է տալիս նրա առողջական վիճակը» դրույթով դատարանին վերապահված հայեցողության իրացման սահմանները,

բ) իրավաչափ է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի վիճարկվող որոշման հիմքում ընկած իրավական դիրքորոշումն առ այն, որ առաջին ատյանի դատարանի՝ անգործունակ ճանաչելու մասին վճիռը բողոքարկելու ժամկետը բաց թողնելուց հետո անձն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա ձեռք է բերում անգործունակ անձի կարգավիճակ, հետևաբար նաև այդ կարգավիճակում այլևս չունի վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունք,

գ) արդյո՞ք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ «**անգործունակ (...) ճանաչված քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը դատարանում պաշտպանում են նրանց (...) խնամակալները**» դրույթի կիրառմամբ կարող է սահմանափակվել անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի վարույթի շրջանակներում անգործունակ ճանաչված անձի բողոքարկման իրավունքը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ա) ՀՀ Սահմանադրությունը մարդուն, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները հռչակում է որպես բարձրագույն արժեքներ և պետությանը սահմանափակում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (հոդված 3): Միաժամանակ ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է մարդու անօտարելի և բնական իրավունքների ապահովման մի շարք երաշխիքներ, որոնց շարքում առավել կարևորվում է անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը, պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը (հոդված 18), ինչպես նաև իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (հոդված 20): Այդ երաշխիքները ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածի ուժով հավասարապես վերաբերում են նաև հոգեկան խանգարումներ ունեցող անձանց:

Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց՝ որպես խոցելի խմբի անդամների պաշտպանությանն են ուղղված նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր, որոնցում ևս այս անձանց իրավունքների դատական արդյունավետ պաշտպանությունն ամրագրվում է որպես իրավունքների ու ազատությունների ապահովման կարևորագույն երաշխիք:

Հոգեկան հիվանդությամբ տառապողների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման սկզբունքները (ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1991 թվականի դեկտեմբերի 17-ի 46/119 բանաձև) ակթյուլատրելի են համարում հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց սկստմամբ որևէ խտրական մոտեցում, և ճանաչում են անձի՝ իրեն անգործունակ ճանաչելու կապակցությամբ գործի վարույթին փաստաբանի միջոցով ներկայացված լինելու իրավունքը, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց հետ հավասար հնարավորություններով՝ անգործունակ ճանաչելու մասին վճիռը վերադաս դատարան բողոքարկելու իրավունքը: Եվրոպայի խորհրդի Պառլամենտական վեհաժողովի 1977 թվականի հոկտեմբերի 8-ի 818(1977) «Հոգեկան հիվանդությամբ տառապողների վիճակի մասին» հանձնարարականում, Նախարարների կոմիտեի 1983 թվականի փետրվարի 22-ի R(83)2 «Հարկադիր կարգով հոսպիտալացված՝ հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավական պաշտպանության մասին» հանձնարարականում, 1999 թվականի փետրվարի 23-ի R(99)4 «Չափահաս անգործունակների իրավական պաշտպանության սկզբունքների մասին» հանձնարարականում, 2004 թվականի փետրվարի 24-ի Rec(2004)10 «Հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» հանձնարարականում և ընդգծվում է, որ հոգեկան խանգարումներ ունեցող անձինք պետք է ունենան բոլոր քաղաքացիական և քաղաքական իրավունքներն իրականացնելու հնարավորություն, իսկ դրանց սահմանափակումները թույլատրելի են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի պահանջներին խիստ համապատասխան: Ընդ որում, Եվրոպայի խորհրդի անդամ

պետություններին առաջարկվում է սահմանել, որ անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտը չի կարող հիմնվել միայն բժշկական եզրակացության վրա, որ հոգեկան խանգարում ունեցող անձի համար պետք է ապահովված լինի լավելու իրավունքը և գործի քննության ողջ ընթացքում պետք է ներկա գտնվի փաստաբանը: Մասնավորապես՝ 1999 թվականի փետրվարի 23-ի R(99)4 հանձնարարականով ընդունված «Չափահաս անգործունակների իրավական պաշտպանության սկզբունքների» 13-րդ սկզբունքը՝ վերնագրված «Անձամբ լավելու իրավունք» վերտառությամբ, սահմանում է. «Անձը պետք է ունենա անձամբ լավելու իրավունք ցանկացած գործի վարույթում, որը կարող է ազդել իր գործունակության վրա»: Նույն սկզբունքների 14-րդ սկզբունքի համաձայն՝ անձը պետք է ունենա բողոքարկման համապատասխան իրավունքներ:

Եվրոպական դատարանը սույն գործին համանման փաստական հանգամանքներ ունեցող Շտուկաստուրվալ ընդդեմ Ռուսաստանի գործով վճռում նշել է. «Մի շարք նախկին գործերով (հարկադիր հոսպիտալացման առնչությամբ) Դատարանը հաստատել է, որ հոգեկան հիվանդությամբ տառապող անձը պետք է հնարավորություն ունենա լավելու անձամբ, կամ անհրաժեշտության դեպքում, ներկայացուցչի միջոցով (տես, օրինակ, Վինթերվերպի գործը, կետ 79): Վինթերվերպի գործի առանցքում դիմողի ազատությունն էր: Այնուամենայնիվ, սույն գործում դատավարության ելքն առնվազն հավասար կարևորություն ունի դիմողի համար, քանի որ հարվածի տակ է (վտանգված է) կյանքի բոլոր ոլորտներում նրա անձնական ինքնավարությունը, ներառյալ՝ ազատության սահմանափակումը: Ավելին, Դատարանը նկատում է, որ դիմողը դատավարությունում երկակի դեր է խաղացել՝ նա շահագրգիռ կողմ էր, և միաժամանակ՝ դատական քննության հիմնական օբյեկտը: Ուստի, նրա մասնակցությունն անհրաժեշտ էր ոչ միայն նրան իր գործը ներկայացնելու հնարավորություն տալու համար, այլ նաև դատավորին՝ նրա մտավոր կարողության մասին կարծիք ձևավորելու հնարավորություն տալու համար» (*տե՛ս, Եվրոկայությունում ընդդեմ Ռուսաստանի թիվ 44009/05 գանգառով Եվրոպական դատարանի 2008թ. մարտի 27-ի վճիռը, 71-72-րդ կետերը*):

Հաշվի առնելով այն իրավական հետևանքները, որոնք քաղաքացու համար ծագում են անգործունակ ճանաչվելու դեպքում, այն է՝ անձն անորոշ ժամկետով զրկվում է ինքնուրույնաբար, իր գործողություններով իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու և դրանք կատարելու հնարավորությունից, ինչպես նաև սահմանափակվում է անձի ազատությունը և անձնական անձեռնմխելիության իրավունքը՝ օրենսդիրն անձին անգործունակ ճանաչելը թույլատրում է բացառապես դատական կարգով: Անձին անգործունակ ճանաչելու դատական կարգ **սահմանելու նպատակն է թույլ տալ սխալ գնահատականի հանգել անձի՝ իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու կարողության վերաբերյալ:**

Վճռաբեկ դատարանը գտել է, որ որևէ հայեցողական լիազորություն չի կարող անսահմանափակ և բացարձակ լինել, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ անձին իր գործի քննությանը մասնակից դարձնելու հայեցողական լիազորությունն էլ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է իրականացվի այնպես, որպեսզի երաշխավորվի վերոհիշյալ սահմանադրական, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերով նախատեսված իրավունքների, մասնավորապես՝ արդար դատաքննության իրավունքի, դատարանում լավելու իրավունքի, իր կողմից ընտրված փաստաբանի միջոցով իր շահերը դատարանում ներկայացնելու իրավունքի արդյունավետ իրացումը: Նշված հայեցողական լիազորությունն իրականացնելիս դատարանը կաշկանդվում է այնքանով, որքանով չպետք է **թույլ տալ սխալ գնահատականի հանգել անձի առողջական վիճակի, իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու կարողության վերաբերյալ:** Այլապես, դա ոչ միայն չի նպաստի արդարադատության իրականացմանը, այլև անձին կզրկի իր իրավունքներն ու օրինական շահերը դատական կարգով պաշտպանելու հնարավորությունից:

Իսնդրո առարկա հայեցողական լիազորությունը վերոհիշյալ սահմաններում իրականացնելու պահանջն ապահովելու նպատակով Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրա-

քանցյուր դեպքում անձին անգործունակ ճանաչելու դիմում քննելիս դատարանը պարտավոր է քաղաքացուն ծանուցել նիստի ժամանակի և վայրի մասին՝ հնարավորություն տալով անձամբ ներկա գտնվելու, անհնարինության դեպքում՝ իր շահերը դատարանում ներկայացնել իր կողմից ընտրված փաստաբանի միջոցով, ինչպես նաև պարտավոր է քաղաքացուն ծանուցել անգործունակ ճանաչելու վերաբերյալ վճռի մասին՝ հնարավորություն տալով օրենքով սահմանված ժամկետում բողոքարկելու տվյալ վճիռը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ անգործունակ ճանաչվող անձի ներկայությունը դատարանում ապահովելը կարևորվում է նաև նրա համար, որ դատավորին հնարավորություն տրվի անսխալ կարծիք ձևավորել անձի առողջական վիճակի, իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու կարողության մասին, ինչպես նաև անգործունակ ճանաչվող անձին հնարավորություն տրվի օգտվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական իրավունքներից:

Անձի ներկայությունը դատական նիստին կօժանդակի դատարանին պարզելու նաև, թե արդյո՞ք դիմում տված ընտանիքի անդամները վարվել են անբարեխիղճ՝ ակնհայտորեն նպատակ ունենալով քաղաքացուն անհիմն գրկել գործունակությունից:

բ) Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձրել է այն հիմնավորմամբ, որ անգործունակ ճանաչելու մասին վճիռը բողոքարկելու ժամկետը բաց թողնելու արդյունքում անձն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա ձեռք է բերել անգործունակ անձի կարգավիճակ, հետևաբար նաև այդ կարգավիճակում այլևս չունի վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունք: Ընդ որում, վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ բողոք ներկայացրած անձն առաջին ատյանի դատարանում դատական նիստի մասին ծանուցված չի եղել, դատարան չի կանչվել, ինչպես նաև առաջին ատյանի դատարանի վճռի մասին չի տեղեկացվել վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետում:

Վերոնշյալ մեկնաբանությունների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ դատարանի նման դիրքորոշման պայմաններում բոլոր այն դեպքերում, երբ անձն անգործունակ է ճանաչվել առանց դատարան կանչվելու, չի ծանուցվել դատական նիստի ժամանակի մասին, չի ծանուցվել կայացված դատական ակտի մասին և այդ իսկ պատճառով բաց է թողել նաև վերաքննիչ բողոք բերելու ժամկետը, ընդհանրապես գրկվում է իր առնչությամբ կայացված դատական ակտը բողոքարկելու դատավարական հնարավորություններից: Մասն իրավիճակում, նկատի ունենալով, որ անձն առաջին ատյանի դատարանի կողմից անգործունակ է ճանաչվել առանց դատարան կանչվելու, արգելափակվում է անձի դատական պաշտպանության, դատարանի մատչելիության իրավունքն ընդհանրապես: Բացի այդ, օրենսդիրը, նկատի ունենալով, որ անձին անգործունակ ճանաչելու հետևանքով սահմանափակվում են նրա ազատությունն ու անձնական անձեռնմխելիության իրավունքը, ինչպես նաև անձը գրկվում է իր իրավունքներն ու պարտականությունները ողջ ծավալով ինքնուրույն իրականացնելու հնարավորությունից՝ անձին անգործունակ ճանաչելը թույլատրում է միայն դատական կարգով: Մինչդեռ Վերաքննիչ դատարանի իրավական դիրքորոշման պայմաններում դատական կարգով անգործունակ ճանաչելու օրենսդրական կարգավորումը ձևական բնույթ է ստանում և դառնում ինքնանպատակ, և արդյունքում անձի նշված սահմանադրական իրավունքները հայտնվում են դատական վերահսկողությունից դուրս:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ բաց է թողնված անգործունակ ճանաչելու վերաբերյալ վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը, և առաջին ատյանի դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ, այդ հանգամանքն անգործունակ ճանաչված անձին չի գրկում վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքից, և բողոքը չի կարող վերադարձվել միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի հիմքով: Մասն դեպքերում Վերաքննիչ դատարանից պահանջվում է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով

սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու մասին միջնորդությունը, եթե այդպիսին առկա է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի հիման վրա վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին վիճարկվող որոշմամբ խախտվել են ՀՀ Սահմանադրության և միջազգային իրավական փաստաթղթերով նախատեսված՝ անձի դատական պաշտպանության, դատարանի մատչելիության, դատարանում լավելու, վերաքննիչ դատարանում իրավական պաշտպանություն հայցելու իրավունքները: Բողոքն այդ հիմքով վերադարձման ենթակա չէր, քանի որ անձը տվյալ իրավիճակում պահպանել է բողոք բերելու իր իրավունքը:

Վերոնշյալ մեկնաբանության համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ Վերաքննիչ դատարանը քննության առարկա պետք է դարձներ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու մասին միջնորդությունը, որում որպես նման պատճառ մատնանշված էր գործին մասնակից դարձված չլինելու արդյունքում առաջին ատյանի դատարանի վճռի առկայության մասին տեղյակ չլինելու հանգամանքը, որպիսի փաստը հաստատվում է Դատարանի 20.01.2012 թվականի վճիռն օրենքով սահմանված կարգով Վլադիմիր Օհանովին ուղարկելու մասին ապացույց գործում առկա չլինելու հիմքով:

գ) Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին կետը, գտել է, որ վերաքննիչ բողոք բերելու իրավունքը տվյալ իրավիճակում նշված դրույթին համապատասխան պատկանում է անգործունակ ճանաչված անձի խնամակալին:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործնականում, որպես կանոն, խնամակալ նշանակվում է անգործունակ ճանաչված անձի ընտանիքի անդամը: Նշված իրավակարգավորումից բխում է, որ անձն անգործունակ է ճանաչվում կամ ապագա խնամակալի կամ խնամակալ նշանակող մարմնի դիմումի հիման վրա, ինչը նշանակում է, որ խնամակալի և անգործունակ ճանաչված անձի շահերը ոչ միայն կարող են չհամընկնել, այլ նաև կարող են հակադրվել միմյանց: Այս տրամաբանությունն է ընկած նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված դրույթի հիմքում:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր այն դեպքերում, երբ խնամակալ է նշանակվել անձին անգործունակ ճանաչելու դիմում ներկայացրած ընտանիքի անդամը, կամ անձն անգործունակ է ճանաչվել խնամակալության ու հոգաբարձության մարմնի դիմումի հիման վրա, խնամակալը որոշ դեպքերում կարող է չդրսևորել անհրաժեշտ և բավարար անաչառություն և անկողմնակալություն, քանի որ անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտի բողոքարկումը ոչ միշտ է բխում խնամակալի շահերից:

Ելնելով վերոհիշյալից՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին կետի դրույթի կիրառմամբ չպետք է սահմանափակել անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի վարույթի շրջանակներում անգործունակ ճանաչված անձի բողոքարկման իրավունքը:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

18.09.2013թ.

8. «Ակրա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ v. Արթուր Համբարյանի և մյուսների, Էջ քաղ. գործ թիվ ԿԴ/0233/02/11

Էջ
43-46

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետների հաշվարկման հարցին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 3-րդ կետի, 75-րդ հոդվածի 1-ին կետի, 140-րդ հոդվածի 1-ին կետի, 207-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարական ժամկետները հաշվարկվում են նաև ամիսներով, և ամիսներով հաշվվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Այն դեպքում, երբ ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը: Միաժամանակ, ամիսներով հաշվարկվող դատավարական ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը, իսկ նշված ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը:

13.05.2013թ.

9. Երևան համայնք v. Վարդ Գասպարյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2963/02/11

Էջ
47-50

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է դատարանի վճիռն օրենսդրությամբ սահմանված ժամկետում անձին չհանձնելու և բողոքարկման ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքների վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ: Այդ ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման համար օրենքն ընդհանուր իրավասության դատարանին պարտավորեցնում է վճռի հրապարակվելուց անմիջապես հետո դրա օրինակը հանձնել գործին մասնակցած անձանց, իսկ նրանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկել նրան: Միաժամանակ, այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը բաց է թողնում վերոգրյալ ժամկետը, վերջինս իրավունք ունի ներկայացնել դրա բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի քննարկումը վերաքննիչ դատարանը պարտավոր է իրականացնել՝ հաշվի առնելով նաև անձի՝ սահմանադրական նորմով երաշխավորված դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները (յուև, «ՎՏՐ-Հայաստան քանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Դանիել Բարսեղյանի թիվ ԱՐԱԴ/0716/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2011 թվականի որոշումը):

30.06.2014թ.

10. Լիլիթ Ռաշոյան v. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչություն և մյուսներ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/1881/02/11

Էջ
51-55

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է բաց թողնված դատավարական ժամկետները դատարանի կողմից վերականգնելու առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշման շրջանակներում փոխկապակցված վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի և 207-րդ հոդվածի 1-ին կետի իրավանորմերը, արձանագրել է, որ եթե ներկայացված չէ նվազագույն աշխատավարձի հիմնապատիկը չգերազանցող գումարը բռնագանձելու մասին պահանջ կամ դրամական արտահայտությամբ գնահատված հայցի առարկայի արժեքը չի գերազանցում այդ չափը, ապա ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նշված ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը: Նշված ժամկետից հետո բերված վերաքննիչ բողոքը դա-

տարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է դատարանի կողմից: Վերաքննիչ բողոքը բոլոր դեպքերում վերադարձվում է, եթե այն բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին (*չունի*, *Վարդան Պողոսյանի ընդդեմ Տիգրան Արշակյանի թիվ ԵՇԴ/0021/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերոնշյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ մրցակցային դատավարության պայմաններում դատարանը, որպես արդարադատություն իրականացնող մարմին, ձեռնամուխ է լինում քաղաքացիական դատավարության կարգով քաղաքացիական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը միայն համապատասխան հայցադիմումի կամ դիմումի հիման վրա: Կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներով պայմանավորված դատարանը հանդես է գալիս որպես միայն վեճը լուծող մարմին և կաշկանդված է որոշակի դատավարական գործողություններ սեփական նախաձեռնությամբ իրականացնելու արգելքով: Մասնավորապես, դատարանի կողմից դատավարական որոշակի գործողությունների կատարման համար անհրաժեշտ է, որպեսզի գործին մասնակցող անձը գրավոր, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև բանավոր, հայցի համապատասխան գործողության կատարումը: Այս առումով դատավարական ժամկետների բացթողման և վերականգման հարցերի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումից հետևում է, որ դատարանը բաց թողնված դատավարական ժամկետը կարող է վերականգնել միայն այն դեպքում, երբ այդ ժամկետը բաց թողած շահագրգիռ անձը գրավոր միջնորդության կամ դիմումի միջոցով հայցել է նման գործողության իրականացումը, այլ կերպ ասած՝ ներկայացրել է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու վերաբերյալ գրավոր պահանջ: Այսինքն՝ նման միջնորդության առկայությունը պարտադիր նախապայման է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու համար, և որևէ բացառություն այս ընդհանուր կանոնից չի կարող լինել՝ անկախ այն պատճառներից, որոնք պայմանավորել են համապատասխան դատավարական ժամկետի բացթողումը:

Վերոնշյալ վերլուծությունների համատեքստում գնահատելով քննության առարկա գործի փաստերը և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ պարագայում բողոք բերած անձի կողմից բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացված չլինելու պայմաններում առկա է եղել վերաքննիչ բողոքը վերադարձնելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված հիմքը, հետևաբար Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը հիմնավոր է, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

03.09.2014թ.

11. Ըստ դիմումի Հովհաննես Բաղդասարյանի՝ ժառանգությունն ընդունելու բաց թողնված ժամկետը վերականգնելու պահանջի մասին, քաղ. գործ թիվ ԾԴ/0828/02/12

Էջ 56-60

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը Վերաքննիչ դատարանի կողմից քննության առնելու վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը չի արգելում անձին վերաքննիչ բողոք բերելու ժամկետը լրանալուց հետո ներկայացնել բողոք և միաժամանակ միջնորդություն՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, իսկ դատավարական ժամկետի խախտումն ինքնին բավարար չէ վերաքննիչ բողոքը վերադարձնելու համար, քանի որ **դատարանը պարտավոր է անդրադառնալ այդ միջնորդությանը, որի քննարկման ար-**

դյունքում որոշում կայացնելուց հետո միայն որոշել վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ վարույթ ընդունելու հարցը (ԿԵՍ, Այբերյոք Սուբհասյանն ընդդեմ «Ջեններալ Տրանստորթը ՄԲ» ՓԲԸ-ի թիվ ԵՇԴ/0438/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 10.03.2010 թվականի որոշումը):

27.12.2013թ.

12. Գառնիկ Կուրդիյան, Մանյա Ալոյան v. Անահիտ և Միքայել Կուրդիյաններ, քաղ. գործ թիվ ԵԱԲԴ/2573/02/11

**Էջ
61-64**

Խնդիր. Այս որոշմամբ Վճարելի դատարանն անդրադարձել է գործին մասնակից չդարձված անձի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցին:

Վճարելի դատարանի դիրքորոշումը. Վճարելի դատարանը, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 19-րդ հոդվածի 1-ին մասը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը, 213-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը, նշել է, որ վերաքննիչ դատարանը յուրաքանչյուր դեպքում գործին մասնակից չդարձված անձի կողմից ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելիս պետք է պարզի՝ արդյոք բողոքին կից ներկայացված ապացույցներով հիմնավորվում է, որ վիճարկվող դատական ակտն առերևույթ կարող է վերաբերել վերջինիս իրավունքներին և պարտականություններին: Ինչ վերաբերում է անձի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատական ակտ կայացված լինել կամ չլինելու հարցին, ապա այն պետք է գնահատման առարկա դարձվի և պարզվի վերաքննիչ դատարանում՝ գործի քննության փուլում:

31.07.2013թ.

13. Երևանի Կենտրոն վարչական շրջանի «Կենտրոն» համատիրություն v. Աննա Թուրունջյան, քաղ. գործ թիվ ԵԿԿ/2847/02/12

**Էջ
65-68**

Խնդիր. Այս որոշմամբ Վճարելի դատարանը մեկնաբանել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետում նախատեսված «վեճի առարկայի արժեք» եզրույթը:

Վճարելի դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Վճարելի դատարանն արձանագրել է, որ նշված իրավանդումով օրենսդիրը սահմանել է վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրացման սահմանափակում՝ որպես չափորոշիչ հիմք ընդունելով «վեճի առարկայի արժեքը»: «Վեճի առարկայի արժեք» եզրույթը մեկնաբանելիս Վճարելի դատարանը հարկ է համարել անդրադառնալ ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2012 թվականի թիվ ՍԴՈ-1037 որոշմանը, որի շրջանակներում բացահայտվել է նաև նշված հասկացության իրավական բովանդակությունը: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը, քննելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությանը հարցը, որոշման 6-րդ կետում իրավաչափ է համարել **հայցագնի չափով** պայմանավորված՝ քաղաքացիական գործերով վերաքննության իրավունքի սահմանափակումը: Նշված խնդրի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետի համակարգային մեկնաբանությունը նույն օրենսգրքի այլ հոդվածների, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 2-րդ կետի հետ, Վճարելի դատարանին թույլ է տվել արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված վերաքննության իրավունքի իրացման սահմանափակումը վերաբերում է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը չգերազանցող հայցագին ունեցող քաղաքացիական գործերին, այլ կերպ ասած՝ «վեճի առարկայի արժեք» հասկացությունը ենթադրում է քաղաքացիական գործով **հայցագնի չափը**:

ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2012 թվականի թիվ ՍԴՈ-1037 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր այնքանով, որքանով չի նախատեսում բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ, մասնավորապես, երբ չեն պահպանվել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին կետով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատավարական երաշխիքները:

Վճռաբեկ դատարանը, արդար դատաքննության իրավունքը դիտարկելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո (*Կե' ս, օրինակ' Հունական նախադեպային «Սյրեն» գործարանները և Սյրարիս Անդրեադիան ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 09.12.1994թ. վճիռը, կետեր 49-50, 56*), հարկ է համարել նշել, որ արդար դատաքննության իրավունքի ոչ բոլոր տարրերի խախտումը կարող է հանգեցնել վճռի բեկանման, հետևաբար և վերաքննիչ բողոք բերելու հիմք հանդիսանալ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված վերաքննության իրավունքի իրացման սահմանափակումը չի գործում բոլոր այն դեպքերում, երբ խախտվել են արդար դատաքննության իրավունքի բովանդակությունը կազմող այնպիսի տարրեր, ինչպիսիք են օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից գործի քննության իրավունքը, անկեյսի և անկողմնակալ դատարանի կողմից գործի քննության իրավունքը, կողմերի հավասարության պայմաններում, այդ թվում՝ գործի մրցակցային քննության իրավունքը, պատճառաբանված դատական ակտ ստանալու իրավունքը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ արդար դատաքննության իրավունքի վերոնշյալ տարրերի խախտումը հանգեցնում է քաղաքացիական գործով կայացված դատական ակտի անօրինականության:

10.04.2013թ.

14. Էմմա Կիրակոսյան v. Օսիկ Գրիգորյան, քաղ. գործ թիվ ԵԱԲԶ/0977/02/12

Էջ
69-72

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել վերաքննիչ վարույթում նիստին ներկա գտնվելու իրավունքի ապահովման վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թեև նշված դրույթի համաձայն վերաքննիչ վարույթում նիստին ներկա գտնվելու իրավունք վերապահված է բացառապես բողոք բերած անձին, այդուհանդերձ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել ինքնուրույն այն առումով, որ գործին մասնակցող մյուս անձինք ծանուցվում են վերաքննիչ դատարանի նիստի մասին միայն, եթե առկա է բացատրություն տալու անհրաժեշտություն: Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածում ամրագրված վերաքննիչ դատարանի նիստին ներկա գտնվելու իրավունքը հավասարապես վերաբերում է գործին մասնակցող բոլոր անձանց, քանի որ օրենսդիրը նախատեսում է դատական ակտի անվերապահ բեկանման հիմք բոլոր այն դեպքերի համար, երբ գործին մասնակցող անձանցից մեկը չի եղել պատշաճ ծանուցված: Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունել նաև Եվրոպական դատարանի արտահայտած այն դիրքորոշումը, որ այն դեպքերում, երբ դատաքննությունը ներառում է հակադիր մասնավոր շահեր, կողմերի հավասարության պահանջը, որն արդար դատաքննություն հասկացության հատկանիշներից մեկն է, ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմին ողջամիտ հնարավորություն պետք է տրվի ներկայացնելու իր փաստարկները, ներառյալ ապացույցներ, այնպիսի պայմաններում, որոնք նրան չեն դնում էականորեն ավելի նվազ բարենպաստ պայմաններում՝ համեմատած հակառակ կողմի հետ: Ավելին, իշխանությունների կողմից դատաքննության կողմերից մեկին չծանուցելը, այնպես որ նրան հնարավորություն ընձեռվի իրականացնելու իր ներկա գտնվելու իրավունքը, կարող է որոշ

դեպքերում հարցեր առաջացնել կապված 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ (տե՛ս, նաև Նել-սիդա Նիկողոսյանը և Գվիդոն Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի թիվ 11724/04 և 13350/04 գանգատներով վերոպական դատարանի 06.12.2007 թվականի վճիռը, պարբ. 37):

Սույն գործով Վերաքննիչ դատարանի՝ 29.01.2013 թվականին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցագիրը Սոֆյա Պողոսյանը ստացել է 30.01.2013 թվականին (հատոր 3, գ.թ. 32), 29.01.2013 թվականի դատական նիստի արձանագրության մեջ Վերաքննիչ դատարանը նշել է, որ պատասխանողի և երրորդ անձի կողմից դատական ծանուցումներն ստանալու վերաբերյալ հավաստի ապացույցներ դատարանը չի ստացել (հատոր 3, գ.թ. 34), և այդ պայմաններում որոշել է վերաքննիչ բողոքը քննել Սոֆյա Պողոսյանի բացակայությամբ: Վերաքննիչ դատարանի 21.01.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» որոշման (հատոր 3, գ.թ. 25) բնօրինակի (որի «Որոշեց» մասի 2-րդ կետից երևում է, որ տվյալ գործով քննությունը նշանակվել է 29.01.2013 թվականին՝ ժամը 12:00-ին), ինչպես նաև համապատասխան փոստային ծրարի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն Սոֆյա Պողոսյանին ուղարկվել է 29.01.2013 թվականին և վերջինիս կողմից ստացվել է 30.01.2013 թվականին, այսինքն՝ Վերաքննիչ դատարանի կողմից որոշման հրապարակման օրը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, Սոֆյա Պողոսյանին դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ չձեռնուցելով, վերջինիս գրկել է բողոքի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու հնարավորությունից, ինչի հետևանքով խախտվել է նրա՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոստենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը:

06.11.2013թ.

15. Մամվել, Սահակ և Սուլթան Մարկոսյաններ v. Լուսիկ Գևորգյանի և մյուսներ, ԷԶ
քաղ. գործ թիվ ԵԿԳ/0808/02/10 73-78

Խնդիր. Արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավասու է վերաքննիչ վարույթի ընթացքում գործին մասնակցող քաղաքացու մահվան հիմքով կասեցնել գործի վարույթն այն դեպքում, երբ վերջինս մինչև մահանալն օրենքով սահմանված ժամկետում իր մասով վերաքննիչ բողոք չի բերել:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածը, 36-րդ հոդվածի 1-ին կետը, 105-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործի վարույթի կասեցումը պայմանավորված է գործի քննության ընթացքում այնպիսի հանգամանքի ի հայտ գալով, որն ըստ էության արգելակում է գործի հետագա ընթացքը: Միաժամանակ, օրենքով գործի վարույթի կասեցման համար նախատեսված են երկու խումբ հիմքեր: Դրանցից առաջին խումբը վերաբերում է սպառիչ թվարկված այն հիմքերին, որոնց առկայության դեպքում գործի քննության շարունակումը դառնում է անհնարին, և դատարանը պարտավոր է դրանցից որևէ մեկի ի հայտ գալուց հետո կասեցնել գործի վարույթը: Այդպիսի հիմքերից է նաև **գործին մասնակցող քաղաքացու մահը**, որի դեպքում գործի կողմերից մեկը դուրս է մնում հետագա դատավարությունից, ինչը բացառում է դրա շարունակումը: Իսկ երկրորդ խումբը վերաբերում է այն հիմքերին, որոնց առկայությունը գործի քննության հետագա շարունակումը կարող է դարձնել անհնարին կամ դժվարացնել, և դատարանը, ելնելով գործի փաստական հանգամանքներից, յուրաքանչյուր դեպքում պետք է որոշի գործի հետագա քննության շարունակման նպատակահարմարությունը: Այդ իսկ պատճառով երկրորդ խումբ հիմքերն օրենքով սպառիչ թվարկված չեն, այլ դատարանին իրավունք է տրված օրենքով նախատեսված այլ դեպքերում ևս կասեցնել գործի վարույթը: Այսինքն՝ **գործի վարույթի կասեցումը չի կարող կրել ձևական բնույթ, իսկ դրա միակ նպատակը գործի շարունակմանը խոչընդոտող հանգամանքների վերացումն է: Մասնավորապես՝ գործին մասնակցող քաղաքացու մահվան դեպքում նրան իրավահաջորդով փոխարինելը հետապնդում է դատավարությունում այդ կողմի ներկայությունն ապահովելու և դրա միջոցով նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայ-**

մանագրով նախատեսված իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության ապահովման նպատակ, որի բացակայության դեպքում գործի վարույթը վկայակոչված հիմքով կասեցվել չի կարող, քանի որ իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացվել միայն շահագրգիռ անձի կողմից որոշակի դատավարական գործողություններ կատարելու դեպքում, այդ թվում նաև՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործի վարույթը կասեցնելու հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը **կարող է կասեցնել գործի վարույթը**: Օրենսդիրը, սահմանելով վերաքննիչ դատարանի այս լիազորությունը, միաժամանակ չի սահմանում գործի վարույթը կասեցնելու ինքնուրույն հիմքեր, ինչը նշանակում է, որ վերաքննիչ դատարանի կողմից գործի վարույթի կասեցումը տեղի է ունենում նույն օրենսգրքի՝ «Վարույթն ընդհանուր իրավասության դատարանում» վերտառությամբ առաջին ենթաբաժնի 105-րդ և 106-րդ հոդվածներով սահմանված հիմքերով: Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նշված հոդվածների և 221-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված դրույթի համադրված վերլուծության արդյունքում գտել է, որ չնայած կասեցման հիմքերի ընդհանրությանը, վերաքննիչ դատարանում գործի վարույթի կասեցումն օժտված է որոշակի առանձնահատկությամբ՝ պայմանավորված վերաքննության բովանդակությամբ և ծավալով: Նշված առանձնահատկությունը հանգում է նրան, որ եթե առաջին ատյանի դատարանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածում ամրագրված՝ գործի վարույթը կասեցնելու հիմքերը պարտադիր հիմքեր են, որոնց առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, ապա նույն օրենսգրքի 221-րդ հոդվածի 3-րդ կետում «**կարող է կասեցնել գործի վարույթը**» ձևակերպումը ենթադրում է, որ գործի վարույթը կասեցնելու հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանն օժտված է հայեցողական լիազորությամբ և տվյալ գործի կոնկրետ հանգամանքների համատեքստում վերաքննիչ դատարանն է որոշում, թե արդյոք վերաքննիչ վարույթում ի հայտ եկած տվյալ հանգամանքը խոչընդոտում է վերաքննիչ բողոքի քննության հետագա ընթացքին: Նման իրավակարգավորումը թույլ է տալիս վերաքննիչ դատարանին ստուգել և գնահատել կոնկրետ գործի հանգամանքների համակցությունը՝ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում կասեցման անհրաժեշտության և նպատակահարմարության հարցը լուծելիս:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ վարույթը կասեցնելու հարցը լուծելիս պետք է առաջնորդվել մի կողմից գործի վարույթի կասեցման ինստիտուտի կիրառմամբ հեղափոխվող վերոնշյալ իրավաչափի նպատակի և մյուս կողմից դատավարության մյուս մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջև ողջամիտ համաչափություն ապահովելու անհրաժեշտությամբ: Մասնավորապես՝ գործի վարույթի կասեցման հանգամանքը կարող է խոչընդոտել գործին մասնակցող շահագրգիռ անձանց իրավունքների իրացմանը, մասնավորապես՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացմանը:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետը, 205-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, 207-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործին մասնակցող շահագրգիռ անձի կողմից առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը՝ հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում, վերաքննիչ բողոք չբերվելու պայմաններում վերջինս ըստ էության համաձայնվում է իր մասով իր իրավունքների կամ պարտականությունների վերաբերյալ կայացված նշված ակտի հետ, ուստի նրա փոխարեն վերաքննիչ դատարանն իրավասու չէ իրականացնել դատավարական գործողություններ, այդ թվում՝ վերաքննիչ վարույթում այդ անձի մահով պայմանավորված՝ նրա մասով կասեցնել գործի վարույթը, եթե, իհարկե, դա չի խոչընդոտում գործին մասնակցող մյուս անձանց մասով գործի քննության հետագա շարունակմանը:

27.11.2013թ.

16. Մանուկ Ղազանչյան v. Ալինա Չոբանյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2768/02/12

Էջ
79-82

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետը, 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետը, արձանագրել է, որ դատարանի պարտականությունն է կասեցնելու գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պարտավոր է նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն, ինչպես նաև պարտավոր է նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը (դեռևս, թիվ ԵԿԴԳ/0452/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 13.01.2010 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նշված դիրքորոշումը, հարկ է համարել ընդգծել, որ դատական ակտը հիմնավորելու պահանջը հավասարապես վերաբերում է ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ՝ միջանկյալ դատական ակտերին: Յուրաքանչյուր դեպքում որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տրվի կիրառման ենթակա նորմը պարունակող նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վերաքննիչ դատարանը «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշմամբ արձանագրել է, որ թիվ 17107711 քրեական գործն անմիջականորեն կապված է սույն քաղաքացիական գործի հետ, և անհնարին է թիվ ԵԿԴ /2768/02/12 քաղաքացիական գործի քննությունը մինչև թիվ 17107711 քրեական գործով վերջնական որոշման կայացումը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի հիմնավորել գործի վարույթը կասեցնելու հիմքի առկայությունը, մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը չի նշել թիվ 17107711 քրեական գործով քննվող այն իրավահարաբերությունը կամ փաստը, որը թիվ ԵԿԴ/2768/02/12 քաղաքացիական գործի քննության և լուծման համար իրավաբանական նշանակություն ունի և չի կարող հաստատվել սույն գործի շրջանակներում, ինչով էլ պայմանավորված է գործի քննության անհնարինությունը:

Ավելին, Վերաքննիչ դատարանը 18.07.2013 թվականի դատական նիստում, քննելով պատասխանող Ալինա Չոբանյանի ներկայացուցչի միջնորդությունը՝ գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով կասեցնելու վերաբերյալ, այն մերժել է՝ պատճառաբանելով, որ թիվ 17107711 քրեական գործի ընթացքը որևէ կերպ չի խոչընդոտում սույն գործի քննությանը (հատոր 2-րդ, գ.թ. 50, 65), սակայն 05.09.2013 թվականի դատական նիստում իր նախաձեռնությամբ, կրկին անդրադառնալով նույն միջնորդությանը, գործի վարույթը կասեցրել է (հատոր 2-րդ, գ.թ. 63, 65):

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վերաքննիչ դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ նույն միջնորդությանը կրկին անդրադառնալը և այն բավարարելը, Վճռաբեկ դատարանը դիտել է որպես արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած որոշման փոփոխում, ինչն անթույլատրելի է:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

30.10.2013թ.

17. Աշոտ Գագիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյան v. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԳ/9439/05/12 Էջ 83-88

Խնդիր. Ինչպիսի պայմաններում և ինչպիսի հանգամանքների առկայության դեպքում են հիմքեր առաջանում հարգելի համարելու վարչադատավարական օրենսդրությամբ սահմանված ժամկետի բացթողումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 19-րդ հոդվածը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաբնության իրավունքի բաղկացուցիչ մասն է:

Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*Կենս, Աշինգդեյնս ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57, Ashingdane v. the United Kingdom, judgment of 28 May 1985, Series A no. 93, p. 24, para. 57*):

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հենավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*Կենս, Սյուրբրինգսը և մյուններն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետ 51,55, Stubbings and Others v. the United Kingdom, judgment, 22.10.1996, para. 51,55*):

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ սկզբունքների համատեքստում պետք է մեկնաբանվի նաև գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասը: Վկայակոչված իրավադրույթի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է

թողել հարգելի պատճառով:

Վճռաբեկ դատարանը, վերլուծելով գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը, եզրահանգել է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքի գնահատողական ֆունկցիան թողնելով դատարանների հայեցողությանը: Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը ժամկետը բաց թողնելու հիմքերը պայմանականորեն բաժանել է երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները:

Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ՝ երբ ֆիզիկական անձը գրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից երկարատև հիվանդության կամ գործուղման մեջ գտնվելու պատճառով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, բաց թողնված ժամկետը հարգելի համարելու համար **ընդհանուր կանոնն այն է**, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված **ողջամիտ ու բավարար** միջոցներ՝ դատարան դիմելու, դատական պրոցեսին մասնակցելու, պահանջը և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով նշված ժամկետը չի բավականացրել համապատասխան դատավարական գործողությունները կատարելու համար:

10.12.2014թ.

18. Երևանի քաղաքապետարան v. Արմենուհի Դ-ալիբալյան, վարչ. գործ թիվ Էջ 89-95
ՎԴ/2499/05/14

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է դատավարական ժամկետների բացթողնման հիմքերի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը՝ այն տարածելով նաև գործով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (ընդունվել է՝ 05.12.2013 թվականին, ուժի մեջ է մտել՝ 07.01.2014 թվականին) 54-րդ հոդվածի իրավակարգավորման նկատմամբ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը միաժամանակ հավելել է, որ անձինք իրենց դատական պաշտպանության իրավունքից կարող են օգտվել օրենքով սահմանված ժամկետներում և որպեսզի վարչական դատարանն իրավասու լինի գործադրել օրենքով սահմանված իր լիազորությունները կոնկրետ իրավական վեճն ըստ էության լուծելու համար, անհրաժեշտ է երկու պայմանների միաժամանակյա առկայություն, առաջին՝ համապատասխան հայցի առկայություն, երկրորդ՝ հայցի ներկայացում վարչական դատարան՝ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում: Դատավարական ժամկետները բաց թողնելու դեպքում երկրորդ պայմանն ապահովված կարող է համարվել միայն կոնկրետ վարչական գործում բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնման բավարարված միջնորդության առկայության դեպքում, իսկ մնացած դեպքերում անձը չի կարող օգտվել դատական պաշտպանության իրավունքից, իսկ վարչական դատարանն իրավասու չէ գործադրել օրենքով վարչական դատարանի համար նախատեսված լիազորությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ գրավոր վարչական ակտի ընդունումը բավարար չէ, գրավոր վար-

չական ակտի իրավական համակարգում ի հայտ գալու և գործելու համար անհրաժեշտ է նաև, որ օրենքով սահմանված կարգով այդ վարչական ակտը մտնի ուժի մեջ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ օրենսդիրը վարչական ակտը վիճարկելու օրենքով սահմանված ժամկետի հոսքը պայմանավորել է ոչ թե վարչական ակտի ընդունմամբ, այլ այդ ակտի օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու հետ:

Վճռաբեկ դատարանը, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու անհրաժեշտությամբ, գտել է, որ վարչական ակտի վիճարկման պարագայում անձի՝ դատարան դիմելու համար սահմանված ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ վարչական ակտի հասցեատերը տեղեկացել է իր նկատմամբ տվյալ վարչական ակտի ընդունման մասին, այլ խոսքով, օրենքով սահմանված կարգով վարչական ակտի ուժի մեջ մտնելուց հետո:

22.10.2014թ.

19. Վահագն Ղազարյան v. ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, վարչ. գործ թիվ ՎԳ/0478/05/12

**Էջ
96-101**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վերաքննության փուլում պատշաճ ծանուցման հարցին՝ հիմք ընդունելով նշված խնդրի վերաբերյալ Եվրոպական դատարանի և իր՝ նախկինում կայացրած որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Մասնավորապես, Եվրոպական դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ այն դեպքերում, երբ դատաքննությունը ներառում է հակադիր մասնավոր շահեր, կողմերի հավասարության պահանջը, որն արդար դատաքննության հասկացության հատկանիշներից մեկն է, ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմին ողջամիտ հնարավորություն պետք է տրվի ներկայացնելու իր փաստարկները, ներառյալ՝ ապացույցներ այնպիսի պայմաններում, որոնք նրան չեն դնում էականորեն ավելի նվազ բարենպաստ պայմաններում համեմատած հակառակ կողմի հետ: Ավելին, իշխանությունների կողմից դատաքննության կողմերից մեկին չծանուցելը, այնպես որ նրան հնարավորություն ընձեռվի իրականացնելու իր ներկա գտնվելու իրավունքը, կարող է որոշ դեպքերում հարցեր առաջացնել կապված 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ (*Կրե՛ս, Նելսիդա Նիկո-ղոսյանը և Գվիդոն Մեդրոյանն ընդդեմ Հայաստանի թիվ 11724/04 և 13350/04 գանգապնե-րով Եվրոպական դատարանի 06.12.2007 թվականի վճիռը, պարբ. 37*):

Վճռաբեկ դատարանը գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով՝ բեկանել է դատական ակտը (*Կրե՛ս, «Արմենուրո» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Փարաբարի գյուղապետարանի թիվ ՎԳ/1043/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը*):

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական դատավարությունում կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքի մասնավոր դրսևորումներից մեկն այն է, որ վարչական դատարանի դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկվելու դեպքում դատավարության մասնակիցն ունի վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունք: Եվ քանի որ օրենսդրության համաձայն վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննվում են առանց դատական նիստ հրավիրելու, հետևաբար, վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման դեպքում վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելը հանդիսանում է վերաքննիչ դատարանում գործի քննությանը գործնականում մասնակցելու և դրա ելքի վրա ազդեցություն ունենալու դատավարության մասնակցի՝ օրենքով կանխորոշված միակ հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ վարչական

դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման դեպքում, վարչական դատավարության իրավահավասարության և մրցակցության սկզբունքները կարող են կենսագործվել միայն վերաքննիչ դատարանի կողմից դատավարության մասնակցի՝ վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու դեպքում: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ դատարանը պարտավոր է ապահովել պատշաճ նախադրյալներ դատավարության մասնակիցների կողմից վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքի երաշխավորված իրացման համար:

Գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.7-րդ հոդվածի համակարգային վերլուծության արդյունքում՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ դատավարության մասնակիցը կարող է իրացնել վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իր իրավունքը միայն այն դեպքում, երբ ինքը ստացել է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը: Այդ իսկ պատճառով՝ օրենսդիրը սահմանել է վերաքննիչ դատարանի պարտականությունը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը դատավարության մասնակիցներին ուղարկելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ օրենսդիրը վարչական դատավարության օրենսգրքում դատավարության մասնակիցների և նրանց ներկայացուցիչների համար պարտականություն է սահմանել դատարանին հայտնել դատավարության մասնակիցների ծանուցման հասցեն, ինչպես նաև հասցեի փոփոխության մասին: Սակայն օրենսդիրը չի սահմանափակվել միայն վերոնշյալ պարտականությունը նախատեսելով և դատավարության մասնակիցների և նրանց ներկայացուցիչների համար սահմանել է լրացուցիչ պարտականություն՝ դատարանին հայտնել նաև դատավարության մասնակիցների ներկայացուցիչների ծանուցման հասցեն և հասցեի փոփոխության մասին: Վերոնշյալ իրավական կարգավորման նպատակը ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված անձի արդար դատաքննության իրավունքի տարրեր հանդիսացող կողմերի մրցակցության և հավասարության պահանջների գործնականում իրականացումն ապահովելու համար լրացուցիչ երաշխիքներ նախատեսելն է, քանի որ սույն իրավական կարգավորումը դատարանին իրական հնարավորություն է ընձեռում դատավարության մասնակիցների այս կամ այն հարցի մասին պատշաճ ծանուցման անհնարիտության դեպքում պատշաճ ծանուցել դատավարության մասնակիցների ներկայացուցիչներին՝ դրանով իսկ ապահովելով ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված կողմերի մրցակցության և հավասարության պահանջների գործնականում իրականացումը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված անձի արդար դատաքննության իրավունքի գործնականում իրականացումն ապահովելու նպատակով, դատարանը պարտավոր է ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները, որպեսզի դատավարության բոլոր մասնակիցները ստանան վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը, իսկ դրա անհնարինության դեպքում դատարանը պարտավոր է ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները, որպեսզի դատավարության մասնակիցների ներկայացուցիչները ստանան վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍՆԵՐԸ

18.06.2014թ.

20. Երևանի քաղաքապետարան v. «Պետրոս-94» ՍՊԸ-ի տնօրեն Պետրոս Ոսկանյան, վարչ. գործ թիվ ՎԴ/5440/05/13

Էջ
102-105

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով հայցային վարույթի անցնելու դեպքում պետական տուրքի վճարման հարցի վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով դիմողներն ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից, իսկ անցումը հայցային վարույթի կատարվում է վճարման կարգադրության վարույթում հակընդդեմ հայց ներկայացնելու հիմքով, գտել է, որ հայցային վարույթը վճարման կարգադրության վարույթի շարունակությունն է, հետևաբար, այդ դեպքում նույնպես արդեն իսկ հայցվորի կարգավիճակ ստացած անձը չի կարող կրել պետական տուրքի վճարման պարտականություն (յո՛ւս, ՀՀ ռաբիկանության «Ճանապարհային ռաբիկանություն» ծառայությունն ընդդեմ Գարեգին Գալոյանի, թիվ ՎԴ6/0035/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):

Վերոնշյալ դիրքորոշման լույսի ներքո համադրելով ներկայացվող գործի փաստերը և գնահատելով այդ գործով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետարանը սույն գործով հայցվորի կարգավիճակ է ստացել վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցնելու արդյունքում, ուստի վերջինս որպես գումարի բռնագանձման պահանջի մասով վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցնելու արդյունքում հայցվորի կարգավիճակ ստացած անձ, ազատված է պետական տուրքի վճարումից և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով գումարի բռնագանձման պահանջի մասով չի կարող կրել վերաքննիչ բողոքի համար պետական տուրքի վճարման պարտականություն:

ՀԱՅՅԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

08.10.2014թ.

21. «Երեքնուկ» ՍՊԸ v. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, վարչ. գործ թիվ ՎԴ/12996/05/13

**Էջ
106-112**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հանրային իրավական դրամական պահանջ պարունակող վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերով պարտապանի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վարչադատավարական ինստիտուտի և դրա կիրառման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ, 66-րդ և 91-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ և 89-րդ հոդվածներով նախատեսված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է, որ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա: Վարչական դատարանն իրավասու է գործադրել օրենքով նախատեսված իր լիազորությունները միայն համապատասխան սուբյեկտների կողմից ներկայացված հայցադիմումի դեպքում, այսինքն՝ օժտված է հատուկ տեսակի իրավասությամբ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել է վարչական ակտերից հայցվորի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար հայցի առանձին տեսակ՝ վիճարկման հայցը: Վիճարկման հայցի դեպքում դատական վերահսկողության օբյեկտը վարչական ակտն է, հայցվորն իրավունք ունի պահանջելու ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը, իսկ վարչական գործով պատասխանողն էլ վարչական մարմինն է: Վիճարկման հայցի տարատեսակ է հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայցը: Սույն հայցի դեպքում հայցվորը վարչական ակտի հասցեատերը, համաձայն չլինելով իր համար ՀՀ պետական կամ համայնքային բյուջե դրամական գումարներ վճարելու պարտականություն նախատեսող վարչական ակտի հետ, վիճարկում է այն, իսկ վարչական մարմինն էլ հանդես է գալիս որպես պատասխանող:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է հայցի ապահովման դատավարական ինստիտուտին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկվելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը, կամ էլ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը: Հայցի ապահովման ինստիտուտը նպատակ է հետապնդում երաշխավորելու հետագայում ընդունվող դատական ակտի կատարումը: Հայցի ապահովում կիրառելու համար անհրաժեշտ է ապացուցել հայցի ապահովում չկիրառելու դեպքում դատական ակտի կատարման դժվարացման կամ անհնարինության հանգամանքը *(տե՛ս, ՀՀ կառավարությանն առնվազն պետական նկատույնների կոմիտեի Սպանդարյանի հարկային տեսչությունն ընդդեմ «Ալմես Բոնասթորաքչ» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/3511/05/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2011 թվականի որոշումը)*:

Քննարկման առարկա գործով Վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցի ապահովման դատավարական ինստիտուտի օրենսդրական կարգավորման հիմքում ընկած է գործնականում հայցվորի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նպատակը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պարտապանի գույքի վրա արգելանք դնելու դատավարական ինստիտուտը կիրառելի է միայն այն վարչական գործերի դեպքում, որոնք հարուցվել են հանրային իրավական դրամական պահանջ պարունակող վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա: Ընդ որում, տվյալ վարչական գործերի շրջանակում պահանջատեր վարչական մարմինը հանդես է գալիս պատասխանողի, իսկ վարչական ակտի հասցեատերը՝ պարտապանը, հայցվորի դերում, որը համաձայն չլինելով իր համար ՀՀ պետական կամ համայնքային բյուջե դրամական գումարներ վճարելու պարտականություն նախատեսող վարչական ակտի հետ, դրա վիճարկման հայցով դիմել է դատարան: Նման վարչական գործերի քննության ընթացքում, եթե գործով պատասխանող վարչական մարմինը գտնում է, որ առկա է վերը նշված դրամական պարտավորությունը պարտապան հայցվորի կողմից չկատարելու անմիջական վտանգ, ապա կարող է վերջինիս գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնել դատարան: Իսկ դատարանն իրավասու է դրամական պարտավորության չափով արգելանք դնելու հայցվորի գույքի վրա այն դեպքում, երբ իր գնահատմամբ այդ դրամական պարտավորությունը չկատարելու անմիջական վտանգի առկայությունը հիմնավորված է:

Այսպիսով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասով օրենսդիրը սահմանել է հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերով պարտապանի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու առանձնահատուկ վարչադատավարական ինստիտուտ, որն էապես տարբերվում է հայցի ապահովման ինստիտուտից, առաջին հերթին իր հետապնդած նպատակով: Մասնավորապես՝ ի տարբերություն հայցի ապահովման, սույն ինստիտուտը նպատակ է հետապնդում վարչական դատարանի կողմից ապագայում վիճարկման հայցը մերժելու վերաբերյալ վճռի կայացման դեպքում բացառել հանրային իրավական դրամական պահանջի կատարման անհնարինությունը: Այն չունի դատական ակտի կատարումն ապահովելու նպատակ, ինչպես հայցի ապահովումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պարտապանի (հայցվորի) գույքի նկատմամբ արգելանքի կիրառումն իրենից ներկայացնում է ինքնուրույն վարչադատավարական ինստիտուտ, որը կարող է կենսագործվել միայն օրենքով սահմանված որոշակի պայմանների առկայության դեպքում:

Մասնավորապես՝ դատարանը պետք է կիրառի գործով հայցվորի գույքի վրա արգելանք դնելու իր լիազորությունը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. վարչական գործը հարուցվել է վիճարկման հայցի հիման վրա,
2. վարչական գործով հայցվորը վիճարկում է այնպիսի վարչական ակտ, որի հիման վրա իր վրա դրված է իր համար կամ իր կողմից թույլ տրված խախտումների համար կամ մեկ այլ անձի փոխարեն ՀՀ պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պարտականություն,
3. պատասխանող վարչական մարմինը հայցվորի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել դատարան,
4. դատարանի գնահատմամբ առկա է հայցվորի կողմից իր դրամական պարտավորությունը չկատարելու անմիջական վտանգ:

Վճռաբեկ դատարանը կրկին փաստել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասով օրենսդիրը սահմանել է հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերով պարտապանի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու առանձնահատուկ վարչադատավարական ինստիտուտ: Ստորադաս դատարանների կողմից քննարկվող վարչադատավարական ինստիտուտի պատշաճ կիրառման համար կարևոր է այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերում վարչական մարմինը հանդես է գալիս պատասխանողի դերում: Այլ կերպ ասած՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումների շրջանակներում պարտապանի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունքն օրենսդիրը վերապահել է հենց գործով պատասխանողին, իսկ պարտապանը տվյալ դեպքում հանդես է գալիս գործով հայցվորի դերում:

10.10.2014թ.

22. Սամվել Գևորգյան v. ՀՀ Արարատի մարզի Մասիսի քաղաքապետարան և մյուսներ, վարչ. գործ թիվ ՎԴ-3/0342/05/13

Էջ
113-119

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատարանի կողմից մահացած անձին որպես դատավարության մասնակից, այդ թվում՝ երրորդ անձ ներգրավելու և վերջինիս մահվան հիմքով գործի վարույթը կասեցնելու իրավաչափության հարցին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 4-րդ, 14-րդ, 19-րդ հոդվածներով, 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված իրավանորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական դատավարության մասնակից հանդիսանալու համար սուբյեկտը պետք է օժտված լինի դատավարական իրավունակությամբ, ինչը ենթադրում է դատավարական իրավունքներ ունենալու և դատավարական պարտականություններ կրելու ունակություն:

Դատավարական իրավունակությունը բոլոր ֆիզիկական անձանց համար օրենսդրորեն ճանաչվում է հավասար չափով, այն ծագում է ֆիզիկական անձանց ծննդյան պահից և դադարում վերջիններիս մահվամբ, իսկ ֆիզիկական անձի տարիքը, հոգեկան հիվանդությունները, առողջական վիճակը, ընդհանուր առմամբ, չեն ազդում իրավունակության վրա: Ֆիզիկական անձինք կարող են մասնակից լինել վարչական դատավարությանը, այսինքն՝ հանդես գալ հայցվորի, պատասխանողի կամ երրորդ անձի դերում, ունենալ դատավարական իրավունքներ և կրել դատավարական պարտականություններ՝ սկսած իրենց ծննդյան պահից մինչև մահը, իսկ մահացած, այսինքն՝ իրավունակությունը դադարած ֆիզիկական անձը չի կարող հանդես գալ որպես

դատավարության մասնակից:

Վերը նշվածից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական պրակտիկայում բացառություն չեն կազմում այն դեպքերը, երբ դատավարության մասնակից ֆիզիկական անձը մահանում է գործի քննության ընթացքում: Այդ դեպքը, մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում դասվում է գործի վարույթը կասեցնելու պարտադիր հիմքերի շարքին, եթե դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի մահից հետո վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն: Այդ դեպքում դատարանը կասեցնում է գործի վարույթը մահացած դատավարության մասնակցին նրա իրավահաջորդով փոխարինելու նպատակով:

Վճռաբեկ դատարանը, իր նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով գործին մասնակցող քաղաքացու մահվան հիմքով գործի վարույթը կասեցնելու հարցին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գործին մասնակցող քաղաքացու մահվան դեպքում նրան իրավահաջորդով փոխարինելը հետապնդում է դատավարությունում կողմի ներկայությունն ապահովելու և դրա միջոցով նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության ապահովման նպատակ, որի բացակայության դեպքում գործի վարույթը վկայաղջված հիմքով կասեցվել չի կարող, քանի որ իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացվել միայն շահագրգիռ անձի կողմից որոշակի դատավարական գործողություններ կատարելու դեպքում (*Կրե՛ս, Սամվել, Սահակ և Սուլթան Մարկոսյաններն ընդդեմ Լուսիկ Գևորգյանի և մյուսների թիվ ԵԿԴ/0808/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.11.2013 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հավելել է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով գործի վարույթը կասեցնելու դատարանի լիազորությունը կիրառելի է միայն այն դեպքում, երբ մահացած ֆիզիկական անձն իր կենդանության օրոք մասնակցել է դատավարությանը, այսինքն՝ կենդանության օրոք հանդես է եկել հայցվորի, պատասխանողի կամ երրորդ անձի դերում: *Այլ կերպ ասած՝ անձի մահվան հիմքով գործի վարույթը կասեցնելն իրավաչափ է այն պարագայում, երբ ֆիզիկական անձը մինչև իր մահը հանդիսացել է դատավարության մասնակից:*

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանն իրավասու չէ նախ՝ դատավարությանը մասնակից դարձնել մինչ գործի քննությունը սկսվելը մահացած՝ իրավունակությունը դադարած ֆիզիկական անձին, ապա՝ որպես հետևանք՝ նշված դատավարությանը մասնակից դարձված ֆիզիկական անձի մահվան հիմքով կասեցնել գործի վարույթը: Այլ կերպ ասած՝ դատարանն իրավասու չէ կասեցնել գործի վարույթը մահանալու պահի դրությամբ դատավարության մասնակից չհանդիսացող ֆիզիկական անձի մահվան հիմքով:

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ ընդգծել է, որ ֆիզիկական անձինք կարող են մասնակցել վարչական դատավարությանը, այսինքն՝ հանդես գալ հայցվորի, պատասխանողի կամ երրորդ անձի դերում իրենց ծննդյան պահից մինչև մահը: Բացի այդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով գործի վարույթը հնարավոր է կասեցնել միայն այն դեպքում, երբ ֆիզիկական անձն իր կենդանության օրոք մինչև մահանալու պահը հանդիսացել է դատավարության մասնակից: Հետևաբար, դատարանը չունի հնարավորություն կասեցնել գործի վարույթը մահանալու պահի դրությամբ դատավարության մասնակից չհանդիսացող ֆիզիկական անձի մահվան հիմքով: Դատարանը, գործով երրորդ անձ ներգրավելու որոշում կայացնելով, անձի վրա չի կարող դնել դատավարության մասնակից դառնալու պարտականություն, իսկ վերջինս էլ չի կարող ձեռք բերել դատավարության մասնակցի իրավունքներ, քանի որ մահվան փաստով վերացել են անձի այդ ունակությունները (իրավունակությունը):

ՊԱՐՏԱՎՈՐԵՑՄԱՆ ՀԱՅՑ

25.09.2013թ.

23. Հակոբ Կիրակոսյան v. Երևան համայնք, վարչ. գործ թիվ ՎԳ/2220/05/13

**Էջ
120-125**

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է պարտավորեցման հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետների հաշվարկման հարցին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի, 71-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 78-րդ հոդվածի 4-րդ մասի, 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենքի ուժով պարտավորեցման հայցի շրջանակներում հայցվորին իրավունք է վերապահված պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը վարչական մարմինը մերժել է կամ որը վերջինս չի ընդունել, որպիսի հայցատեսակով դատարան դիմելու համար սահմանված է մեկամսյա ժամկետ՝ վարչական ակտի ընդունումը մերժելու պարագայում, և երկամսյա ժամկետ՝ վարչական ակտը չընդունելու պարագայում: Առաջին դեպքում անհրաժեշտ նախապայման է մերժման վերաբերյալ վարչական ակտի գոյությունը: Այլապես, վարչական վարույթ իրականացնելու համար սահմանված առավելագույն ժամկետի ավարտից հետո նման վարչական ակտ չընդունվելու դեպքում կիրառելի է երկամսյա ժամկետը: Հետևաբար, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է պարզել անձի դիմումին ի պատասխան ներկայացված գրության՝ մերժման վերաբերյալ վարչական ակտ լինելու հանգամանքը:

ՎԱՐՈՒՅՑՈՒԹՎ ԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

30.04.2013թ.

24. «Շինմոնտաժարդեկտ» ՍՊԸ-ի նախկին տնօրեն Կարեն Մարտիրոսյան v. ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, վարչ. գործ թիվ ՎԳ/7871/05/12

**Էջ
126-130**

Խնդիր. Արդյո՞ք ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իրավասու է միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքով վերադարձնել վերաքննիչ բողոքն այն պայմաններում, երբ գործում առկա չեն ՀՀ վարչական դատարանի կողմից միջանկյալ դատական ակտը բողոք բերած անձին ուղարկելու և վերջինիս կողմից այն ստանալու վերաբերյալ ապացույցները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասը, նույն օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ մասը, 117.2-րդ հոդվածի 2-րդ մասը, 125-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատարանի՝ միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված է 15-օրյա ժամկետ, որպիսի ժամկետի հաշվարկը սկսում է հոսել այդ ակտը ստանալուց հետո, իսկ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը գործին մասնակցող անձանց ուղարկելու գործընթացը կարգավորվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի պատշաճ ծանուցման կանոններով:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R (95) 5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝

պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Վերը նշվածից հետևում է, որ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի ցանկացած որոշման վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ ատյանի դատարան):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (յո՛ւն, «Պայքար և Հարթմանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի թիվ 21638/03 գանգադրով Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը, պարբ. 44):

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ նման կարգավորումը ենթադրում է բավարար իրավական երաշխիքների առկայություն բողոք ներկայացնող անձի՝ վերադաս դատական ատյանում լսված լինելու իրավունքն ապահովելու առումով: Դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումները, այդ թվում և վերաքննիչ բողոքը վերադարձնելու միջոցով, խախտում են այդ իրավունքը, եթե ստորադաս դատարանի կողմից թույլ տրված ընթացակարգային խախտումներն ազդել են բողոք բերելու ժամկետների վրա:

Սույն գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ բողոք բերած անձը որպես բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդության հիմնավորում նշել է, որ վիճարկվող որոշումը փոստային եղանակով ստացել է 21.12.2012 թվականին, սակայն դրա վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացրել, իսկ գործում առկա կույտերով չի հիմնավորվում բողոք բերած անձի կողմից վիճարկվող որոշումն ուշացումով ստանալու վերաբերյալ միջնորդությամբ նշված փաստարկը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վերոգրյալ պատճառաբանությունն անհիմն է, քանի որ սույն գործում առկա չէ ՀՀ վարչական դատարանի 03.12.2012 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը բողոք բերած անձին ուղարկելու և այն վերջինիս կողմից ստանալու փաստը հավաստող պատշաճ ապացույց, որպիսի պայմաններում ընդհանրապես հնարավոր չէ պարզել բողոք բերած անձի կողմից վիճարկվող որոշումը ստանալու ճշգրիտ ժամանակը: Հետևաբար, առանց նշված ապացույցի առկայության ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իրավասու չէր վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետը համարել բաց թողնված և այդ հիմքով վերադարձնել վերաքննիչ բողոքը:

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ԵՎ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ

07.05.2013թ.

24. Գևորգ Գյոզալյան v. ՀՀ արդարադատության խորհուրդ, վարչ. գործ թիվ ՎԴ/1375/05/12

Էջ
131-136

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու հիմքի առկայության խնդրին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվակա-

նին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերը, 204.33-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու համար անհրաժեշտ պայման է հանդիսանում դատարանի կողմից կիրառված հոդվածի կամ հոդվածի դրույթի հակասահմանադրական ճանաչումը կամ սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող՝ այլ մեկնաբանությամբ կիրառումը: Հետևաբար, եթե դատարանը չի կիրառել այն դրույթը, որը ՀՀ սահմանադրական դատարանը ճանաչել է հակասահմանադրական կամ կիրառված դրույթի վերաբերյալ դատարանի մեկնաբանությունները և այդ դրույթի կիրառումը դրա սահմանադրաիրավական բովանդակության համատեքստում է, ապա դատական ակտը ենթակա չէ վերանայման նոր հանգամանքի հիմքով:

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿՅՏԵՐԻ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

07.08.2013թ.

25. Մագդա Եղիազարյան v. ՀՀ կառավարություն, վարչ. գործ թիվ Էջ 137-143
ՎԳ/1178/05/13

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը կարևորել է գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասում նշված՝ վարչական դատարան դիմելու եռամսյա ժամկետը հաշվարկելու համար ելակետային պահը որոշելու խնդրի լուծումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերլուծելով գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, նույն օրենսգրքի 136-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը չի նախատեսում նորմատիվ ակտի իրավաչափությունը «in abstracto» վիճարկելու հնարավորություն: Այսինքն՝ իրավունքը խախտող նորմատիվ ակտի գործողության փաստն ինքնին ղեռնա բավարար չէ նորմատիվ ակտի իրավաչափությունը վիճարկելու համար: Անհրաժեշտ է, որ այդ նորմատիվ ակտը կիրառված լինի տվյալ անձի նկատմամբ՝ ի վնաս իրեն: Սրանից բխում է, որ անձի իրավական շահը տվյալ նորմատիվ ակտի իրավաչափությունը վիճարկելու հարցում ծագում է, տվյալ անձն օժտվում է նորմատիվ ակտի իրավաչափությունը վիճարկելու իրավասությամբ այդ ակտի՝ իր նկատմամբ կիրառվելու ուժով: Այլ կերպ՝ անձն իրավասու է վիճարկելու իր իրավունքը ենթադրաբար խախտող նորմատիվ ակտի իրավաչափությունն այն դեպքում, երբ այդ նորմատիվ ակտի հիման վրա վարչական մարմինն իր վերաբերյալ ընդունել է վարչական ակտ, իր նկատմամբ կատարել է գործողություն, դրսևորել անգործություն, և ինքը համարում է, որ իր իրավունքի խախտման փաստը պայմանավորված է դրա հիմքում ընկած նորմատիվ ակտի ոչ իրավաչափությամբ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածում նշված՝ իրավունքի խախտման պահը որոշվում է ըստ այդ նորմատիվ ակտի՝ անձի նկատմամբ կիրառման պահի, այն է՝ այդ նորմատիվ ակտի հիման վրա վարչական ակտի ընդունման, գործողության (անգործության) կատարման պահի:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե անձը որ պահից սկսած կարող է իրացնել իր նկատմամբ կիրառված նորմատիվ ակտի իրավաչափությունը վիճարկելու իր իրավունքը, ապա այս առնչությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել բացահայտել օրենսդրի այն տրամաբանությունը, որն ընկած է վարչական ակտի դատական կարգով բողոքարկման կարգի հիմքում:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Չսպառնալիք նրան, որ օրենսդիրը վարչական մարմնին պարտավորեցնում է նշված ժամկետում վարչական ակտը հանձնել վարույթի մասնակիցներին, այնուամենայնիվ, նկատի ունենալով գործնականում նշված պահանջը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հնարավորությունը՝ օրենսդիրը վարչական ակտը վիճարկելու օրենքով սահմանված ժամկետի հոսքը պայմանավորել է ոչ թե վարչական ակտի ընդունման, այլ այդ ակտը վարույթի մասնակիցներին հանձնելու, իրազեկելու հանգամանքով: Մասնավորապես՝ գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայրը դատարան կարող է ներկայացվել՝ վիճարկման հայցի դեպքում երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրի նշված տրամաբանությունը բխում է անձի իրավունքների իրավական պաշտպանության (դատական և վարչական կարգով) արդյունավետությունը երաշխավորելու անհրաժեշտությունից: Մասնավորապես՝ անձի իրավունքների արդյունավետ իրավական պաշտպանությունն ապահովելու համար անհրաժեշտ է նրա համար փաստացիորեն երաշխավորել իրավական պաշտպանության դիմելու համար օրենքով սահմանված ողջ ժամկետից օգտվելու իրական հնարավորություն: Նշված իրավակարգավորումը լուծում է այդ խնդիրը:

Վճռաբեկ դատարանը, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու անհրաժեշտությամբ և օրենսդրի վերոհիշյալ տրամաբանությամբ, գտել է, որ նորմատիվ ակտերի վիճարկման պարագայում ևս անձի՝ դատարան դիմելու համար սահմանված ժամկետի հոսքը պետք է սկսվի այն պահից, երբ ինքը տեղեկացել է իր նկատմամբ տվյալ նորմատիվ ակտի կիրառման մասին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված եռամսյա ժամկետի հաշվարկման համար որպես ելակետ պետք է հիմք ընդունվի այն պահը, երբ շահագրգիռ անձը տեղեկացել է վիճարկվող նորմատիվ ակտի՝ իր նկատմամբ կիրառվելու մասին:

ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

22.02.2013թ.

26. Երևանի քաղաքապետարան v. «Ձորագյուղ» ԱԿ-ի տնօրեն Աշոտ Սուրիսյան, վարչ. գործ թիվ ՎԳ/2431/03/12

Էջ
144-151

Խնդիր. Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վճարման կարգադրության՝ որպես վարչական դատավարական ձևի օրենսդրական կարգավորման նպատակներին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վճարման կարգադրություն արձակելու վարույթը, գտնվելով ընդհանուր դատավարական ձևի շրջանակներից դուրս, միաժամանակ դատավարական ինքնուրույն, հատուկ և պարզեցված տեսակ է, որը հարուցվում է հայցադիմումի հիման վրա: Վճարման

կարգադրություն արձակելու գործերի վարույթի ընթացակարգում միայն հակընդդեմ հայցն է, որ արգելակում է վճարման կարգադրության օրինական ուժ ստանալը և հարկադիր կատարումը, այն է՝ **պատասխանողը վարչական ակտի վիճարկման իր իրավունքը կարող է իրականացնել հակընդդեմ հայց ներկայացնելու եղանակով:**

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վճարման կարգադրության դատավարական ձևի կիրառման հիմնական հատկանիշը վարչական ակտի և դրա հիման վրա բռնագանձվող գումարի անվիճարկելիությունն է: Հետևաբար այն դեպքերում, երբ վճարման կարգադրության վարույթի ժամանակ արդեն իսկ բացակայում է վարչական ակտի և դրա հիման վրա բռնագանձվող գումարի անվիճարկելիության հատկանիշը, վճարման կարգադրության վարույթի ձևով գումարի բռնագանձման հարցը քննվել չի կարող, իսկ վճարման կարգադրություն արձակելու հայցադիմումը պետք է մերժվի կամ արձակված վճարման կարգադրությունը պետք է վերացվի:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վճարման կարգադրություն արձակելու դեպքում դատարանը պետք է հաշվի առնի անձի՝ վարչական դատարան դիմելու իրավունքի և ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով ու Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի պահանջները:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ վարչական դատավարության շրջանակներում անձի իրավունքների պաշտպանությունն իրականացվում է ոչ միայն վճարման կարգադրության վարույթի շրջանակներում հակընդդեմ հայց ներկայացնելով, այլև անձի կողմից գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 65-րդ հոդվածների հիման վրա վարչական ակտը վիճարկելով: Հետևաբար գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 65-րդ հոդվածների հիման վրա վարչական ակտի վիճարկման պարագայում վճարման կարգադրության վարույթի կիրառումը չի բխի անձի՝ դատական կարգով իր իրավունքների պաշտպանության սահմանադրական իրավունքից, իսկ վճարման կարգադրության շրջանակներում առկա չի լինի վարչական ակտի և դրա հիման վրա բռնագանձվող գումարի անվիճարկելիության հատկանիշը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ անձի՝ դատարան դիմելու իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով, և դատարանը հայցադիմումի ընդունումը մերժելու հարցը քննարկելիս պետք է հաշվի առնի, որ հայցադիմումի ընդունումը մերժելու լիազորությունը սերտորեն կապված է անձի դատական պաշտպանության, ինչպես նաև խախտված սուբյեկտիվ իրավունքները վերականգնելու իրավունքների հետ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ իրավունքի գերակայության սկզբունքը պահանջում է, որ իրավունքները գործնականում իրականանալի լինեն և Կոնվենցիայի 6-րդ հոդվածը միշտ կիրառվի այնպես, որ ապահովվի այդ խնդրի կատարումը:

Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ կիրառման ենթակա իրավակարգավորման պայմաններում վճարման կարգադրությունը վերանում է, երբ՝

անձը գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ և 159-րդ հոդվածներով սահմանված կազրով հակընդդեմ հայց է ներկայացրել,

անձը մինչև վճարման կարգադրություն արձակելը գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 65-րդ հոդվածների հիման վրա վիճարկում է վճարման կարգադրության հիմքում դրված վարչական ակտը:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է գործի քննության պահին գործող (ուժի մեջ է մտել 01.01.2008 թվականին, ուժը կորցրել է 07.01.2014 թվականին)՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածից, որի համաձայն՝ վարչա-

կան դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու **լիարժեք հնարավորություն**: Հակառակ պարագայում անձը կարող է առանձին վիճարկել վճարման կարգադրություն արձակելու հայցադիմումի հիմքում դրված վարչական ակտը, սակայն վճարման կարգադրության վարույթի պայմաններում հնարավորություն չի ունենա ներկայացնել իր դիրքորոշումն այն պարագայում, երբ վճարման կարգադրությունն արդեն արձակվել է: **Շման իրավիճակը չի բխում արդարադատության արդյունավետությունից և հանգեցնում է անձի արդար դատաքննության իրավունքի խախտման:**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ/0043/02/12
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ/0043/02/12
Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան
Ա. Խատատյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռարեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի օգոստոսի 07-ին,
քննարկելով ըստ հայցի Հայկ Դունամայանի ընդդեմ Վարդան Սարգսյանի, Ավագ Սարգսյանի և Սուսաննա Գաբրիելյանի՝ բաժնի առանձնացման պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Ավագ Սարգսյանի ընդդեմ Լաերտ և Հայկ Դունամայանների՝ պատճառոված վնասի հատուցման պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.06.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Լաերտ Դունամայանի վճռարեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հայկ Դունամայանը պահանջել է առանձնացնել Վարդան Սարգսյանի 1/3 բաժինը ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավան գյուղում գտնվող և համասեփականության իրավունքով Վարդան, Ավագ Սարգսյաններին և Սուսաննա Գաբրիելյանին պատկանող 2 միավոր վարելահողից, երկու միավոր տնամերձ հողամասից և պտղատու այգուց:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ավագ Սարգսյանը պահանջել է թիվ ԱՐԱԳ/0283/02/10 քաղաքացիական գործով 02.07.2010 թվականին կայացված վճռով Վարդան Սարգսյանից բռնագանձվելիք 2.400 ԱՄՆ դոլարին համարժեք 734.000 ՀՀ դրամը, վճարված պետական տուրքը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված բանկային տոկոսները հաշվանցել՝ որպես իրեն պատճառված վնասի հա-

տուցում:

Դիմելով դատարան՝ Ավագ Սարգսյանը պահանջել է Լաերտ Դունամալյանից՝ որպես հրդեհի հետևանքով հասցրած վնաս, բռնագանձել 28.744.000 ՀՀ դրամ և այդ գումարից հաշվանցել ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՐԱԴ/0283/02/10 քաղաքացիական գործով 02.07.2010 թվականին կայացրած վճռով Վարդան Սարգսյանից հոգուտ Հայկ Դունամալյանի բռնագանձման ենթակա գումարները:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.02.2013 թվականի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ հայցի Ավագ Սարգսյանի ընդդեմ Լաերտ Դունամալյանի՝ վնասի փոխհատուցման պահանջի մասին, և քաղաքացիական գործն ըստ հայցի Հայկ Դունամալյանի ընդդեմ Վարդան, Ավագ Սարգսյանների և Սուսաննա Գաբրիելյանի՝ բաժինն առանձնացնելու պահանջի մասին, միացվել են մեկ վարույթում:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 19.04.2013 թվականի վճռով Ավագ Սարգսյանի հայցը բավարարվել է, վճռվել է. «Լաերտ Դունամալյանից հոգուտ Ավագ Սարգսյանի բռնագանձել 28.744.000 ՀՀ դրամի հասցրած վնասը և 50.000 ՀՀ դրամ փորձաքննության ծախսը, ընդամենը՝ 28.794.000 ՀՀ դրամ: Կատարել տույն վճռի 1-ին կետով բռնագանձման ենթակա 28.794.000 ՀՀ դրամի հաշվանցում Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.07.2010 թվականի ԱՐԱԴ/0283/02/10 վճռով Վարդան Ավագի Սարգսյանից հոգուտ Հայկ Դունամալյանի բռնագանձման ենթակա 240 ԱՄՆ դոլարին համարժեք 99.977 ՀՀ դրամի, 734.000 ՀՀ դրամի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված 297.883 ՀՀ դրամ բանկային տոկոսների հետ և Լաերտ Դունամալյանից հոգուտ Ավագ Սարգսյանի վերջնականորեն բռնագանձել 27.680.140 ՀՀ դրամը: Կարճել գործի վարույթն ըստ հայցի Հայկ Դունամալյանի ընդդեմ Վարդան Սարգսյանի, Ավագ Սարգսյանի և Սուսաննա Գաբրիելյանի՝ բաժնի առանձնացման պահանջով»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.06.2013 թվականի որոշմամբ Լաերտ Դունամալյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լաերտ Դունամալյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, «Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, «Պետական փութքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 21-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել նույն օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատաքանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Բողոք բերած անձը մասնավորապես նշել է, որ Դատարանի վճռով իր վրա դրվել է բավականին մեծ գումարի դրամական պարտավորություն, որի բողոքարկման համար վճարման ենթակա պետական տուրքի չափը ևս զգալի է: Վերաքննիչ դատարանը,

մերժելով պետական տուրքի վճարումը տարածամկետելու վերաբերյալ միջնորդությունը, սահմանափակել է իր դատական պաշտպանության իրավունքը, մինչդեռ անձն իր իրավունքների պաշտպանությունից չի կարող զրկվել զուտ ձևական խոչընդոտների առկայության հիմքով:

Վերաքննիչ դատարանի որոշումն առերևույթ հակասում է ՀՀ Վճռաբեկ դատարանի 14.04.2008 թվականի թիվ 3-365(ՎԴ) և 20.03.2013 թվականի թիվ ԵԷԴ/1080/02/12 որոշումներին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 01.06.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Սույն վճռաբեկ բողոքի քննությունը Վճռաբեկ դատարանը պայմանավորում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված նորմի միատեսակ կիրառությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Մասնավորապես, այդ նպատակով Վճռաբեկ դատարանը կարևորում է դրանում նշված՝ պետական տուրքի վճարումը տարածամկետելու իրավական ինստիտուտի կիրառման հարցի լուծումը:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարածամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք վճարողներն իրավունք ունեն ... դիմել համապատասխան պետական մարմիններ՝ պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար ...:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ նույն օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատարանի մատչելիության տեսան-

կյունից Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) երբեք չի բացառել, որ կարող են լինել դեպքեր, երբ արդարադատության շահերից ելնելով՝ անհրաժեշտ լինի ֆինանսական սահմանափակումներ կիրառել դատարան դիմելու՝ անհատների իրավունքների նկատմամբ (յո՛ւն ս, *Տոլստոյ-Միլոսավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը*): Միաժամանակ, Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարան դիմելու արդյունավետ իրավունքի երաշխավորումը չի նշանակում ընդամենը միջամտության բացակայություն, այլ կարող է պահանջել, որ պետությունը ձեռնարկի որոշակի դրական քայլեր այդ ուղղությամբ (յո՛ւն ս, *Էյրին ընդդեմ Իռլանդիայի Եվրոպական դատարանի 09.10.1979 թվականի վճիռը*): Բացի այդ, Եվրոպական դատարանը հաշվի է առնում այն դեպքերը, երբ ներպետական օրենսդրությամբ դատական տուրքերից ազատելու որոշումը ցանկացած ժամանակ կարող է չեղյալ հայտարարվել դատարանների կողմից, եթե ազատելու համար հիմք հանդիսացած հանգամանքները դադարում են գոյություն ունենալուց, կամ երբ դիմողին դատավարության սկզբնական փուլում հայց ներկայացնելու հնարավորությունը դատարաններին չի զրկում հետագա ցանկացած փուլում՝ դիմողի ֆինանսական դրությունը բարելավվելու դեպքում վերջինից դատական տուրք գանձելու հնարավորությունից (յո՛ւն ս, *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 16.06.2001 թվականի վճիռը*): Եվրոպական դատարանը նշում է նաև, որ պետական տուրքը վճարելու պարտավորությունը չի կարող դիտարկվել որպես դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակում, որն ինքնին չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին: Այնուամենայնիվ, այդ տուրքերի գումարը գնահատելը որոշակի գործի հատուկ հանգամանքների տեսանկյունից, ներառյալ դրանք վճարելու դիմումատուի ունակությունը և դատավարության այն փուլը, որում նման սահմանափակումը կիրառվել է, հանգամանքներ են, որոնք էական են որոշելու համար՝ անձն օժտված է եղել դատարանի մատչելիության իրավունքով, թե ոչ (յո՛ւն ս, *Պոլբիեյսկին և ՊՊՈ Պոլսոյն ընդդեմ Լեհաստանի, թիվ 39199/98, 26.07.2005 թվական, «Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի, 20.12.2007 թվական, գանգադ թիվ 21638/2003*): Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ պետական տուրքի գծով արտոնությունները, այդ թվում՝ դրա տարածամկետում կամ վճարման հետաձգումը նպատակ են հետապնդում վերացնել արդարադատության մատչելիության այնպիսի խոչընդոտները, որոնք պայմանավորում են անձի մոտ համապատասխան միջոցների բացակայության պատճառով դատարան դիմելու, վերադաս ատյան բողոք ներկայացնելու անհնարիությունը: Այդ նպատակից ելնելով՝ օրենսդիրը, ի տարբերություն պետական տուրքի վճարումից ազատելու ձևով արտոնություն սահմանելուն, դատարանի համար առավել լայն հայեցողական լիազորություն է սահմանել պետական տուրքի վճարումը տարածամկետելու կամ հետաձգելու հարցում: Վերջինս պայմանավորված է դատարանի դերով՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի, որը միաժամանակ պետք է ապահովի անձի արդարադատության մատչելիության իրավունքը (յո՛ւն ս, *Դավիթ Սասկյանն ընդդեմ Լյուսա Սահակյանի, Սեդա Սահակյանի, Երևանի կենտրոնական տուրքային գրասենյակի նույնար Էմմա Շաբոյանի, Կերոբյան անձինք՝ Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կառավարությունն առնչված անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիրի քաղաքապետարանի Ժամանակակից ժամանակակից վկայագիրն անվավեր ճանաչելու, ժամանակությունն ընդունած ժամանակ ճանաչելու պահանջների մասին Վճռաբեկ դատարանի 05.05.2009 թվականի որոշումը, քաղաքացիական գործ թիվ ԵԲԴ/0820/02/08*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Լաերտ Դունամայանը վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է պետական տուրքի վճարումը տարածամկետելու վերաբերյալ միջնորդություն: Վերաքննիչ դատարանը մերժել է միջնորդությունը, իսկ վերաքննիչ բողոքը վերա-

դարձրել է այն պատճառաբանությամբ, որ պետական տուրքի գծով նման արտոնություն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված չէ («հետաձգում» և «տարածամկետում» հասկացությունները նույնական բովանդակություն չունեն), բացի այդ բողոքին չի կցվել միջնորդության հիմքում դրված փաստը՝ բողոք բերողի՝ պետական տուրքի գումարը վճարելու հնարավորություն չունենալը հաստատող ապացույցներ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով առաջին հերթին պետք է առաջնորդվեր անձի արդարադատության մատչելիության ապահովման սկզբունքով և ելնել այդ իրավունքը ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում ապահովելու նպատակից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պետական տուրքի չափը սահմանելու, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարածամկետելու և դրա չափը նվազեցնելու հարցերը լուծվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

Վկայակոչված հոդվածից հետևում է, որ պետական տուրքի վճարումը տարածամկետելու հասկացությունը և կիրառման կարգը ենթակա է սահմանման «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Մինչդեռ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է (27.12.1997 թվական) մինչև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունումը (17.06.1998 թվական), սահմանելով (հոդված 21) պետական տուրքի գծով արտոնությունների տեսակները, որպես այդպիսին չի նախատեսել պետական տուրքի վճարման ժամկետի տարածամկետումը: Օրենսդրական նման բացը դատական պրակտիկայում որոշ դեպքերում, ինչպես սույն գործով հանգեցնում է այդ հիմքով պետական տուրքի վճարումը տարածամկետելու վերաբերյալ միջնորդությունների մերժման:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ եթե իրավական ակտում նախատեսված նորմի պահանջի կատարում կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա իրավական ակտն այդ նորմի մատով գործում է համապատասխան իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկայակոչված իրավադրույթի հիմքով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետը պետական տուրքի ժամկետը տարածամկետելու մատով չի գործում, քանի դեռ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում համապատասխան լրացումը չի կատարվել: Մինևույն ժամանակ այդ հիմքով անձի դատական պաշտպանության իրավունքը սահմանափակելը Վճռաբեկ դատարանի համոզմամբ չի բխում ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթներից, ուստի պետական տուրքի վճարումը տարածամկետելու իրավական ինստիտուտի կիրառման հարցը պետք է նախ և առաջ դիտարկել դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի բովանդակային տարր հանդիսացող արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդուհանդերձ, կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (*չլենս*, «Վիկտորիա Կոնցեն» ՍՊԸ-ն ընդդեմ «Ալվարեխավտունարիկա»

ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/1080/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.03.2013 թվականի որոշումը, ինչպես նաև «Պայքար և Հաղթանակ ՍՊԸ-ն» ընդդեմ Հայաստանի թիվ 21638/03 գանգաբով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրական բացի հիմքով անձի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումը չի կարող ապահովել ողջամիտ համաչափություն օգտագործվող միջոցների և նպատակի միջև, ընդհակառակը, կարող է անհաղթահարելի խոչընդոտ հանդիսանալ արդարադատության մատչելիության իրավունքի իրականացման տեսանկյունից: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ ներկայացվել է պետական տուրքի վճարումը տարածամկետելու վերաբերյալ միջնորդություն, դատարաններն այն պետք է քննարկեն և այդ հարցով որոշում կայացնեն որպես պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանն այն մասին, որ երկու հայց պարունակող վճիռը բողոքարկվել է ամբողջությամբ, մինչդեռ բողոք բերած անձն առաջին հայցի մասով վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունք չուներ, քանի որ նա առաջին հայցով գործին մասնակցող անձ չի հանդիսացել, գտնում է, որ այն անհիմն է:

Մասնավորապես, հիմնվելով վերոգրյալի վրա և սույն գործի փաստերը համադրելով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով միայն առաջին հայցին, անտեսել է և իր որոշմամբ չի անդրադարձել Ավագ Սարգսյանի հայցին ընդդեմ Լաերտ Դունամալյանի՝ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին, քանի որ այս հայցով Լաերտ Դունամալյանը հանդես է գալիս որպես կողմ, և Դատարանի 19.04.2013 թվականի վճռով կայացվել է Լաերտ Դունամալյանի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ գործն ըստ էության լուծող դատական ակտ: Հետևաբար ամբողջ վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը չի կարող վերադարձվել զուտ այն հիմքով, որ բողոք ներկայացրած անձն իրավունք ուներ բողոքարկելու միայն վճռի մի մասը:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները և Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ինչպես նաև այդ դրույթներով երաշխավորված անձի արդարադատության մատչելիության ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում նաև Վերաքննիչ դատարանի հետևությունը՝ միջնորդությունում նշված փաստարկները հիմնավորող ապացույցներ չներկայացնելու հիմքով միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքը վերադարձնելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը վերադարձնելով, սահմանափակել է Լաերտ Դունամալյանի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին կետով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.06.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0536/02/13**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0536/02/13

Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան

Դատավորներ՝ Ա. Պետրոսյան

Կ. Զիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի հունիսի 30-ին

քննարկելով ըստ հայցի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդ-
դեմ Հասմիկ, Ռոբերտ, Անահիտ Ափիկյանների, Սիրանուշ Ծատիկյանի՝ գումարի բռնա-
գանձման պահանջի մասին, և ըստ Հասմիկ, Ռոբերտ, Անահիտ Ափիկյանների, Սիրանուշ
Ծատիկյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Ընկերության՝ 02.11.2011 թվականին կնքված քար-
տով վարկային սահմանաչափի տրամադրման մասին թիվ 060216/310894 պայմանագիրը,
03.11.2011 թվականին կնքված «Անշարժ գույքի գրավով ապահովված վարկային քարտե-
րի տրամադրման մասին» թիվ 310894 պայմանագիրը, այդ պայմանագրի անբաժանելի
մաս կազմող 03.11.2011 թվականին կնքված անշարժ գույքի գրավի մասին թիվ 1C223839
պայմանագիրը, երաշխավորության թիվ 333108 պայմանագիրը և երաշխավորության թիվ
333109 պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին, քաղաքացիական գոր-
ծով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.04.2014 թվականի «Վերաքննիչ բո-
ղոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Ռոբերտ Ափիկյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Հասմիկ, Ռոբերտ, Անահիտ Ափի-
կյաններից և Սիրանուշ Ծատիկյանից համապարտության կարգով բռնագանձել 25.976
ԱՄՆ դոլար և 34 ցենտ ու 17.966 ՀՀ դրամ, ինչպես նաև Ընկերության կողմից վճարած
պետական տուրքի գումարը, սկսած 26.12.2012 թվականից մինչև վարկի մնացորդի գումար-
ը՝ 22.907.50 ԱՄՆ դոլարը, Ընկերությանը վերադարձնելու օրը, հաշվարկել և պատաս-

խանողներից համապարտության կարգով բռնագանձել պայմանագրով նախատեսված տարեկան 15% տոկոսադրույքը, սկսած 26.12.2012 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը հաշվարկել և բռնագանձել պայմանագրով նախատեսված տույժերի գումարը, գումարի բռնագանձումը տարածել ինչպես պատասխանողներին սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների վրա, այնպես էլ պատասխանողների կողմից գրավադրված Երևանի Ագաթանգեղոսի փողոցի 7-րդ շենք թիվ 6 բնակարանի վրա:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ս. Թադևոսյան) (այսուհետ՝ Դատարան) 13.02.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.03.2014 թվականի որոշմամբ Ռ-որերտ Ափիկյանի միջնորդությունը՝ պետական տուրքի վճարումից ազատելու մասին, մերժվել է և վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ միաժամանակ սահմանելով ժամկետ թույլ տրված խախտումները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար:

Վերաքննիչ դատարանի 07.04.2014 թվականի որոշմամբ Ռ-որերտ Ափիկյանի միջնորդությունը՝ պետական տուրքի վճարումից ազատելու մասին, կրկին մերժվել է, իսկ վերաքննիչ բողոքը վերադարձվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռ-որերտ Ափիկյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասը, «Պետական գույքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, 21-րդ հոդվածի «ա» կետը, 31-րդ հոդվածի «գ» կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Սույն գործով հաստատված է այն հանգամանքը, որ բողոք բերողն առաջին կարգի հաշմանդամ է: Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելիս պատճառաբանել է, որ բողոք բերած անձը գույքային վատ դրության վերաբերյալ այլ ապացույցներ չի ներկայացրել, իսկ ինչ վերաբերում է նրա կողմից ներկայացրած հաշմանդամության վերաբերյալ փաստաթղթին, ինչպես նաև հիվանդության ախտորոշման վերաբերյալ պոլիկլինիկական ծառայության 24.03.2014 թվականի փաստաթղթին, ապա դրանք չեն կարող հիմք հանդիսանալ միջնորդությունը բավարարելու համար, քանի որ թոշակառու կամ հաշմանդամ լինելու հանգամանքը դեռևս չի վկայում անձի գույքային ծանր դրության մասին:

Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված չէ և չի համապատասխանում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի չափանիշին: Պետական տուրքի գծով արտոնություններ սահմանելու դատարանի լիազորությունը հայեցողական է, սակայն այն չպետք է սահմանափակի անձի արդարադատության մատչելիությունը:

Վերաքննիչ դատարանը, պետական տուրքի վճարումից ազատելու մասին միջնորդությունը մերժելով, սահմանափակել է բողոք բերած անձի վերաքննիչ բողոքի քննության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա վճարել բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վե-
րաքննիչ դատարանի 07.04.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին»
որոշումը:

3. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննարկելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել դատարանն
այն գտնում է հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի
իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմին-
ների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր
խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրան-
քի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարու-
թյան բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից
ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քա-
ղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցան-
կացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ
և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դա-
տաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ
ենթակետի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է դատարանի վճիռների և որոշում-
ների դեմ վերաքննիչ և վճարել բողոքների համար:

Շույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պետական տուրքի չափը սահմանելու, դրա
վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու
և դրա չափը նվազեցնելու հարցերը լուծվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետի հա-
մաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատա-
կան ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին
ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճա-
րումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորու-
թյուն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ
միջնորդությունը:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք
վճարողներն իրավունք ունեն դիմել համապատասխան պետական մարմիններ՝ պետա-
կան տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ պե-
տական տուրքի գծով կարող է սահմանվել արտոնություն՝ պետական տուրքի վճարումից
ազատում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ առան-
ձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնու-
թյուններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ նույն օրենքի 9-րդ
հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից:

Վճարել դատարանն իր որոշումներում անդրադառնալով տվյալ իրավական խնդ-
րին՝ նշել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի առաջին պարբե-
րության «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար
պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դա-

տավորները՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից և այդ արտոնությունները ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը, որն ուղղված է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն սատիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (յու՛ն և, Արևե՛նակ և Գուլյա Սահակյանների հայցն ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի՝ նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդի գումարը փոխհատուցելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008 թվականի թիվ 3-734(ՎԳ) որոշումը, «Պայքար և Հաղթանակ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 որոշումը, կետ 44):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ յուրաքանչյուր դեպքում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառումը պետք է հիմնվի դատարանի ներքին համոզման վրա (սուբյեկտիվ չափորոշիչ), որը, սակայն, ձևավորվում է ապացույցների օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի հետազոտման վրա (օբյեկտիվ չափորոշիչ): Բացի այդ, ներքին համոզման հիման վրա ապացույցների գնահատումը, որպես ապացուցման գործընթացի բաղկացուցիչ մաս, չպետք է լինի կամայական, այլ պետք է ուղղված լինի քաղաքացիական դատավարության նպատակների իրականացմանը, որոնցից ամենահիմնականը՝ իրավունքի սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ռ-դրերտ Ափինյանը Գատարանի 13.02.2014 թվականի վճռի դեմ բերել է վերաքննիչ բողոք՝ միաժամանակ միջնորդելով ազատել պետական տուրքի վճարումից այն պատճառաբանությամբ, որ ինքն առաջին խմբի հաշմանդամ է՝ ախտորոշված է զարգացման վերջին աստիճանի քաղցկեղ, միակ եկամտի աղբյուրը հաշմանդության թոշակն է: Նյութական ծանր վիճակի հետ կապված նույնիսկ չի կարողանում ստանալ պարտադիր քիմիաթերապիա: Որպես իր նյութական ծանր դրությունը հիմնավորող ապացույց՝ բողոք բերած անձը վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է հիվանդության ախտորոշման վերաբերյալ պոլիկլինիկական ծառայության 24.03.2014 թվականի փաստաթուղթը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության 17.05.2010 թվականի հաշմանդամության վերաբերյալ տեղեկանքը:

Վերաքննիչ դատարանը մերժելով նշված միջնորդությունը՝ վերադարձրել է վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ բողոք բերած անձի փաստարկները հաշմանդամ և թոշակառու լինելու և դրանք վերաբերյալ առկա ապացույցները բավարար չեն վերջինիս գույքային դրությունը ծանր գնահատելու և պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն սահմանելու համար:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին և բողոք բերած անձի ներկայացրած ապացույցներին՝ հիվանդության ախտորոշման վերաբերյալ պոլիկլինիկական ծառայության 24.03.2014 թվականի փաստաթուղթին և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության 17.05.2010 թվականի հաշմանդամության վերաբերյալ տեղեկանքին, արձանագրում

է, որ Ռոբերտ Ափինյանի առաջին խմբի հաշմանդամ լինելու, եկամտի միակ աղբյուրը հաշմանդամության թոշակը ստանալու հանգամանքը համարվում է բավարար օբյեկտիվ հիմք վերջինիս գույքային դրությունը ծանր դիտելու համար: Բողոք բերած անձի կողմից ներկայացված ապացույցները արտացոլում են նրա գույքային ծանր դրությունը, հետևաբար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի հիմքով որպես պետական տուրքի գծով արտոնություն՝ այն է պետական տուրքից ազատում, կարող էր սահմանվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, Ռոբերտ Ափինյանի վերաքննիչ բողոքը վերադարձնելով, չի ապահովել ստորադաս դատարանի դատական ակտի վերանայման հնարավորությունը՝ դրանով իսկ խախտելով Ռոբերտ Ափինյանի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերագրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.04.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԱՐԴ/0913/02/12**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ/0913/02/12

Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան

Դատավորներ՝ Ա. Մկրտչյան

Ի. Վարդանյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի հունվարի 22-ին,

քննարկելով ըստ հայցի Շամամ Կարապետյանի ընդդեմ Արայիկ Միրզոյանի՝ գույ-
քի վրա արգելանք դնելու, ապօրինաբար տիրապետած գույքի կամ դրա արժեքի վերա-
դարձման պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի 15.11.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման
դեմ Շամամ Կարապետյանի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Շամամ Կարապետյանը պահանջել է Արայիկ Միրզոյանից բո-
նագանձել 4.000 ԱՄՆ դոլարով վաճառված ՈՒԱԶ ավտոմեքենայի արժեքից 3.000 ԱՄՆ
դոլար, գերեզմանաքարի գումարը՝ 700 ԱՄՆ դոլար կամ 280.000 ՀՀ դրամ, 2.000.000
ՀՀ դրամով իրացված երկաթյա շինանյութի արժեքից 1.500.000 ՀՀ դրամը, ընդամենը՝
2.980.000 ՀՀ դրամ:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատա-
րան) 02.10.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
15.11.2013 թվականի որոշմամբ Շամամ Կարապետյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել
է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Շամամ Կարապետյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, «Պետական փոլիսի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը վերադարձնելով, հաշվի չի առել, որ Շամամ Կարապետյանը չի աշխատում, գտնվում է ֆինանսապես ծանր վիճակում և չունի բավարար միջոցներ պետական տուրքը վճարելու համար: Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ գյուղի գյուղապետարանի կողմից 29.10.2013 թվականին տրված տեղեկանքը, ըստ որի Շամամ Կարապետյանի ընտանիքը սոցիալապես անապահով է և Շամամ Կարապետյանի խնամքին է գտնվում անգործունակ՝ հոգեկան հիվանդությամբ տառապող որդին:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 15.11.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանն այն գտնում է հիմնավոր հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առկայությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պետական տուրքի չափը սահմանելու, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հարցերը լուծվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք

վճարողներն իրավունք ունեն դիմել համապատասխան պետական մարմիններ՝ պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ պետական տուրքի վճարումից ազատում, իսկ նույն հոդվածի «դ» կետի համաձայն՝ պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ նույն օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադառնալով տվյալ իրավական խնդրին՝ նշել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի առաջին պարբերության «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից և այդ արտոնությունները ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը, որն ուղղված է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (*լրե ս, Արմենակ և Գույա Սահակյանների հայցն ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի՝ նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդի գումարը փոխհարուցելու պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի 28.11.2008 թվականի թիվ 3-734(ՎԴ) որոշումը, «Պայքար և Հայթեմասկ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Սարգոս իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 որոշումը, կետ 44*):

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման երկու ընթացակարգ՝ օրենքի ուժով և դատարանի հայեցողությամբ: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սպառիչ ամրագրել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում դատական պաշտպանություն հայցող սուբյեկտն օրենքի ուժով ազատվում է պետական տուրքի վճարումից: Նման հիմքերից որևէ մեկի առկայությունը չի պահանջում շահագրգիռ անձի կողմից պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության հարուցում և դրա քննարկում ու լուծում դատարանի կողմից: Միաժամանակ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը նման արտոնություն կիրառելու հնարավորություն ընձեռել է դատարաններին կամ դատավորներին այն դեպքերում, երբ թեև բացակայում են նույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված հիմքերը, սակայն, ելնելով կողմերի գույքային դրությունից, անհրաժեշտ է սահմանել նման արտոնություն՝ երաշխավորելու համար անձի դատական պաշտպանության և արդար դատաբնության իրավունքը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված հիմքերով Շամամ Կարապետյանին պետա-

կան տուրքի վճարումից ազատելու հիմքերը, իսկ նրա կողմից վերաքննիչ բողոքին կից ներկայացված ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ գյուղի գյուղապետարանի կողմից տրված տեղեկանքը բավարար չէ պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Շամամ Կարապետյանը վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է միջնորդություն պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ և որպես իր կյուրական ծանր դրությունը հիմնավորող ապացույց՝ վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ գյուղի գյուղապետարանի կողմից 29.10.2013 թվականին տրված տեղեկանքը, համաձայն որի՝ Շամամ Կարապետյանի ընտանիքը սոցիալապես անապահով է և նա իր անգործունակ որդու՝ Վարդան Միրզոյանի խնամակալն է, որը տառապում է հոգեկան հիվանդությամբ:

Վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Շամամ Կարապետյանի վերաքննիչ բողոքին կից ներկայացված պետական տուրքի վճարումից ազատելու միջնորդությունը և դրա հիմքում ընկած՝ ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ գյուղի գյուղապետարանի կողմից 29.10.2013 թվականին տրված տեղեկանքն արտացոլում են վերաքննիչ բողոք բերած անձի գույքային ծանր դրությունը, հետևաբար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի ուժով, որպես պետական տուրքի գծով արտոնություն՝ այն է պետական տուրքից ազատում, կարող էր սահմանվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, Շամամ Կարապետյանի վերաքննիչ բողոքը վերադարձնելով, չի ապահովել ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարանի) դատական ակտի վերանայման հնարավորությունը, դրանով իսկ խախտելով Շամամ Կարապետյանի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.11.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2628/02/13
2014թ.

Քաղաքացիական գործ ԵԿԴ/2628/02/13

Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան

Դատավորներ՝ Գ. Մատինյան

Ի. Վարդանյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 03-ին

քննարկելով ըստ հայցի «Հայրիզնեբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ «ՄԻԼ-
ԼԱՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, քա-
ղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.07.2014 թվականի
«Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Ընկերության սնանկության
գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի ներկայացուցիչ Լեոնիկ Հովհաննիսյանի վճռա-
բեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 336.893,93
ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես 24.09.2013 թվականի դրությամբ առկա
պարտք, այդ թվում՝ 8.386,54 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես ժամկետանց
պարտք:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-
թյան դատարանի (դատավոր՝ Կ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 16.04.2014 թվակա-
նի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
08.07.2014 թվականի որոշմամբ Դատարանի 16.04.2014 թվականի վճռի դեմ վերաքննիչ
բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողնման պատճառը հարգելի

համարելու և այն վերականգնելու մասին Ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի միջնորդությունը մերժվել է, և վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճարելի բողոք է ներկայացրել Ընկերության սնանկության գործով կառավարչի ներկայացուցիչ Լեոնիկ Հովհաննիսյանը:

Վճարելի բողոքի պատասխան է ներկայացրել Բանկը:

2. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետի, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջները, հարգելի չի համարել դատավարական ժամկետը բաց թողնելու միջնորդությունը և այն չի վերականգնել, ինչն էլ ազդել է գործի ելքի վրա, չնայած որ դատավարական ժամկետի բացթողումն ակնհայտ հարգելի էր:

Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս հաշվի չի առել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԵԵԴ) նախադեպային իրավունքում արտահայտված այն դիրքորոշումը, որ պայմանավորվող պետությունները ոչ միայն պետք է ամրագրեն քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանության իրավունքը, այլ նաև կոնկրետ գործով պետք է ապահովեն անձի կողմից այդ իրավունքի իրականացման իրական հնարավորությունը: Մինչդեռ, սույն գործով խախտվել է Ընկերության սնանկության գործով կառավարչի արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես՝ Ընկերությունը սնանկ է ճանաչվել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՄԴ/0039/04/14 քաղաքացիական գործով՝ 29.04.2014 թվականին կայացված վճռով, իսկ Խաչիկ Նազարյանը սնանկության գործով կառավարիչ է նշանակվել նույն դատարանի 19.05.2014 թվականի որոշմամբ և 16.04.2014 թվականի թիվ ԵԿԴ/2628/02/13 վճռի մասին տեղեկացել է 03.06.2014 թվականին՝ թիվ ԵՄԴ/0039/04/14 քաղաքացիական գործով Բանկի ներկայացրած դիմումին կից փաստաթղթերից:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանի 16.04.2014 թվականի թիվ ԵԿԴ/2628/02/13 վճիռն Ընկերությանն ուղարկվել է Երևանի Սիավանի թիվ 57 հասցեով, մինչդեռ Ընկերության ծանուցման հասցեն Երևանի Ծիծեռնակաբերդի թիվ 1/3 հասցեն է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 08.07.2014 թվականի որոշումը և կայացնել դատական ակտ՝ «Միլլար» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի միջնորդությունը՝ թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով 16.04.2014 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու և վերականգնելու մասին»:

2.1. Վճարելի բողոքի պատասխանի հիմնավորումները

28.08.2009 թվականին կողմերի միջև կնքված թիվ V09-0024 վարկային գործառնու-

թյունների իրականացման գլխավոր պայմանագրի 3-րդ բաժնի 25-րդ կետի համաձայն՝ հաճախորդը պարտավոր է Բանկին անհապաղ տեղեկացնել գտնվելու վայրի, դեկավարների, բանկային վավերապայմանների փոփոխությունների մասին, ինչը, սակայն, չի կատարել, այնինչ պարտավոր էր: Հետևաբար նման փոփոխության առկայության դեպքում անգամ այս պարտավորությունը չկատարելու արդյունքում վրա հասած բացասական հետևանքների պատասխանատուն միայն Ընկերությունն է: Դատարանի կողմից ուղարկված ծանուցումները պատշաճ կարգով ստացվել են Ընկերությանը հասցեագրած նամակագրությունը ստանալու իրավասու անձանց կողմից: Դատարանը վերջիններիս չվստահելու և կասկածի տակ դնելու հիմքեր չունի և այժմ էլ այդ ծանուցումներն Ընկերության կողմից ստացված չլինելու փաստ առկա չէ: Այսինքն՝ Ընկերության բոլոր հարցերը կապված ծանուցագրերի առաքման հետ պետք է ներկայացվեն ոչ թե դատարաններին, այլ՝ փոստային առաքման ծառայությանը:

Դատարանի 16.04.2014 թվականի վճռով Բանկի հայցը՝ Ընկերությունից գումար բռնագանձելու պահանջով, բավարարվել է: Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 19.05.2014 թվականի որոշմամբ է Ընկերության սնանկության գործով կառավարիչ նշանակվել Խաչիկ Մազարյանը, ինչի հիմքով էլ ծագել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված՝ որպես կառավարչի դատարաններին դիմելու լիազորությունը, որը, սակայն, մինևույն է չի ապահովում կառավարչի՝ սույն գործով մասնակից լինելու և այդ հիմքով վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ բերելու իրավունքը: Հետևաբար բողոքների ներկայացումը ոչ թե սույն գործով մասնակից հանդիսացող Ընկերության կողմից է, այլ սնանկության գործով կառավարչի, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ դրանց ներկայացումը վերջինիս կողմից հետապնդում է պետական տուրքի վճարումից խուսափելու նպատակ, քանի որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով կառավարիչը բողոքների համար վճարվելիք պետական տուրքից ազատված է:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասը և 19-րդ հոդվածի 1-ին մասը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետը, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավուն-

քի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է:

Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*Կրեյս, Աշինգդեյնս ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 8225/78 գանգաբարով ՄԻԵԴ 28.05.1985 թվականի վճիռը, պարբ. 57*):

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*Կրեյս, Սյուսթրինգսը և մյուններն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 22083/93 22095/93 գանգաբարով ՄԻԵԴ 22.10.1996 թվականի վճիռը, պարբ. 51, 55*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ սկզբունքների լույսի ներքո պետք է մեկնաբանվեն նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ և 213-րդ հոդվածները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա, նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու դեպքում, վերականգնում է բաց թողնված ժամկետը:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է բողոքարկման ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքներին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ընդհանուր իրավասության դատարանի գործն ըստ էության լուծող

դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ: Միաժամանակ, այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը բաց է թողնում վերոգրյալ ժամկետը, վերջինս իրավունք ունի ներկայացնել դրա բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի քննարկումը վերաքննիչ դատարանը պարտավոր է իրականացնել՝ հաշվի առնելով նաև անձի՝ սահմանադրական նորմով երաշխավորված դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները (*լրե՛ ս.* «ՎՏԲ-Հայաստանի բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Դանիել Բարսեղյանի և այլոց թիվ ԱԲԱԴ/0716/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2011 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ի կետի իրավակարգավորումից հետևում է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքի գնահատողական ֆունկցիան թողնելով դատարանների հայեցողությանը: Այնուամենայնիվ, ժամկետը բաց թողնելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսամաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները:

Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ՝ երբ ֆիզիկական անձը զրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից երկարատև հիվանդության կամ գործուղման մեջ գտնվելու պատճառով:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, մերժելով 16.04.2014 թվականի թիվ ԵԿԴ/2628/02/13 վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողման պատճառները հարգելի համարելու և ժամկետը վերականգնելու մասին Ընկերության սնանկության գործով կառավարչի միջնորդությունը և վերադարձնելով վերջինիս վերաքննիչ բողոքը, նշել է, որ հայցադիմումում որպես պատասխանող Ընկերության ծանուցման հասցե նշված է Երևանի Սիավանի թիվ 57 հասցեն, Դատարանը 16.04.2014 թվականի թիվ ԵԿԴ/2628/02/13 վճռի օրինակն ուղարկել է վերը նշված հասցեով, և համաձայն գործում առկա 25.04.2014 թվականի հանձնման հավաստագրի՝ Ընկերությունը 16.04.2014 թվականի թիվ ԵԿԴ/2628/02/13 վճռի օրինակը ստացել է 25.04.2014 թվականին: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ միջնորդությունը հիմնավորող բավարար ապացույցներ չեն ներկայացվել:

Մինչդեռ վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 29.04.2014 թվականի թիվ ԵՄԴ/0039/04/14 վճռով ճանաչվել է սնանկ (հատոր 2-րդ, գ.թ. 10), իսկ նույն դատարանի 19.05.2014 թվականի որոշմամբ Ընկերության սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Խաչիկ Նազարյանը (հատոր 2-րդ, գ.թ. 12):

Ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը 27.06.2014 թվականին Դատարանի 16.04.2014 թվականի վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ միջնորդելով հարգելի համարել բողոք բերելու ժամկետի բացթողումը, քանի որ նշված վճ-

ոյն մասին տեղեկացել է 03.06.2014 թվականին թիվ ԵՄԴ/0039/04/14 սնանկության գործով Բանկի կողմից ներկայացված դիմումին կից փաստաթղթերից և անհապաղ միջոցներ է ձեռնարկել վերաքննիչ բողոք կազմելու և ներկայացնելու համար:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը նույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով անհապաղ նշանակում է սնանկության գործով կառավարիչ (այսուհետ՝ կառավարիչ)՝ դադարեցնելով ժամանակավոր կառավարչի լիազորությունները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից պարտապանը (ղեկավարը) գործում է նույն օրենքի 47-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսված կարգով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ սնանկության գործով նշանակված կառավարիչը պարտապանի անունից դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելիս կառավարիչը գործում է պարտապանի անունից և իր պատասխանատվությամբ:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո՝ մինչև նրա վերաբերյալ լուծարելու մասին որոշում ընդունելը, պարտապանի ղեկավարը գործում է կառավարչի համաձայնությամբ և նրա հսկողության ներքո: Պարտապանի ղեկավարին արգելվում է պարտապանի գույքը տնօրինելու կամ պարտապանի համար գույքային պարտավորություն առաջացնող ցանկացած գործողություն կատարել առանց կառավարչի թույլտվության:

Վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ սնանկ ճանաչված պարտապանի դատավարական իրավունքները և պարտականությունները փոխանցվում են կառավարչին, որն էլ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պարտապանի անունից իրացնում է դրանք:

Վճարեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Բազմակի Նազարյանը սնանկության գործով կառավարիչ նշանակվել է 19.05.2014 թվականին՝ Դատարանի վճիռն ընդունելու օրը և վերաքննիչ բողոք բերելու ժամկետի վերջին օրը, հետևաբար վերջինս օբյեկտիվորեն բավարար հնարավորություն չի ունեցել օրենքով սահմանված ժամկետում իրացնելու իր բողոքարկման իրավունքը: Ավելին, գործում առկա ապացույցներով հիմնավորվում է այն փաստը, որ Բազմակի Նազարյանը Դատարանի վճիռն մասին տեղեկացել է 03.06.2014 թվականին (հատոր 2-րդ, գ.թ. 15), որից հետո և միջոցներ է ձեռնարկել վերաքննիչ բողոք ներկայացնելու համար:

Վճարեկ դատարանը, միաժամանակ անդրադառնալով 16.04.2014 թվականի թիվ ԵԿԴ/2628/02/13 վճիռն Ընկերության հասցեով ուղարկված չլինելու վերաբերյալ վճարեկ բողոքի փաստարկին, արձանագրում է հետևյալը. ի հիմնավորումն վերը նշված փաստարկի՝ սնանկության գործով կառավարիչը նշել է, որ թիվ ԵԿԴ/2628/02/13 վճիռն Ընկերությանն ուղարկվել է Երևանի Միսկանի թիվ 57 հասցեով, մինչդեռ Ընկերության ծանուցման հասցեն Երևանի Ծիծեռնակաբերդի թիվ 1/3 հասցեն է:

Վճարեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գործում առկա գրավի իրավունքի գրանցման 02.09.2009 թվականի թիվ 0180132 վկայականով (հատոր 1-ին, գ.թ. 44) հիմնավորվում է Ընկերության սնանկության գործով կառավարչի կողմից մատնանշած՝ Երևանի

Ծիծեռնակաբերդի թիվ 1/3 հասցեում սեփականության իրավունքով Ընկերությանը գույք պատկանելու հանգամանքը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Երևանի Միսվանի թիվ 57 հասցեն՝ որպես Ընկերության ծանուցման հասցե, նշված է եղել միայն Բանկի կողմից ներկայացված հայցադիմումում, իսկ Դատարանի կողմից գործի քննության ընթացքում նշված հասցեով ուղարկված ծանուցումները փոստային բաժանմունքից վերադարձվել են, մասնավորապես, «հասցեում չկա այդպիսին» (հատոր 1-ին, գ.թ. 67), «դուրը փակ է» (հատոր 1-ին, գ.թ. 72) նշումներով, այսինքն՝ Ընկերությունը նշված հասցեով դատաքննության ընթացքում երբևէ չի ծանուցվել, իսկ Դատարանը, ունենալով Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի հասցե (այն է՝ Երևանի Ծիծեռնակաբերդի թիվ 1/3), պատշաճ և բավարար միջոցներ չի ձեռնարկել Ընկերությանն այդ հասցեով ևս ծանուցելու ուղղությամբ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բողոքարկվող դատական ակտը Դատարանի կողմից Երևանի Միսվանի թիվ 57 հասցեով ուղարկելու և այդ հասցեում ստացված լինելու հանգամանքը չէր կարող դրվել Ընկերության սնանկության գործով կառավարչի՝ որպես Ընկերության դատավարական իրավունքներն իրականացնող անձի միջնորդության մերժման հիմքում, հատկապես այն դեպքում, երբ Վերաքննիչ դատարանը, իր հերթին, «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 08.07.2014 թվականի որոշումն Ընկերությանն ուղարկել է Երևանի Ծիծեռնակաբերդի թիվ 1/3 հասցեով:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետը և 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը, քանի որ առանց հիմնավոր պատճառաբանության, անտեսելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկությունները՝ հաստատված է համարել բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված դատավարական ժամկետի առանց հարգելի պատճառների խախտման փաստը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը վերադարձնելով, սահմանափակել է բողոք բերած անձի՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.07.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

-Քաղաքացիական գործ ԵԱԲԴ/1020/02/14
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/1020/02/14
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի սեպտեմբերի 24-ին
քննարկելով ըստ հայցի «Եվրոպա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ «Սպի-
տակ կամար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ 51.000 ՀՀ դրամի և ՀՀ քաղաքա-
ցիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների բռնագանձման պահանջ-
ների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի
07.05.2014 թվականի որոշման դեմ Ընկերության բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից հոգուտ
իրեն բռնագանձել 51.000 ՀՀ դրամ՝ որպես հիմնական պարտավորության գումար, ինչ-
պես նաև այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով
սահմանված բանկային տոկոսները՝ սկսած կետանցի օրվանից մինչև պարտավորության
փաստացի կատարման օրը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրա-
վատության դատարանի (դատավոր՝ Ռ. Բունիայան) (այսուհետ՝ Դատարան) 02.04.2014
թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
07.05.2014 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարա-
նի 02.04.2014 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է օրի-
նական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ, 19-րդ, 42.1-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ, 92-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումները պարունակում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի տվել որոշման փաստական այն հիմնավորումները, որոնց առկայությունը թույլ կտար համապատասխան իրավական նորմերի վկայակոչմամբ հիմնավորել որոշումն իրավական տեսանկյունից, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) որոշումների գուտ մեջբերումը դեռևս համոզիչ կերպով չի հիմնավորում Վերաքննիչ դատարանի որոշումը:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածը գուտ սահմանել է հայցվորի համար հաշվարկ ներկայացնելու պարտականություն, որպիսի օրենսդրական պահանջը պահպանվել է հայցվորի կողմից, և գումարի հաշվարկը ներկայացվել է:

Ավելին, նշված նորմով սահմանված չէ հաշվարկի տեսակը, ձևը, հետևաբար Վերաքննիչ դատարանը, չնշելով, թե ինչ կերպ է խախտվել օրենքի պահանջը և չպատճառաբանելով իր դատական ակտը, Ընկերությանը ծանրաբեռնել է վերացական պարտականություններով՝ գրկելով դատական պաշտպանությունից:

Բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 07.05.2014 թվականի որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Հատկանշական է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է բոլոր անձանց քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին վերաբերող յուրաքանչյուր հայց դատարանին ներկայացնելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է «դատարանի իրավունքը», այսինքն՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը քննություն սկսելու իրավունքի միայն մի մասն է, ինչի սահմանափակումը դատարանների կողմից ընթացակարգային օրենքների գուտ խիստ մեկնաբանման

հետևանքով կառաջացնի իրավունքի խախտում և անձի այդ իրավունքը կկրի վերացական բնույթ, հետևաբար քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում, ինչի արդյունքում տեղի չի ունենա դատավարություն և առհասարակ կարծեգրվեն այդ վարույթի արդար, հրապարակային և արագ քննության բնորոշումները: Ընդ որում, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակը ոչ թե տեսական կամ վերացական, այլ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորումն է: Դա, մասնավորապես, վերաբերում է դատարան դիմելու իրավունքին՝ նկատի ունենալով այն զգալի դերը, որ արդար դատաքննության իրավունքն իրականացվում է ժողովրդավարական հասարակությունում (*Կրեյտզն ընդդեմ Լեհաստանի թիվ 28249/95 գանգալուրով ՄԻԵԴ 19.06.2001 թվականի վճիռը, պարբ. 52, 53-56, Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 4451/70 գանգալուրով ՄԻԵԴ 21.02.1975 թվականի վճիռը, պարբ. 34*):

Այնուամենայնիվ, ՄԻԵԴ-ը եզրահանգել է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում են «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքները, բացարձակ չեն և կարող են ենթարկվել սահմանափակումների, սակայն կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորման ապահովվմամբ (*Կրեյտզն, Ալ-Ադսանին ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 35763/97 գանգալուրով ՄԻԵԴ 21.11.2001 թվականի վճիռը, պարբ. 53, Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի թիվ 34791/97 գանգալուրով ՄԻԵԴ 14.12.1999 թվականի վճիռը, պարբ. 35, Ռասպոն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 4210/00 գանգալուրով ՄԻԵԴ 25.07.2002 թվականի վճիռը, պարբ. 90, «Պայքար և հաղթանակ» ՄԴԼ-ն ընդդեմ Հայաստանի թիվ 21638/03 գանգալուրով ՄԻԵԴ 20.12.2007 թվականի վճիռը, պարբ. 44*): Միաժամանակ, ՄԻԵԴ-ը նշել է, որ թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է դատարան դիմելու արդյունավետ իրավունք, այնուամենայնիվ, պետության հայեցողությանն է թողնված նշված նպատակի համար անհրաժեշտ միջոցների ընտրության հարցը (*Կրեյտզն, Էյրին ընդդեմ Իռլանդիայի թիվ 6289/73 գանգալուրով ՄԻԵԴ 09.10.1979 թվականի վճիռը, պարբ. 26*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ ի թիվս այլ պահանջների հայցադիմումում պետք է նշվի նաև բռնագանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 87-րդ հոդվածում սահմանված՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջները:

Այսպես, դատարան հայց ներկայացնելը և քաղաքացիական գործի հարուցումը քաղաքացիական դատավարության առաջին և ինքնուրույն փուլն է, որից հետո միայն սկսվում է գործի շարժը, և հնարավոր է դառնում դատավարական հետագա բոլոր գործողությունների կատարումը: Դատարանը քաղաքացիական գործի քննությանը և վեճի լուծմանը ձեռնամուխ է լինում իրենց իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը պաշտպանելու համար դատարան դիմող անձանց դիմումի հիման վրա (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 3-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածներ): Հայցային վարույթի գործերը հարուցվում են դատարան հայցադիմում ներկայացնելու միջոցով, որն իրավունքի պաշտպանության վարույթի հարուցման դատավարական միջոց է. թեև հայց

ներկայացնելը գործի հարուցման նախապայմանն է, այդուհանդերձ ինքնին բավարար չէ քաղաքացիական գործ հարուցելու համար: Անհրաժեշտ է, որպեսզի հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումը համապատասխանի օրենքով սահմանված դատավարական պահանջներին: Դատավորը հայցադիմումը վարույթ ընդունելու որոշում կարող է կայացնել միայն այն դեպքում, եթե հայցադիմումն ընդունելիս ստուգում և պարզում է, որ հայցվորը հայց հարուցելու իրավունք ունի, այսինքն՝ երբ առկա են հայց հարուցելու իրավունքի նախադրյալները, և հայցվորը պահպանել է այն հարուցելու (դատարան դիմելու) օրենքով սահմանված կարգը, այլ կերպ ասած՝ պահպանվել են հայցադիմումի գրավոր ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հակառակ դեպքում՝ այդ պահանջների չպահպանումը հիմք է հայցադիմումը վերադարձնելու համար, և հայցվորի մոտ ծագում է անհրաժեշտություն վերացնել համապատասխան հայցադիմումի թերությունները (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդված):

Քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով դատավորը միանձնյա կատարում է հայցադիմումը վարույթ ընդունելու և քաղաքացիական գործ հարուցելու բոլոր գործողությունները: Հետևաբար, դատավորը պետք է ձեռնամուխ լինի կատարելու բոլոր անհրաժեշտ դատավարական միջոցներն իրականացնելու ճիշտ գործողություններ՝ ապահովելով շահագրգռված անձի դատական պաշտպանության իրավունքն ամբողջությամբ: Հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը յուրաքանչյուր անձի իրավունք է վերապահում դատարանում պաշտպանել Սահմանադրությամբ և օրենքներով ամբազրված իր իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, դատարանները պարտավոր են քաղաքացիական գործերը ժամանակին և ճիշտ քննելու միջոցով ապահովել այդ պաշտպանությունը, որը սկսվում է հենց հայցադիմումը (դիմումը) վարույթ ընդունելու և գործ հարուցելու պահից:

Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ առկա են հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջների ձևական խախտումներ, ինչպես նաև պրակտիկ խոչընդոտներ, որոնք հնարավոր է շտկել գործը դատաքննության նախապատրաստելու փուլում, ապա դատավորը պետք է ձեռնամուխ լինի հայցադիմումը վարույթ ընդունելու, իսկ դրանում առկա անհստակությունները շտկելու գործը՝ դատաքննության նախապատրաստելու փուլում, ինչը բխում է անձի «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքներից:

Անդրադառնալով հայցադիմումում պահանջվող գումարի հաշվարկը ներկայացնելու պահանջին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գումարի հաշվարկը չի կարող նույնացվել գումարի գոյացման հիմքերի և դրանք հիմնավորող ապացույցների հետ: Նման մոտեցման դեպքում անձի վրա դրվում է պարտականություն յուրաքանչյուր դեպքում գումարի բռնագանձման պահանջ ներկայացնելիս գումարի բռնագանձման հիմք հանդիսացող ապացույցները ներկայացնել բացառապես հայցադիմումին կից, մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի տրամաբանությունից չի բխում ապացույցները բացառապես հայցադիմումին կից ներկայացնելը՝ սկստի ունենալով նաև գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առկայությունը: Սույն գործով Դատարանը հայցադիմումը վերադարձնելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Ընկերությունը ներկայացրել է 51.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջ, սակայն չի ներկայացրել վիճարկվող գումարի հաշվարկը: Հայցադիմումին կից ներկայացվել է փաստաթուղթ, որտեղ կատարված հաշվարկի ընդհանուր գումարը կազմել է 7.910.815 ՀՀ դրամ, և նշված չէ 51.000 ՀՀ դրամ գումարի գոյացումը:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայցադիմումում չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետում սահմանված բռնազանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը ներկայացնելու պահանջը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը, ներկայացնելով 51.000 ՀՀ դրամ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ բռնազանձելու պահանջ, հայցադիմումում նշել է բռնազանձման ենթակա գումարի չափը, պարտավորության առաջացման հիմքերը, ինչպես նաև հայցադիմումին կցել է ապացույցները՝ ապրանքների մատակարարման 11.06.2013 թվականի թիվ Ա 7205103296, 18.07.2013 թվականի թիվ Ա 6536658650, 26.08.2013 թվականի թիվ Ա 4235150884, 27.08.2013 թվականի թիվ Ա 7605338041, 27.08.2013 թվականի թիվ Ա 5477888062, 10.09.2013 թվականի թիվ Ա 4272704291 հարկային հաշիվները, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների հաշվարկը՝ սկսած Կազմակերպության կետանցի օրվանից մինչև 28.03.2014 թվականը: Ըստ էության՝ հայցադիմում ներկայացված 51.000 ՀՀ դրամը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները բռնազանձման ենթակա գումարի հաշվարկն են:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված հայցադիմումի ընդունելիության հարցը լուծելիս Դատարանը պետք է առաջնորդվեր անձի իրավունքների խախտման վերաբերյալ դատարան դիմելու անձի սահմանադրական իրավունքի ապահովման գերակայությամբ, ուստի ստորադաս դատարանների այն պատճառաբանությունը, որ Ընկերության կողմից ներկայացված հայցադիմումում չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետում սահմանված բռնազանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը ներկայացնելու պահանջը, անհիմն է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանը, հայցադիմումը վերադարձնելով, իրականացրել է ընթացակարգային օրենքի նեղ մեկնաբանում՝ չապահովելով Ընկերության՝ «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքների իրականացումը և խախտելով քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս իրավունքի գերակայությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջներին, հետևաբար, տվյալ դեպքում բացակայում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված հայցադիմումը վերադարձնելու հիմքը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, սահմանափակել է Ընկերության՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2014 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 02.04.2014 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3221/02/13
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3221/02/13
2014թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի սեպտեմբերի 17-ին,
քննարկելով ըստ հայցի «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն»
ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ «ԱՐԳՈ կոմպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ըն-
կերություն)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վե-
րաքննիչ քաղաքացիական դատարանի 15.04.2014 թվականի որոշման դեմ Կազմակեր-
պության բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից բռնագան-
ձել 3.126.629 ՀՀ դրամ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-
թյան դատարանի (դատավոր՝ Ռ. Վարդազարյան) (այսուհետ՝ Դատարան) 14.03.2014
թվականի որոշմամբ սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է մինչև Ընկե-
րության հայցն ընդդեմ Կազմակերպության՝ վարձակալության պայմանագիրը լուծելու և
4.000.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջների մասին թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքա-
ցիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
15.04.2014 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժվել է և Դա-
տարանի 14.03.2014 թվականի «Թիվ ԵԿԴ/3221/02/13 քաղաքացիական գործի վարույթը
կասեցնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, 105-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումներ պարզապես անտեսել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով գտել է, որ սույն քաղաքացիական գործի քննությունն անհնարին է մինչև Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը: Վերաքննիչ դատարանն իր այդ եզրահանգումն հիմնավորել է այն փաստարկով, որ թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտով կարող են պարզվել սույն գործով վիճելի տարածքի հանձնման-ընդունման ակտի ստորագրված լինելու կամ չլինելու, տարածքը ներկայումս ազատված լինելու հանգամանքները, ինչպես նաև այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք կարող են էական լինել սույն քաղաքացիական գործի քննության և վեճն ըստ էության ճիշտ լուծելու տեսանկյունից:

Մինչդեռ սույն գործով վիճելի տարածքի՝ հանձնման-ընդունման ակտով հանձնված և ներկայումս ազատված լինելու փաստական հանգամանքները չեն կարող հաստատվել թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործով կայացվելիք վերջնական դատական ակտով, քանի որ այդ փաստական հանգամանքները տվյալ քաղաքացիական գործով քննության առարկա չեն հանդիսանում և դուրս են թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործով հայցվոր Ընկերության կողմից ներկայացված հայցապահանջների շրջանակներից:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ նշված փաստական հանգամանքների պարզման անհրաժեշտությունը չի հանգեցնում սույն քաղաքացիական գործի քննության անհնարինության, քանի որ Կազմակերպության կողմից ներկայացված և գործում առկա տասնյակ ապացույցներով հիմնավորվում է, որ վիճելի տարածքը մինչև օրս Ընկերության կողմից չի ազատվել և չի հանձնվել վարձատուին՝ Կազմակերպությանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 15.04.2014 թվականի որոշումը և վերացնել Դատարանի 14.03.2014 թվականի «Թիվ ԵԿԴ/3221/02/13 քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը»:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանն այն գտնում է հիմնավոր հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով գործի վարույթի կասեցման իրավական կարգավորումներին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ անդրադարձել է գործի վարույթը կասեցնելու իրավական խնդրին, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի վարույթի կասեցման հիմքը գործի քննության ընթացքում այնպիսի հանգամանքի ի հայտ գալն է, որն ըստ էության արգելակում է գործի հետագա ընթաց-

քը. գործի վարույթի կասեցումը չի կարող կրել ձևական բնույթ, իսկ դրա միակ նպատակը գործի շարունակմանը խոչընդոտող հանգամանքների վերացումն է (*Կրեւ, Սամվել, Սահակ և Սուլթան Մարկոսյաններն ընդդեմ Լուսիկ Գևորգյանի և մյուսների թիվ ԵԿԴ/0808/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.11.2013 թվականի որոշումը*):

Նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանի պարտականությունն է կասեցնել գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պարտավոր է նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն, ինչպես նաև պարտավոր է նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը (*Կրեւ, Վերա Ազիզյանն ընդդեմ Նունե Մարգարյանի թիվ ԵԱԴԿԻ/0452/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.01.2010 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործի հարուցման հիմքում ընկած վեճը վերաբերում է անշարժ գույքի վարձակալության պայմանագրից բխող պարտավորությունների ոչ պատշաճ կատարմանը:

Այսպես, սույն գործի փաստական հանգամանքներից ելնելով՝ հարկ է արձանագրել հետևյալը.

24.12.2012 թվականին Կազմակերպության՝ որպես վարձատուի, և Ընկերության՝ որպես վարձակալի միջև կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, որի համաձայն՝ Կազմակերպությունը պարտավորվել է ամսական 550.000 ՀՀ դրամ վճարի դիմաց մեկ տարի ժամկետով Ընկերության օգտագործմանը հանձնել Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի թիվ 49/3 հասցեում գտնվող 2-րդ մասնաշենքի 1-ին հարկի 649,94քմ մակերեսով տարածքը՝ դրա նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով: Նշված վարձակալության պայմանագիրը ստացել է նոտարական վավերացում, դրանից ծագող իրավունքները ենթարկվել են պետական գրանցման, և պայմանագիրն օրենքով սահմանված կարգով մտել է օրինական ուժի մեջ (հատոր 1-ին, գ.թ. 10-12):

Կազմակերպության հայցի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Ընկերությունը ոչ պատշաճ է կատարել նշված պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները, այն է՝ սահմանված վարձավճարի գումարները վճարել է ուշացումներով, ընդհանրապես չի վճարել 2013 թվականի հուլիս և օգոստոս ամիսների վարձավճարները, ինչպես նաև Կազմակերպությանը պատճառել է վնաս՝ բաց թողնելով օգուտի տեսքով: Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 3.126.629 ՀՀ դրամ, որից 1.356.667 ՀՀ դրամը՝ որպես 01.07.2013 թվականից մինչև 14.09.2013 թվականն ընկած ժամանակահատվածի համար վարձավճարի գումար, 199.210 ՀՀ դրամը՝ որպես 1.356.667 ՀՀ դրամ պարտքի գումարի նկատմամբ մինչև 10.12.2013 թվականն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված տույժի գումար, 1.570.752 ՀՀ դրամը՝ որպես վարձակալած տարածքը չազատելու և չհանձնելու հետևանքով պատճառված վնասի գումար (հատոր 1-ին, գ.թ. 4-9):

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործն ըստ Ընկերության հայցի ընդդեմ Կազմակերպության՝ վարձակալության պայմանագիրը լուծելու և գումարի բռնագանձման պահանջների մասին:

Թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործով Ընկերության ներկայացուցիչը Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին է ներկայացրել հայցադիմումի լրացում, որով խնդրել է որպես Ընկերության հայցապահանջի լրացում՝ պարտավորեցնել Կազմակերպությանը 15.09.2013 թվականի դրությամբ ստորագրել հանձման-ընդունման ակտը (հատոր 1-ին, գ.թ. 170-172):

Սույն գործով Ընկերությունը միջնորդություն է ներկայացրել սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ մինչև Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Նշված միջնորդության հիմքում Ընկերության կողմից դրվել է այն հանգամանքը, որ թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործով կայացվելիք վերջնական դատական ակտով որոշվելու է, թե Ընկերության և Կազմակերպության միջև մինչև երբ են առկա եղել պայմանագրային իրավահարաբերություններ, որ պահից է անհրաժեշտ նրանց միջև կնքված պայմանագիրը համարել լուծված, իսկ վիճելի տարածքի հանձնման-ընդունման ակտը՝ ստորագրված (հատոր 1-ին, գ.թ. 168-169):

Դատարանը, բավարարելով գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ Ընկերության միջնորդությունը, «Թիվ ԵԿԴ/3221/02/13 քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» 14.03.2014 թվականի որոշմամբ կասեցնելով սույն քաղաքացիական գործի վարույթը մինչև թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը, պատճառաբանել է, որ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից քննվող թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործով կայացվելիք վերջնական դատական ակտով կարող են պարզվել այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք կարող են էական նշանակություն ունենալ սույն քաղաքացիական գործի քննության համար:

Մասնավորապես՝ Դատարանը նշել է, որ այդ փաստական հանգամանքներն են 15.09.2013 թվականի դրությամբ վիճելի տարածքի հանձնման-ընդունման ակտի ստորագրված լինելը կամ չլինելը, այդ տարածքի ազատված և հանձնման-ընդունման ակտով հանձնված լինելը, որպիսիք չեն կարող պարզվել սույն գործի տվյալների հիման վրա:

Վերաքննիչ դատարանը, մեծելով Կազմակերպության վերաքննիչ բողոքը և Դատարանի «Թիվ ԵԿԴ/3221/02/13 քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» 14.03.2014 թվականի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործի վերջնական դատական ակտով կարող են պարզվել տարածքի հանձնման-ընդունման ակտի ստորագրված լինելու կամ չլինելու, տարածքը ներկայումս ազատված լինելու հանգամանքները, ինչպես նաև այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք կարող են էական լինել սույն քաղաքացիական գործի քննության համար:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով բողոք բերած անձի այն պատճառաբանությանը, որ հայցվորի կողմից ներկայացված և գործում առկա տասնյակ ապացույցներով հիմնավորվում է, որ տարածքը մինչև օրս պատասխանողի կողմից չի ազատվել ու չի հանձնվել վարձատուին, արձանագրել է, որ հայցվորի կողմից մատնանշված ապացույցները պետք է պատշաճ գնահատվեն 15.09.2013 թվականի դրությամբ

հանձնման-ընդունման ակտն ստորագրելուն պարտավորեցնելու պահանջի մասին թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործի շրջանակներում:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև նշված փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործով կայացվելիք վերջնական դատական ակտով, սակայն 15.09.2013 թվականի դրությամբ վիճելի տարածքի հանձնման-ընդունման ակտի ստորագրված լինելու կամ չլինելու, տարածքը ներկայումս ազատված լինելու հանգամանքները չեն կարող էական նշանակություն ունենալ սույն քաղաքացիական գործի քննության համար հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունի այն փաստական հանգամանքի պարզումը, թե արդյոք Ընկերությունը Կազմակերպության հայցադիմումում մատնանշված ժամանակահատվածում, այն է՝ 01.07.2013 թվականից մինչև 14.09.2013 թվականը, պատշաճորեն կատարել է իր պայմանագրային պարտավորությունները, թե՛ ոչ, և հիմնավոր է արդյոք Ընկերությունից 3.126.629 ՀՀ դրամ բռնագանձելու մասին Կազմակերպության պահանջը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի քննությունը հնարավոր է անկախ ստորադաս դատարանների կողմից մատնանշված հանգամանքների առկայությունից կամ բացակայությունից, ինչը պետք է հաստատվի Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից քննվող թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործով կայացվելիք վերջնական դատական ակտով:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործով կայացվելիք վերջնական դատական ակտով, 15.09.2013 թվականի դրությամբ վիճելի տարածքի հանձնման-ընդունման ակտի ստորագրված լինելու կամ չլինելու, ներկայումս այդ տարածքի ազատված լինելու հանգամանքների պարզումը չի կարող հանգեցնել սույն քաղաքացիական գործի քննության անհնարինության:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սովյալ դեպքում մինչև թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը սույն քաղաքացիական գործը քննելու անհնարինության որևէ հիմք առկա չէ, հետևաբար բացակայում է նաև սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու անհրաժեշտությունը, ինչը հաշվի չի առնվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին և նշել, որ դատական ակտը հիմնավորելու պահանջը հավասարապես վերաբերում է ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ՝ միջանկյալ դատական ակտերին: Յուրաքանչյուր դեպքում որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տրվի կիրառման ենթակա նորմը պարունակող նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը (*պե՛ս, օրինակ թիվ ԵԿԴ/2768/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2013 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, անվտիոխ թողնելով Դատարանի «Թիվ ԵԿԴ/3221/02/13 քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» 14.03.2014 թվականի որոշումը, չի պատճառաբանել, թե ինչպիսի իրավական կամ փաստական հանգամանքների հիման վրա է հանգել այն հետևության, որ սույն քաղաքացիա-

կան գործի քննությունն անհնարին է մինչև Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից քննվող թիվ ԵԱԲԴ/2799/02/13 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումը չի համապատասխանում դատական ակտերին ներկայացվող հիմնավորվածության և օրինականության չափանիշներին, չունի բավարար փաստական և իրավական հիմնավորում, ուստի այն չի կարող համարվել պատճառաբանված և հիմնավորված դատական ակտ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու և Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի թիվ ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.04.2014 թվականի թիվ ԵԿԴ/3221/02/13 որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.03.2014 թվականի «Թիվ ԵԿԴ/3221/02/13 քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ ԵՇԴ/0938/02/10
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0938/02/10

Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան

Դատավորներ՝ Ն. Տավարացյան

Ս. Միքայելյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴԻՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի մայիսի 24-ին,

քննարկելով ըստ Շենգավիթ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձու-
թյան մարմնի դիմումի՝ Վլադիմիր Օհանովին անգործունակ ճանաչելու պահանջի մասին,
քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2012 թվակա-
նի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Վլադիմիր Օհանովի վճ-
ռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Շենգավիթ վարչական շրջանի խնամակալության և հոգաբար-
ձության մարմինը պահանջել է Վլադիմիր Օհանովին ճանաչել անգործունակ:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի
(այսուհետ՝ Դատարան) 20.01.2012 թվականի վճռով դիմումը բավարարվել է, վճռվել է
29.07.1957 թվականի ծնված Վլադիմիր Լենտորնի Օհանովին ճանաչել անգործունակ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
13.11.2012 թվականի որոշմամբ Վլադիմիր Օհանովի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վլադիմիր Օհանովը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին կետը, որը պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին կետը և 213-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը Վլադիմիր Օհանովին պատշաճ ձևով չի տեղեկացրել դատական նիստի ժամանակի և վայրի մասին, գործը քննել է վերջինիս բացակայությամբ և ընդհանրապես մասնակից չի դարձրել գործի քննությանը:

Ավելին, Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Դատարանը Վլադիմիր Օհանովին գործի քննությանը մասնակից չդարձնելու պարագայում չի պարզել՝ արդյոք վերջինիս առողջական վիճակը թույլ տալիս է դատական նիստին կանչելու, թե՛ ոչ:

Փաստորեն, Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելիս անտեսել է նաև այն, որ Դատարանի գործողությունների արդյունքում Վլադիմիր Օհանովը գրկվել է իր իրավունքները դատարանում պաշտպանելու հնարավորությունից, ինչպես նաև օրենքով սահմանված ժամկետում բողոքարկելու Դատարանի վճիռը: Նշված վճիռը օրինական ուժի մեջ չմտած լինելու պարագայում Վլադիմիր Օհանովը համարվել է գործունակ, հետևաբար իրավասու է եղել բողոքարկելու դատական ակտը:

Հատկանշական է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածը կիրառելի է այն դեպքում, երբ քաղաքացին օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ, սակայն տվյալ պարագայում Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտել և չի բողոքարկվել միայն նշված դատական ակտի մասին Վլադիմիր Օհանովի կողմից իրազեկված չլինելու և գործի քննությանը մասնակից դարձված չլինելու արդյունքում, հետևաբար վերջինս չի կարող գրկվել ինքնուրույն իր շահերը դատարանում պաշտպանելու իրավունքից հատկապես այն պարագայում, երբ Վլադիմիր Օհանովը վերաքննիչ բողոք ներկայացնելիս նաև միջնորդել էր հարգելի ճանաչել դատական ակտը բողոքարկելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը՝ վերը նշված հիմնավորումներով:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է «բեկանել» Վերաքննիչ դատարանի 13.11.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ*.

Մույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը կարևորում է հետևյալ իրավական հարցադրումները.

ա) որո՞նք են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ «**Քաղաքացին կարող է կանչվել դատական նիստի**, եթե դա թույլ է տալիս նրա առողջական վիճակը» դրույթով դատարանին վերապահված հայեցողության իրացման սահմանները,

բ) իրավաչափ է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի վիճարկվող որոշման հիմքում ընկած իրավական դիրքորոշումն առ այն, որ առաջին ատյանի դատարանի՝ անգործունակ

ճանաչելու մասին վճիռը բողոքարկելու ժամկետը բաց թողնելուց հետո անձն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա ձեռք է բերում անգործունակ անձի կարգավիճակ, հետևաբար նաև այդ կարգավիճակում այլևս չունի վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունք,

գ) արդյո՞ք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված **«անգործունակ (...) ճանաչված քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը դատարանում պաշտպանում են նրանց (...) խնամակալները»** դրույթի կիրառմամբ կարող է սահմանափակվել անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի վարույթի շրջանակներում անգործունակ ճանաչված անձի բողոքարկման իրավունքը:

ա) ՀՀ Սահմանադրությունը մարդուն, կրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները ու ազատությունները հոչակում է որպես բարձրագույն արժեքներ և պետությանը սահմանափակում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (հոդված 3): Միաժամանակ ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է մարդու անօտարելի և բնական իրավունքների ապահովման մի շարք երաշխիքներ, որոնց շարքում առավել կարևորվում է անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը, պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը (հոդված 18), ինչպես նաև իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (հոդված 20): Այդ երաշխիքները ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածի ուժով հավասարապես վերաբերում են նաև հոգեկան խանգարումներ ունեցող անձանց:

Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց՝ որպես խոցելի խմբի անդամների պաշտպանությանն են ուղղված նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր, որոնցում ևս այս անձանց իրավունքների դատական արդյունավետ պաշտպանությունն ամրագրվում է որպես իրավունքների ու ազատությունների ապահովման կարևորագույն երաշխիք:

Հոգեկան հիվանդությամբ տառապողների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման սկզբունքները (ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1991 թվականի դեկտեմբերի 17-ի 46/119 բանաձև) անթույլատրելի են համարում հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց նկատմամբ որևէ խտրական մոտեցում, և ճանաչում են անձի՝ իրեն անգործունակ ճանաչելու կապակցությամբ գործի վարույթին փաստաբանի միջոցով ներկայացված լինելու իրավունքը, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց հետ հավասար հնարավորություններով՝ անգործունակ ճանաչելու մասին վճիռը վերադաս դատարան բողոքարկելու իրավունքը: Եվրոպայի խորհրդի Պառլամենտական վեհաժողովի 1977 թվականի հոկտեմբերի 8-ի 818(1977) «Հոգեկան հիվանդությամբ տառապողների վիճակի մասին» հանձնարարականում, Նախարարների կոմիտեի 1983 թվականի փետրվարի 22-ի R(83)2 «Հարկադիր կարգով հոսպիտալացված՝ հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավական պաշտպանության մասին» հանձնարարականում, 1999 թվականի փետրվարի 23-ի R(99)4 «Չափահաս անգործունակների իրավական պաշտպանության սկզբունքների մասին» հանձնարարականում, 2004 թվականի փետրվարի 24-ի Rec(2004)10 «Հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» հանձնարարականում ևս ընդգծվում է, որ հոգեկան խանգարումներ ունեցող անձինք պետք է ունենան բոլոր քաղաքացիական և քաղաքական իրավունքներն իրականացնելու հնարավորություն, իսկ դրանց սահմանափակումները թույլատրելի են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի պահանջներին խիստ համապատասխան: Ընդ որում, Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին առաջարկվում է սահմանել, որ ան-

ձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտը չի կարող հիմնվել միայն բժշկական եզրակացության վրա, որ հոգեկան խանգարում ունեցող անձի համար պետք է ապահովված լինի լավելու իրավունքը և գործի քննության ողջ ընթացքում պետք է ներկա գտնվի փաստաբանը: Մասնավորապես՝ 1999 թվականի փետրվարի 23-ի R(99)4 հանձնարարականով ընդունված «Չափահաս անգործունակների իրավական պաշտպանության սկզբունքների» 13-րդ սկզբունքը՝ վերնագրված «Անձամբ լավելու իրավունք» վերտառությամբ, սահմանում է. «Անձը պետք է ունենա անձամբ լավելու իրավունք ցանկացած գործի վարույթում, որը կարող է ազդել իր գործունակության վրա»: Նույն սկզբունքների 14-րդ սկզբունքի համաձայն՝ անձը պետք է ունենա բողոքարկման համապատասխան իրավունքներ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) սույն գործին համանման փաստական հանգամանքներ ունեցող Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռում նշել է. «Մի շարք նախկին գործերով (հարկադիր հոսպիտալացման առնչությամբ) Դատարանը հաստատել է, որ հոգեկան հիվանդությամբ տառապող անձը պետք է հնարավորություն ունենա լավելու անձամբ, կամ անհրաժեշտության դեպքում, ներկայացուցչի միջոցով (տես, օրինակ, Վինյետվերայի գործը, կետ 79): Վինյետվերայի գործի առանցքում դիմողի ազատությունն էր: Այնուամենայնիվ, սույն գործում դատավարության ելքն առնվազն հավասար կարևորություն ունի դիմողի համար, քանի որ հարվածի տակ է (վտանգված է) կյանքի բոլոր ոլորտներում՝ նրա անձնական ինքնավարությունը, ներառյալ՝ ազատության սահմանափակումը: Ավելին, Դատարանը նկատում է, որ դիմողը դատավարությունում երկակի դեր է խաղացել՝ նա շահագրգիռ կողմ էր, և միաժամանակ՝ դատական քննության հիմնական օբյեկտը: Ուստի, նրա մասնակցությունն անհրաժեշտ էր ոչ միայն նրան իր գործը ներկայացնելու հնարավորություն տալու համար, այլ նաև դատավորին՝ նրա մտավոր կարողության մասին կարծիք ձևավորելու հնարավորություն տալու համար» (յրե՛ ս, *Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի թիվ 44009/05 գանգաբարով ՄԻԵԴ 2008թ. մարտի 27-ի վճիռը, 71-72-րդ կետերը*):

Հաշվի առնելով այն իրավական հետևանքները, որոնք քաղաքացու համար ծագում են անգործունակ ճանաչվելու դեպքում, այն է՝ անձն անորոշ ժամկետով զրկվում է ինքնուրույնաբար, իր գործողություններով իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու և դրանք կատարելու հնարավորությունից, ինչպես նաև սահմանափակվում է անձի ազատությունը և անձնական անձեռնմխելիության իրավունքը՝ օրենսդիրն անձին անգործունակ ճանաչելը թույլատրում է բացառապես դատական կարգով: Անձին անգործունակ ճանաչելու դատական կարգ սահմանելու նպատակն է թույլ չտալ սխալ գնահատել անձի՝ իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու կարողության մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ որևէ հայեցողական լիազորություն չի կարող անսահմանափակ և բացարձակ լինել, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ անձին իր գործի քննությանը մասնակից դարձնելու հայեցողական լիազորությունն էլ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է իրականացվի այնպես, որպեսզի երաշխավորվի վերոհիշյալ սահմանադրական, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերով նախատեսված իրավունքների, մասնավորապես՝ արդար դատաքննության իրավունքի, դատարանում լավելու իրավունքի, իր կողմից ընտրված փաստաբանի միջոցով իր շահերը դատարանում ներկայացնելու իրավունքի արդյունավետ իրացումը: Նշված հայեցողական լիազորությունն իրականացնելիս դատարանը կաշկանդված է այնքանով, որքանով չպետք է թույլ տալ սխալ գնահատել անձի առողջական վիճակի, իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու կարողության մասին: Այլապես, դա ոչ միայն չի նպաստի արդարադատու-

թյան իրականացմանը, այլև անձին կզրկի իր իրավունքներն ու օրինական շահերը դատական կարգով պաշտպանելու հնարավորությունից:

Խնդրո առարկա հայեցողական լիազորությունը վերոհիշյալ սահմաններում իրականացնելու պահանջն ապահովելու նպատակով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում անձին անգործունակ ճանաչելու դիմում քննելիս դատարանը պարտավոր է քաղաքացուն ծանուցել նիստի ժամանակի և վայրի մասին՝ հնարավորություն տալով անձամբ ներկա գտնվելու, անհնարինության դեպքում՝ իր շահերը դատարանում ներկայացնել իր կողմից ընտրված փաստաբանի միջոցով, ինչպես նաև պարտավոր է քաղաքացուն ծանուցել անգործունակ ճանաչելու վերաբերյալ վճռի մասին՝ հնարավորություն տալով օրենքով սահմանված ժամկետում բողոքարկելու տվյալ վճիռը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ անգործունակ ճանաչվող անձի ներկայությունը դատարանում ապահովելը կարևորվում է նաև նրա համար, որ դատավորին հնարավորություն տրվի անսխալ կարծիք ձևավորել անձի առողջական վիճակի, իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու կարողության մասին, ինչպես նաև անգործունակ ճանաչվող անձին հնարավորություն տրվի օգտվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սախատեսված դատավարական իրավունքներից:

Անձի ներկայությունը դատական նիստին կօժանդակի դատարանին պարզելու նաև, թե արդյո՞ք դիմում տված ընտանիքի անդամները վարվել են անբարեխիղճ՝ ակնհայտորեն նպատակ ունենալով քաղաքացուն անհիմն գրկել գործունակությունից:

բ) Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձրել է այն հիմնավորմամբ, որ անգործունակ ճանաչելու մասին վճիռը բողոքարկելու ժամկետը բաց թողնելու արդյունքում անձն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա ձեռք է բերել անգործունակ անձի կարգավիճակ, հետևաբար նաև այդ կարգավիճակում այլևս չունի վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունք: Ընդ որում, վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ բողոք ներկայացրած անձն առաջին ատյանի դատարանում դատական նիստի մասին ծանուցված չի եղել, դատարան չի կանչվել, ինչպես նաև առաջին ատյանի դատարանի վճռի մասին չի տեղեկացվել վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետում:

Վերոնշյալ մեկնաբանությունների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանի նման դիրքորոշման պայմաններում բոլոր այն դեպքերում, երբ անձն անգործունակ է ճանաչվել առանց դատարան կանչվելու, չի ծանուցվել դատական նիստի ժամանակի մասին, չի ծանուցվել կայացված դատական ակտի մասին և այդ իսկ պատճառով բաց է թողել նաև վերաքննիչ բողոք բերելու ժամկետը, ընդհանրապես գրկվում է իր առնչությամբ կայացված դատական ակտը բողոքարկելու դատավարական հնարավորություններից: Նման իրավիճակում, նկատի ունենալով, որ անձն առաջին ատյանի դատարանի կողմից անգործունակ է ճանաչվել առանց դատարան կանչվելու, արգելափակվում է անձի դատական պաշտպանության, դատարանի մատչելիության իրավունքն ընդհանրապես: Բացի այդ, օրենսդիրը, նկատի ունենալով, որ անձին անգործունակ ճանաչելու հետևանքով սահմանափակվում են նրա ազատությունն ու անձնական անձեռնմխելիության իրավունքը, ինչպես նաև անձը գրկվում է իր իրավունքներն ու պարտականությունները ողջ ծավալով ինքնուրույն իրականացնելու հնարավորությունից՝ անձին անգործունակ ճանաչելը թույլատրում է միայն դատական կարգով: Մինչդեռ Վերաքննիչ դատարանի իրավական դիրքորոշման պայմաններում դատական կարգով անգործունակ ճանաչելու օրենսդրական կարգավորումը ձևական բնույթ է ստանում և դառնում ինքնանպատակ, և

արդյունքում անձի նշված սահմանադրական իրավունքները հայտնվում են դատական վերահսկողությունից դուրս:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ բաց է թողնված անգործունակ ճանաչելու վերաբերյալ վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը, և առաջին ատյանի դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ, այդ հանգամանքն անգործունակ ճանաչված անձին չի զրկում վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքից, և բողոքը չի կարող վերադարձվել միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի հիմքով: Մասն դեպքերում Վերաքննիչ դատարանից պահանջվում է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու մասին միջնորդությունը, եթե այդպիսին առկա է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի հիման վրա վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին վիճարկվող որոշմամբ խախտվել են ՀՀ Սահմանադրության և միջազգային իրավական փաստաթղթերով նախատեսված՝ անձի դատական պաշտպանության, դատարանի մատչելիության, դատարանում լավելու, վերաքննիչ դատարանում իրավական պաշտպանություն հայցելու իրավունքները: Բողոքն այդ հիմքով վերադարձման ենթակա չէր, քանի որ անձը տվյալ իրավիճակում պահպանել է բողոք բերելու իր իրավունքը:

Վերոնշյալ մեկնաբանության համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Վերաքննիչ դատարանը քննության առարկա պետք է դարձներ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու մասին միջնորդությունը, որում որպես նման պատճառ մատնանշված էր գործին մասնակից դարձված չլինելու արդյունքում առաջին ատյանի դատարանի վճռի առկայության մասին տեղյակ չլինելու հանգամանքը, որպիսի փաստը հաստատվում է Դատարանի 20.01.2012 թվականի վճիռն օրենքով սահմանված կարգով Վլադիմիր Օհանովին ուղարկելու մասին ապացույց գործում առկա չլինելու հիմքով:

գ) Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին կետը, գտել է, որ վերաքննիչ բողոք բերելու իրավունքը տվյալ իրավիճակում նշված դրույթին համապատասխան պատկանում է անգործունակ ճանաչված անձի խնամակալին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործը կարող է հարուցվել նրա ընտանիքի անդամների, խնամակալության և հոգաբարձության մարմնի կամ հոգեբուժական հաստատության տնօրինության դիմումի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ խնամակալ է նշանակում խնամակալության և հոգաբարձության մարմինը: Մույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ խնամակալ են նշանակվում չափահաս գործունակ անձինք:

Գործնակալում, որպես կանոն, խնամակալ նշանակվում է անգործունակ ճանաչված անձի ընտանիքի անդամը: Նշված իրավակարգավորումից բխում է, որ անձն անգործունակ է ճանաչվում կամ ապագա խնամակալի կամ խնամակալ նշանակող մարմնի դիմումի հիման վրա, ինչը նշանակում է, որ խնամակալի և անգործունակ ճանաչված անձի շահերը ոչ միայն կարող են չհամընկնել, այլ նաև կարող են հակադրվել միմյանց: Այս տրամաբանությունն է ընկած նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված դրույթի հիմքում:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ

խնամակալ է նշանակվել անձին անգործունակ ճանաչելու դիմում ներկայացրած ընտանիքի անդամը, կամ անձն անգործունակ է ճանաչվել խնամակալության ու հոգաբարձության մարմնի դիմումի հիման վրա, խնամակալը որոշ դեպքերում կարող է չդրսևորել անհրաժեշտ և բավարար անաչառություն և անկողմնակալություն, քանի որ անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտի բողոքարկումը ոչ միշտ է բխում խնամակալի շահերից:

Ելնելով վերոհիշյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին կետի դրույթի կիրառմամբ չպետք է սահմանափակել անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի վարույթի շրջանակներում անգործունակ ճանաչված անձի բողոքարկման իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 13.11.2012 թվականի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2012 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
Դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԿԴ/0233/02/11**
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ **ԿԴ/0233/02/11**

Նախագահող դատավոր՝ **Դ. Խաչատրյան**

Դատավորներ՝ **Ն. Տավարացյան**

Ս. Միքայելյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի սեպտեմբերի 18-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Նունե Բաբայանի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-
րաքննիչ քաղաքացիական դատարանի 29.07.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վերա-
դարձնելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի (այ-
սուհետ՝ Բանկ) ընդդեմ Արթուր Համբարյանի, Ծովինար Խոջայանի և Նունե Բաբայանի՝
15.287 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի և այդ գումարի նկատմամբ հաշվարկման են-
թակա տուժանքի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Արթուր Համբարյանից, Ծովինար Խոջա-
յանից, Նունե Բաբայանից համապարտության կարգով բռնագանձել 15.287 ԱՄՆ դոլար՝
չվճարված պարտքի գումար, և սկսած վարկի դուրս գրման օրվանից՝ 29.04.2011 թվակա-
նից, մինչև վճարման օրը չվճարված գումարի վրա հաշվարկել վարկային պայմանագրի
5.6 կետով նախատեսված օրական 0,12 տոկոս տուժանք:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ա. Միսա-
կյան) (այսուհետ՝ Դատարան) 06.06.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
29.07.2013 թվականի որոշմամբ Նունե Բաբայանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նունե Բաբայանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածն ու «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը՝ ազգային փառավար տոների և դրանց հաշորդող հիշատակի օրերի կապակցությամբ 13.12.2012 թվականի ՀՀ կառավարության թիվ 1558-Ն որոշումը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ, 75-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանում է հեղուկալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ բողոքարկման ժամկետը լրանում է 07.07.2013 թվականին, և 07.07.2013 և 08.07.2013 թվականները ոչ աշխատանքային օրեր են, որի պատճառով էլ վերաքննիչ բողոքը ներկայացվել է 09.07.2013 թվականին, և Նունե Բաբայանի կողմից ժամկետի խախտում չի եղել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 29.07.2013 թվականի որոշումը:

3.Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է առաջին ստյանի դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետների հաշվարկման հարցին:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը յուրաքանչյուր անձի համար սահմանում է արդար դատաքննության իրավունք, որի բաղկացուցիչ մասն է հանդիսանում անձի դատական պաշտպանության իրավունքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 140-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

Օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

Օրենսգրքի 74-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ

օրերով հաշվվող դատավարական ժամկետի ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է դրա սկիզբը:

Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տարիներով հաշվվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին: Ամիսներով հաշվվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Եթե ամիսներով հաշվվող ժամկետի վերջը համընկնում է այնպիսի ամսվա, որը համապատասխան ամսաթիվ չունի, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը:

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված՝ կառավարությունը կարող է աշխատանքային օրերը տեղափոխել:

ՀՀ կառավարության 13.12.2012 թվականի թիվ 1558-Ն որոշմամբ սահմանվել է, որ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածն ու «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը՝ ազգային տաղավար տոների և դրանց հաջորդող հիշատակի օրերի կապակցությամբ ՀՀ կառավարությունը որոշել է 2013 թվականի ապրիլի 01-ի, հուլիսի 08-ի, օգոստոսի 19-ի և սեպտեմբերի 16-ի աշխատանքային երկուշաբթի օրերը համապատասխանաբար տեղափոխել 2013 թվականի ապրիլի 13-ը, հուլիսի 13-ը, օգոստոսի 24-ը և սեպտեմբերի 28-ը՝ շաբաթ օրերը:

Վկայակոչված դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ դատավարական ժամկետները հաշվարկվում են նաև ամիսներով, և ամիսներով հաշվվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Այն դեպքում, երբ ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը: Միաժամանակ, ամիսներով հաշվարկվող դատավարական ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը, իսկ նշված ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը: Այսպես, 2013 թվականի հուլիսի 05-ից մինչև հուլիսի 08-ը ներառյալ ոչ աշխատանքային օրեր են: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, և դրա դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

Վերաքննիչ դատարանը, նշելով, որ վերաքննիչ բողոքը բոլոր դեպքերում վերադարձվում է, եթե այն բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, իսկ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում վերաքննիչ դատարանը կարող է կայացնել այն դեպքում, երբ բացակայում են վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերը, արձանագրել է, որ Դատարանի վճիռը կայացվել է 06.06.2013 թվականին, իսկ այդ վճիռն դեմ վերաքննիչ բողոքը Նունե Բաբայանի կողմից ներկայացվել է 09.07.2013 թվականին: Վերաքննիչ բողոք բերելու ժամկետի հաշվարկը սկսվում է Դատարանի վճիռը կայացնելու հաջորդ օրվանից՝ 07.06.2013 թվականին և լրանում է 07.07.2013 թվականին, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հուլիսի 07-ը ոչ աշխատանքային օր է հետևաբար ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ 08.07.2013 թվականը: Մինչդեռ Նունե Բաբայանը, վերաքննիչ բողոք ներկայացնելով 09.07.2013 թվականին, բաց է թողել օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը և չի ներկայացրել միջնորդություն բաց թողած ժամկետը վերականգնելու մասին:

Համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի վճիռը հրապարակվել է 06.06.2013 թվականին, դրա դեմ վերաքննիչ բողոք բերվել է 09.07.2013 թվակա-

նին, իսկ ՀՀ կառավարության 13.12.2012 թվականի թիվ 1558-Ն որոշմամբ 2013 թվականի հուլիսի 08-ը հայտարարվել է ոչ աշխատանքային և տեղափոխվել է սույն թվականի հուլիսի 13-ը: Այսինքն՝ վերաքննիչ բողոքը ներկայացվել է օրենսդրությամբ սահմանված ժամկետում՝ ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ 09.07.2013 թվականին, և որևէ դատավարական ժամկետի խախտում առկա չէ, հետևաբար Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունները, որ վերաքննիչ բողոքը բոլոր դեպքերում վերադարձվում է, եթե այն բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և չի ներկայացվել միջնորդություն բացթողած ժամկետը վերականգնելու մասին, անհիմն են:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի հիման վրա վերաքննիչ բողոքի վերադարձմամբ վիճարկվող որոշմամբ խախտվել են ՀՀ Սահմանադրության և միջազգային իրավական փաստաթղթերով նախատեսված՝ անձի դատական պաշտպանության, դատարանի մատչելիության, դատարանում լավելու, վերաքննիչ դատարանում իրավական պաշտպանություն հայցելու իրավունքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.07.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2963/02/11**
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2963/02/11
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Ա. Թումանյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի մայիսի 13-ին,
քննարկելով ըստ հայցի Երևան համայնքի (այսուհետ՝ Համայնք) ընդդեմ Վարդ
Գասպարյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.02.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վե-
րադարձնելու մասին» որոշման դեմ Համայնքի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Համայնքը պահանջել է Վարդ Գասպարյանից բռնագանձել
2.145.184 ՀՀ դրամ, որից 598.862 ՀՀ դրամը՝ որպես վարձավճար, 1.546.322 ՀՀ դրամը՝
որպես տույժ, ինչպես նաև տույժերի հաշվարկը շարունակել 06.06.2012 թվականից մինչև
պարտավորության փաստացի կատարման օրը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-
թյան դատարանի (դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 21.12.2012 թվակա-
նի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
22.02.2013 թվականի որոշմամբ Դատարանի 21.12.2012 թվականի վճռի դեմ Համայնքի բե-
րած վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Համայնքը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ և 77-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ հայցվորի ներկայացուցչի կողմից վերաքննիչ բողոքում ներկայացվել է վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու վերաբերյալ միջնորդություն, որը Վերաքննիչ դատարանը չի քննարկել: Ավելին, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայցվորը Դատարանի 21.12.2012 թվականի վճիռը ստացել է 23.01.2013 թվականին, այսինքն՝ վճռի բողոքարկման մեկամսյա ժամկետի բացթողումը եղել է հայցվորի կամքից անկախ: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը պետք է քննարկեր վերաքննիչ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու մասին միջնորդությունը և այն բավարարեր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 22.02.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է գործին մասնակցած անձանց: Գործի մասնակիցներից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան:

Նույն օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

Նույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա, նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու դեպքում, վերականգնում է բաց թողնված ժամկետը:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է դատարանի վճիռն օրենսդրությամբ սահմանված ժամկետում անձին չհանձնելու և բողոքարկման ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքներին: Վճռաբեկ դատարանը գտել է, որ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ: Այդ ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականաց-

ման համար օրենքն ընդհանուր իրավասության դատարանին պարտավորեցնում է վճռի հրապարակվելուց անմիջապես հետո դրա օրինակը հանձնել գործին մասնակցած անձանց, իսկ նրանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկել նրան: Միաժամանակ, այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը բաց է թողնում վերոգրյալ ժամկետը, վերջինս իրավունք ունի ներկայացնել դրա բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի քննարկումը վերաքննիչ դատարանը պարտավոր է իրականացնել՝ հաշվի առնելով նաև անձի՝ սահմանադրական նորմով երաշխավորված դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները (լրե՛ս, «ՎՏԲ-Հայաստան քանակ» ՓԲԸ-ի ընդդեմ Դանիել Բարսեղյանի՝ թիվ ԱՐԱԴ/0716/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2011 թվականի որոշումը):

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերադարձնելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ «բողոք բերած անձը Դատարանի 21.12.2012 թվականի վճռի դեմ սույն վերաքննիչ բողոքը ներկայացրել է 11.02.2013 թվականին, այսինքն՝ օրենքով սահմանված վերաքննիչ բողոք բերելու ժամկետի ավարտից հետո: Սույն գործի նյութերի և ներկայացված բողոքի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Դատարանը թիվ ԵԿԴ/2963/02/11 քաղաքացիական գործով վճիռը կայացրել է 21.12.2012 թվականին, որը Երևան համայնքը՝ ի դեմս «Կենտրոն» վարչական շրջանի, ստացել է 16.01.2013 թվականին, իսկ վերաքննիչ բողոքը բերվել է 21.01.2013 թվականին՝ սահմանված մեկամսյա ժամկետը լրանալուց հետո, սակայն միջնորդություն չի ներկայացրել բաց թողած ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին»:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի վճիռը հրապարակվել է 21.12.2012 թվականին, իսկ հետագայում ծանուցման թերթիկի համաձայն՝ Համայնքը՝ ի դեմս Կենտրոն վարչական շրջանի, այն ստացել է ավելի քան մեկ ամիս հետո՝ 23.01.2013 թվականին, վերաքննիչ բողոքը բերվել է 11.02.2013 թվականին, իսկ Դատարանի կողմից վճիռը հրապարակման օրը Համայնքին կամ վերջինիս ներկայացուցչին հանձնելու վերաբերյալ ապացույց սույն գործում առկա չէ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համաձայն Դատարանի 24.12.2012 թվականի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին հասցեագրված գրության (առանց ելքի համարի)՝ վճիռն ուղարկվել է 24.12.2012 թվականին, սակայն առկա չէ ապացույց՝ փոստային անդորրագիր, այն փոստային ծառայությանը հանձնելու օրվա վերաբերյալ: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը չի քննարկել բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը:

Վերոնշյալ դիրքորոշման լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Համայնքը՝ ի դեմս Կենտրոն վարչական շրջանի, Դատարանի 21.12.2012 թվականի վճիռը ստացել է 23.01.2013 թվականին, այսինքն՝ վճռի հրապարակման օրվանից ավելի քան մեկ ամիս հետո, ինչի արդյունքում վերջինս զրկվել է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքից: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածը, քանի որ չքննարկելով բողոք բերելու դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը, վերաքննիչ բողոքը վերադարձրել է:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դի-

տում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.02.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ **ԵԿԴ/1881/02/11**
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1881/02/11**
Նախագահող դատավոր՝ **Դ. Խաչատրյան**
Դատավորներ՝ **Ն. Տավարացյան**
Ս. Միքայելյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի հունիսի 30-ին,
քննարկելով ըստ հայցի Լիլիթ Ռաշոյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության և ՀՀ գլխավոր դատախազության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության՝ առգրավված գույքը՝ ավտոմեքենան, իր նախկին վիճակով վերադարձնելու պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.02.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Լիլիթ Ռաշոյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Լիլիթ Ռաշոյանը պահանջել է վերադարձնել առգրավված գույքը՝ ավտոմեքենան իր նախկին վիճակով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 13.12.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.02.2014 թվականի որոշմամբ Լիլիթ Ռաշոյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լիլիթ Ռաշոյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, «Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ և 140-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատաքանել է հետևյալ փաստարկով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի պահանջների խախտում, մասնավորապես՝ Դատարանի 13.12.2013 թվականի վճիռը Լիլիթ Ռաշոյանի կողմից ստացվել է 10.01.2014 թվականին, երբ բողոքարկման ժամկետի ավարտին մնացել էր ընդամենը երկու օր, որի պատճառով վերջինս զրկվել է օրենքով սահմանված ժամկետում բողոք բերելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 21.02.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանն այն գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է գործին մասնակցած անձանց: Գործի մասնակիցներից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա, նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու դեպքում, վերականգնում է բաց թողնված ժամկետը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ օրենքով նախատեսված ժամկետներից հետո բերված վերաքննիչ բողոքը դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշման շրջանակներում փոխկապակցված վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի և 207-րդ հոդվածի 1-ին կետի իրավանդումները, արձանագրել է, որ եթե ներկայացված չէ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը չգերազանցող գումարը բռնագանձելու

մասին պահանջ կամ դրամական արտահայտությամբ գնահատված հայցի առարկայի արժեքը չի գերազանցում այդ չափը, ապա ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նշված ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը: Նշված ժամկետից հետո բերված վերաքննիչ բողոքը դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է դատարանի կողմից: Վերաքննիչ բողոքը բոլոր դեպքերում վերադարձվում է, եթե այն բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին (*լրև՝ս, Վարդան Պողոսյանն ընդդեմ Տիգրան Արշակյանի թիվ ԵՇԳ/0021/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերոնշյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ մրցակցային դատավարության պայմաններում դատարանը, որպես արդարադատություն իրականացնող մարմին, ձեռնամուխ է լինում քաղաքացիական դատավարության կարգով քաղաքացիական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը միայն համապատասխան հայցադիմումի կամ դիմումի հիման վրա: Կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներով պայմանավորված դատարանը հանդես է գալիս որպես միայն վեճը լուծող մարմին և կաշկանդված է որոշակի դատավարական գործողություններ սեփական նախաձեռնությամբ իրականացնելու արգելքով: Մասնավորապես, դատարանի կողմից դատավարական որոշակի գործողությունների կատարման համար անհրաժեշտ է, որպեսզի գործին մասնակցող անձը գրավոր, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև բանավոր, հայցի համապատասխան գործողության կատարումը: Այս առումով դատավարական ժամկետների բաց թողնման և վերականգման հարցերի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումից հետևում է, որ դատարանը բաց թողնված դատավարական ժամկետը կարող է վերականգնել միայն այն դեպքում, երբ այդ ժամկետը բաց թողած շահագրգիռ անձը գրավոր միջնորդության կամ դիմումի միջոցով հայցել է նման գործողության իրականացումը, այլ կերպ ասած՝ ներկայացրել է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու վերաբերյալ գրավոր պահանջ: Այսինքն՝ նման միջնորդության առկայությունը պարտադիր նախապայման է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու համար, և որևէ բացառություն այս ընդհանուր կանոնից չի կարող լինել՝ անկախ այն պատճառներից, որոնք պայմանավորել են համապատասխան դատավարական ժամկետի բացթողումը:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն դեպքերին, երբ բողոքարկման իրավունքի իրացման ժամկետի բացթողումը պայմանավորված է ստորադաս դատարանի անգործությամբ: Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է դատարանի վճիռն անձին չհանձնելու և այդ պայմաններում բողոքարկման ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքներին՝ նշելով, որ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ: Այդ ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման համար օրենքն ընդհանուր իրավասության դատարանին պարտավորեցնում է վճռի հրապարակվելուց անմիջապես հետո դրա օրինակը հանձնել գործին մասնակցած անձանց, իսկ նրանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում՝ հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկել նրան: Միաժամանակ, այն դեպ-

քում, երբ գործին մասնակցող անձը բաց է թողնում վերոգրյալ ժամկետը, վերջինս իրավունք ունի ներկայացնել դրա բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի քննարկումը վերաքննիչ դատարանը պարտավոր է իրականացնել՝ հաշվի առնելով նաև անձի՝ սահմանադրական նորմով երաշխավորված դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները (*յրէս, Երևան համայնքն ընդդեմ Վարդ Գասպարյանի թիվ ԵԿԿ/2963/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.05.2013 թվականի որոշումը*):

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ բողոքարկման իրավունքի իրացման ժամկետի բացթողումը պայմանավորված է ստորադաս դատարանի անգործությամբ, բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու հարցը քննարկելիս վերադաս դատարանը պետք է առաջնորդվի անձի՝ իր իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու և դրա մատչելիության սկզբունքներով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է:

Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յրէս, Աշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

Սույն գործով Լիլիթ Ռաշոյանը, վերաքննիչ բողոք բերելու համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ժամկետի ավարտից հետո գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ ներկայացնելով վերաքննիչ բողոք, չի ներկայացրել համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու վերաբերյալ միջնորդություն՝ թվարկելով միայն այն հանգամանքները, որոնք պատճառ են հանդիսացել այդ ժամկետը բաց թողնելու համար:

Վերաքննիչ դատարանը, վերադարձնելով հայցվորի վերաքննիչ բողոքը, արձանագրել է, որ տվյալ դեպքում բողոք բերած անձը միջնորդություն չի ներկայացրել բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ Դատարանը վճիռը կայացրել է 13.12.2013 թվականին, իսկ այդ վճռի դեմ վերաքննիչ բողոքը Լիլիթ Ռաշոյանը ներկայացրել է 07.02.2014 թվականին: Փաստերի նման դասավորվածության դեպքում վերաքննիչ բողոք բերելու ժամկետի հաշվարկը սկսվում է Դատարանի վճիռը կայացնելու հաջորդ օրվանից՝ 14.12.2013 թվականից և լրանում է 14.01.2014 թվականին, մինչդեռ Լիլիթ Ռաշոյանը, վերաքննիչ բողոքը ներկայացնելով 07.02.2014 թվականին, բաց է թողել օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը և չի ներկայացրել միջնորդություն՝ բաց թողած ժամկետը վերականգնելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թո-

դած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը:

Վերոնշյալ վերլուծությունների համատեքստում գնահատելով սույն գործի փաստերը և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ պարագայում բողոք բերած անձի կողմից բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացված չլինելու պայմաններում առկա է եղել վերաքննիչ բողոքը վերադարձնելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված հիմքը, հետևաբար Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը հիմնավոր է, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանը 21.02.2014 թվականի որոշմամբ Լիլիթ Ռաշոյանի վերաքննիչ բողոքը վերադարձրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածով նախատեսված՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու երկու հիմքով, այն է՝ 1. պահպանված չեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները և 2. վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին: Մինչդեռ Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք բերվել է միայն Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված միայն մեկ՝ երկրորդ հիմքի իրավական հիմնավորումների օրինաչափության մասով, որի վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկները վերոգրյալ պատճառաբանություններով անհիմն են:

Վերը շարադրվածից հետևում է, որ եթե անգամ վճռաբեկ բողոքը հիմնավոր համարվեր, Վերաքննիչ դատարանի որոշումը վերաքննիչ բողոքը վերադարձնելու առաջին հիմքի մասով բողոքարկված չլինելու պայմաններում չէր կարող վերացվել, քանի որ Վճռաբեկ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի համաձայն, վճռաբեկության կարգով գործի քննության ժամանակ գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.02.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/0828/02/12
2014թ.

Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/0828/02/12
Նախագահող դատավոր՝ Ի. Վարդանյան
Դատավորներ՝ Ն. Բարսեղյան
Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2014 թվականի սեպտեմբերի 03-ին,
քննարկելով Աշոտ Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիա-
կան դատարանի 06.06.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին»
որոշման դեմ՝ ըստ դիմումի Հովհաննես Բաղդասարյանի՝ ժառանգությունն ընդունելու
բաց թողնված ժամկետը վերականգնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հովհաննես Բաղդասարյանը պահանջել է իր կողմից ժառան-
գության ընդունման բաց թողնված ժամկետը հարգելի համարել:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Խաչատ-
րյան) (այսուհետ՝ Դատարան) 11.10.2012 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.06.2014 թվականի որոշմամբ վերադարձվել է գործին մասնակից չդարձված անձ Աշոտ Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աշոտ Բաղդասարյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմ-
նավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգր-
քի 207-րդ և 213-րդ հոդվածները:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Աշոտ Բաղդասարյանը Դատարանի 11.10.2012 թվականի վճռի մասին տեղեկացել է միայն 2014 թվականի ապրիլին և վերաքննիչ բողոքին կից ներկայացնելով բողոք բերելու համար նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն՝ ներկայացրել է նաև այդ միջնորդությունը հիմնավորող համապատասխան ապացույցներ:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 06.06.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության»:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանն այն գտնում է հիմնավոր հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առկայամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է:

Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին դատական պաշտպանության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յոն ս. Աշինգդեյնս ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57, Ashingdane v. the United Kingdom, judgment of 28 May 1985, Series A no. 93, p. 24, para. 57*):

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջա-

նալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*յրենս, Սյարքինգսը և մյուններն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետ 51, 55, Stubbings and Others v. the United Kingdom, Judgment, 22.10.1996, par. 51, 55*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ սկզբունքների լույսի ներքո պետք է մեկնաբանվեն նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ և 213-րդ հոդվածները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վերաքննիչ բողոք բերելու այն օրվանից սկսած՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 5-րդ կետի առաջին պարբերությամբ նախատեսված ժամկետներից հետո բերված վերաքննիչ բողոքը դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է դատարանի կողմից:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ գործին մասնակից չդարձված անձանց համար օրենսդիրը սահմանել է դատական ակտի բողոքարկման եռամսյա ժամկետ: Միաժամանակ օրենսգիրքը սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը՝ այն օրվանից սկսած, երբ անձն իմացել է կամ կարող էր իմանալ նման դատական ակտի կայացման մասին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժամկետների հաշվարկման նմանատիպ կարգը, որն ընդունված է Եվրոպայի Խորհրդի այլ անդամ պետությունների կողմից, ներառվում է պետության հայեցողական լիազորության մեջ, ինչը բխում է նաև Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից (*յրենս, Սյարքինգսը և մյուններն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետ 54*):

Միաժամանակ, բացի դատական ակտը նշված կարգով բողոքարկելու իրավական հնարավորությունից, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է դատական ակտի բողոքարկման հնարավորություն նաև օրենքով սահմանված ժամկետն անցնելուց հետո: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկնել իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի արգելում անձին վերաքննիչ բողոք բերելու ժամկետը լրանալուց հետո ներկայացնել բողոք և միաժամանակ միջնորդություն՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, իսկ դատավարական ժամկետի խախտումն ինքնին բավարար չէ վերաքննիչ բողոքը վերադարձնելու համար, քանի որ դատարանը պարտավոր է անդրադառնալ այդ միջնորդությանը, որի քննարկման արդյունքում որոշում կայացնելուց հետո միայն որոշել վերաքննիչ բողոքը վե-

րադարձնելու կամ վարույթ ընդունելու հարցը (յրե՛ս, Ալբերտ Սուքիասյանն ընդդեմ «Ջենե-րալ Տրանստորդ ՄՔ» ՓԲԸ-ի թիվ ԵՇԴ/0438/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.03.2010 թվականի որոշումը):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանն իրավունք ունի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն վերաքննիչ բողոքը վերադարձնել, եթե գործին մասնակից չդարձված անձինք վերաքննիչ բողոք են բերել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պահից եռամսյա ժամկետը լրանալուց հետո, և բողոքը միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը դատարանը չի բավարարել (յրե՛ս, Մանիկ Հովսեփյանն, Թինա Օզանեզովան ընդդեմ Արաքսի Սերոբյանի թիվ ԱՎԴ1/0049/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.07.2011 թվականի որոշումը):

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, Աշոտ Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը վերադարձնելով, պատճառաբանել է, որ բողոք բերած անձը բողոքը ներկայացնելով վճռի կայացումից շուրջ 1 տարի և 8 ամիս անց և հայտնելով, որ կայացված վճռի մասին իմացել է իր և կնոջ դեմ ներկայացված նոր հայցադիմումից, այդ փաստի վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացրել, իսկ նրա՝ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու մասին միջնորդությունից պարզ չէ, թե կոնկրետ երբ և ինչպիսի հանգամանքներում է տեղեկացել վճռի մասին:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը, նշելով, որ բողոք բերած անձը չի կցել իր կողմից վկայակոչված հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հանգել է այն հետևության, որ հնարավոր չէ պարզել, թե արդյոք պահպանվել է օրենքով սահմանված եռամսյա ժամկետը, թե՛ ոչ, և արձանագրել է, որ Աշոտ Բաղդասարյանի կողմից բաց է թողնվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված վերաքննիչ բողոք բերելու եռամսյա ժամկետը, իսկ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ կետի՝ նույն հոդվածի 5-րդ կետի առաջին պարբերությամբ նախատեսված ժամկետից հետո բերված վերաքննիչ բողոքը դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է դատարանի կողմից:

Վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի 06.06.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման մեջ բացակայում է որևէ նշում Աշոտ Բաղդասարյանի վերաքննիչ բողոքին կից ներկայացված՝ վերաքննիչ բողոք բերելու համար նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդությունը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանի 06.06.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը չի պարունակում որևէ եզրահանգում վերաքննիչ բողոքին կից ներկայացված միջնորդությունը մերժելու կամ բավարարելու՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ թեև անդրադարձել է վերաքննիչ բողոք բերելու համար նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդությանը, սակայն այդ միջնորդության քննարկման արդյունքում որևէ որոշում չի կայացրել միջնորդությունը մերժելու կամ բավարարելու՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, ինչն անձի դատական պաշտպանության իրավունքի խախտում է: Մասնավորապես՝ շահագրգիռ անձն իր դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս, դատավարական օրենքով նախա-

տեսված որևէ միջնորդություն հարուցելով՝ ակնկալում է իր կողմից բարձրացված հարցի որոշակի լուծում՝ դատարանի կողմից համապատասխան որոշման կայացման ձևով: Այսինքն՝ դատավարության մասնակցի՝ միջնորդություն հարուցելու իրավունքին համապատասխանում է տվյալ հարցով որոշում կայացնելու դատարանի պարտականությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դատարանի որոշմանը ներկայացվող պարտադիր պահանջ է քննարկվող հարցի վերաբերյալ համապատասխան եզրահանգումը, հետևաբար այդպիսի եզրահանգման բացակայության պայմաններում բացակայում է նաև դատարանի որոշումը, ինչի արդյունքում խախտվում է անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Աշոտ Բաղդասարյանի իրավունքների ապահովման նպատակով Վերաքննիչ դատարանի կողմից միջնորդության քննության արդյունքում որոշում կայացնելու համար սույն գործը ենթակա է նոր քննության, որից հետո միայն Վերաքննիչ դատարանը կարող է որոշել վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու կամ վերադարձնելու հարցը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-ին հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.06.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/2573/02/11**
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/2573/02/11**
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Ա. Խատառյան
Դ. Խաչատրյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2013 թվականի դեկտեմբերի 27-ին,
քննարկելով գործին մասնակից չդարձված անձ Մարինե Բաղդասարյանի վճռաբեկ
բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.09.2013 թվականի «Վերաքննիչ
բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Գառնիկ Կուրդիկյանի, Մանյա
Ալոյանի ընդդեմ Անահիտ և Միքայել Կուրդիկյանների՝ ժառանգությունն ընդունած ժա-
ռանգ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գառնիկ Կուրդիկյանը և Մանյա Ալոյանը պահանջել են իրենց
ճանաչել Հարություն Կուրդիկյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի
Կոմիտասի 34-րդ շենքի թիվ 53 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/5 մասի նկատմամբ
ժառանգությունն ընդունած ժառանգներ, ինչպես նաև այդ բաժնեմասի նկատմամբ ճանա-
չել իրենց սեփականության իրավունքը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավա-
սության դատարանի (դատավոր՝ Գ. Ավագյան) (այսուհետ՝ **Դատարան**) 17.07.2012 թվա-
կանի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ **Վերաքննիչ դատարան**)
02.09.2013 թվականի որոշմամբ վերադարձվել է գործին մասնակից չդարձված անձ Մարի-

նե Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել գործին մասնակից չդարձված անձ Մարինե Բաղդասարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետը, որոնք պետք է կիրառել, կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել, ինչպես նաև խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1215-րդ, 1216-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ նշված գործը Մարինե Բաղդասարյանի իրավունքներին և պարտականություններին չի վերաբերել, և տվյալ դատական ակտով չեն խախտվել վերջինիս իրավունքները՝ անտեսելով վերաքննիչ բողոքում Մարինե Բաղդասարյանի կողմից վկայակոչված փաստարկները՝ Հարություն Կուրդի-Նյանի՝ առաջին հերթի ժառանգ հանդիսանալու և նրա ժառանգությունը փաստացի տիրապետման եղանակով ընդունելու վերաբերյալ: Արդյունքում՝ Վերաքննիչ դատարանը խախտել է Մարինե Բաղդասարյանի՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է «բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.09.2013 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ»:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանն այն գտնում է հիմնավոր հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: ՀՀ քաղաքացիական դատավարու-

թյան օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե բողոքը ներկայացրել է այն անձը, ով ստորադաս դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վերաքննիչ դատարանը յուրաքանչյուր դեպքում գործին մասնակից չդարձված անձի կողմից ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելիս պետք է պարզի՝ արդյոք բողոքին կից ներկայացված ապացույցներով հիմնավորվում է, որ վիճարկվող դատական ակտն առերևույթ կարող է վերաբերել վերջինիս իրավունքներին և պարտականություններին: Ինչ վերաբերում է անձի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատական ակտ կայացված լինել կամ չլինելու հարցին, ապա այն պետք է գնահատման առարկա դարձվի և պարզվի ՀՀ վերաքննիչ դատարանում՝ գործի քննության փուլում:

Վերաքննիչ դատարանը Մարինե Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը վերադարձրել է այն պատճառաբանությամբ, որ վերջինս չի ներկայացրել ապացույցներ առ այն, որ սույն քաղաքացիական գործը վերաբերել է իր իրավունքներին և պարտականություններին: «Մասնավորապես, բողոք բերողը նշել է, որ դատարանն իրեն գործին մասնակից չի դարձրել այն պայմաններում, երբ ինքը հանդիսանում է վիճելի բնակարանի համատեմակատերերից Հարություն Կուրդիկյանի իրավահաջորդը, մինչդեռ չի ներկայացրել Հարություն Կուրդիկյանի ժառանգությունն ընդունած ժառանգ հանդիսանալու վերաբերյալ որևէ ապացույց»: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնել է, որ հնարավոր չէ որոշել, թե որքանով է կայացված դատական ակտն առկա ընդ որոք բերողի իրավունքներին և արտականություններին, և արդյոք նրան գործի քննությանը մասնակից չդարձնելն ազդել է գործի ելքի վրա:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված հետևությունն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ. սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Երևանի Կոմիտասի 34-րդ շենքի թիվ 53 բնակարանի սեփականատերերն են Հարություն Կուրդիկյանը (մահացել է 14.11.2007 թվականին), Գառնիկ Կուրդիկյանը, Մանյա Ալոյանը, Անահիտ և Միքայել Հարությունի Կուրդիկյանները:

Վերաքննիչ բողոքին կից ներկայացված թիվ 360639 ամուսնության վկայականի համաձայն՝ Մարինե Բաղդասարյանը և Հարություն Կուրդիկյանն ամուսնացել են 1976 թվականին:

Սույն գործով հայցվորներ Գառնիկ Կուրդիկյանը և Մանյա Ալոյանը ներկայացրել են Հարություն Կուրդիկյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Կոմիտասի 34-րդ շենքի թիվ 53 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/5 մասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջ և որպես պատասխանողներ ներգրավել են միայն Հարություն Կուրդիկյանի գավակներին՝ Անահիտ և Միքայել Կուրդիկյաններին: Գործը քննվել է այն ըստ էության լուծող դատական ակտը կայացվել է գործին մասնակցող անձանց վերը նշված կազմով: Մարինե Բաղդասարյանը, ով հանդիսանում է ժառանգատու Հարություն Կուրդիկյանի կինը, հետևաբար և վերջինիս առաջին հերթի ժառանգը, գործին մասնակից չի դարձվել:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ բողոքին կից ներկայացված ապացույցները, մասնավորապես՝ Մարինե Բաղդասարյանի՝ Հարություն Կուրդիկյանի առաջին

հերթի ժառանգ հանդիսանալու փաստն առերևույթ վկայում են, որ Դատարանի 17.07.2012 թվականի վճիռը կարող է վերաբերել վերջինիս իրավունքներին: Միաժամանակ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ Մարինե Բաղդասարյանը չի ներկայացրել Հարություն Կուրդինյանի ժառանգությունն ընդունելու վերաբերյալ որևէ ապացույց, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ նշված փաստը ենթակա է պարզման ոչ թե բողոքը վարույթ ընդունելու, այլ ՀՀ վերաքննիչ դատարանում գործի քննության փուլում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մարինե Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը պետք է վարույթ ընդունվեր և պարզվեր, թե արդյոք բողոքարկվող դատական ակտը վերաբերում է նրա իրավունքներին կամ պարտականություններին:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-ին հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.09.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2847/02/12**
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2847/02/12**

Նախագահող դատավոր՝ **Ա. Մկրտչյան**
Դատավորներ՝ **Ի. Վարդանյան**
Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորները*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի հուլիսի 31-ին,
քննարկելով ըստ հայցի Երևանի Կենտրոն վարչական շրջանի «Կենտրոն» համատի-
րության (այսուհետ՝ Համատիրություն) ընդդեմ Աննա Թությունջյանի՝ պարտադիր նորմե-
րի իրականացման համար նախատեսված վճարման ենթակա 114.345 ՀՀ դրամ գումար,
ինչպես նաև նախապես վճարված պետական տուրքը՝ 2.290 ՀՀ դրամ գումար բռնագան-
ձելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դա-
տարանի 08.04.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման
դեմ Աննա Թությունջյանի ներկայացուցիչ Հրաչ Ալեգյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Համատիրությունը պահանջել է Աննա Թությունջյանից բռնա-
գանձել 114.345 ՀՀ դրամ, ինչպես նաև իրենց կողմից վճարված պետական տուրքը՝ 2.290
ՀՀ դրամ գումարը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-
թյան դատարանի (այսուհետ՝ Դատարան) 27.02.2013 թվականի վճռով հայցը բավարար-
վել է մասնակիորեն՝ վճռվել է Աննա Թությունջյանից հոգուտ Համատիրության բռնագան-
ձել 40.388,65 ՀՀ դրամ՝ որպես պարտքի գումար, և 1.500 ՀՀ դրամ՝ որպես նախապես
վճարված պետական տուրքի գումար, իսկ հայցը մնացած մասով մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
08.04.2013 թվականի որոշմամբ Աննա Թությունջյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աննա Թությունջյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Համադիրության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածը, 208-րդ հոդվածի 3-րդ կետը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 18.07.2012 թվականի թիվ ՍԴՈ-1037 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր այնքանով, որքանով չի նախատեսում բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ, մասնավորապես, երբ չեն պահպանվել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին կետով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատավարական երաշխիքները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ համատիրության անդամ դառնում են միայն շինության սեփականատիրոջ կողմից դիմումի տրման դեպքում, իսկ տվյալ դեպքում Աննա Թությունջյանը համատիրության անդամ դառնալու համար դիմում չի ներկայացրել «Կենտրոն» համատիրություն, հետևաբար չի կարող համարվել համատիրության անդամ, մինչդեռ դատարանը, անտեսելով նշված հանգամանքը, խախտել է «Համատիրության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջները՝ խաթարելով արդարադատության բուն էությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 08.04.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայելը պայմանավորված է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական գործառույթով: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառման առումով առկա է օրենքի միատեսակ մեկնաբանման անհրաժեշտություն, ուստի Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վկայակոչված իրավադրույթի մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքային պահանջով քաղաքացիական գործերով վերաքննությունը թույլատրելի է միայն, եթե տվյալ գործով վեճի առարկայի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը:

Վերոնշյալ իրավանորմով օրենսդիրը սահմանել է վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրացման սահմանափակում՝ որպես չափորոշիչ հիմք ընդունելով «վեճի առարկայի արժեքը»: Օրենսդրական նշված ձևակերպումը Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ իրավակիրառ պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս, ինչով էլ պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետի միատեսակ մեկնաբանման անհրաժեշտությունը:

«Վեճի առարկայի արժեք» եզրույթը մեկնաբանելիս Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ Սահմանադրական դատարանի 18.07.2012 թվականի թիվ ՍԴՈ-1037 որոշմանը, որի շրջանակներում բացահայտվել է նաև նշված հասկացության իրավական բովանդակությունը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանը, քննելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությանը հարցը, որոշման 6-րդ կետում իրավաչափ է համարել հայցագրի չափով պայմանավորված՝ քաղաքացիական գործերով վերաքննության իրավունքի սահմանափակումը: Նշված խնդրի վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետի համակարգային մեկնաբանությունը նույն օրենսգրքի այլ հոդվածների, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 2-րդ կետի հետ թույլ է տալիս Վճռաբեկ դատարանին արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված վերաքննության իրավունքի իրացման սահմանափակումը վերաբերում է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը չզերազանցող հայցագրին ունեցող քաղաքացիական գործերին, այլ կերպ ասած՝ «վեճի առարկայի արժեք» հասկացությունը ենթադրում է քաղաքացիական գործով հայցագրի չափը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերադարձնելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ Աննա Թությունջյանը դատական ակտը բողոքարկել է մասնակիորեն՝ 40.388,65 ՀՀ դրամ բավարարված հայցապահանջի մասով, հետևաբար վեճի առարկայի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը և բողոքաբերը որպես վերաքննիչ բողոքի հիմք չի վկայակոչել իր արդար դատաքննության իրավունքի խախտումը:

Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի վերոնշյալ պատճառաբանությունը, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետի սահմանափակումը վերաբերում է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը չզերազանցող հայցագրին ունեցող քաղաքացիական գործերով վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրացմանը, մինչդեռ տվյալ գործով հայցագիրը կազմում է 114.345 ՀՀ դրամ, այլ ոչ թե 40.388,65 ՀՀ դրամ, որը դատական ակտի բողոքարկված մասով բավարարված հայցագրի գումարի չափն է: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետի սահմանափակումը սույն գործով կիրառելի չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, նշված հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելով, սահմանափակել է Աննա Թությունջյանի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքը:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ «Համատիրության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջների խախտմամբ խաթարվել է արդարադատության բուն էությունը: ՀՀ Սահմանադրական դատարանի 18.07.2012 թվականի թիվ ՍԴՈ-1037 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների հակասող և անվավեր այնքանով, որքանով չի նախատեսում բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ, մասնավորապես, երբ չեն պահպանվել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին կետով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատավարական երաշխիքները:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վճռաբեկ դատարանը, արդար դատաքննության իրավունքը դիտարկելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո (*յրե' ս, օրինակ՝ Հունական նախադեպային «Սյրեն» գործարանները և Սյրապիս Անդրեադիսն ընդդեմ Հունաստանի գործով ՄԻԵԴ-ի 09.12.1994թ. վճիռը, կետեր 49-50, 56*), հարկ է համարում նշել, որ արդար դատաքննության իրավունքի ոչ բոլոր տարրերի խախտումը կարող է հանգեցնել վճռի բեկանման, հետևաբար և վերաքննիչ բողոք բերելու հիմք հանդիսանալ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված վերաքննության իրավունքի իրացման սահմանափակումը չի գործում բոլոր այն դեպքերում, երբ խախտվել են արդար դատաքննության իրավունքի բովանդակությունը կազմող այնպիսի տարրեր, ինչպիսիք են օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից գործի քննության իրավունքը, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից գործի քննության իրավունքը, կողմերի հավասարության պայմաններում, այդ թվում՝ գործի մրցակցային քննության իրավունքը, պատճառաբանված դատական ակտ ստանալու իրավունքը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդար դատաքննության իրավունքի վերոնշյալ տարրերի խախտումը հանգեցնում է քաղաքացիական գործով կայացված դատական ակտի անօրինականության:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը նշված հիմքով անհիմն է, քանի որ բողոք բերող անձը, վկայակոչելով նյութական օրենսդրության մի շարք նորմեր, այդպես էլ չի հիմնավորել արդար դատաքննության իրավունքի որևէ բովանդակային տարրի խախտման փաստ, մինչդեռ արդար դատաքննության իրավունքը, հանդիսանալով բացառապես պրոցեսուալ բնույթի իրավունք, ենթադրում է դատավարական նորմի խախտում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.04.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքաբարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/0977/02/12**
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/0977/02/12**
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 10-ին,
քննարկելով Սոֆյա Պողոսյանի ներկայացուցիչ Վահե Մովսիսյանի վճռաբեկ բողո-
քը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.01.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ
հայցի Էմմա Կիրակոսյանի ընդդեմ Օսիկ Գրիգորյանի, պատասխանողի կողմում ինքնու-
րույն պահանջ չներկայացնող երրորդ անձ Սոֆյա Պողոսյանի՝ սեփականության իրավուն-
քի խախտումը վերացնելու՝ Երևանի Հ.Սահյան (Կովկասյան) փողոցի թիվ 78 հասցեի ան-
շարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Էմմա Կիրակոսյանը պահանջել է Երևանի Հ.Սահյան (Կով-
կասյան) փողոցի թիվ 78 հասցեի անշարժ գույքը՝ երկհարկանի առանձնատունը և 300 քմ
ընդհանուր սեփականություն հանդիսացող հողատարածքը, հրապարակային սակարկու-
թյուններով վաճառել՝ ստացված գումարը հետագայում բաշխելով սեփականատերերի
միջև՝ իրենց բաժիններին համաչափ, հողամասի մասով Էմմա Կիրակոսյանին հատկաց-
նել 1/2 բաժնի արժեքը, իսկ շինությունների մասով՝ 79,28 քմ մակերեսի արժեքը:

Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավա-
սության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.11.2012 թվականի որոշմամբ քաղաքա-
ցիական գործի վարույթը կասեցվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
30.01.2013 թվականի որոշմամբ Էմմա Կիրակոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է,
Դատարանի 14.11.2012 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին»
որոշումը վերացվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սոֆյա Պողոսյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Էմմա Կիրակոսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 78-րդ, 105-րդ և 218-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը Դատարանի 14.11.2012 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը քննության է առել «30.01.2013 թվականին՝ ժամը 12:00-ին», սակայն Սոֆյա Պողոսյանին այդ մասին ծանուցել է նույն օրը՝ 30.01.2013 թվականին: Վերջինս համապատասխան ծանուցումն ստացել է նույն օրվա երկրորդ կեսին և հնարավորություն չի ունեցել մասնակցելու Վերաքննիչ դատարանում գործի քննությանը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Սոֆյա Պողոսյանը չի կարողանում գրանցել իր սեփականության իրավունքն օբյեկտիվ պատճառներով, քանի որ դատարանները գտնում են, որ տվյալ գործով Սոֆյա Պողոսյանն իրավունք ձեռք չի բերել հողամասի նկատմամբ, ուստի վերջինս ստիպված է եղել այդ պահանջով թիվ ԵԱԲԴ/0566/02/12 քաղաքացիական գործի շրջանակներում դիմելու դատարան:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ տվյալ գործով ապացուցման առարկայի փաստերից է վիճելի հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի սուբյեկտների շրջանակի որոշումը, որի կապակցությամբ Սոֆյա Պողոսյանը թիվ ԵԱԲԴ/0566/02/12 քաղաքացիական գործով դիմել է դատարան, հետևաբար քանի դեռ վերոնշյալ քաղաքացիական գործով քննությունը չի ավարտվել, Դատարանը սույն գործով չի կարող որևէ որոշում կայացնել սեփականատերերի իրավունքների վերաբերյալ, ուստի Դատարանը ճիշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 30.01.2013 թվականի որոշումը և «որոշում կայացնել սույն գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ»:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Բողոք բերողի պնդումն այն մասին, որ Վերաքննիչ դատարանը գործը քննել է երրորդ անձի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի ծանուցվել նիստի ժամանակի և վայրի մասին, անհիմն է:

Վերաքննիչ դատարանն իրականացրել է գործում առկա ապացույցների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն և արդյունքում կայացրել է արդարացի որոշում:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին կետի հա-

մաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի կիրառման հարցին: Մասնավորապես, նշել է, որ տվյալ իրավական նորմը ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում վերաքննիչ դատարանի նիստին կարող են կանչվել բողոք բերած անձը, ինչպես նաև գործին մասնակցող անձինք, որոնք պատշաճ ձևով ծանուցվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Շրանց չներկայանալն արգելք է գործի քննության համար:

Նշված դրույթից հետևում է, որ վերաքննիչ վարույթում նիստին ներկա գտնվելու իրավունք թեև վերապահված է բացառապես բողոք բերած անձին, այդուհանդերձ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել ինքնուրույն այն առումով, որ գործին մասնակցող մյուս անձինք ծանուցվում են վերաքննիչ դատարանի նիստի մասին միայն, եթե առկա է բացատրություն տալու անհրաժեշտություն: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածում ամրագրված վերաքննիչ դատարանի նիստին ներկա գտնվելու իրավունքը հավասարապես վերաբերում է գործին մասնակցող բոլոր անձանց, քանի որ օրենսդիրը նախատեսում է դատական ակտի անվերապահ բեկանման հիմք բոլոր այն դեպքերի համար, երբ գործին մասնակցող անձանցից մեկը չի եղել պատշաճ ծանուցված: Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արատահայատած այն դիրքորոշումը, որ այն դեպքերում, երբ դատաքննությունը ներառում է հակադիր մասնավոր շահեր, կողմերի հավասարության պահանջը, որն արդար դատաքննություն հասկացության հատկանիշներից մեկն է, ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմին ողջամիտ հնարավորություն պետք է տրվի ներկայացնելու իր փաստարկները, ներառյալ ապացույցներ այնպիսի պայմաններում, որոնք նրան չեն դնում էականորեն ավելի նվազ բարենպաստ պայմաններում՝ համեմատած հակառակ կողմի հետ: Ավելին, իշխանությունների կողմից դատաքննության կողմերից մեկին չծանուցելը, այնպես որ նրան հնարավորություն ընձեռվի իրականացնելու իր ներկա գտնվելու իրավունքը, կարող է որոշ դեպքերում հարցեր առաջացնել կապված 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ (*յրեն ս, նաև Նեյդիդա Նիկողոսյանը և Գվիդոն Մեյրոնյանն ընդդեմ Հայաստանի թիվ 11724/04 և 13350/04 գանգարներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 06.12.2007 թվականի վճիռը, պարբ. 37*):

Վճռաբեկ դատարանը գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի իրա-

վահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով, բեկանել է դատական ակտը (տե՛ս, Վարդուշ և Նելլի Խաչատրյաններ ընդդեմ Նաիրա Պեղրոսյանի և մյուսների թիվ ԵԱԴԴ/1102/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2010 թվականի որոշումը):

Սույն գործով Վերաքննիչ դատարանի՝ 29.01.2013 թվականին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցագիրը Սոֆյա Պողոսյանը ստացել է 30.01.2013 թվականին (հատոր 3, գ.թ. 32), 29.01.2013 թվականի դատական նիստի արձանագրության մեջ Վերաքննիչ դատարանը նշել է, որ պատասխանողի և երրորդ անձի կողմից դատական ծանուցումներն ստանալու վերաբերյալ հավաստի ապացույցներ դատարանը չի ստացել (հատոր 3, գ.թ. 34), և այդ պայմաններում որոշել է վերաքննիչ բողոքը քննել Սոֆյա Պողոսյանի բացակայությամբ: Վերաքննիչ դատարանի 21.01.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» որոշման (հատոր 3, գ.թ. 25) բնօրինակի (որի «Որոշեց» մասի 2-րդ կետից երևում է, որ տվյալ գործով քննությունը նշանակվել է 29.01.2013 թվականին՝ ժամը 12:00-ին), ինչպես նաև համապատասխան փոստային ծրարի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն Սոֆյա Պողոսյանին ուղարկվել է 29.01.2013 թվականին և վերջինիս կողմից ստացվել է 30.01.2013 թվականին, այսինքն՝ Վերաքննիչ դատարանի կողմից որոշման հրապարակման օրը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, Սոֆյա Պողոսյանին դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ չծանուցելով, վերջինիս գրկել է բողոքի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու հնարավորությունից, ինչի հետևանքով խախտվել է նրա՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Վերաքննիչ դատարանի կողմից բողոքի քննությունը Սոֆյա Պողոսյանի դատավարական իրավունքի խախտմամբ իրականացնելու պայմաններում Վճռաբեկ դատարանը չի անդադառնում վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.01.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0808/02/10**
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0808/02/10
Նախագահող դատավոր՝ Ի. Վարդանյան
Դատավորներ՝ Ա. Մկրտչյան
Ն. Բարսեղյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի նոյեմբերի 06-ին,
քննարկելով ըստ հայցի Սամվել, Սահակ և Սուլթան Մարկոսյանների ընդդեմ Լուսիկ
Գևորգյանի, Վիլիկ Աբազյանի, Եկատերինա, Մարգարիտա և Գևորգ Ալեքսանյանների,
Սեդրա Խաչատուրովայի, Սեդրա և Գուրգեն Սիմոնյանների, երրորդ անձ ՀՀ Կառավարու-
թյանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Երևան» տարածքային
ստորաբաժանման՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանա-
չելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դա-
տարանի 20.06.2013 թվականի «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշման դեմ Սամ-
վել, Սահակ և Սուլթան Մարկոսյանների բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սամվել, Սահակ և Սուլթան Մարկոսյանները պահանջել են
ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իրենց սեփականության իրավունքը Երևանի
Դեմիրճյան փողոցի թիվ 17/4 հասցեում գտնվող 154,51քմ մակերեսով հողամասի և դրա
վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ, որից 28,8քմ մակերեսով հողամասը հա-
մադրված է Երևանի Դեմիրճյան փակուղու թիվ 8 հասցեի հողամասի հետ, իսկ 16,4քմ մա-
կերեսով հողամասը՝ Երևանի Դեմիրճյան փակուղու թիվ 10 հասցեի հողամասի հետ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-
թյան դատարանի (դատավոր՝ Ա. Սուրբյան) (այսուհետ՝ Դատարան) 19.02.2013 թվակա-

նի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել Սամվել, Սահակ և Սուլթան Մարկոսյանների սեփականության իրավունքը Երևանի Դեմիրճյան փողոցի թիվ 17/4 հասցեում գտնվող 45,2քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ, որից 28,8քմ մակերեսով հողամասը համադրված է Երևանի Դեմիրճյան փակուղու թիվ 8 հասցեի հողամասի հետ, իսկ 16,4քմ մակերեսով հողամասը՝ Երևանի Դեմիրճյան փակուղու թիվ 10 հասցեի հողամասի հետ: Մնացած մասով գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.04.2013 թվականի որոշմամբ Դատարանի 19.02.2013 թվականի վճռի դեմ Լուսիկ Գևորգյանի բերած վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.06.2013 թվականի որոշմամբ գործի վարույթը կասեցվել է՝ մինչև Գևորգ Ալեքսանյանի իրավահաջորդության հարցի լուծումը:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Սամվել, Սահակ և Սուլթան Մարկոսյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ կետը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պարզապես անհիմն են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով Դատարանի կողմից վճիռ է կայացվել 19.02.2013 թվականին և մինչև օրենքով սահմանված ժամկետը՝ 20.03.2013 թվականը, Եկատերինա, Մարգարիտա և Գևորգ Ալեքսանյանների կամ նրանց ներկայացուցչի կողմից վերաքննիչ բողոք չի բերվել: Գևորգ Ալեքսանյանը Դատարանի վճռի բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 03.04.2013 թվականին, նոր միայն մահացել է, հետևաբար Եկատերինա, Մարգարիտա և Գևորգ Ալեքսանյանները վերաքննիչ բողոք բերելու համար ոչնչով կաշկանդված չեն եղել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Երևանի Դեմիրճյան 1-ին փակուղու թիվ 10 տան սեփականատեր առ այսօր հանդիսանում է Մարգիս Ալեքսանյանը, և չնայած այն հանգամանքին, որ կան օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր, այնուամենայնիվ Եկատերինա, Մարգարիտա և Գևորգ Ալեքսանյաններից ոչ մեկի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցում չի կատարվել, և անհասկանալի է, թե ինչ իրավահաջորդության հարց պետք է լուծեն Լուսիկ Գևորգյանի ներկայացուցիչները, երբ Գևորգ Ալեքսանյանը որևէ գույքային իրավունք չուներ Երևանի Դեմիրճյան 1-ին փակուղու թիվ 10 տան նկատմամբ: Այսինքն՝ վիճելի իրավահարաբերության բնույթը բացառում է իրավահաջորդությունը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գործի վարույթը կասեցնելու մասին միջնորդությունը չի բերվել Գևորգ Ալեքսանյանի իրավահաջորդների կողմից, ինչը կարող էր օրինական դիտվել: Նշված միջնորդությունը բերվել է Լուսիկ Գևորգյանի ներկայացուցիչների կողմից, ովքեր չեն կարող շահագրգռված անձ լինել Գևորգ Ալեքսանյանի իրավահաջորդության գործով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են վերացնել Վերաքննիչ

դատարանի 20.06.2013 թվականի «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին, թե արդյոք Վերաքննիչ դատարանն իրավասու է վերաքննիչ վարույթի ընթացքում գործին մասնակցող քաղաքացու մահվան հիմքով կասեցնել գործի վարույթն այն դեպքում, երբ վերջինս մինչև մահանալն օրենքով սահմանված ժամկետում իր մասով վերաքննիչ բողոք չի բերել:

Նշված իրավական հարցը պարզելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ գործի վարույթի կասեցման իրավական կարգավորումներին:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

Նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում այլ անձանց իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության համար իրավունք ունեն դատարան դիմել այդպիսի պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատավարությունից կողմերից մեկի դուրս գալու դեպքում (քաղաքացու մահ, իրավաբանական անձի վերակազմակերպում, պահանջի զիջում, պարտքի փոխանցում) դատարանը կատարում է այդ կողմի փոխարինում նրա իրավահաջորդով՝ այդ մասին նշելով որոշման մեջ: Իրավահաջորդություն հնարավոր է դատավարության ցանկացած փուլում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե՝

1) անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

2) պատասխանողը գտնվում է ռազմական դրության մեջ գտնվող զինված ուժերի կազմում, կամ ռազմական դրության մեջ գտնվող զինված ուժերի կազմում գտնվող հայցվորը դիմել է համապատասխան միջնորդությամբ:

3) գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն.

4) գործին մասնակցող քաղաքացին ճանաչվել է անգործունակ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանն իրավունք ունի կասեցնել գործի վարույթը, եթե՝

1) նշանակել է փորձաքննություն:

2) պատասխանողը գտնվում է հետախուզման մեջ:

3) գործին մասնակցող իրավաբանական անձը վերակազմակերպվում է:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը կարող է գործի վարույթը կասեցնել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Նշված նորմերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ գործի վարույթի կասեցումը գործի քննության ընթացքում այնպիսի հանգամանքի ի հայտ գալն է, որն ըստ էության արգելակում է գործի հետագա ընթացքը: Միաժամանակ, օրենքով գործի վարույթի կասեցման համար նախատեսված են երկու խումբ հիմքեր: Դրանցից առա-

ջին խումբը վերաբերում է սպառիչ թվարկված այն հիմքերին, որոնց առկայության դեպքում գործի քննության շարունակումը դառնում է անհնարին, և դատարանը պարտավոր է դրանցից որևէ մեկի ի հայտ գալուց հետո կասեցնել գործի վարույթը: Այդպիսի հիմքերից է նաև **գործին մասնակցող քաղաքացու մահը**, որի դեպքում գործի կողմերից մեկը դուրս է մնում հետագա դատավարությունից, ինչը բացառում է դրա շարունակումը: Իսկ երկրորդ խումբը վերաբերում է այն հիմքերին, որոնց առկայությունը գործի քննության հետագա շարունակումը կարող է դարձնել անհնարին կամ դժվարացնել, և դատարանը, ելնելով գործի փաստական հանգամանքներից, յուրաքանչյուր դեպքում պետք է որոշի գործի հետագա քննության շարունակման նպատակահարմարությունը: Այդ իսկ պատճառով երկրորդ խումբ հիմքերն օրենքով սպառիչ թվարկված չեն, այլ դատարանին իրավունք է տրված օրենքով նախատեսված այլ դեպքերում ևս կասեցնել գործի վարույթը: Այսինքն՝ գործի վարույթի կասեցումը չի կարող կրել ձևական բնույթ, իսկ դրա միակ նպատակը գործի շարունակմանը խոչընդոտող հանգամանքների վերացումն է: Մասնավորապես՝ գործին մասնակցող քաղաքացու մահվան դեպքում նրան իրավահաջորդով փոխարինելը հետապնդում է դատավարությունում այդ կողմի ներկայությունն ապահովելու և դրա միջոցով նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իրավունքների, բազառությունների և օրինական շահերի պաշտպանության ապահովման նպատակ, որի բացակայության դեպքում գործի վարույթը վկայակոչված հիմքով կասեցվել չի կարող, քանի որ իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացվել միայն շահագրգիռ անձի կողմից որոշակի դատավարական գործողություններ կատարելու դեպքում, այդ թվում նաև՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործի վարույթը կասեցնելու հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը կարող է կասեցնել գործի վարույթը: Օրենսդիրը, սահմանելով վերաքննիչ դատարանի այս լիազորությունը, միաժամանակ չի սահմանում գործի վարույթը կասեցնելու ինքնուրույն հիմքեր, ինչը նշանակում է, որ վերաքննիչ դատարանի կողմից գործի վարույթի կասեցումը տեղի է ունենում նույն օրենսգրքի՝ «Վարույթն ընդհանուր իրավասության դատարանում» վերտառությամբ առաջին ենթաբաժնի 105-րդ և 106-րդ հոդվածներով սահմանված հիմքերով: Վճռաբեկ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նշված հոդվածների և 221-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված դրույթի համադրված վերլուծության արդյունքում գտնում է, որ չնայած կասեցման հիմքերի ընդհանրությանը, վերաքննիչ դատարանում գործի վարույթի կասեցումն օժտված է որոշակի առանձնահատկությամբ՝ պայմանավորված վերաքննության բովանդակությամբ և ծավալով: Նշված առանձնահատկությունը հանգում է նրան, որ եթե առաջին ատյանի դատարանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածում ամրագրված՝ գործի վարույթը կասեցնելու հիմքերը պարտադիր հիմքեր են, որոնց առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, ապա նույն օրենսգրքի 221-րդ հոդվածի 3-րդ կետում «կարող է կասեցնել գործի վարույթը» ձևակերպումը ենթադրում է, որ գործի վարույթը կասեցնելու հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանն օժտված է հայեցողական լիազորությամբ և տվյալ գործի կոնկրետ հանգամանքների համատեքստում վերաքննիչ դատարանն է որոշում, թե արդյո՞ք վերաքննիչ վարույթում ի հայտ եկած տվյալ հանգամանքը խոչընդոտում է վերաքննիչ բողոքի քննության հետագա ընթացքին: Նման իրավակարգավորումը թույլ է տալիս վերաքննիչ դատարանին ստուգել և գնահատել կոնկրետ գործի հանգամանքների համակցությունը՝ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում կասեցման անհրաժեշտության և նպատակահարմարության հարցը լուծելիս:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վարույթը կասեցնելու հարցը լուծելիս պետք է առաջնորդվել մի կողմից գործի վարույթի կասեցման հնարավորության կիրառմամբ հետապնդվող վերոնշյալ իրավաչափ նպատակի և մյուս կողմից դատավարության մյուս մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջև ողջամիտ համաչափություն ապահովելու անհրաժեշտությամբ: Մասնավորապես՝ գործի վարույթի կասեցման հանգամանքը կարող է խոչընդոտել գործին մասնակցող շահագրգիռ անձանց իրավունքների իրացմանը, մասնավորապես՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործին մասնակցող շահագրգիռ անձի կողմից առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը՝ հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում, վերաքննիչ բողոք չբերվելու պայմաններում վերջինս ըստ էության համաձայնվում է իր մասով իր իրավունքների կամ պարտականությունների վերաբերյալ կայացված նշված ակտի հետ, ուստի նրա փոխարեն վերաքննիչ դատարանն իրավասու չէ իրականացնել դատավարական գործողություններ, այդ թվում՝ վերաքննիչ վարույթում այդ անձի մահով պայմանավորված նրա մասով կասեցնել գործի վարույթը, եթե, իհարկե, դա չի խոչընդոտում գործին մասնակցող մյուս անձանց մասով գործի քննության հետագա շարունակմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սամվել, Սահակ և Սուլթան Մարկոսյանները, դիմելով դատարան, պահանջել են ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իրենց սեփականության իրավունքը Երևանի Դեմիրճյան փողոցի թիվ 17/4 հասցեում գտնվող 154,51քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ, որից 28,8քմ մակերեսով հողամասը համադրված է Երևանի Դեմիրճյան փակուղու թիվ 8 հասցեի հողամասի հետ (նշված հասցեի մասով հայցապահանջը վերաբերում է Լուսիկ Գևորգյանի իրավունքներին), իսկ 16,4քմ մակերեսով հողամասը՝ Երևանի Դեմիրճյան փակուղու թիվ 10 հասցեի հողամասի հետ (նշված հասցեի մասով էլ հայցապահանջը վերաբերում է նաև Գևորգ Ալեքսանյանի իրավունքներին): Դատարանի վիճարկվող վճիռը հրապարակվել է 19.02.2013 թվականին, սակայն այդ ժամկետից սկսած մեկամսյա ժամկետում Երևանի Դեմիրճյան փակուղու թիվ 10 հասցեի նկատմամբ իրավունքներ ունեցող գործին մասնակցող անձինք, այդ թվում նաև՝ Գևորգ Ալեքսանյանը, վերաքննիչ բողոք չեն բերել, իսկ վերջինս մահացել է 03.04.2013 թվականին (հատոր 8-րդ, գ.թ. 68):

Վերաքննիչ դատարանը, կասեցնելով գործի վարույթը, պատճառաբանել է, որ Գևորգ Ալեքսանյանի մահը հիմք է հանդիսանում գործի վարույթի կասեցման համար, իսկ սույն գործի քննությունն անհնարին է մինչև վերջինիս իրավահաջորդության հարցի լուծումը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վերոգրյալ

պատճառաբանությունն անհիմն է և չունի որևէ իրավական հիմք, քանի որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում գործին մասնակցող անձը՝ Գևորգ Ալեքսանյանը, մահացել է Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո, իսկ վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետում վերջինս, ինչպես նաև Երևանի Դեմիքրճյան փակուղու թիվ 10 հասցեի նկատմամբ իրավունքներ ունեցող գործին մասնակցող այլ անձինք վերաքննիչ բողոք չեն բերել, այսինքն՝ իրենց մասով նրանք համաձայնել են Դատարանի վճռի հետ և այդ մասով չեն ցուցաբերել վերաքննիչ բողոք բերելու միջոցով իրենց իրավունքների պաշտպանության որևէ շահագրգռվածություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բացակայել է գործի վարույթի կասեցման ինստիտուտի կիրառմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի ապահովման և, հետևաբար, Գևորգ Ալեքսանյանի մահվան հիմքով գործի վարույթը կասեցնելու անհրաժեշտությունը:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը կասեցնելու որևէ իրավական հիմք առկա չէ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.06.2013 թվականի «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԳ/2768/02/12**
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԳ/2768/02/12**

Նախագահող դատավոր՝ **Ի. Վարդանյան**

Դատավորներ՝ **Ա. Մկրտչյան**

Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորները

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի նոյեմբերի 27-ին

քննարկելով Մանուկ Ղազանչյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.09.2013 թվականի «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Մանուկ Ղազանչյանի ընդդեմ Ալինա Չոբանյանի՝ երեխայի համար դատարանի վճռով սահմանված ալիմենտի չափը փոփոխելու ու այն կայուն դրամական գումարով փոխարինելով՝ ամսական 200.000 ՀՀ դրամ սահմանելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մանուկ Ղազանչյանը պահանջել է Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից թիվ ԵԱՆԴ/ 2317/02/08 վճռով նշանակված ալիմենտի չափը փոխարինել կայուն դրամական գումարով և այն սահմանել ամսական 200.000 ՀՀ դրամ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 26.04.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.09.2013 թվականի որոշմամբ Ալինա Չոբանյանի միջնորդությունը բավարարվել է՝ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մանուկ Ղազանչյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ալինա Չոբանյանի ներկայացուցիչ Լևոն Սահակյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետը, 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետը:

Բողոք բերած անձը՝ նշված պնդումը պարճատարանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև մեկ այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, մինչդեռ տվյալ դեպքում նման անհնարիություն առկա չէ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործով հայցի առարկան դատարանի վճռով սահմանված ալիմենտի չափը կայուն դրամական գումարով փոխարինելու պահանջն է, մինչդեռ Մանուկ Ղազանչյանի նկատմամբ քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 173-րդ հոդվածի հիմքով՝ ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու հատկանիշներով: Հետևաբար ինչ հանգամանքներ էլ որ պարզվեն քրեական գործով, դրանք չեն կարող էական նշանակություն ունենալ սույն քաղաքացիական գործի լուծման համար:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի պատճառաբանել իր որոշումը: Ավելին, 18.07.2013 թվականի դատական նիստում քննելով պատասխանողի միջնորդությունը՝ գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ, Վերաքննիչ դատարանը մերժել է այն, սակայն 05.09.2013 թվականին դատական նիստում իր նախաձեռնությամբ կրկին անդրադարձել է նշված միջնորդությանը և գործի վարույթը կասեցրել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 05.09.2013 թվականի «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Տվյալ դեպքում առկա է սույն քաղաքացիական գործի քննության անհնարիությունը, և Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանն այն գտնում է հիմնավոր հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է գործի վարույթը կասեցնելու հարցին և վկայակոչված իրավադրույթների համակարգային վերլուծության հիման վրա արձանագրել, որ դատարանի պարտականությունն է կասեցնել

գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պարտավոր է նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն, ինչպես նաև պարտավոր է նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը (յո՛ւնս, թի՛վ ԵԱԴԴ/0452/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 13.01.2010 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նշված դիրքորոշումը, հարկ է համարում ընդգծել, որ դատական ակտը հիմնավորելու պահանջը հավասարապես վերաբերում է ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ՝ միջանկյալ դատական ակտերին: Յուրաքանչյուր դեպքում որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տրվի կիրառման ենթակա նորմը պարունակող նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վերաքննիչ դատարանը «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշմամբ արձանագրել է, որ թիվ 17107711 քրեական գործն անմիջականորեն կապված է սույն քաղաքացիական գործի հետ, և անհնարին է թիվ ԵԿԴ /2768/02/12 քաղաքացիական գործի քննությունը մինչև թիվ 17107711 քրեական գործով վերջնական որոշման կայացումը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի հիմնավորել գործի վարույթը կասեցնելու հիմքի առկայությունը, մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը չի նշել թիվ 17107711 քրեական գործով քննվող այն իրավահարաբերությունը կամ փաստը, որը թիվ ԵԿԴ/2768/02/12 քաղաքացիական գործի քննության և լուծման համար իրավաբանական նշանակություն ունի և չի կարող հաստատվել սույն գործի շրջանակներում, ինչով էլ պայմանավորված է գործի քննության անհնարինությունը:

Ավելին, Վերաքննիչ դատարանը 18.07.2013 թվականի դատական նիստում, քննելով պատասխանող Ալինա Չոբանյանի ներկայացուցչի միջնորդությունը՝ գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով կասեցնելու վերաբերյալ, այն մերժել է՝ պատճառաբանելով, որ թիվ 17107711 քրեական գործի ընթացքը որևէ կերպ չի խոչընդոտում սույն գործի քննությանը (հատոր 2-րդ, գ.թ. 50, 65), սակայն 05.09.2013 թվականի դատական նիստում իր նախաձեռնությամբ, կրկին անդրադառնալով նույն միջնորդությանը, գործի վարույթը կասեցրել է (հատոր 2-րդ, գ.թ. 63, 65):

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վերաքննիչ դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ նույն միջնորդությանը կրկին անդրադառնալը և այն բավարարելը, Վճռաբեկ դատարանը դիտում է որպես արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած որոշման փոփոխում, ինչն անթույլատրելի է:

Վերոգրյալ պատճառաբանությամբ հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշումն անհիմն է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-ին հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.09.2013 թվականի «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/9439/05/12
Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան

Վարչական գործ թիվ ՎԴ/9439/05/12
2013թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 30-ին,
քննարկելով ըստ հայցի Աշոտ Գազիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ
Գազիկ Հովհաննիսյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական
ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն),
երրորդ անձ Աշոտ Օնիկի Հովհաննիսյանի՝ Ծառայության կողմից 22.08.2012 թվականին
ընդունված թիվ 01/07-2873/10 կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումն ամ-
բողջությամբ վերացնելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի 18.05.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշման
դեմ Աշոտ Գազիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գազիկ Հովհաննիսյանի
վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Աշոտ Գազիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ
Գազիկ Հովհաննիսյանը պահանջել է ամբողջությամբ վերացնել Ծառայության կողմից
22.08.2012 թվականին ընդունված թիվ 01/07-2873/10 կատարողական վարույթն ավար-
տելու մասին որոշումը և պարտավորեցնել Ծառայությանը Երևանի Ավան և Նոր Նորք
համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից 15.10.2007 թվականին տրված թիվ
2-1537+2-1538 կատարողական թերթի 8-րդ կետով սահմանված պարտավորությունը կա-
տարելու համար կատարել հարկադիր կատարողական գործողություններ:

ՀՀ վարչական դատարանի 08.01.2013 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդու-
նումը՝ Ծառայությանը Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դա-
տարանի կողմից 15.10.2007 թվականին տրված թիվ 2-1537+2-1538 կատարողական թերթի

8-րդ կետով սահմանված պարտավորությունը կատարելու համար հարկադիր կատարողական գործողություններ կատարել պարտավորեցնելու պահանջի մասով, մերժվել է, իսկ Ծառայության կողմից 22.08.2012 թվականին ընդունված թիվ 01/07-2873/10 կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումն ամբողջությամբ վերացնելու պահանջի մասով հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան) 31.01.2013 թվականի որոշմամբ Աշոտ Գագիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյանի միջնորդությունը՝ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու մասին, բավարարվել է, և հայցադիմումը՝ Ծառայության կողմից 22.08.2012 թվականին ընդունված թիվ 01/07-2873/10 կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումն ամբողջությամբ վերացնելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.05.2013 թվականի որոշմամբ Աշոտ Օսիկի Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ որոշվել է վերացնել Դատարանի 31.01.2013 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աշոտ Գագիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Աշոտ Օսիկի Հովհաննիսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 6-րդ հոդվածը, 18-րդ հոդվածի 1-ին մասը, 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը սույն գործը լրիվ ու բազմակողմանի չի ուսումնասիրել և միայն Աշոտ Օսիկի Հովհաննիսյանի ներկայացրած փաստարկների շրջանակներում կատարած միակողմանի վերլուծության արդյունքում կայացրած իր որոշմամբ թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

Վերաքննիչ դատարանն Աշոտ Գագիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյանի կողմից իր միջնորդությանը կից Դատարան ներկայացված ամբողջատոր բժշկական քարտից թվով 2 քաղվածքների և «Արթմեղ» ՓԲԸ-ի էպիկրիզի անհիմն վերլուծությամբ կասկածի տակ է դրել այդ բժշկական փաստաթղթերի հավաստիությունը և դրա հետ կապված՝ նաև բողոք բերած անձի ունեցած անկայուն առողջական վիճակը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել» Վերաքննիչ դատարանի 18.05.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Վերաքննիչ դատարանը լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ է գնահատել գործում առկա ապացույցները, ճիշտ է մեկնաբանել և կիրառել այն օրենքը, որը պետք է կիրառել:

Տվյալ դեպքում Աշոտ Գագիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյանի կողմից ներկայացված պահանջն իրենից ներկայացնում է վիճարկման

հայց, հետևաբար դրա վրա տարածվում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասով սահմանված ժամկետները, որպիսի ժամկետները բողոք բերած անձի կողմից բաց են թողնվել, իսկ վերջինիս միջնորդության պատճառաբանություններն ամբողջությամբ անհիմն են և չեն համապատասխանում իրականությանը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից, և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն իրավական խնդրին, թե ինչպիսի պայմաններում և ինչպիսի հանգամանքների առկայության դեպքում են հիմքեր առաջանում հարգելի համարելու օրենքով սահմանված դատավարական ժամկետի բացթողումը:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է:

Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*տե՛ս, Աշինգդեյնս ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կեյս 57, Ashingdane v. the United Kingdom, judgment of 28 May 1985, Series A no. 93, p. 24, para. 57*):

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակի-

ուրջան երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*Կոնս. Սյուրբրինգսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետ 51,55, Stubbings and Others v. the United Kingdom, Judgment, 22.10.1996, par. 51,55*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ սկզբունքների համատեքստում պետք է մեկնաբանվի նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասը: Վկայակոչված իրավադրույթի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Մասն միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումից հետևում է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքի գնահատողական ֆունկցիան թողնելով դատարանների հայեցողությանը: Այնուամենայնիվ, ժամկետը բաց թողնելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները:

Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ՝ երբ ֆիզիկական անձը գրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից երկարատև հիվանդության կամ գործուղման մեջ գտնվելու պատճառով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, բաց թողնված ժամկետը հարգելի համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատական պրոցեսին մասնակցելու, պահանջը և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով նշված ժամկետը չի բավականացրել համապատասխան դատավարական գործողությունները կատարելու համար:

Վերոնշյալ մեկնաբանությունների հիման վրա անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

26.12.2012 թվականին դիմելով դատարան՝ Աշոտ Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյանը պահանջել է վերացնել Ծառայության՝ թիվ 01/07-

2873/10 կատարողական վարույթն ավարտելու մասին 22.08.2012 թվականի որոշումը: Նշված որոշումը վերջինիս կողմից 06.09.2012 թվականին բողոքարկվել է վարչական կարգով: Հայցադիմումին կից ներկայացվել է միջնորդություն՝ բաց թողնված դատավարական ժամկետով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին: Ի հիմնավորումն միջնորդության՝ Աշոտ Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյանը նշել է, որ ունեցել է առողջական խնդիր, ինչով էլ պայմանավորված՝ չի կարողացել դատարան դիմել օրենքով նախատեսված ժամկետում: Մասնավորապես՝ ներկայացվել է մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտից քաղվածք, որի համաձայն՝ «Գագիկ Հովհաննիսյանը ստացել է ստացիոնար բուժում «Արթմեդ» բժշկական կենտրոնում 12.10.2012 թվականից մինչև 19.10.2012 թվականը» (հատոր 1-ին, գ.թ. 58): Ներկայացվել է նաև «Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից 25.10.2012 թվականին տրամադրված քաղվածք ամբուլատոր քարտից, ըստ որի՝ «Գագիկ Հովհաննիսյանը 12.10-20.10.2012 թվականը պատկել է «Արթմեդ» վերականգնողական հիվանդանոցում, հիվանդը գտնվում է օնկոլոգի հսկողության ներքո» (հատոր 1-ին, գ.թ. 59): 26.10.2012 թվականին, 29.10.2012 թվականին, 05.11.2012 թվականին, 07.11.2012 թվականին և 21.11.2012 թվականին Գագիկ Հովհաննիսյանը ներկայացել է մասնակցել է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավաբանության դատարանում ընթացող դատավարություններով դատական նիստերին (հատոր 2-րդ, գ.թ. 64-67, 102-106):

Դատարանը, հաշվի առնելով, որ հայցվորը վարչական ակտը դատական կարգով վիճարկելու համար սահմանված երկամսյա ժամկետը բաց է թողել անկայուն առողջական վիճակի պատճառով, որպիսի փաստը հաստատվում է միջնորդությանը կից ներկայացված ամբուլատոր բժշկական քարտերի քաղվածքներով և բժշկական կենտրոնի էպիկրիզով, գտել է, որ հայցվորի միջնորդությունը՝ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ, հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Աշոտ Օսիկի Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ այն ժամանակահատվածում (08.10.2012 թվականից մինչև 10.12.2012 թվականը), որին վերաբերում է Աշոտ Գագիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյանի՝ բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը, մասնավորապես՝ 26.10.2012 թվականին, 29.10.2012 թվականին, 05.11.2012 թվականին, 07.11.2012 թվականին և 21.11.2012 թվականին, վերջինս ներկայացել է մասնակցել է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավաբանության դատարանում ընթացող դատավարություններով դատական նիստերին: Հետևաբար, դրանից առաջ՝ 12.10.2012 թվականից մինչև 19.10.2012 թվականը, Աշոտ Գագիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյանի հիվանդանոցային բուժումն «Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոնում չի կարող հիմք հանդիսանալ հայցադիմումը ներկայացնելու դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու համար:

Վճռաբեկ դատարանը, վերոնշյալ մեկնաբանությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգմանը, այն գտնում է հիմնավոր հետևյալ պատճառաբանությամբ.

Աշոտ Գագիկի Հովհաննիսյանի օրինական ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյանը ներկայացրել է վիճարկման հայց, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ վարչական մարմնի ընդունած ակտը կամ ակտը չընդունելը կամ գործողություն կատարելը կամ չկատարելը

լը բողոքարկվել է վարչական կարգով, նույն հողվածով սահմանված ժամկետները հաշվարկվում են բողոքի քննության համար սահմանված ժամկետի ավարտից հետո: Նկատի ունենալով, որ հայցվորը վիճարկվող վարչական ակտը 06.09.2012 թվականին բողոքարկել է վարչական կարգով, իսկ բողոքի քննության համար համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի, 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ առավելագույն ժամկետը 30-օրյա ժամկետն է, որն ավարտվել է 08.10.2012 թվականին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետն ընդգրկում է 08.10.2012 թվականից մինչև 10.12.2012 թվականն ընկած ժամանակահատվածը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվորի կողմից վկայակոչված հիմքը չի կարող հանդիսանալ դատավարական ժամկետը բաց թողնելու հարգելի պատճառ, քանի որ ներկայացված բժշկական փաստաթղթերի ուսումնասիրությունից հետևում է, որ հայցվորը ստացիոնար բուժման մեջ գտնվել է ընդամենը 8 օր, որպիսի հանգամանքը չէր կարող խոչընդոտել վերջինիս՝ իրացնելու իր դատական պաշտպանության իրավունքը: Ավելին, գործով ներկայացվել են ապացույցներ, որոնց համաձայն՝ հայցվորը բժշկական հաստատությունից դուրս գրվելուց հետո այլ դատական գործերով մասնակցել է դատական նիստերի:

Նման պարագայում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը հիմնավոր է, իսկ բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.15-րդ և 118.17-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.05.2013 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/2499/05/14
Նախագահող դատավոր՝ Գ. Դարիբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/2499/05/14
2014թ.

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 10-ին,
քննարկելով ըստ հայցի Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) ընդդեմ Արմենուի Դալիբայթյանի՝ 200.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 04.08.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Քաղաքապետարանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Քաղաքապետարանը պահանջել է Արմենուի Դալիբայթյանից 200.000 ՀՀ դրամ՝ որպես վարչական տուգանքի գումար բռնագանձելու պահանջի մասին արձակել վճարման կարգադրություն:

ՀՀ վարչական դատարանը 19.12.2013 թվականին արձակել է վճարման կարգադրություն:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Արմենուի Դալիբայթյանը պահանջել է վերացնել Երևանի քաղաքապետի 11.09.2013 թվականի թիվ Վ-31/36 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի 27.05.2014 թվականի որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցում է կատարվել հայցային վարույթի, իսկ հակընդդեմ հայցը վերադարձվել է:

Արմենուի Դալիբայթյանը կրկին ներկայացրել է հակընդդեմ հայց և միաժամանակ միջնորդել է վերականգնել բաց թողնված դատավարական ժամկետը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան)

16.06.2014 թվականի որոշմամբ Արմենուիի Դալիբալյայանի բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու մասին միջնորդությունը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.08.2014 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը բավարարելու և հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 54-րդ, 72-րդ հոդվածները, չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Արմենուիի Դալիբալյայանի կողմից դատավարական ժամկետը բաց է թողնվել ոչ հարգելի պատճառներով:

Քաղաքապետարանը 11.09.2013 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-31/36 որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ուղարկել է Արմենուիի Դալիբալյայանին իր անձնագրային գրանցման հասցե հանդիսացող Երևանի Անդր-Ֆեդերացիայի փողոցի թիվ 135 հասցեով, ինչը հավաստվում է փոստային ծառայության թիվ AR131104706AM հետադարձ ծանուցագրով և դրա վրա 23.09.2013 թվականին կատարված՝ նշված որոշումը ստանալու փաստը հավաստող մակագրությամբ (ստորագրությամբ), ուստի 23.09.2013 թվականի դրությամբ Արմենուիի Դալիբալյայանն արդեն իսկ տեղյակ է եղել իր նկատմամբ վարչական տույժ կիրառելու վերաբերյալ 11.09.2013 թվականի թիվ Վ-31/36 որոշման մասին և նշված վարչական ակտի վիճարկման համար սահմանված դատավարական ժամկետի հոսքը պետք է հաշվարկել 24.09.2013 թվականից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ փոստային ծառայության թիվ AR131104706AM հետադարձ ծանուցագիրն առավել քան բավարար է եղել արձանագրելու քննարկվող որոշումն Արմենուիի Դալիբալյայանին պատշաճ կերպով առաքելու և 23.09.2013 թվականի դրությամբ Արմենուիի Դալիբալյայանի կողմից այն ստանալու կամ դրա մասին տեղեկանալու փաստը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 04.08.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի, ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 54-րդ, 72-րդ հոդվածները խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառ-

նաբանություններով:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանն ըստ էության քննում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո վճարման կարգադրություններ արձակելու պահանջով հայցադիմումներ վարչական դատարան չեն կարող ներկայացվել: Մինչև նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելը վարչական դատարանի գրասենյակ ստացված, ինչպես նաև նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց առաջ փոստով առաքված, սակայն նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո վարչական դատարանում ստացված կամ ներկայացված վճարման կարգադրություններ արձակելու վերաբերյալ հայցադիմումները քննում է վարչական դատարանը՝ Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ գլխով սահմանված կարգով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

Նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը, ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ

հողվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև՝ օրենքով սահմանված այլ եղանակներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրագելելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքում ձևավորված իրավական դիրքորոշման համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յրե՛ս, Աշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57, Ashingdane v. the United Kingdom, judgment of 28 May 1985, Series A no. 93, p. 24, para. 57*): Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հետավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*յրե՛ս, Սյարբինգսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետ 51,55, Stubbings and Others v. the United Kingdom, Judgment, 22.10.1996, par. 51,55*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը պետք է մեկնաբանվեն և կիրառվեն ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված անձանց՝ վերը նշված հիմնարար իրավունքների լույսի ներքո:

Օրենսդիրը ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 10-րդ հոդվածներում սահմանել է վարչական դատարանի իրավասության շրջանակը: Ինչպես ցանկացած դատարան, վարչական դատարանն իրավասու է գործադրել օրենքով նախատեսված իր լիազորությունները միայն համապատասխան սուբյեկտների կողմից ներկայացված հայցադիմումի դեպքում, այսինքն՝ օժտված է հատուկ տեսակի իրավասությամբ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

Օրենսդիրը, սահմանելով վարչական դատարանում գործի հարուցման հիմքը՝ համապատասխան հայցը, միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածում սահմանել է այն ժամկետները, որոնց ընթացքում հայցը կարող է ներկայացվել վարչական դատարան: Օրենսդիրը, սահմանելով վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները, միաժամանակ, հատուկ սահմանել է բաց թողնված ժամկետների վերականգնելու իրավական հնարավորությունը համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերի համար ամրագրել, որ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

Այսպիսով, օրենքով սահմանված դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Ման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքը թողնելով դատարանների գնահատմանը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ՝ երբ ֆիզիկական անձը զրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից երկարատև հիվանդության պատճառով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատավարությանը մասնակցելու և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով բաց է թողել օրենքով սահմանված դատավարական ժամկետները (*տե՛ս, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Գայանե Մերտյանի թիվ ՎԳ/0059/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2014 թվականի որոշումը*):

Վերը նշված իրավական նորմերի, ինչպես նաև ՄԻԵԳ-ի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձինք իրենց դատական պաշտպանության իրավունքից կարող են օգտվել օրենքով սահմանված ժամկետներում և որպեսզի վարչական դատարանն իրավասու լինի գործադրել օրենքով սահմանված իր լիազորությունները կոնկրետ իրավական վեճն ըստ էության լուծելու համար, անհրաժեշտ է երկու

պայմանների միաժամանակյա առկայություն, առաջին՝ համապատասխան հայցի առկայություն, երկրորդ՝ հայցի ներկայացում վարչական դատարան՝ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում: Դատավարական ժամկետները բաց թողնելու դեպքում երկրորդ պայմանն ապահովված կարող է համարվել միայն կոնկրետ վարչական գործում բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնման բավարարված միջնորդության առկայության դեպքում, իսկ մնացած դեպքերում անձը չի կարող օգտվել դատական պաշտպանության իրավունքից, իսկ վարչական դատարանն իրավասու չէ գործադրել օրենքով վարչական դատարանի համար նախատեսված լիազորությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ գրավոր վարչական ակտի ընդունումը բավարար չէ, գրավոր վարչական ակտի իրավական համակարգում ի հայտ գալու և գործելու համար անհրաժեշտ է նաև, որ օրենքով սահմանված կարգով այդ վարչական ակտը մտնի ուժի մեջ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ օրենսդիրը վարչական ակտը վիճարկելու օրենքով սահմանված ժամկետի հոսքը պայմանավորել է ոչ թե վարչական ակտի ընդունմամբ, այլ այդ ակտի օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու հետ:

Վճռաբեկ դատարանը, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու անհրաժեշտությամբ, գտնում է, որ վարչական ակտի վիճարկման պարագայում անձի՝ դատարան դիմելու համար սահմանված ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ վարչական ակտի հասցեատերը տեղեկացել է իր նկատմամբ տվյալ վարչական ակտի ընդունման մասին, այլ խոսքով, օրենքով սահմանված կարգով վարչական ակտի ուժի մեջ մտնելուց հետո:

Վերոնշյալ մեկնաբանությունների հիման վրա անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Արմենուի Դալիբալթյանը հակընդդեմ հայց է ներկայացրել Դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 11.09.2013 թվականի թիվ Վ-31/36 որոշումը: Միաժամանակ, միջնորդություն է ներկայացրել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ վիճարկվող վարչական ակտը չի ստացել: Դատարանի 16.06.2014 թվականի որոշմամբ Արմենուի Դալիբալթյանի բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու մասին միջնորդությունը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանը, 16.06.2014 թվականի որոշմամբ միջնորդությունը բավարարելով, նշել է, որ Արմենուի Դալիբալթյանի վկայակոչմամբ վերջինս չի ստացել Երևանի քաղաքապետի 11.09.2013 թվականի թիվ Վ-31/36 որոշումը և այն ստանալու մասին թիվ AR131104706AM ծանուցագրի վրա առկա ստորագրությունը նրանը չէ, հետևաբար գտել է, որ Արմենուի Դալիբալթյանը հակընդդեմ հայցը դատարան ներկայացնելու օրենքով սահմանված երկամսյա ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

Վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքը՝ վերահաստատելով Դատարանի պատճառաբանությունները:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս ատյանների վկայակոչած փաստարկներն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի նյութերից ակնհայտ է, որ Արմենուի Դալիբալթյանն իրագրված է եղել իր նկատմամբ իրականացվող վարչական վարույթի վերաբերյալ, քանի որ գործում առկա 08.08.2013 թվականի թիվ 007406, 11.09.2013 թվականի թիվ Վ-31/36 գործի վերաբերյալ արձանագրություններից պարզ է դառնում, որ վերջինս տեղյակ է եղել կատարված վարչական իրավախախտման վերաբերյալ, վարչական վարույթի ընթացքում տվել է բացատրություններ և առանց որևէ պատճառաբանության հրաժարվել է ստորագրել և ստա-

նալ վերոնշյալ արձանագրությունների օրինակները (գ.թ. 6, 7, 8, 11): Քաղաքապետարանը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով իր վրա դրված պարտականությամբ, վարչական ակտը պատվիրված նամակով ուղարկել է վարչական իրավախախտում կատարած անձին՝ նրա գրանցման հասցեով (գ.թ. 9-10) և ստացել է վարչական ակտը՝ «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-31/36 որոշումը ստանալու վերաբերյալ հետադարձ թիվ AR131104706AM ծանուցագիրը (գ.թ. 14): Այսինքն՝ վարչական մարմինը, կատարելով օրենսդրությամբ իր վրա դրված պարտականությունը, ձեռնարկել է բոլոր ողջամիտ միջոցները վարչական ակտը հասցեատիրոջը հանձնելու համար:

Վճռաբեկ դատարանը, վերոնշյալ մեկնաբանությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, որ Քաղաքապետարանը չի ապացուցել, որ 11.09.2013 թվականի թիվ Վ-31/36 որոշումն առաքվել է Արմենուհի Դալիբալյանին՝ Երևանի Անդրֆեդերացիայի փողոցի թիվ 135 հասցեով, և այն ստացվել է վերջինիս կողմից, գտնում է անհիմն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 04.08.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 16.06.2014 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը բավարարելու և հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/0478/05/12
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0478/05/12**
2014թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի հոկտեմբերի 22-ին,
քննարկելով ըստ հայցի Վահագն Ղազարյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առըն-
թեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր), երրորդ
անձինք Լուսինե և Սոնա Մխիթարյանների, Վարդան Հայրապետյանի, Դավիթ Մարտի-
րոսյանի, Աշոտ և Բավական Սարգսյանների՝ ՀՀ Կոտայքի մարզի Գառնի գյուղում «պա-
հեստ-սառնարան» կոչվող անշարժ գույքից բնեղենով առանձնացված հողամասի և շինու-
թյան նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը մատու-
լ առ ոչինչ ճանաչելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դա-
տարանի 11.03.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշման դեմ
Դավիթ Մարտիրոսյանի ներկայացուցիչ Գևորգ Գյոզալյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Վահագն Ղազարյանը պահանջել է մասնակիորեն առ ոչինչ
ճանաչել ՀՀ Կոտայքի մարզի Գառնի գյուղում «պահեստ-սառնարան» կոչվող անշարժ
գույքից բնեղենով առանձնացված հողամասի և շինության նկատմամբ կատարված սեփա-
կանության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (Դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան)
03.12.2012 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կասեցվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
11.03.2013 թվականի որոշմամբ Վահագն Ղազարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել
է և Դատարանի 03.12.2012 թվականի «Վարչական գործի վարույթը կասեցնելու մասին»
որոշումը վերացվել է:

ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 21.05.2014 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 11.03.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշման դեմ Դավիթ Մարտիրոսյանի ներկայացուցիչ վճարելի բողոքը վերադարձվել է՝ միաժամանակ սահմանվել է ժամկետ որոշմամբ նշված սխալները շտկելու և վճարելի բողոքը կրկին բերելու համար:

Սույն գործով վճարելի բողոք է ներկայացրել Դավիթ Մարտիրոսյանի ներկայացուցիչը:

Վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 14.1-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 7-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածները, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը, «Փաստաթղթերի հատուկ ստաքման մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 8-րդ հոդվածները, գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 60-րդ, 62-րդ, 117.7-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 61-րդ, 63-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարունակում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի որոշմամբ խախտվել է Դավիթ Մարտիրոսյանի արդար դատաքննության իրավունքը, քանի որ Դատարանը, քաջատեղյակ լինելով, որ Դավիթ Մարտիրոսյանի շահերը դատարանում ներկայացնում է փաստաբանը, վերջինիս պատշաճ կերպով չի ծանուցել գործի քննության տեղի և վայրի մասին՝ այդ կերպ զրկելով Դավիթ Մարտիրոսյանին իր դիրքորոշումը ներկայացնելու, հետագայում նաև դատական ակտը բողոքարկելու իրավունքից: Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշման մասին դատավարության մասնակիցն իրազեկվել է միայն 07.04.2014 թվականին, երբ Դատարանից ստացել է ծանուցագիր այն մասին, որ սույն գործով 23.04.2014 թվականին ժամը 17:00-ին Դատարանում նշանակվել է դատական նիստ: Վերոնշյալ ծանուցագիրը ստանալուց հետո «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի միջոցով տեղեկացել է բողոքարկվող դատական ակտի մասին:

Վերաքննիչ դատարանը, պատշաճ կարգով չճանուցելով դատական նիստի ժամանակի և վայրի մասին, Դավիթ Մարտիրոսյանին զրկել է վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու, ինչպես նաև իր խախտված իրավունքները պաշտպանելու իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 11.03.2013 թվականին թիվ ՎԴ/0478/05/12 վարչական գործով կայացված միջանկյալ դատական ակտը և փոփոխել այն՝ Վահագն Դազարյանի բողոքը մերժել»:

3. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի, գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդ-

վածը խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առկայությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատարանության իրավունք:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

Նույն օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատավարության մասնակիցները և նրանց ներկայացուցիչները, ինչպես նաև այլ անձինք պարտավոր են դատարանին հայտնել գործի քննության ընթացքում իրենց հասցեի փոփոխության մասին:

Նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հայցվորի անունը, ազգանունը (անվանումը), բնակության (գտնվելու) վայրը, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է բնակության վայրից), այդ թվում՝ հայցվոր քաղաքացու անձնական տվյալները, հայցվոր իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը, նրա ներկայացուցչի անունը, ազգանունը, հասցեն, եթե հայցը ներկայացվել է օրենքով դրա իրավունքն ունեցող պաշտոնատար անձի (իրավաբանական անձի) կողմից՝ նաև այդ անձի (իրավաբանական անձի) անունը, ազգանունը (անվանումը), պաշտոնը:

Նույն օրենսգրքի 117.7-րդ հոդվածի համաձայն՝ դատավարության մասնակիցը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին վերաքննիչ դատարանի որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իրավունք ունի պատասխան ուղարկելու վերաքննիչ դատարան և դատավարության այլ մասնակիցներին:

Նույն օրենսգրքի 117.10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննվում են գրավոր ընթացակարգով՝ առանց դատական նիստ հրավիրելու:

Նույն օրենսգրքի 117.17-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանի դատական ակտերը հրապարակվում և դատավարության մասնակիցներին են ուղարկվում վարչական դատարանի դատական ակտերի համար նույն օրենսգրքով սահմանված կարգով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ ՄԻԵԴ) արատահայտել է այն դիրքորոշումը, որ այն դեպքերում, երբ դատաքննությունը ներառում է հակադիր մասնավոր շահեր, կողմերի հավասարության պահանջը, որն արդար դատաքննություն հասկացության հատկանիշներից մեկն է, ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմին ողջամիտ հնարավորություն պետք է տրվի ներկայացնելու իր փաստարկները, ներառյալ՝ ապա-

ցույցներ այնպիսի պայմաններում, որոնք նրան չեն դնում էականորեն ավելի նվազ բարենպաստ պայմաններում համեմատած հակառակ կողմի հետ: Ավելին, իշխանությունների կողմից դատաքննության կողմերից մեկին չժանուցելը, այնպես որ նրան հնարավորություն ընձեռվի իրականացնելու իր ներկա գտնվելու իրավունքը, կարող է որոշ դեպքերում հարցեր առաջացնել կապված 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ (տե՛ս, Նելսիդա Նիկողոսյանը և Գվիդոն Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի թիվ 11724/04 և 13350/04 գանգատներով ՄԻԵԴ 06.12.2007 թվականի վճիռը, պարբ. 37):

Վճռաբեկ դատարանը գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով՝ բեկանել է դատական ակտը (*տե՛ս, «Արմենմոյոր» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Փարսարի գյուղապետարանի թիվ ՎԳ/1043/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը*):

Վերոգրյալից հետևում է, որ վարչական դատավարությունում կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքի մասնավոր դրսևորումներից մեկն այն է, որ վարչական դատարանի դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկվելու դեպքում դատավարության մասնակիցն ունի վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունք: Եվ քանի որ օրենսդրության համաձայն վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննվում են առանց դատական նիստ հրավիրելու, հետևաբար, վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման դեպքում վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելը հանդիսանում է վերաքննիչ դատարանում գործի քննությանը գործնականում մասնակցելու և դրա ելքի վրա ազդեցություն ունենալու դատավարության մասնակցի՝ օրենքով կանխորոշված միակ հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման դեպքում, վարչական դատավարության իրավահավասարության և մրցակցության սկզբունքները կարող են կենսագործվել միայն վերաքննիչ դատարանի կողմից դատավարության մասնակցի՝ վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու դեպքում: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանը պարտավոր է ապահովել պատշաճ նախադրյալներ դատավարության մասնակիցների կողմից վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքի երաշխավորված իրացման համար:

Գործի քննության պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.7-րդ հոդվածի համակարգային վերլուծության արդյունքում՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ դատավարության մասնակիցը կարող է իրացնել վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իր իրավունքը միայն այն դեպքում, երբ ինքը ստացել է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը: Այդ իսկ պատճառով՝ օրենսդիրը սահմանել է վերաքննիչ դատարանի պարտականությունը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը դատավարության մասնակիցներին ուղարկելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ օրենսդիրը վարչական դատավարության օրենսգրքում դատավարության մասնակիցների և նրանց ներկայացուցիչների համար պարտականություն է սահմանել դատարանին հայտնել դատավարության մաս-

նակիցների ծանուցման հասցեն, ինչպես նաև հասցեի փոփոխության մասին: Սակայն օրենսդիրը չի սահմանափակվել միայն վերոնշված պարտականությունը նախատեսելով և դատավարության մասնակիցների և նրանց ներկայացուցիչների համար սահմանել է լրացուցիչ պարտականություն՝ դատարանին հայտնել նաև դատավարության մասնակիցների ներկայացուցիչների ծանուցման հասցեն և հասցեի փոփոխության մասին: Վերոնշված իրավական կարգավորման նպատակը ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված անձի արդար դատաքննության իրավունքի տարրեր հանդիսացող կողմերի մրցակցության և հավասարության պահանջների գործնականում իրականացումն ապահովելու համար լրացուցիչ երաշխիքներ նախատեսելն է, քանի որ սույն իրավական կարգավորումը դատարանին իրական հնարավորություն է ընձեռում դատավարության մասնակիցների այս կամ այն հարցի մասին պատշաճ ծանուցման անհնարինության դեպքում պատշաճ ծանուցել դատավարության մասնակիցների ներկայացուցիչներին՝ դրանով իսկ ապահովելով ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված կողմերի մրցակցության և հավասարության պահանջների գործնականում իրականացումը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված անձի արդար դատաքննության իրավունքի գործնականում իրականացումն ապահովելու նպատակով, դատարանը պարտավոր է ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները, որպեսզի դատավարության բոլոր մասնակիցները ստանան վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը, իսկ դրա անհնարինության դեպքում դատարանը պարտավոր է ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները, որպեսզի դատավարության մասնակիցների ներկայացուցիչները ստանան վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը:

Սույն գործի փաստերից հետևում է, որ ստորադաս ատյանների՝ ք. Երևան, Բ. Մուրադյան թիվ 1, բնակարան 48-րդ հասցեով Դավիթ Մարտիրոսյանին ուղարկված գրությունները և ծանուցագրերը փոստային ծառայության կողմից վերադարձվել են հետ (հատոր 1-ին, գ.թ. 134, 166, 183, հատոր 2-րդ գ.թ. 36, 55): Իսկ Դավիթ Մարտիրոսյանի շահերը գործի քննության ընթացքում ներկայացրել է նրա ներկայացուցիչը՝ փաստաբան Գևորգ Գյոզալյանը (հատոր 1-ին, գ.թ. 151): Դատարանի 03.12.2012 թվականի դատական նիստի արձանագրությունից երևում է, որ Դատարանը, բավարարելով Դավիթ Մարտիրոսյանի ներկայացուցչի՝ գործի վարույթը կասեցնելու մասին միջնորդությունը, կասեցրել է սույն գործի վարույթը: Դատարանի 03.12.2012 թվականի «Վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշման դեմ 05.01.2013 թվականին վերաքննիչ բողոք է բերել Վահագն Ղազարյանի ներկայացուցիչը: Վերաքննիչ դատարանի 20.02.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» և 11.03.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումներն ուղարկվել են միայն Դավիթ Մարտիրոսյանին 21.02.2013 թվականին և 13.03.2013 թվականին «ք. Երևան, Բ. Մուրադյան 1շենք, բն. 48» հասցեով: Մինչդեռ ուղարկված գրությունները և փոստային ծանուցագրերը փոստային ծառայության կողմից վերադարձվել են հետ, հետևաբար վերջինս դրանք չի ստացել:

Սույն գործի նյութերից ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանն իրագել է եղել այն մասին, որ տվյալ դատական գործի շրջանակներում Դավիթ Մարտիրոսյանի շահերը ներկայացրել է փաստաբան Գևորգ Գյոզալյանը, որի հասցեն ևս հայտնի է եղել Վերաքննիչ դատարանին: Իսկ Դավիթ Մարտիրոսյանը ք. Երևան, Բ. Մուրադյան թիվ 1, բնակարան 48-րդ հասցեով երբևէ որևէ դատական ծանուցագիր չի ստացել:

Փաստորեն, Վերաքննիչ դատարանը չի ձեռնարկել անհրաժեշտ և բավարար մի-

ջոցներ՝ Դավիթ Մարտիրոսյանին նրա ներկայացուցչի միջոցով Վերաքննիչ դատարանի 20.02.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» որոշման վերաբերյալ իրագրել դարձնելու ուղղությամբ, ինչի արդյունքում Դավիթ Մարտիրոսյանը տեղյակ չի եղել, որ Դատարանի 03.12.2012 թվականի «Վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը բողոքարկվել է վերաքննության կարգով և հնարավորություն չի ունեցել ներկայացնելու վերաքննիչ բողոքի պատասխան և իր դիրքորոշումը հայտնել քննվող հարցի վերաբերյալ:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանի՝ Դավիթ Մարտիրոսյանին նրա ներկայացուցչի միջոցով 20.02.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» և 11.03.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումների վերաբերյալ տեղեկացնելու հնարավորության առկայության պայմաններում Դավիթ Մարտիրոսյանին չիրագրելը, հանգեցրել է վերջինիս արդար դատաքննության իրավունքի խախտմանը:

Վերոնշյալ դիրքորոշման լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, Դավիթ Մարտիրոսյանի ներկայացուցչին չուղարկելով «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» որոշումը, ոչ իրավաչափորեն սահմանափակել է վերջինիս վերաքննիչ բողոքի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու իրավական հնարավորությունը, ինչի հետևանքով խախտվել է նրա՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.03.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/5440/05/13

Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Դատավորներ՝

Ք. Մկոյան

Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/5440/05/13**

2014թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՄՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴԻՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի հունիսի 18-ին

քննարկելով ըստ հայցի Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) ընդդեմ «Պետրոս-94» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Պետրոս Ոսկանյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի՝ 13.03.2013 թվականի թիվ Վ-8/14 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 01.04.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Քաղաքապետարանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Քաղաքապետարանը պահանջել է Ընկերության տնօրեն Պետրոս Ոսկանյանից 100.000 ՀՀ դրամ բռնագանձելու նպատակով արձակել վճարման կարգադրություն:

ՀՀ վարչական դատարանը 15.05.2013 թվականին արձակել է վճարման կարգադրություն:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ընկերության տնօրեն Պետրոս Ոսկանյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 13.03.2013 թվականի թիվ Վ-8/14 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի 26.06.2013 թվականի որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցում է կատարվել հայցային վարույթի:

ՀՀ վարչական դատարանի (Դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 20.02.2014 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.04.2014 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է: Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետը, որը չպետք է կիրառել, չի կիրառել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» կետը, որը պետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, հղում կատարելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետին, նշել է, որ վերաքննիչ բողոքին կից ներկայացվել է ընդամենը 10.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարման անդորրագիր, այն դեպքում, երբ սույն գործով առկա է նաև գույքային պահանջ՝ հոգուտ Երևան համայնքի 100.000 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ, ուստի Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքի համար, բացի վերը նշված 10.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարից, պետք է վճարվեր նաև 3.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, որը չի կատարվել:

Մինչդեռ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» կետի ուժով վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով դիմողներն ազատվում են պետական տուրք վճարելու պարտականությունից, իսկ անցումը հայցային վարույթի կատարվում է վճարման կարգադրության վարույթում հակընդդեմ հայց ներկայացնելու հիմքով, այսինքն՝ հայցային վարույթը վճարման կարգադրության վարույթի շարունակությունն է, հետևաբար այդ դեպքում նույնպես արդեն իսկ հայցվորի կարգավիճակ ստացած անձը (տվյալ դեպքում՝ Երևան համայնքը) չի կարող կրել պետական տուրքի վճարման պարտականություն և գումարի բռնագանձման պահանջի մասով վերջինս ազատված է պետական տուրքի վճարումից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 01.04.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» կետը չկիրառելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են դիմողները՝ վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վե-

րաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Մինչև 07.01.2014 թվականը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձից վարչական ակտի հիման վրա որոշակի դրամական գումարներ բռնագանձելու նպատակով վարչական մարմինը հայցով դիմում է դատարան՝ ստանալու վճարման կարգադրություն:

Նույն օրենսգրքի 159-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը վճարման կարգադրության վարույթից անցում է կատարում հայցային վարույթի, եթե պատասխանողը հակընդդեմ հայց է ներկայացրել: Այս դեպքում վճարման կարգադրությունը վերանում է:

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ վճարման կարգադրություն արձակելու դիմում ներկայացրած անձինք օրենքի ուժով ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից, իսկ հակընդդեմ հայց ներկայացնելու փաստով վճարման կարգադրության վարույթից անցում է կատարվում հայցային վարույթի:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով դիմողների՝ պետական տուրք վճարելու պարտականությունից ազատվելու խնդրին: Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով դիմողներն ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից, իսկ անցումը հայցային վարույթի կատարվում է վճարման կարգադրության վարույթում հակընդդեմ հայց ներկայացնելու հիմքով, գտել է, որ հայցային վարույթը վճարման կարգադրության վարույթի շարունակությունն է, հետևաբար, այդ դեպքում նույնպես արդեն իսկ հայցվորի կարգավիճակ ստացած անձը չի կարող կրել պետական տուրքի վճարման պարտականություն (*տե՛ս*, ՀՀ *նախկինության «Ճանապարհային նախկինություն» ծառայությունն ընդդեմ Գարեգին Գալոյանի, թիվ ՎԴ6/0035/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Քաղաքապետարանը, դիմելով Դատարան, պահանջել է Պետրոս Ոսկանյանից 100.000 ՀՀ դրամ բռնագանձելու նպատակով արձակել վճարման կարգադրություն: Դատարանը 15.05.2013 թվականին արձակել է վճարման կարգադրություն: Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Պետրոս Ոսկանյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 13.03.2013 թվականի թիվ Վ-8/14 որոշումը: Դատարանի 26.06.2013 թվականի որոշմամբ հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է վարույթ, և վճարման կարգադրության վարույթից անցում է կատարվել հայցային վարույթի, որով վերացվել է 15.05.2013 թվականին արձակված թիվ ՎԴ-36126/03/13 վճարման կարգադրությունը: Դատարանի 20.02.2014 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Վերաքննիչ դատարանը 01.04.2014 թվականի որոշմամբ վերադարձրել է Դատարանի 20.02.2014 թվականի վճռի դեմ Քաղաքապետարանի բերած վերաքննիչ բողոքը, և որոշմամբ պատճառաբանվել է, որ բողոքին կից ներկայացվել է ընդամենը 10.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարման անդորրագիր, այնինչ պետք է վճարվեր նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «բ» ենթակետով սահմանված՝ գույքային պահանջի գործերով վճարման ենթակա վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով պետական տուրքի գումարը, այն է՝ 3.000 ՀՀ դրամ, իսկ բողոքին կից չի ներկայացվել կամ դրանում չի ներառվել պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն:

Վերոնշյալ դիրքորոշման լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Քաղաքապետարանը

նը սույն գործով հայցվորի կարգավիճակ է ստացել վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցնելու արդյունքում, ուստի վերջինս որպես գումարի բռնագանձման պահանջի մասով վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցնելու արդյունքում հայցվորի կարգավիճակ ստացած անձ, ազատված է պետական տուրքի վճարումից և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով գումարի բռնագանձման պահանջի մասով չի կարող կրել վերաքննիչ բողոքի համար պետական տուրքի վճարման պարտականություն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 01.04.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/12996/05/13
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/12996/05/13
2014թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի հոկտեմբերի 08-ին,
քննարկելով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 23.04.2014 թվականի «Վե-
րաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտ-
պանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ «Երեքնուկ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) պահանջել է մաս-
նակիորեն՝ Ընկերության գործունեությունը որպես հակամրցակցային համաձայնություն
որակելու (որոշման 2-րդ կետ) և Ընկերության նկատմամբ տուգանք նշանակելու (որոշման
3-րդ կետ) մասերով, անվավեր ճանաչել Հանձնաժողովի 15.11.2013 թվականի թիվ 307-Ա
որոշումը:

ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան)
13.02.2014 թվականի որոշմամբ մերժել է Ընկերության գույքի նկատմամբ արգելանք կիրա-
ռելու վերաբերյալ Հանձնաժողովի միջնորդությունը:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
23.04.2014 թվականի որոշմամբ Հանձնաժողովի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատա-
րանի 13.02.2014 թվականի «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու վերաբերյալ միջնոր-
դությունը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հանձնաժողովը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմ-

նավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածը, որը պետք է կիրառել, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումները պարզապես չի հերքել և փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում դրել է այն սխալ եզրահանգումը, որ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունքն օրենքով վերապահված է միայն գործով հայցվորին: Մինչդեռ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայցի դեպքում գործով պատասխանող հանդիսացող վարչական մարմնին պարտապանի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունք է վերապահում, եթե վարչական մարմնի կարծիքով առկա է այդ դրամական պարտավորությունը չկատարելու անմիջական վտանգ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ տվյալ դեպքում Հանձնաժողովի 15.11.2013 թվականի թիվ 307-Ա որոշման 3-րդ կետով Ընկերության նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 15.000.000 ՀՀ դրամի չափով, որն իրենից ներկայացնում է հանրային իրավական դրամական պահանջ: Բացի այդ, առկա է նաև Ընկերության կողմից այդ դրամական պարտավորությունը չկատարելու անմիջական վտանգ: Հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով պետք է 15.000.000 ՀՀ դրամի չափով արգելանք դրվի վերջինիս գույքի վրա:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «ամբողջությամբ բավարարել վճարել բողոքը՝ ամբողջությամբ բեկանելով թիվ ՎԴ/12996/05/13 վարչական գործով Վերաքննիչ դատարանի 23.04.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել համապատասխան դատարան նոր քննության կամ ամբողջությամբ փոփոխել դատական ակտը և բավարարել Հանձնաժողովի միջնորդությունը»:

3. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան սմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հանրային իրավական դրամական պահանջ պարտնակող վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերով պարտապանի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վարչադատարանական ինստիտուտի և դրա կիրառման առանձնահատկություններին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

Նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի համաձայն՝

1. Պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցերի դեպքում վարչական դատարանը դատավարության մասնակցի միջնորդությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը:

2. Հայցի ապահովման միջոցներն են՝

1) հայցվորի պահանջի ժամանակավոր բավարարումը.

2) դատավարության մասնակցին որոշակի գործողություն կատարելիս արգելելը.

3) պատասխանողին պատկանող գույքի (ներառյալ՝ դրամական միջոցների) վրա հայցագնի չափով արգելանք դնելը.

4) որևէ իրավիճակի ժամանակավոր պահպանումը կամ փոփոխումը:

3. Հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության յուրաքանչյուր փուլում:

4. Հայցի ապահովման մասին միջնորդությունը քննարկվում է այն ստացվելուց հետո՝ ոչ ուշ, քան երկօրյա ժամկետում, և դրա վերաբերյալ կայացվում է որոշում՝ առանձին դատական ակտի տեսքով:

5. Հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայցի դեպքում վարչական մարմինը կարող է ներկայացնել պարտապանի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ միջնորդություն, եթե առկա է դրամական պարտավորությունը չկատարելու անմիջական վտանգ: Դրամական պարտավորությունը չկատարելու անմիջական վտանգի առկայության դեպքում վարչական դատարանն իրավասու է արգելանք դնելու հայցվորի գույքի վրա՝ դրամական պարտավորության չափով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները, օրենքով սահմանված կարգով, վարչական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պահանջներն են:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 89-րդ հոդվածի համաձայն՝ դրամական պահանջներով նախատեսվող գումարների վճարման համար պարտականությունը կրում է այն անձը, ով պարտավոր է այդ գումարը վճարել՝ ա) իր համար կամ իր կողմից թույլ տրված խախտումների համար. բ) մեկ այլ անձի փոխարեն:

Վերոգրյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է, որ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա: Վարչական դատարանն իրավասու է գործադրել օրենքով նախատեսված իր լիազորությունները միայն համապատասխան սուբյեկտների կողմից ներկայացված հայցադիմումի դեպքում, այսինքն՝ օժտված է հատուկ տեսակի իրավասությամբ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել է վարչական ակտերից հայցվորի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար հայցի առանձին տեսակ՝ վիճարկման հայցը: Վիճարկման հայցի դեպքում դատական վերահսկողության օբյեկտը վարչական ակտն է, հայցվորն իրավունք ունի պահանջելու ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը, իսկ վարչական գործով պատասխանողն էլ վարչական մարմինն է: Վիճարկման հայցի տարատեսակ է հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայցը: Սույն հայցի դեպքում հայցվորը՝ վարչական ակտի հասցեատերը, համաձայն չլինելով իր համար ՀՀ պետական կամ համայնքային բյուջե դրամական գումարներ վճարելու պարտականություն նախատեսող վարչական ակտի հետ, վիճարկում է այն, իսկ վարչական մարմինն էլ հանդես է գալիս որպես պատասխանող:

Վճարելի դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է հայցի ապահով-

ման դատավարական ինստիտուտին: Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը, կամ էլ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը: Հայցի ապահովման ինստիտուտը նպատակ է հետապնդում երաշխավորելու հետագայում ընդունվող դատական ակտի կատարումը: Հայցի ապահովում կիրառելու համար անհրաժեշտ է ապացուցել հայցի ապահովում չկիրառելու դեպքում դատական ակտի կատարման դժվարացման կամ անհնարինության հանգամանքը (*լրե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի հարկային տեսչությունն ընդդեմ «Ալնես Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի՝ 13.157.100 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, թիվ ՎԳ/3511/05/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2011 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի ապահովման դատավարական ինստիտուտի օրենսդրական կարգավորման հիմքում ընկած է գործնականում հայցվորի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նպատակը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պարտապանի գույքի վրա արգելանք դնելու դատավարական ինստիտուտը կիրառելի է միայն այն վարչական գործերի դեպքում, որոնք հարուցվել են հանրային իրավական դրամական պահանջ պարունակող վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա: Ընդ որում, տվյալ վարչական գործերի շրջանակում պահանջատեր վարչական մարմինը հանդես է գալիս պատասխանողի, իսկ վարչական ակտի հասցեատերը՝ պարտապանը, հայցվորի դերում, որը համաձայն չլինելով իր համար ՀՀ պետական կամ համայնքային բյուջե դրամական գումարներ վճարելու պարտականություն նախատեսող վարչական ակտի հետ, դրա վիճարկման հայցով դիմել է դատարան: Ման վարչական գործերի քննության ընթացքում, եթե գործով պատասխանող վարչական մարմինը գտնում է, որ առկա է վերը նշված դրամական պարտավորությունը պարտապան հայցվորի կողմից չկատարելու անմիջական վտանգ, ապա կարող է վերջինիս գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնել դատարան: Իսկ դատարանն իրավասու է դրամական պարտավորության չափով արգելանք դնելու հայցվորի գույքի վրա այն դեպքում, երբ իր գնահատմամբ այդ դրամական պարտավորությունը չկատարելու անմիջական վտանգի առկայությունը հիմնավորված է:

Այսպիսով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասով օրենսդիրը սահմանել է հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերով պարտապանի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու առանձնահատուկ վարչադատավարական ինստիտուտ, որն էապես տարբերվում է հայցի ապահովման ինստիտուտից, առաջին հերթին իր հետապնդած նպատակով: Մասնավորապես՝ ի տարբերություն հայցի ապահովման, սույն ինստիտուտը նպատակ է հետապնդում վարչական դատարանի կողմից ապագայում վիճարկման հայցը մերժելու վերաբերյալ վճռի կայացման դեպքում բացառել հանրային իրավական դրամական պահանջի կատարման անհնարինությունը: Այն չունի դատական ակտի կատարումն ապահովելու նպատակ, ինչպես հայցի ապահովումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պարտապանի (հայցվորի) գույքի նկատմամբ արգելանքի կիրառումն իրենից ներկայացնում է ինքնուրույն

վարչադատավարական ինստիտուտ, որը կարող է կենսագործվել միայն օրենքով սահմանված որոշակի պայմանների առկայության դեպքում:

Մասնավորապես՝ դատարանը պետք է կիրառի գործով հայցվորի գույքի վրա արգելանք դնելու իր լիազորությունը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. վարչական գործը հարուցվել է վիճարկման հայցի հիման վրա,
2. վարչական գործով հայցվորը վիճարկում է այնպիսի վարչական ակտ, որի հիման վրա իր վրա դրված է իր համար կամ իր կողմից թույլ տրված խախտումների համար կամ մեկ այլ անձի փոխարեն ՀՀ պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պարտականություն,
3. պատասխանող վարչական մարմինը հայցվորի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել դատարան,
4. դատարանի գնահատմամբ առկա է հայցվորի կողմից իր դրամական պարտավորությունը չկատարելու անմիջական վտանգ:

Վճարել է դատարանն արձանագրում է, որ վարչական սույն գործը հարուցվել է Ընկերության կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով Ընկերությունը պահանջել է մասնակիորեն՝ 2-րդ և 3-րդ կետերի մասով, անվավեր ճանաչել Հանձնաժողովի 15.11.2013 թվականի թիվ 307-Ա որոշումը (հատոր 1-ին, գ.թ. 2-7): Իսկ նշված որոշման 3-րդ կետով հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար Ընկերության նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 15.000.000 ՀՀ դրամի չափով (հատոր 1-ին, գ.թ. 17-20):

Փաստորեն, Հանձնաժողովի 15.11.2013 թվականի թիվ 307-Ա որոշման հիման վրա Ընկերության վրա դրվել է իր կողմից թույլ տրված խախտումների համար ՀՀ պետական բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պարտականություն, որը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի իմաստով իրենից ներկայացնում է հանրային իրավական դրամական պահանջ:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Հանձնաժողովը նշված հանրային իրավական դրամական պահանջին համապատասխանող դրամական պարտավորության՝ 15.000.000 ՀՀ դրամի չափով Ընկերության գույքի վրա արգելանք կիրառելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել Դատարան: Իր այդ միջնորդության հիմքում գործով պատասխանող Հանձնաժողովը դրել է այն հանգամանքը, որ առկա է գործով հայցվոր Ընկերության կողմից նշված դրամական պարտավորությունը չկատարելու անմիջական վտանգ, քանի որ վերջինս բազմիցս խուսափել է ստանալ իր կողմից նշված հասցեներով Հանձնաժողովի կողմից ուղարկված ծանուցումները: Հանձնաժողովի աշխատակիցները փորձել են ծանուցումներն Ընկերությանը հասնել նաև առձեռն եղանակով, սակայն վերջինս անհիմն պատճառաբանություններով հրաժարվել է ստանալ նաև այդ ծանուցումները: Բացի այդ, Ընկերությունը ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, մեկ տարի չի կարող մասնակցել որևէ մրցույթի, ուստի հնարավոր է, որ տուգանքի վճարումից խուսափելու համար Ընկերությունը դադարեցնի իր գործունեությունը (հատոր 1-ին, գ.թ. 43-50):

Դատարանը 13.02.2014 թվականի որոշմամբ մերժել է Ընկերության գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ Հանձնաժողովի միջնորդությունը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի մեկնաբանության արդյունքում Դատարանը եկել է այն եզրահանգման, որ «(...) պատասխանող վարչական մարմնի միջնորդությամբ հայցվոր ընկերության գույքի վրա արգելանք չի կարող կիրառվել, քանի որ նախ՝ դատարանում չի քննվում պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայց, որպիսի պայմաններում դատարանը դատավարության մասնակցի միջնորդությամբ հայցի

ապահովման միջոցներ ձեռնարկի, բացի այդ առկա չէ հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայց, որպիսի պայմաններում վարչական մարմին իրավունք ունենա պարտապանի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ միջնորդությամբ դիմելու դատարան (...)» (հատոր 1-ին, գ.թ. 52-53):

Վերաքննիչ դատարանի 23.04.2013 թվականի որոշմամբ Դատարանի 13.02.2014 թվականի «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին» որոշման դեմ Հանձնաժողովի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի նշված որոշումը թողնվել է անփոփոխ: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանի 13.02.2014 թվականի որոշման պատճառաբանությունները հիմնավոր են, քանի որ ըստ Վերաքննիչ դատարանի՝ «(...) Հանձնաժողովը, հանդիսանալով պատասխանող, Դատարան է ներկայացրել հայցվորի գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնելու վերաբերյալ միջնորդություն, սակայն վարչական դատավարության օրենսդրությամբ նման միջնորդություն հարուցելու իրավունքը վերապահված է միայն հայցվորին, որի նպատակն է հարուցված հայցի բավարարման դեպքում վճռի կատարման համար երաշխիքներ ապահովելը: Մինչդեռ տվյալ դեպքում հայցվորը հանդիսանում է Ընկերությունը, իսկ հայցով ներկայացված պահանջը վերաբերում է Հանձնաժողովի 15.11.2013 թվականի թիվ 307-Ա որոշումը մասնակի անվավեր ճանաչելուն, հետևաբար բացակայում է վարչական մարմնի կողմից պարտապանի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ միջնորդությամբ դատարան դիմելու նախապայման հանդիսացող հանրային իրավական դրամական պահանջով ներկայացված հայցը (...)» (հատոր 1-ին, գ.թ. 89-92):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների վերոնշյալ եզրահանգումներն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Ինչպես նշվեց, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասով օրենսդիրը սահմանել է հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերով պարտապանի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու առանձնահատուկ վարչադատավարական ինստիտուտ: Ստորադաս դատարանների կողմից քննարկվող վարչադատավարական ինստիտուտի պատշաճ կիրառման համար կարևոր է այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերում վարչական մարմինը հանդես է գալիս պատասխանողի դերում: Այլ կերպ ասած՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումների շրջանակներում պարտապանի գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունքն օրենսդիրը վերապահել է հենց գործով պատասխանողին, իսկ պարտապանը տվյալ դեպքում հանդես է գալիս գործով հայցվորի դերում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործով առկա են Ընկերության գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ Հանձնաժողովի կողմից միջնորդություն ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հետևյալ պայմանները.

1. սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության հայցի հիման վրա,
2. Ընկերությունը վիճարկում է Հանձնաժողովի 15.11.2013 թվականի թիվ 307-Ա որոշմամբ իրեն ուղղված հանրային իրավական դրամական պահանջը՝ 15.000.000 ՀՀ դրամ տուգանքի չափով,
3. Հանձնաժողովը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով Դատարան է ներկայացրել Ընկերության գույքի վրա արգելանք կիրառելու վերաբերյալ միջնորդություն՝ գտնելով, որ գոյություն ունի Ընկերության կողմից իր

դրամական պարտավորությունը չկատարելու անմիջական վտանգ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, տվյալ դեպքում Դատարանը պարտավոր էր լրիվ, օբյեկտիվ ու բազմակողմանի քննության ենթարկել Ընկերության գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ներկայացված միջնորդությունը: Նշված միջնորդության քննության արդյունքում Դատարանը պետք է պարզեր Ընկերության կողմից իր դրամական պարտավորությունը չկատարելու անմիջական վտանգի առկայության կամ բացակայության հանգամանքը և դրա հիման վրա լուծեր Հանձնաժողովի կողմից ներկայացված միջնորդության բավարարման կամ մերժման հարցը:

Մինչդեռ Դատարանը Հանձնաժողովի միջնորդությունը մերժելիս իր որոշմամբ անհիմն կերպով գտել է, որ տվյալ դեպքում առկա չէ հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայց, այն դեպքում, երբ, ինչպես նշվեց, սույն վարչական գործը հարուցվել է հենց այդպիսի հայցի հիման վրա:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Հանձնաժողովի վերաքննիչ բողոքը, իր որոշմամբ ոչ միայն վերահաստատել է Դատարանի այն դիրքորոշումը, որ սույն գործով բացակայում է հանրային իրավական դրամական պահանջով ներկայացված վիճարկման հայցը, այլև հանգել է այն հետևության, որ նման միջնորդություն հարուցելու իրավունքը վերապահված է միայն հայցվորին:

Վերոնշյալ վերլուծությունների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածը՝ նույնացնելով հայցի ապահովումը և հանրային իրավական դրամական պահանջներով վիճարկման հայցի դեպքում հայցվորի գույքի նկատմամբ արգելանքի կիրառումը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հանձնաժողովի միջնորդությունն ըստ էության քննելու, Ընկերության կողմից իր դրամական պարտավորությունը չկատարելու անմիջական վտանգի առկայության կամ բացակայության հարցը պարզելու նպատակով անհրաժեշտ է վերացնել սույն գործով ստորադաս դատական ատյանների կողմից կայացված դատական ակտերը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 23.04.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 13.02.2014 թվականի «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴՅ/0342/05/13
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴՅ/0342/05/13
2014թ.

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի հոկտեմբերի 10-ին,
քննարկելով ըստ հայցի Սամվել Գևորգյանի ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Մասիսի քաղաքապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արարատի մարզային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր), Աշոտ Գևորգյանի, երրորդ անձինք Համլետ և Ստեփան Գևորգյանների, Սեդա Գևորգյանի՝ Մասիսի քաղաքապետի (քաղաքապետարանի) կողմից Սեդա Գևորգյանի անթվակիր տեղեկանքը տրամադրելուն ուղղված գործողությունը, 20.12.2000 թվականի քաղվածքը տրամադրելուն ուղղված գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու, Մասիս համայնքի ղեկավարի 12.12.2000 թվականի թիվ 206 որոշումն առ ոչինչ ճանաչելու, Կադաստրի կողմից 21.04.2008 թվականին Սեդա և Աշոտ Գևորգյանների սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուն ուղղված գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու, Մասիս քաղաքատիպ ավանի 3-րդ փողոցի թիվ 94 (նախկինում՝ թիվ 82) հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Սեդա Գևորգյանի և Աշոտ Գևորգյանի սեփականության իրավունքը և սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 17.04.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Սամվել Գևորգյանի ներկայացուցիչ Արտավազդ Պետրոսյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սամվել Գևորգյանը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել Մասիսի քաղաքապետի (քաղաքապետարանի) կողմից Սեդա Գևորգյանի անվամբ անթվակիր տեղեկանքը և 20.12.2000 թվականի քաղվածքը տրամադրելուն ուղղված գործողու-

թյունները, առ ոչինչ ճանաչել Մասիս համայնքի ղեկավարի 12.12.2000 թվականի թիվ 206 որոշումը, ոչ իրավաչափ ճանաչել Կադաստրի կողմից 21.04.2008 թվականին Սեդա և Աշոտ Գևորգյանների սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուն ուղղված գործողությունը, անվավեր ճանաչել Մասիս քաղաքատիպ ավանի 3-րդ փողոցի թիվ 94 (սախկինում՝ թիվ 82) հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Սեդա և Աշոտ Գևորգյանների սեփականության իրավունքը և սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի 07.11.2013 թվականի որոշմամբ Սամվել Գևորգյանի միջնորդությունը բավարարվել է, և սույն վարչական գործով որպես երրորդ անձինք են ներգրավվել Համլետ և Ստեփան Գևորգյանները:

ՀՀ վարչական դատարանի 24.02.2014 թվականի որոշմամբ սույն վարչական գործով որպես երրորդ անձ է ներգրավվել Սեդա Գևորգյանը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Պողոսյան) (այսուհետ՝ Դատարան) 24.02.2014 թվականի որոշմամբ թիվ ՎԴ3/0342/05/13 գործի վարույթը կասեցվել է Սեդա Գևորգյանի մահվան կապակցությամբ՝ նկատի ունենալով, որ վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.04.2014 թվականի որոշմամբ Սամվել Գևորգյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 24.02.2014 թվականի «Վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սամվել Գևորգյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը և այդ հոդվածի մեկնաբանության 64-րդ կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 19-րդ հոդվածը, 20-րդ հոդվածի 1-ին մասը, 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումները պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, անտեսելով այն հանգամանքը, որ Սեդա Գևորգյանը մահացել է դեռևս 16.03.2009 թվականին, և վերջինիս իրավունակությունը դադարել է սրա մահվան փաստով, գտել է, որ Դատարանն իրավացիորեն է ներգրավել մահացած անձին որպես դատավարության կողմ այն պարագայում, երբ վերջինս մահացել է մինչև սույն գործով հայցադիմումը վարույթ ընդունելը, այն է՝ 23.09.2013 թվականը: Անտեսվել է նաև այն հանգամանքը, որ նշված պարագայում կանգուցյալ Սեդա Գևորգյանի իրավունքներն այլևս չեն կարող շոշափվել սույն գործով հայացվելիք դատական ակտով, իսկ այն անձանց իրավունքները, ովքեր ունեն վերջինիս գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելու հավակնություն, արդեն իսկ ներգրավված են գործում որպես երրորդ անձ:

Այսինքն՝ ստորադաս դատարանները, արձանագրելով, որ Սեդա Գևորգյանը մահացել է 16.03.2009 թվականին, անտեսել են նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով գործի վարույթը կասեցնելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ մինչև դատավարությունը մահացած անձի՝ Սե-

դա Գևորգյանի իրավահաջորդության հարցն արդեն իսկ լուծված է՝ նկատի ունենալով, որ սույն գործով Աշոտ, Ստեփան, Համլետ և Սամվել Գևորգյանները՝ որպես Սեդա Գևորգյանի իրավահաջորդներ, արդեն իսկ ներգրավված են որպես դատավարության մասնակիցներ:

«Դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի մահից հետո» բառակապակցությունն ուղղակիորեն նշանակում է, որ նորմը վերաբերում է այն դեպքերին և կիրառելի է բացառապես այն դեպքում, երբ անձն իր կյանքի ընթացքում հանդիսացել է դատավարության մասնակից, մահացել է մինչև դատավարության ավարտը, և էթե նրա մահից հետո վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն:

Մինչդեռ, ստորադաս դատարանները, նշելով, որ Սեդա Գևորգյանը մահացել է 23.03.2009 թվականին, անտեսել են, որ այդ փաստի ուժով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով գործի վարույթը կասեցնելու հիմքերը բացակայում են, քանի որ Սեդա Գևորգյանը դատավարության ընթացքում որջ չի եղել և դատավարության ընթացքում չի մահացել:

Բացի այդ, սույն գործով հայցապահանջի շրջանակներում վիճարկվում է հանգուցյալ Սեդա Գևորգյանի սեփականության իրավունքը և վերջինիս անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, որոնք անվավեր ճանաչելու մասով Ստեփան և Համլետ Գևորգյանները պատշաճ պատասխանողներ չեն կարող հանդիսանալ, քանի որ վերջիններիս՝ Սեդա Գևորգյանի ժառանգությունն ընդունած լինելու փաստը թիվ ԱՎԳ-2/0128/02/12 քաղաքացիական գործի շրջանակներում վիճելի է. այդ իսկ պատճառով Սամվել Գևորգյանի միջնորդությամբ նրանք ներգրավվել են որպես երրորդ անձինք:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 17.04.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ, այն է՝ վերացնել Դատարանի 24.02.2014 թվականի «Վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սխալ մեկնաբանելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ դատարանի կողմից մահացած անձին որպես դատավարության մասնակից, այդ թվում՝ երրորդ անձ ներգրավելու և վերջինիս մահվան հիմքով գործի վարույթը կասեցնելու իրավաչափության հարցին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը (քաղաքացիական իրավունակություն) բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահին և դադարում է մահվամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքներ ունենալու և դատավարական պարտականություններ կրելու ունակությունը (դատավարական իրավունակություն) ճանաչվում է բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ հավասար չափով: Նույն օրենսգրքի դրույթները տարածվում են նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հիմնարկների վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք օժտված են դատարանում իրենց գործողություններով իրավունքներ իրականացնելու և պարտականություններ ստանձնելու ունակությամբ (դատավարական գործունակություն):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը սահմանում է, որ վարչական դատավարության մասնակիցներն են կողմերը՝ հայցվորը և պատասխանողը, ինչպես նաև երրորդ անձինք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝

1. Երրորդ անձինք այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք են կամ մարմինները, որոնց իրավունքները շոշափվում են կամ անմիջականորեն կարող են շոշափվել գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով, ինչպես նաև այն մարմինները կամ պաշտոնատար անձինք, որոնց լիազորություններին առնչվում է կամ կարող է առնչվել ընդունվելիք դատական ակտը:

2. Երրորդ անձինք դատավարության մեջ կարող են ներգրավվել իրենց դիմումի հիման վրա:

3. Եթե դատական ակտը անխուսափելիորեն և ուղղակիորեն տարածվելու է նաև որոշակի անձանց կամ մարմինների վրա, ապա վարչական դատարանը պարտավոր է այդ անձանց (մարմիններին) ներգրավել դատավարության մեջ որպես երրորդ անձ:

4. Երրորդ անձինք դատավարության մեջ կարող են ներգրավվել մինչև դատաքննության ավարտը:

(...)

7. Երրորդ անձինք օգտվում են կողմի բոլոր իրավունքներից և կրում են նրա բոլոր պարտականությունները, բացառությամբ հայց (ներառյալ՝ հակընդդեմ հայց) ներկայացնելու, հայցի հիմքը և (կամ) առարկան փոխելու, հայցային պահանջների չափը ավելացնելու և (կամ) նվազեցնելու, հայցն ընդունելու կամ հայցից հրաժարվելու և դատական ակտի հարկադիր կատարում պահանջելու իրավունքներից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի մահից հետո վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ վարչական դատավարության մասնակից հանդիսանալու համար սուբյեկտը պետք է օժտված լինի դատավարական իրավունակությամբ, ինչը ենթադրում է դատավարական իրավունքներ ունենալու և դատավարական պարտականություններ կրելու ունակություն:

Դատավարական իրավունակությունը բոլոր ֆիզիկական անձանց համար օրենսդրորեն ճանաչվում է հավասար չափով, այն ծագում է ֆիզիկական անձանց ծննդյան պահից և դադարում վերջիններիս մահվամբ, իսկ ֆիզիկական անձի տարիքը, հոգեկան հիվան-

դուրսն ենք, առողջական վիճակը, ընդհանուր առմամբ, չեն ազդում իրավունակության վրա: Ֆիզիկական անձինք կարող են մասնակից լինել վարչական դատավարությանը, այսինքն՝ հանդես գալ հայցվորի, պատասխանողի կամ երրորդ անձի դերում, ունենալ դատավարական իրավունքներ և կրել դատավարական պարտականություններ՝ սկսած իրենց ծննդյան պահից մինչև մահը, իսկ մահացած, այսինքն՝ իրավունակությունը դադարած ֆիզիկական անձը չի կարող հանդես գալ որպես դատավարության մասնակից:

Վերը նշվածից ելնելով՝ հարկ է արձանագրել, որ դատական պրակտիկայում բացառություն չեն կազմում այն դեպքերը, երբ դատավարության մասնակից ֆիզիկական անձը մահանում է գործի քննության ընթացքում: Այդ դեպքը, մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում դասվում է գործի վարույթը կասեցնելու պարտադիր հիմքերի շարքին, եթե դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի մահից հետո վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն: Այդ դեպքում դատարանը կասեցնում է գործի վարույթը մահացած դատավարության մասնակցին նրա իրավահաջորդով փոխարինելու նպատակով:

Վճռաբեկ դատարանը, իր նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով գործին մասնակցող քաղաքացու մահվան հիմքով գործի վարույթը կասեցնելու հարցին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գործին մասնակցող քաղաքացու մահվան դեպքում նրան իրավահաջորդով փոխարինելը հետապնդում է դատավարությունում կողմի ներկայությունն ապահովելու և դրա միջոցով նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության ապահովման նպատակ, որի բացակայության դեպքում գործի վարույթը վկայակոչված հիմքով կասեցվել չի կարող, քանի որ իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացվել միայն շահագրգիռ անձի կողմից որոշակի դատավարական գործողություններ կատարելու դեպքում (յո՛ւս, Մամվել, Սահակ և Սուլթան Մարկոսյաններն ընդդեմ Լուսիկ Գևորգյանի և մյուսների թիվ ԵԿԴ/0808/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.11.2013 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով գործի վարույթը կասեցնելու դատարանի լիազորությունը կիրառելի է միայն այն դեպքում, երբ մահացած ֆիզիկական անձն իր կենդանության օրոք մասնակցել է դատավարությանը, այսինքն՝ կենդանության օրոք հանդես է եկել հայցվորի, պատասխանողի կամ երրորդ անձի դերում: Այլ կերպ ասած՝ անձի մահվան հիմքով գործի վարույթը կասեցնելն իրավաչափ է այն պարագայում, երբ ֆիզիկական անձը մինչև իր մահը հանդիսացել է դատավարության մասնակից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանն իրավասու չէ նախ՝ դատավարությանը մասնակից դարձնել մինչ գործի քննությունը սկսվելը մահացած՝ իրավունակությունը դադարած ֆիզիկական անձին, ապա՝ որպես հետևանք՝ նշված դատավարությանը մասնակից դարձված ֆիզիկական անձի մահվան հիմքով կասեցնել գործի վարույթը: Այլ կերպ ասած՝ դատարանն իրավասու չէ կասեցնել գործի վարույթը մահանալու պահի դրությամբ դատավարության մասնակից չհանդիսացող ֆիզիկական անձի մահվան հիմքով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սեդա Գևորգյանը մահացել է 16.03.2009 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 25):

Սամվել Գևորգյանը 17.09.2013 թվականին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով ոչ իրավաչափ ճանաչել Մասիսի քաղաքապետի (քաղաքապետարանի) կողմից Սեդա Գևորգյանի անվամբ անթվակիր տեղեկանքը և 20.12.2000

թվականի քաղվածքը տրամադրելուս ուղղված գործողությունները, առ ոչինչ ճանաչել Մասիսի համայնքի ղեկավարի 12.12.2000 թվականի թիվ 206 որոշումը, ոչ իրավաչափ ճանաչել Կադաստրի կողմից 21.04.2008 թվականին Սեդա և Աշոտ Գևորգյանների սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուս ուղղված գործողությունը, անվավեր ճանաչել Մասիս քաղաքատիպ ավանի 3-րդ փողոցի թիվ 94 (սակսկիսում թիվ 82) հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Սեդա Գևորգյանի և Աշոտ Գևորգյանի սեփականության իրավունքը և սեփականության իրավունքի պետական գրանցումը (հատոր 1-ին, գ.թ. 2-21):

Դատարանի 23.09.2013 թվականի որոշմամբ Սամվել Գևորգյանի հայցադիմումն ընդունվել է վարույթ (հատոր 1-ին, գ.թ. 95):

Դատարանն իր նախաձեռնությամբ 24.02.2014 թվականի որոշմամբ սույն գործով որպես երրորդ անձ է ներգրավել Սեդա Գևորգյանին: Դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ սույն վարչական գործի վարույթը կասեցվել է երրորդ անձ Սեդա Գևորգյանի մահվան կապակցությամբ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն (հատոր 3-րդ, գ.թ. 74-76):

Վերաքննիչ դատարանն իր 17.04.2014 թվականի որոշմամբ մերժել է Դատարանի 24.02.2014 թվականի «Վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշման դեմ Սամվել Գևորգյանի բերած վերաքննիչ բողոքը և անփութիս թողել նշված որոշումը: Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ անհիմն է գտել բողոքով ներկայացված այն հիմնավորումը, որ կողմին իրավահաջորդությամբ փոխարինելը տեղի է ունենում բացառապես այն դեպքում, երբ վերջինս հանդիսացել է դատավարության կողմ (դատավարության ընթացքում եղել է ողջ) և մահացել է դատավարության ընթացքում, իսկ մինչև դատավարությունը մահացած անձին հայցապահանջով որպես կողմ ներգրավելու դեպքում վերջինս դատավարության մասնակից չի կարող համարվել՝ իրավունակությունը դադարած լինելու հիմքով, և պատճառաբանել, որ «վարչական գործի վարույթը կասեցնելու մասին որոշման օրինականությունը գնահատելու շրջանակում նշված հարցը չի կարող քննարկման առարկա դառնալ, քանի որ անձին որպես կողմ ներգրավելու մասին որոշումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ուժով կայացվում է առանձին ակտի տեսքով, իսկ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածը, որը սահմանում է այն միջանկյալ դատական ակտերը, որոնք վերաքննության կարգով ենթակա են բողոքարկման, «Երրորդ անձ ներգրավելու մասին» որոշումը չի նախատեսում որպես բողոքարկման ենթակա դատական ակտ» (հատոր 3-րդ, գ.թ. 135):

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վերոգրյալ պատճառաբանություններն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Ինչպես նշվեց, ֆիզիկական անձինք կարող են մասնակցել վարչական դատավարությանը, այսինքն՝ հանդես գալ հայցվորի, պատասխանողի կամ երրորդ անձի դերում իրենց ծննդյան պահից մինչև մահը: Բացի այդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով գործի վարույթը հնարավոր է կասեցնել միայն այն դեպքում, երբ ֆիզիկական անձն իր կենդանության օրոք մինչև մահանալու պահը հանդիսացել է դատավարության մասնակից: Հետևաբար, դատարանը չունի հնարավորություն կասեցնել գործի վարույթը մահանալու պահի դրությամբ դատավարության մասնակից չհանդիսացող ֆիզիկական անձի մահվան հիմքով: Դատարանը, գործով երրորդ անձ ներգրավելու որոշում կայացնելով, անձի վրա չի կարող դնել դատավարության մասնակից դառնալու պարտականություն, իսկ վերջինս էլ չի կարող ձեռք բերել դատավարության մասնակցի իրավունքներ, քանի որ մահվան փաստով վերացել են անձի այդ ունակությունները (իրավունակությունը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը, կասեցնելով սույն վարչա-

կան գործի վարույթը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի 24.02.2014 թվականի «Վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը, հաշվի չեն առել այն հանգամանքը, որ հանգուցյալ Սեդա Գևորգյանի իրավունակությունը դեռևս 16.03.2009 թվականին դադարած լինելու պայմաններում վերջինս չէր կարող ներգրավվել սույն գործով որպես դատավարության մասնակից, ավելին՝ մինչ գործի քննությունը սկսվելը մահացած և մահվանից շուրջ չորս տարի անց դատավարությանը մասնակից դարձված անձի մահվան հիմքով գործի վարույթը չէր կարող կասեցվել:

Վերը շարադրված հիմնավորումների արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ հանգուցյալ Սեդա Գևորգյանը չէր կարող ներգրավվել սույն վարչական գործով որպես երրորդ անձ, հետևաբար վերջինիս մահը չէր կարող հիմք հանդիսանալ վարչական գործի վարույթը կասեցնելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը կասեցնելու որևէ իրավական հիմք առկա չէ, և սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 17.04.2014 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 24.02.2014 թվականի «Վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/2220/05/13
Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան

Վարչական գործ թիվ ՎԴ/2220/05/13
2013թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի սեպտեմբերի 25-ին,
քննարկելով ըստ հայցի Հակոբ Կիրակոսյանի ընդդեմ Երևան համայնքի (այսուհետ՝
Համայնք)՝ Երևանի Դավթաշեն 1-ին թաղամասի թիվ 37 շենքի բակում գտնվող թիվ 843
պաղպաղականոց-տաղավարի զբաղեցրած 14,24քմ մակերեսով հողամասի և 400քմ մա-
կերեսով հողամասի վարձակալության պայմանագրեր կնքելուն կամ հողի օգտագործման
կամ գնման իրավունքի ձեռքբերման վաղեմության իրավունքը ճանաչելու մասին որոշում
կայացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վարչական
վերաքննիչ դատարանի 06.06.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշ-
ման դեմ Հակոբ Կիրակոսյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հակոբ Կիրակոսյանը պահանջել է պարտավորեցնել Համայն-
քին Երևանի Դավթաշեն 1-ին թաղամասի թիվ 37 շենքի բակում գտնվող թիվ 843 պաղպա-
ղականոց-տաղավարի զբաղեցրած 14,24քմ մակերեսով հողամասի և 400քմ մակերեսով
հողամասի վարձակալության պայմանագրեր կնքել իր հետ կամ հողի օգտագործման կամ
գնման իրավունքի ձեռքբերման վաղեմության իրավունքը ճանաչելու մասին կայացնել
որոշում:

ՀՀ վարչական դատարանի 29.03.2013 թվականի որոշմամբ հայցադիմումը վերա-
դարձվել է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի հիմ-
քով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Իսանդանյան) (այսուհետ՝ Դատարան)
13.04.2013 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է՝ ՀՀ վարչական դա-

տավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.06.2013 թվականի որոշմամբ Հակոբ Կիրակոսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.04.2013 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հակոբ Կիրակոսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Համայնքը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը, սխալ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասը, 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ իրականությանը չի համապատասխանում Դատարանի այն պատճառաբանությունը, որ իբրև թե Համայնքը 07.02.2013 թվականի դիմումին պատասխանել է 20.02.2013 թվականին: Նման գրություն գոյություն չունի, քանի որ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) նամակների ելքային փոստով այդպիսի պատասխան չի առաքվել: Այսինքն՝ 20.02.2013 թվականի թիվ 20/11-մ884 գրությունը կեղծ է, կազմվել է հետին թվով, իսկ հակառակ դեպքում դրան կկցվեր այն ստանալու մասին հետադարձ ծանուցումը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ բացարձակ անհիմն է Դատարանի այն ենթադրությունը, որ Հակոբ Կիրակոսյանի կողմից 07.02.2013 թվականին Երևանի քաղաքապետին (այսուհետ՝ Քաղաքապետ) ուղղված նույնաբովանդակ դիմումն ըստ էության իրենից ներկայացնում է բաց թողնված դատավարական ժամկետների նորացման փորձ:

Վերաքննիչ դատարանի վիճարկվող որոշմամբ խախտվել է Հակոբ Կիրակոսյանի՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքը, և այն ամենևին էլ չի բխում արդարացի և հրապարակային դատաքննության, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 06.06.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Հակոբ Կիրակոսյանը ներկայացված հայցի հիմքում դրել է այն հանգամանքը, որ 07.02.2013 թվականին դիմել է Քաղաքապետարան՝ վիճելի հողամասերի նկատմամբ օգտագործման կամ գնման իրավունքի ձեռքբերման վաղեմության իրավունքը ճանաչելու կամ վարձակալության պայմանագիր կնքելու պահանջով, սակայն մինչ օրս որևէ պատասխան չի ստացել: Մինչդեռ, նշված պատճառաբանությունն անհիմն է և ոչ ճշմարիտ, քանի որ վկայակոչված դիմումին պատասխանվել է դեռևս 20.02.2013 թվականի թիվ 20/11-մ884 գրությամբ, իսկ Հակոբ Կիրակոսյանը դատարան է դիմել միայն 27.03.2013 թվականին, երբ արդեն դադարել էր վերջինիս՝ դատարան դիմելու իրավունքը:

Միաժամանակ, Հակոբ Կիրակոսյանը նույն խնդրանքներով 03.02.2012 թվականին, 22.03.2012 թվականին և 10.10.2012 թվականին արդեն դիմել է Քաղաքապետարան, և

այդ դիմումներին ևս պատասխանվել է, որպիսի դիմումներից և պատասխաններից ակնհայտ է, որ Քաղաքապետարանի դիրքորոշումը Հակոբ Կիրակոսյանին հայտնի էր դեռևս 03.02.2012 թվականի դիմումի պատասխանը ստանալիս:

3. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Սույն վճռարեկ բողոքի քննության շրջանակներում Վճռարեկ դատարանը հարկ է համարում անդրադարձնալ պարտավորեցման հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետների հաշվարկման հարցին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից, կամ որը նա չի ընդունել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայցը դատարան կարող է ներկայացվել՝ պարտավորեցման հայցի դեպքում՝ ա. մեկամսյա ժամկետում այն պահից, երբ մերժվել է տվյալ վարչական ակտի ընդունումը,

բ. երկամսյա ժամկետում այն պահից, երբ լրացել է վարչական ակտ ընդունելու համար սահմանված առավելագույն ժամկետը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո գործին մասնակցող անձինք կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումը ստանալու օրվանից հետո՝ 15-օրյա ժամկետում, դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը դատարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ նույն օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում հայցվորը չի վերացրել հայցադիմումի այնպիսի թերությունները, որոնց չվերացնելն արգելք է գործի քննության համար:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենքի ուժով պարտավորեցման հայցի շրջանակներում հայցվորին իրավունք է վերապահված պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը վարչական մարմինը մերժել է կամ որը վերջինս չի ընդունել, որպիսի հայցատեսակով դատարան դիմելու համար սահմանված է մեկամսյա ժամկետ՝ վարչական ակտի ընդունումը մերժելու պարագայում, և երկամսյա ժամկետ՝ վարչական ակտը չընդունելու պարագայում: Առաջին դեպքում անհրաժեշտ նախապայման է մերժման վերաբերյալ վարչական ակտի գոյությունը: Այլապես, վարչական վարույթ իրականացնելու համար սահմանված առավելագույն ժամկետի ավարտից հետո

նման վարչական ակտ չընդունվելու դեպքում կիրառելի է երկամսյա ժամկետը: Հետևաբար, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է պարզել անձի դիմումին ի պատասխան ներկայացված գրության՝ մերժման վերաբերյալ վարչական ակտ լինելու հանգամանքը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հակոբ Կիրակոսյանի կողմից բարենպաստ վարչական ակտ ընդունելու խնդրանքով (պահանջով) Քաղաքապետին հասցեագրված 03.02.2012 թվականի, 22.03.2012 թվականի, 10.10.2012 թվականի և 28.11.2012 թվականի դիմումներին պատասխանվել է համապատասխանաբար 28.02.2012 թվականի, 26.03.2012 թվականի, 17.10.2012 թվականի և 30.11.2012 թվականի, իսկ 07.02.2013 թվականի դիմումին՝ 20.02.2013 թվականի գրություններով (գ.թ. 5-12, 46-50), որոնցից 07.02.2013 թվականի դիմումի պատասխանով (20.02.2013 թվականի գրությամբ) (գ.թ. 46) հայտնվել է, որ ներկայումս Քաղաքապետարանում ընթանում են Երևանի ճարտարապետական դիմագիծն ու գեղագիտական տեսքը վերականգնելու, ճարտարապետական փոքր ձևերով արտահայտված կառույցների տեղաբաշխումը կանոնակարգելու հարցերին համապատասխան լուծում տալու վերաբերյալ քննարկումներ, որի ավարտից հետո Քաղաքապետարանը պատրաստական է նորից անդրադառնալ բարձրացված հարցի քննարկմանը:

Տվյալ դեպքում Դատարանը հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Հակոբ Կիրակոսյանը հայցադիմումը կրկին ներկայացրել է ՀՀ վարչական դատարանի նախկին («Հայցադիմումը վերադարձնելու մասին») որոշման մեջ նշված խախտումով, այն է՝ կրկին ներկայացված հայցադիմումով հայցվորը չի ներկայացրել բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն: Մասնավորապես՝ Հակոբ Կիրակոսյանի կողմից Քաղաքապետին ուղղված 03.02.2012 թվականի, 22.03.2012 թվականի, 10.10.2012 թվականի և 28.11.2012 թվականի դիմումներին պատասխանվել է համապատասխանաբար 28.02.2012 թվականին, 26.03.2012 թվականին, 17.10.2012 թվականին և 30.11.2012 թվականին, իսկ 07.02.2013 թվականի սույնաբովանդակ դիմումին՝ 20.02.2013 թվականին:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ հայցադիմումը կրկին դատարան ներկայացնելիս Հակոբ Կիրակոսյանը չի կատարել հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման պահանջը, այն է՝ չի ներկայացրել բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն: Նման պարագայի համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման, ինչը և իրավացիորեն իրացրել է Դատարանը բողոքարկված որոշմամբ: Ուստի, նշված որոշումը հիմնավորված է և առկա չէ դրա վերացման որևէ իրավական հիմք:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Հակոբ Կիրակոսյանի կողմից պարտավորեցման հայց ներկայացնելու ժամկետը պահպանված լինելու կամ չլինելու հարցը պարզելու համար անհրաժեշտ է պատասխանել այն իրավական հարցին, թե արդյոք վերջինիս կողմից բարենպաստ վարչական ակտ ընդունելու պահանջով Քաղաքապետին հասցեագրված 07.02.2013 թվականի դիմումի վերաբերյալ 20.02.2013 թվականի պատասխանը (գրությունը) հանդիսանում է վարչական ակտ: Ըստ այդմ էլ կորոշվի՝ կիրառելի է արդյոք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», թե «բ» ենթակետով սահմանված ժամկետը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրա-

վական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Շույն հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետի համաձայն՝ միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ որևէ որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ որպես վարչական ակտ դիտարկելու համար անհրաժեշտ է օրենքով նախատեսված վարչական ակտին բնորոշ հատկանիշները կազմող տարրերի միաժամանակյա առկայությունը: Այսպես, վարչական ակտը պետք է ընդունվի վարչական մարմնի կողմից, ունենա արտաքին ներգործություն, ընդունվի հանրային իրավունքի բնագավառում, հետապնդի կոնկրետ գործի կարգավորման նպատակ և ուղղված լինի անձի համար իրավունքներ կամ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն, իսկ միջամտող վարչական ակտի միջոցով վարչական մարմինն անձին, ի թիվս այլնի, մերժում է իրավունքների իրականացումը: Միաժամանակ, վերոգրյալ տարրերից որևէ մեկի բացակայությունը բացառում է վարչական ակտի առկայությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հակոբ Կիրակոսյանի կողմից բարենպաստ վարչական ակտ ընդունելու պահանջով Քաղաքապետին հասցեագրված 07.02.2013 թվականի դիմումի վերաբերյալ 20.02.2013 թվականի պատասխանը (գրությունը) չի հանդիսանում վարչական ակտ, քանի որ այն չի համապատասխանում օրենքով վարչական ակտին ներկայացվող պահանջներին: Մասնավորապես՝ նշված գրությամբ Հակոբ Կիրակոսյանին չի մերժվել հայցվող իրավունքի իրականացումը, այլ այն ընդամենը տեղեկատվական բնույթի փաստաթուղթ է, որով վարչական մարմինը հայտնել է այն մասին, որ Քաղաքապետարանում ընթանում են համապատասխան քննարկումներ, որի ավարտից հետո վերջինս պատրաստակամ է նորից անդրադառնալ բարձրացված հարցի քննարկմանը:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ սովյալ դեպքում վարչական մարմինը Հակոբ Կիրակոսյանի 07.02.2013 թվականի դիմումի կապակցությամբ այդպես էլ ըստ էության որևէ վարչական ակտ չի ընդունել, որպիսի պայմաններում նա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետի ուժով իր պարտավորեցման հայցը դատարան կարող էր ներկայացնել երկամսյա ժամկետում այն պահից, երբ լրանար վարչական ակտ ընդունելու համար սահմանված առավելագույն ժամկետը: Դիմումը ներկայացվել է 07.02.2013 թվականին, որի հիման վրա հարուցված վարչական վարույթի առավելագույն՝ 30-օրյա ժամկետն ավարտվել է 08.03.2013 թվականին, իսկ հայցվորը Դատարան է դիմել 27.03.2013 թվականին, ինչը նշանակում է, որ սույն գործով պահպանվել է նշված երկամսյա ժամկետը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ չեն գնահատել Հակոբ Կիրակոսյանի կողմից բարենպաստ

վարչական ակտ ընդունելու պահանջով Քաղաքապետին հասցեագրված 07.02.2013 թվականի դիմումի վերաբերյալ 20.02.2013 թվականի պատասխանը (գրությունը), ինչի արդյունքում հաստատված են համարել այն հանգամանքը, որ Հակոբ Կիրակոսյանը բաց է թողել պարտավորեցման հայց ներկայացնելու ժամկետն այն դեպքում, երբ ժամկետի բացթողում առկա չէ, որպիսի դեպքում վերջինս բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու պարտավորություն չի ունեցել:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, խախտել է վկայակոչված նորմերի պահանջները, ինչի արդյունքում սահմանափակել է բողոք բերած անձի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը:

Շշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանով ներկայացված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.9-րդ, 118.15-րդ և 118.17-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 06.06.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 13.04.2013 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/7871/05/12
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/7871/05/12
2013թ.

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 30-ին,
քննարկելով ըստ հայցի «Շինմոնտաժարդյեկտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)
նախկին տնօրեն Կարեն Մարտիրոսյանի ընդդեմ ՀՀ Կառավարությանն առընթեր պե-
տական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ Կոմիտեի ՕՀՎ-ի կողմից 23.01.2012
թվականի տեղեկանքը կազմելուն ուղղված գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու
պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.02.2013
թվականի «Բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու և վե-
րաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Ընկերության նախկին տնօրեն
Կարեն Մարտիրոսյանի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերության նախկին տնօրեն Կարեն Մարտիրոսյանը պա-
հանջել է ոչ իրավաչափ ճանաչել Կոմիտեի ՕՀՎ-ի կողմից 23.01.2012 թվականի տեղեկան-
քը կազմելուն ուղղված գործողությունները՝ հաշվարկի մատով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Թովմասյան) (այսուհետ՝ Դատարան)
03.12.2012 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է՝ ՀՀ վարչական դա-
տավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.01.2013 թվականի որոշմամբ Դատարանի
03.12.2012 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Ընկերու-
թյան նախկին տնօրեն Կարեն Մարտիրոսյանի բերած վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.02.2013 թվականի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին Կարեն Մարտիրոսյանի ներկայացուցչի միջնորդությունը մերժվել է, իսկ Դատարանի 03.12.2012 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ բերած վերաքննիչ բողոքը՝ վերադարձվել՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության նախկին տնօրեն Կարեն Մարտիրոսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 117.6-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձնելու պայմաններում խախտվում է թե՛ բողոք բերած անձի՝ դատարանի մատչելիության, իրավունքների ինքնապաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը և թե՛ վարչական մարմնի գործողության վիճարկման իրական հնարավորությունը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ բողոք բերած անձը վերաքննիչ բողոքը ներկայացնելու ժամանակ վստահ էր, որ սույն գործում պետք է առկա լինի Դատարանի կողմից դատավարության կողմերին ուղարկված և ստացված նամակների ուղարկման և ստացման փոստային անդորրագրերը, որոնցով էլ կհաստատվեր բողոք բերած անձի վկայակոչյալ փաստարկը, սակայն հետագայում պարզվել է, որ Դատարանի կողմից սույն գործին չէր կցվել վիճարկվող որոշումն ուղարկելու կամ այն ստանալու վերաբերյալ որևէ ապացույց:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 14.02.2013 թվականի «Բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին, թե արդյոք ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իրավասու է միջանկյալ դատարանական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքով վերադարձնել վերաքննիչ բողոքն այն պայմաններում, երբ գործում առկա չեն ՀՀ վարչական դատարանի կողմից միջանկյալ դատարանական ակտը բողոք բերած անձին ուղարկելու և վերջինիս կողմից այն սրանալու վերաբերյալ ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման են ենթակա վարչական դատարանի կայացրած հետևյալ միջանկյալ դատական ակտերը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն օրենքով

նախատեսված դեպքերում՝ միջանկյալ դատական ակտը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանը հայցադիմումի ընդունումը մերժելու մասին կայացնում է որոշում՝ եռօրյա ժամկետում որոշումը նույն օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկելով հայցվորին և պատասխանողին, իսկ հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ հայցվորին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծանուցագրի հանձնումին իրականացվում է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Դատավարության մասնակիցները կարող են համաձայնվել ծանուցման այլ եղանակի մասին, մասնավորապես ֆաքսով, էլեկտրոնային փոստով, հեռախոսով, հեռագրով:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ վարչական դատարանի՝ միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված է 15-օրյա ժամկետ, որպիսի ժամկետի հաշվարկը սկսում է հոսել այդ ակտը ստանալուց հետո, իսկ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը գործին մասնակցող անձանց ուղարկելու գործընթացը կարգավորվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի պատշաճ ծանուցման կանոններով:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R (95) 5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Վերը նշվածից հետևում է, որ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի ցանկացած որոշման վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ ատյանի դատարան):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (տե՛ս, «Պայքար և Հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի թիվ 21638/03 գանգատով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը, պարբ. 44):

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման կարգավորումը ենթադրում է բավարար իրավական երաշխիքների առկայություն բողոք ներկայացնող անձի՝ վերադաս դատական ատյանում լաված լինելու իրավունքն ապահովելու առումով: Դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումները, այդ թվում և վերաքննիչ բողոքը վերադարձնելու միջոցով, խախտում են այդ իրավունքը, եթե ստորադաս դատարանի կողմից թույլ տրված ընթացակարգային խախտումներն ազդել են բողոք բերելու ժամկետների վրա:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ բողոք բերած անձը որպես բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդության հիմնավորում նշել է, որ վիճարկվող որոշումը փոստային եղանակով ստացել է 21.12.2012 թվականին, սակայն դրա վերաբերյալ որևէ ապա-

ցույց չի ներկայացրել, իսկ գործում առկա նյութերով չի հիմնավորվում բողոք բերած անձի կողմից վիճարկվող որոշումն ուշացումով ստանալու վերաբերյալ միջնորդությամբ նշված փաստարկը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վերոգրյալ պատճառաբանությունն անհիմն է, քանի որ սույն գործում առկա չէ Դատարանի 03.12.2012 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը բողոք բերած անձին ուղարկելու և այն վերջինիս կողմից ստանալու փաստը հավաստող պատշաճ ապացույց, որպիսի պայմաններում ընդհանրապես հնարավոր չէ պարզել բողոք բերած անձի կողմից վիճարկվող որոշումը ստանալու ճշգրիտ ժամանակը: Հետևաբար, առանց նշված ապացույցի առկայության Վերաքննիչ դատարանն իրավասու չէր վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետը համարել բաց թողնված և այդ հիմքով վերադարձնել վերաքննիչ բողոքը:

Ինչ վերաբերում է գործում առկա Դատարանի 03.12.2012 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը բողոք բերած անձին ուղարկելու վերաբերյալ գրությանը (գ.թ. 29), ապա այն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի իմաստով չի կարող համարվել պատշաճ ծանուցման վերաբերյալ ապացույց, քանի որ, ինչպես նշվեց, սույն գործում առկա չէ Դատարանի 03.12.2012 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը բողոք բերած անձի կողմից ստանալու փաստը հավաստող որևէ ապացույց (հանձնման (ստացման) ծանուցագիր և այլն):

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճարկվող որոշումը բողոք բերած անձի կողմից ստանալու փաստի վերաբերյալ ապացույցի բացակայության պայմաններում վերջինիս կողմից ներկայացված բաց թողած դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդության փաստարկն ընդունվելու դեպքում բողոք բերած անձը բաց չի թողել վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված դատավարական ժամկետը հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, շաբաթներով և օրերով: Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով, շաբաթներով կամ օրերով հաշվարկվող դատավարական ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, շաբաթվա, ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օրերով հաշվարկվող դատավարական ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը:

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Ամանոր և Ծննդյան տոներ՝ նշվում են դեկտեմբերի 31-ից հունվարի 2-ը ներառյալ (Ամանոր), հունվարի 3-ին, 4-ին և 5-ին (նախածննդյան տոներ) և հունվարի 6-ին (Մուրբ Ծնունդ և Հայտնություն), ոչ աշխատանքային օրեր:

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 1.1-րդ հոդվածի համաձայն՝ Մուրբ Ծննդյան և Հայտնության տոնի հաջորդող՝ Մեռելոց հիշատակի օր՝ նշվում է հունվարի 7-ին, ոչ աշխատանքային օր:

Նշված դրույթների վերլուծությունից հետևում է, որ դատավարական ժամկետները հաշվարկվում են նաև օրերով, որոնցով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը: Միաժամանակ, օրերով հաշվարկվող դատավարական ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը, իսկ նշված ժամկետը լրանում է այդ

ժամկետի վերջին օրը: Այսպես, դեկտեմբերի 31-ից մինչև հունվարի 7-ը ներառյալ ոչ աշխատանքային օրեր են (Ամանոր և Ծննդյան տոներ, Մեռելոց հիշատակի օր): Հետևաբար, ՀՀ վարչական դատարանի՝ միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված 15-օրյա ժամկետը սկսում է հոսել ակտն ստանալու հաջորդ օրվանից և այդ ժամանակահատվածում չեն ներառվում օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ բողոք բերած անձը, վերաքննիչ բողոքով պատճառաբանելով, որ վիճարկվող որոշումը փոստային եղանակով ստացել է 21.12.2012 թվականին, միջնորդել է վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված բաց թողնված դատավարական ժամկետը համարել հարգելի:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի 03.12.2012 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը բողոք բերած անձի կողմից ստանալու փաստը հավաստող ապացույցի բացակայության պայմաններում վերագրյալ միջնորդության փաստարկն ընդունվելու դեպքում վերջինս բաց չի թողել վերաքննիչ բողոքը բերելու համար սահմանված դատավարական ժամկետը, քանի որ այդ փաստարկի համաձայն՝ բողոք բերած անձը վիճարկվող որոշումը ստացել է 21.12.2012 թվականին, իսկ վերաքննիչ բողոքը փոստային ծառայության միջոցով ներկայացվել է 08.01.2013 թվականին, որպիսի ժամկետի մեջ չեն հաշվարկվում այդ ժամանակահատվածում ընդգրկվող ոչ աշխատանքային օրերը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, քանի որ առանց որևէ ապացույցի առկայության հաստատված է համարել բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված դատավարական ժամկետի խախտման փաստը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սովյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը վերադարձնելով, սահմանափակել է բողոք բերած անձի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.9-րդ, 118.15-րդ և 118.17-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.02.2013 թվականի «Բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԳ/1375/05/12
Նախագահող դատավոր՝ Հ. Բեդկյան

Վարչական գործ թիվ **ՎԳ/1375/05/12**
2013թ.

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի մայիսի 07-ին
քննարկելով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 06.04.2012 թվականի «Բողոքը
մերժելու մասին» որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ Գևորգ
Գյոզալյանի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Գևորգ Գյոզալյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ
ՀՀ արդարադատության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ)՝ իր 19.01.2012 թվականի դիմու-
մին պատճառաբանված պատասխանելուն Խորհրդին պարտավորեցնելու պահանջի մա-
սին:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 06.03.2012 թվականի որոշմամբ
հայցադիմումի ընդունումը մերժվել է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ
հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
06.04.2012 թվականի որոշմամբ Գևորգ Գյոզալյանի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դա-
տարանի 06.03.2012 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը
թողնվել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի 16.05.2012 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի
06.04.2012 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Գևորգ Գյոզալյանի բերած
վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գևորգ Գյոզալյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Սույն գործով առկա է նոր հանգամանք:

Բողոք բերած անձը նշված այնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Գևորգ Գյոզալյանը 08.08.2012 թվականին դիմում է ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը, 158-րդ հոդվածի 1-ին մասը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ:

ՀՀ սահմանադրական դատարանը վերոգրյալ գործով 18.12.2012 թվականին կայացրել է որոշում, որի եզրափակիչ մասի 2-րդ կետում նշվել է, որ ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ նույն որոշման մեջ ներկայացված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ Խորհրդի կարգապահական հանձնաժողովը պարտավոր է անձի դիմումը մերժելու դեպքում ողջամիտ ժամկետում իր պատասխանում հիմնավորել վարույթ չհարուցելու պատճառները, իսկ նույն մասի 3-րդ կետում նշվել է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիմքերով Գևորգ Գյոզալյանի գործով վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:

Գևորգ Գյոզալյանը սույն գործով վիճարկում էր Խորհրդի գործողությունները, քանի որ գտնում էր, որ իր դիմումին պատշաճ պատասխան չի տրվել այնպես, ինչպես դա է պահանջվում ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է նոր հանգամանքի հիմքով բեկանել Վերաքննիչ դատարանի 06.04.2012 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը և այն փոփոխել՝ վերացնել Դատարանի 06.03.2012 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է գործի վարույթը նոր հանգամանքի հիմքով վերանայելու հիմքի առկայության խնդրին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական կամ վերաքննիչ դատարանի՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վարչական դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քաղաքացիական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու համար անհրաժեշտ պայման է հանդիսանում դատարանի կողմից կիրառված հոդվածի կամ հոդվածի դրույթի հակասահմանադրական ճանաչումը կամ սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող՝ այլ մեկնաբանությամբ կիրառումը: Հետևաբար, եթե դատարանը չի կիրառել այն դրույթը, որը ՀՀ սահմանադրական դատարանը ճանաչել է հակասահմանադրական կամ կիրառված դրույթի վերաբերյալ դատարանի մեկնաբանությունները և այդ դրույթի կիրառումը դրա սահմանադրաիրավական բովանդակության համատեքստում է, ապա դատական ակտը ենթակա չէ վերանայման նոր հանգամանքի հիմքով:

Սույն գործով բերված վճռաբեկ բողոքով որպես նոր հանգամանք է վկայակոչվել ՀՀ սահմանադրական դատարանի 18.12.2012 թվականի թիվ ՍԴՈ-1063 որոշումը, որի եզրափակիչ մասով ՀՀ սահմանադրական դատարանը որոշել է, որ.

«1. ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ներկայացված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը պարտավոր է անձի դիմումը մերժելու դեպքում ողջամիտ ժամկետում իր պատասխանում հիմնավորել վարույթ չհարուցելու պատճառները:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիմքերով դիմող Գ. Գյոզալյանի գործով վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:

4. ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ի պատասխան Գևորգ Գյոզալյանի կողմից Խորհրդին հասցեագրված 19.01.2012 թվականի դիմումի՝ Խորհրդի աշխատակազմի ղեկավարի 03.02.2012 թվականի թիվ ԳԴ 5-Ե-423 գրությամբ վերջինս տեղեկացվել է, որ Խորհրդի կարգապահական հանձնաժողովը, ուսումնասիրելով իր կողմից ներկայացված դիմումը, գտել է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Է. Ավետիսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը բավարար չեն:

Գևորգ Գյոզալյանը, դիմելով ՀՀ վարչական դատարան, պահանջել է պարտավորեցնել Խորհրդին պատճառաբանված պատասխանել իր 19.01.2012 թվականի դիմումին:

Դատարանը 06.03.2012 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժել է՝ հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

Վերաքննիչ դատարանը 06.04.2012 թվականի որոշմամբ Գևորգ Գյոզալյանի վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի 06.03.2012 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողել է օրինական ուժի մեջ: Սույն որոշմամբ Վերաքննիչ դատարանը, ՀՀ դատական օրենսգրքի 97-րդ հոդվածի, 111-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի, 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 158-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության արդյունքում արձանագրել է, որ Խորհուրդը տվյալ դեպքում հանդես է եկել որպես դատարան, իսկ որպես դատարան հանդես գալիս Խորհուրդը վերջնական որոշում կայացնող մարմին է: Նշվածը հիմնավորվում է նաև այն պատճառաբանությամբ, որ Խորհրդի գործունեության ուղղվածությունը՝ որպես դատարան հանդես գալիս, այդ գործունեության

արդյունքում ընդունվող ակտերի շրջանակը և դրանցով առաջացող հետևանքների բնույթն էապես տարբերվում են վարչարարության արդյունքում ընդունվող ակտերի շրջանակից և դրանցով առաջացող հետևանքների բնույթից, ինչը նկատի ունենալով էլ՝ օրենսդիրը հստակորեն սահմանել է, որ Խորհրդի կողմից կայացված ակտերն այն դեպքում, երբ Խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան, ենթակա չեն բողոքարկման: Նշված իրավա-նորմերի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ Գևորգ Գյոզալյանի կողմից հայցվող պահանջը ենթակա չէ դատարանի քննությանը:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ հանրային իրավա-հարաբերությունները ձևավորվում, ծագում են վարչարարության իրականացման ընթաց-քում, հետևաբար վարչական դատարանին ընդդատյա են այն գործերը, որոնք արդյունք են վարչարարության իրականացման, մինչդեռ Խորհրդի գործողություններում վարչա-րարություն առկա չէ, հետևաբար անիմաստ է խոսել նշված վեճի՝ հանրային իրավա-հարաբերությունից ծագելու մասին: Խորհրդի՝ դատավորին կարգապահական պատասխա-նատվության ենթարկելու հարցերը քննարկելու հետ կապված գործունեությունը ենթակա չէ դատական վերահսկողության՝ վերը նշված պատճառաբանությամբ: Վերոշարադրյալի արդյունքում պարզ է դառնում, որ փաստաբան Գևորգ Գյոզալյանի կողմից ներկայացված հայցը ենթակա չէ վարչական դատարանի քննությանը:

Վճռաբեկ դատարանը 16.05.2012 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 06.04.2012 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Գևորգ Գյոզալյանի բերած վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

ՀՀ սահմանադրական դատարանը 18.12.2012 թվականին կայացրած թիվ ՄԳՌ-1063 որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով սահմանել է, որ ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ նույն որոշման մեջ ներկայացված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ Խորհրդի կարգապահական հանձնաժողովը պարտավոր է անձի դիմումը մերժելու դեպքում ողջամիտ ժամկետում իր պատասխանում հիմնավորել վարույթ չհարու-ցելու պատճառները:

Վճռաբեկ դատարանը, համադրելով վերը նշված վերլուծությունը և սույն գործի փաստերը, գտնում է, որ Վերաքննիչ դատարանը 06.04.2012 թվականի «Բողոքը մերժե-լու մասին» որոշմամբ ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը չի կիրառել ՀՀ սահմանադրական դատարանի 18.12.2012 թվականի թիվ ՄԳՌ-1063 որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով սահմանված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներից դուրս:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումը, վերաբերելով ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի սահմանադրաիրավական բովանդակությանը, չի ամրագրում դատական պրակտիկայում այդ դրույթի սխալ կամ հակասական մեկնաբանման վերաբերյալ դիրք-որոշում:

Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը 18.12.2012 թվականի թիվ ՄԳՌ-1063 որոշմամբ արձանագրել է, որ Գևորգ Գյոզալյանը նախ բարձրացնում է Խորհրդի կար-գապահական հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթ հարուցելը մերժելիս այդպիսի մերժումը պատճառաբանելու պարտականություն օրենսդրորեն չնախատեսե-լու խնդիր: Մինչդեռ, առաջ քաշված խնդիրն ուղղակիորեն չի վերաբերում ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի դրույթին, քանի որ վերջինս, և ընդհան-րապես նշված հոդվածի ողջ 5-րդ մասը, սահմանում է կարգապահական վարույթ հարու-ցելու առիթները, այլ ոչ թե այդ վարույթի հարուցումը մերժելու կարգը կամ հնարավորու-թյունը:

Վերոնշյալի լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը կիրառել է ոչ թե Խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից անձի ներկայացրած դիմումը մերժելու դեպքում ողջամիտ ժամկետում իր պատասխանում վարույթ չհարուցելու պատճառները հիմնավորելու պարտականության առկայության կամ բացակայության շրջանակներում, այլ նշված նորմի վկայակոչումը (կիրառումը) նպատակ է հետապնդել միայն բացահայտել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար կարգապահական վարույթ հարուցելու անհրաժեշտ առիթները, այն է՝ անձի դիմումը, իսկ այդպիսի մեկնաբանությամբ կիրառման դեպքում ՀՀ սահմանադրական դատարանի 18.12.2012 թվականի թիվ ՍԳՈ-1063 որոշման ուժով ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանը Խորհրդի որոշումների դատական կարգով բողոքարկման (դատարանների վերահսկողական լիազորության) արգելքը համարել է իրավաչափ: Վերաքննիչ դատարանը ևս եզրակացրել է, որ Խորհրդի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննարկելու հետ կապված գործունեությունը ենթակա չէ դատական վերահսկողության: Այսինքն՝ այդ հարցում ՀՀ սահմանադրական դատարանի և սույն գործով դատարանների դիրքորոշումները նույնն են:

Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը 18.12.2012 թվականի թիվ ՍԳՈ-1063 որոշմամբ արձանագրել է, որ այն դեպքում, երբ օրենսդիր և գործադիր իշխանությունները ներկայացված են որպես կառուցակարգային ինստիտուտներ, ապա դատական իշխանությունն առանձնացվել է իր գործառնական դերով: Այսուհանդերձ, սահմանադրորեն դատական իշխանության համակարգում Խորհուրդը դիտվում է որպես այդ համակարգի գործառնական արդյունավետությունն ապահովելու հարցում իր սահմանադրական հստակ գործառնությունն ունեցող ու անկախ գործող համակարգ:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ այս համակարգն ամբողջական է՝ իր գործառնությունների կատարումը ներհամակարգային կայունության ու արդյունավետության ապահովման տեսանկյունից երաշխավորելու հարցում: Այն դուրս չի գալիս դատավորի պաշտոնական պարտականությունների կատարումը, նրա ծառայողական պիտանելիությունը գնահատելու սահմանադրական գործառնության իրականացման շրջանակներից, ինչն այս նորմի բացառիկ իրավատությունն է: Այս հարցում դատարաններին վերահսկողական լիազորություն վերապահելը կիմաստագրվեր Խորհրդի գոյությունն ընդհանրապես՝ որպես դատական իշխանության համակարգում ինքնուրույն ու սահմանադրորեն բացառապես իրեն վերապահված իրավատություն իրականացնող անկախ մարմնի:

Ինչ վերաբերում է ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասի այն սահմանմանը, համաձայն որի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս Խորհուրդը գործում է որպես դատարան, ապա ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ «գործում է որպես դատարան» եզրույթի առնչությամբ նկատի պետք է ունենալ Խորհրդի գործունեության կարգը, այլ ոչ թե նրա՝ որպես արդարադատություն իրականացնող դատարանի գործառնական դերը:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենսդրական զարգացումները, ելնելով նաև սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից, կարող են առավել հստակ դարձնել «գործում է որպես դատարան» եզրույթը՝ նկատի ունենալով, որ որպես անկախ մարմին, որի գործառնությունները կանխորոշված են սահմանադրական մակարդակով, դատավորի պաշտոնական պարտականության կատարմանն առնչվող հարցերը քննության առնելիս նրա իսկ իրավունքների պաշտպանության երաշխիքներից ելնելով՝ Խորհուրդը գործում է հարցի քննարկման դատարանին բնո-

րոշ ընթացակարգով: Օրենսդիրը կարող է նաև քննության առարկա դարձնել այդ մարմնի գործունեության առանձին կանոնակարգման խնդիրը՝ ուշադրություն դարձնելով վերջինիս սահմանադրական գործառույթներին ներդաշնակ հարցերի քննարկման կանոնակարգային լուծումներին՝ նկատի ունենալով, որ Խորհրդի որոշումները դատական կարգով բողոքարկելի չեն: Էական է նաև կարգապահական հանձնաժողովի և Խորհրդի հայեցողական սահմանների օրենսդրական առավել հստակեցումը:

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ նշված երաշխիքների առկայության պայմաններում և Խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի վերաբերյալ վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված Խորհրդի որոշումների դատական կարգով բողոքարկման արգելքն իրավաչափ է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 18.12.2012 թվականի թիվ ՍԴՈ-1063 որոշումը չի կարող հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի 06.04.2012 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը վերանայելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ, 118.17-րդ և 134-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.30-րդ, 204.33-րդ և 204.38-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Գևորգ Գյոզալյանի՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 06.04.2012 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ բերած վճռաբեկ բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԳ/1178/05/13
Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ **ՎԳ/1178/05/13**
2013թ.

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի օգոստոսի 07-ին,
քննարկելով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.05.2013 թվականի «Վե-
րաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Մազդա Եղիազարյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մազդա Եղիազարյանը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 08-ի «Հայաստանի Հանրապետությունում գի-
տական աստիճանաշնորհման կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 327 որոշմամբ
հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կա-
նոնակարգ»-ի (այսուհետ՝ Կանոնակարգ) 31-րդ կետի դրույթները:

ՀՀ վարչական դատարանի (նախագահող դատավոր՝ Կ. Ավետիսյան, դատավոր-
ներ՝ Ա. Դարբինյան, Կ. Բաղդասարյան, Ռ. Խանդանյան, Ա. Հարությունյան) (այսուհետ՝
Դատարան) 28.02.2013 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
21.05.2013 թվականի որոշմամբ Մազդա Եղիազարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և
Դատարանի 28.02.2013 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մազդա Եղիազարյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմ-
նավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 5-րդ, 18-րդ, 19-րդ
հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանու-*

թյան մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասը, 72-րդ հոդվածի 3-րդ մասը, 78-րդ հոդվածի 1-ին մասը, 136-րդ հոդվածի 4-րդ մասը, 24-րդ գլուխը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը վկայակոչել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասը, ըստ որի՝ նորմատիվ իրավական ակտերը դատական կարգով վիճարկելու համար սահմանված է եռամսյա ժամկետ, ինչպես նաև նույն հոդվածի 1-ին մասը, որը սահմանում է մեկնարկային այն կետը, որից սկսած եռամսյա ժամկետում բերված հայցը պետք է ընդունվի դատարանի վարույթ: Օրենսդիրն այդ մեկնարկի համար բավարար հիմք է համարել անձի կողմից «համարելը», որ այդ նորմատիվ իրավական ակտերով խախտվել են իր իրավունքները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխում նորմատիվ իրավական ակտերը վիճարկելու հայցադիմումներին ներկայացվող հատուկ վավերապայմաններ առանձնացված չեն, այդ թվում՝ դիմողների (հայցվորների) վրա պարտականություն դրված չէ դատարանին ուղղված դիմումում (հայցում) հիմնավորում շարադրել, որ վերջինս «համարում» է, որ նորմատիվ իրավական ակտով խախտվել են իր իրավունքները: Օրենսդիրը, «համարում» եզրույթը գործածելով հայցի ընդունելության համար, բավարար հիմք է սահմանել անձի սուբյեկտիվ ընկալումն իր իրավունքները խախտված լինելու համար՝ դրանով դիմումի ընդունելության համար սահմանելով ցածր շեմ:

Դատարանը և Վերաքննիչ դատարանը խնդրո առարկա դրույթից դուրս են թողել անձի սուբյեկտիվ ընկալումն արտահայտող «համարում է» եզրույթը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ նորմատիվ իրավական ակտի նորմատիվ դրույթներն անձանց իրավունքներին միջամտում են միջնորդավորված՝ վարչական ակտերի միջոցով, և քանի դեռ չկա վարչական ակտ կամ այդպիսի վարչական ակտ ընդունվելու (տեղի ունենալու) նախադրյալ, ապա նորմատիվ դրույթներն անձանց իրավունքներին չեն միջամտում: Ուստի, այդ դրույթների իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու գործերով անձը չունի իրավական շահագրգռվածություն: Մինևույն ժամանակ, քանի դեռ չի վերացվել անվավեր (առ ոչինչ) ճանաչված նորմի հիման վրա ընդունված անհատական իրավական ակտը, այն շարունակում է միջամտել անձի իրավունքներին: Այս սկզբունքն ամրագրված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորմամբ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասով նորմատիվ իրավական ակտերի դատական կարգով վիճարկելու համար սահմանված եռամսյա ժամկետի սկզբի հաշվարկը պետք է կատարվի հետևյալ կերպ՝ այն դեպքերում, երբ անձը հիմքեր ունի սպասելու, որ ընդունվելու է վարչական ակտ, և համարում է, որ նորմերը, ի կատարումն որոնց պետք է ընդունվի սպասվող վարչական ակտը, հակասում են ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, ապա այդպիսի հիմքեր ծագելու պահից նա ձեռք է բերում գործի առնչությամբ իրավական շահագրգռվածություն ունեցող անձի կարգավիճակ: Իսկ այն դեպքերում, երբ վարչական ակտի (որոշում, գործողություն, անգործություն) իրավաչափությունը դատական ստուգման առարկա է դարձել, և դատարանը վարչական ակտը գնահատել է ենթաօրենսդրական և/կամ գերատեսչական նորմատիվ իրավական ակտերին համապատասխանող, ապա անձը վերջիններիս իրավաչափությունը վիճարկելու՝ գործի առնչությամբ իրավական շահագրգռվածություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք է բերում վարչական ակտն իրավաչափ ճանաչած դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/2450/05/11 վարչական գործով 20.12.2011 թվականին կայացրած վճռով մերժվել է դրա հիմքում ընկած Մագդա Եղիազարյանի հայցը և իրավաչափ է ճանաչվել ԲՈՀ-ի կողմից այդ գործով իրականացված ողջ վարչարարությունը, այդ թվում՝ ԲՈՀ-ի կողմից Մագդա Եղիազարյանի ատենախոսությունն իր ընտրությամբ փորձաքննության հանձնելը: Նշված վճիռը և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի նույն գործով կայացված 20.09.2012 թվականի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներն օրինական ուժի մեջ են մտել Վճռաբեկ դատարանի 21.11.2012 թվականի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ 11.12.2012 թվականից, և հայցը Դատարան է ներկայացվել նշված որոշումը փոստով՝ 11.12.2012 թվականին ստանալուց հետո եռամսյա ժամկետի պահպանմամբ՝ 20.02.2013 թվականին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանի՝ դատավարական նորմերին տված մեկնաբանությունից բխում է, որ Մագդա Եղիազարյանը 2010 թվականի հոկտեմբեր ամսից եռամսյա ժամկետում կարող էր հայց ներկայացնել ՀՀ վարչական դատարան՝ ԲՈՀ-ի լիազորություններն ամրագրող հնարավոր բոլոր նորմատիվ իրավական ակտերն անվավեր ճանաչելու պահանջով, և դրանցից մեկի անվավեր ճանաչվելու դեպքում հայց ներկայացնել Դատարան՝ այն վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջով, որն ընդունվել էր անվավեր ճանաչված նորմի կիրառմամբ՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջով հայցը վարույթ ընդունելու անհրաժեշտ վավերապայմանների հաղթահարմամբ: Նշվածը հակասում է արդար դատաքննության, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքների էությունը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն փաստը, որ վարչական մարմին հանդիսացող ԲՈՀ-ը ոչ վարչական ակտում, ոչ էլ Մագդա Եղիազարյանի կամ մասնագիտական խորհրդի հետ վարած իր թղթակցության մեջ չի վկայակոչել որևէ նորմատիվ իրավական ակտ կամ հոդված:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 21.05.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» և Դատարանի 28.02.2013 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումները:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Սույն վճռաբեկ բողոքի քննությունը Վճռաբեկ դատարանը պայմանավորում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմի միատեսակ կիրառությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Մասնավորապես՝ այդ նպատակով Վճռաբեկ դատարանը կարևորում է դրանում նշված՝ վարչական դատարան դիմելու եռամսյա ժամկետը հաշվարկելու համար ելակետային պահը որոշելու խնդրի լուծումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի 135-րդ հոդվածում նշված նորմատիվ ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հայցադիմում կարող է ներկայացվել ՀՀ վարչական դատարան այդ ակտերով դիմողի իրավունքի խախտումից հետո եռամսյա ժամկետում: Այսինքն՝ օրենսդիրը եռամսյա ժամկետի հոսքի համար ելակետային պահ է դիտում վիճարկվող նորմատիվ ակտով շահագրգիռ անձի իրավունքի խախտման պահը: Հետևաբար, վերոհիշյալ իրավական խնդրի լուծման նպատակով կարևորվում է վիճարկվող նորմատիվ ակտով իրավունքի խախտման պահի որոշումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարան դիմելու իրավունք ունի յուրաքանչյուր ֆիզիկական

կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ այդ նորմատիվ իրավական ակտերով խախտվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլխում, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներում ամրագրված իր իրավունքները:

Նշված նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը չի նախատեսում նորմատիվ ակտի իրավաչափությունը «in abstracto» վիճարկելու հնարավորություն: Այսինքն՝ իրավունքը խախտող նորմատիվ ակտի գործողության փաստն ինքնին դեռևս բավարար չէ նորմատիվ ակտի իրավաչափությունը վիճարկելու համար: Անհրաժեշտ է, որ այդ նորմատիվ ակտը կիրառված լինի տվյալ անձի նկատմամբ՝ ի վնաս իրեն: Սրանից բխում է, որ անձի իրավական շահը տվյալ նորմատիվ ակտի իրավաչափությունը վիճարկելու հարցում ծագում է, տվյալ անձն օժտվում է նորմատիվ ակտի իրավաչափությունը վիճարկելու իրավասությամբ այդ ակտի՝ իր նկատմամբ կիրառվելու ուժով: Այլ կերպ՝ անձն իրավասու է վիճարկելու իր իրավունքը ենթադրաբար խախտող նորմատիվ ակտի իրավաչափությունն այն դեպքում, երբ այդ նորմատիվ ակտի հիման վրա վարչական մարմինն իր վերաբերյալ ընդունել է վարչական ակտ, իր նկատմամբ կատարել է գործողություն, դրսևորել անգործություն, և ինքը համարում է, որ իր իրավունքի խախտման փաստը պայմանավորված է դրա հիմքում ընկած նորմատիվ ակտի ոչ իրավաչափությամբ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածում նշված՝ իրավունքի խախտման պահը որոշվում է ըստ այդ նորմատիվ ակտի՝ անձի նկատմամբ կիրառման պահի, այն է՝ այդ նորմատիվ ակտի հիման վրա վարչական ակտի ընդունման, գործողության (անգործության) կատարման պահի:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե անձը որ պահից սկսած կարող է իրացնել իր նկատմամբ կիրառված նորմատիվ ակտի իրավաչափությունը վիճարկելու իր իրավունքը, ապա այս առնչությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել օրենսդրի այն տրամաբանությունը, որն ընկած է վարչական ակտի դատական կարգով բողոքարկման կարգի հիմքում:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Չնայած նրան, որ օրենսդիրը վարչական մարմնին պարտավորեցնում է նշված ժամկետում վարչական ակտը հանձնել վարույթի մասնակիցներին, այնուամենայնիվ, նկատի ունենալով գործնականում նշված պահանջը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հնարավորությունը՝ օրենսդիրը վարչական ակտը վիճարկելու օրենքով սահմանված ժամկետի հոսքը պայմանավորել է ոչ թե վարչական ակտի ընդունման, այլ այդ ակտը վարույթի մասնակիցներին հանձնելու, իրազեկելու հանգամանքով: Մասնավորապես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը դատարան կարող է ներկայացվել՝ վիճարկման հայցի դեպքում երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույ-

թի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Օրենսդրի նշված տրամաբանությունը բխում է անձի իրավունքների իրավական պաշտպանության (դատական և վարչական կարգով) արդյունավետությունը երաշխավորելու անհրաժեշտությունից: Մասնավորապես՝ անձի իրավունքների արդյունավետ իրավական պաշտպանությունն ապահովելու համար անհրաժեշտ է նրա համար փաստացիորեն երաշխավորել իրավական պաշտպանության դիմելու համար օրենքով սահմանված ողջ ժամկետից օգտվելու իրական հնարավորություն: Նշված իրավակարգավորումը լուծում է այդ խնդիրը:

Վճռաբեկ դատարանը, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու անհրաժեշտությամբ և օրենսդրի վերոհիշյալ տրամաբանությամբ, գտնում է, որ նորմատիվ ակտերի վիճարկման պարագայում ևս անձի՝ դատարան դիմելու համար սահմանված ժամկետի հոսքը պետք է սկսվի այն պահից, երբ ինքը տեղեկացել է իր նկատմամբ տվյալ նորմատիվ ակտի կիրառման մասին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված եռամսյա ժամկետի հաշվարկման համար որպես ելակետ պետք է հիմք ընդունվի այն պահը, երբ շահագրգիռ անձը տեղեկացել է վիճարկվող նորմատիվ ակտի՝ իր նկատմամբ կիրառվելու մասին:

Դատարանն իր՝ հայցադիմումը վերադարձնելու մասին 28.02.2013 թվականի որոշմամբ եռամսյա ժամկետի հոսքն սկսված է համարել 2010 թվականի հոկտեմբեր ամսից: Այս առնչությամբ որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «Սույն հայցադիմումում վկայակցված փաստարկների հիման վրա պետք է եզրահանգել, որ Մագդա Եղիազարյանը ողջամտորեն իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին տեղյակ է եղել առնվազն 2010 թվականի հոկտեմբեր ամսից, քանի որ «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշտրհման կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 1997 թվականի օգոստոսի 08-ի թիվ 327 որոշմամբ հաստատված Կանոնակարգի 31-րդ կետով սահմանված հայեցակարգերի հաշվառմամբ ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովը (ԲՈՀ) մասնագիտական խորհրդին հասցեագրված 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 413-02 գրությամբ հայտնել է, որ չի կարող հաստատել մասնագիտական խորհրդի որոշումը ...»:

Վերաքննիչ դատարանը, իրավաչափ համարելով Դատարանի մոտեցումը, խնդրի առնչությամբ, մասնավորապես, իր 21.05.2013 թվականի որոշման մեջ նշել է հետևյալը. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովը դեռևս 14.10.2010թ. թիվ 413-02 գրությամբ՝ ուղղված թիվ 027 մասնագիտական խորհրդին, հայտնել է, որ ԲՈՀ-ը չի կարող հաստատել 027 մասնագիտական խորհրդի որոշումը ..., այսինքն՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառման արդյունքում տվյալ դեպքում անձի իրավունքների համար հետևանքները վրա են հասել առնվազն 2010 թվականի հոկտեմբեր ամսին ...»:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները, գտնում է, որ և՛ Դատարանը, և՛ Վերաքննիչ դատարանը սխալ են գնահատել և որոշել այն ելակետային պահը, որից սկսվում է եռամսյա ժամկետի հոսքը: Վերջիններս գտել են, որ հայցվորն իր իրավունքների ենթադրյալ խախտման մասին տեղյակ է դարձել ԲՈՀ-ի 14.10.2010 թվականի թիվ 413-02 գրությունից՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ դրանում մատնանշված չէ գրության համար հիմք հանդիսացած վիճարկվող որոշումը: Նշված գրությունից պարզ չէ, որ ԲՈՀ-ի կողմից խորհրդի որոշումը չհաստատելու համար հիմք հանդիսացած փորձագիտական եզրակացությունը տրվել է ի կատարումն ՀՀ Կառավարության:

րության վիճարկվող որոշման պահանջների: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ գրությամբ հայցվորը չէր կարող տեղեկացված լինել իր նկատմամբ ՀՀ Կառավարության 1997 թվականի օգոստոսի 08-ի թիվ 327 որոշման կիրառման մասին:

Այդուհանդերձ, գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ ՀՀ Կառավարության 1997 թվականի օգոստոսի 08-ի թիվ 327 որոշման՝ իր նկատմամբ կիրառման մասին հայցվորը տեղյակ է եղել դեռևս ՀՀ վարչական դատարանում թիվ ՎԴ/2450/05/11 վարչական գործի քննության ընթացքում: Այդ մասին են վկայում նշված գործով հայցադիմումի, ՀՀ վարչական դատարանի 20.12.2011 թվականի վճռի, հայցվորի վերաքննիչ բողոքի, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.09.2012 թվականի որոշման բովանդակությունը: ՀՀ վարչական դատարանն իր 20.12.2011 թվականի վճռով, ի թիվս այլնի, կիրառել է ՀՀ Կառավարության 1997 թվականի օգոստոսի 08-ի թիվ 327 որոշմամբ հաստատված կանոնակարգի 31-րդ կետը (գ. թ. 55): Ավելին, վերաքննիչ բողոքում հայցվորը փաստարկել է նաև, որ Դատարանը ՀՀ Կառավարության 1997 թվականի օգոստոսի 08-ի թիվ 327 որոշմամբ հաստատված կանոնակարգը կիրառելուց առաջ պարտավոր էր գնահատել դրա՝ օրենքին համապատասխանությունը: Նշված փաստարկումը ևս վկայում է, որ հայցվորը դեռևս վերաքննիչ բողոք ներկայացնելիս ոչ միայն իրազեկված է եղել իր նկատմամբ ՀՀ Կառավարության վիճարկվող որոշման, այդ թվում նաև՝ վիճարկվող 31-րդ կետի կիրառման մասին, այլ նաև նրա մոտ համոզմունք է ձևավորված եղել նշված ենթաօրենսդրական ակտի ենթադրյալ ոչ իրավաչափության վերաբերյալ:

Հինք ընդունելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները և հաշվի առնելով, որ դեռևս ՀՀ վարչական դատարանում թիվ ՎԴ/2450/05/11 վարչական գործի քննության ընթացքում հայցվորն իրազեկված էր իր նկատմամբ վիճարկվող որոշման կիրառման փաստի մասին, ՀՀ վարչական դատարանի 20.12.2011 թվականի վճռով իր նկատմամբ կիրառվել է այդ որոշման վիճարկվող դրույթը, ինչպես նաև նկատի ունենալով, որ նշված վճռի դեմ ուղղված իր վերաքննիչ բողոքում հայցվորը բարձրացրել է վիճարկվող որոշման իրավաչափության խնդիրը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ որպես իր նկատմամբ այդ որոշման կիրառման մասին տեղեկացված լինելու և հետևաբար եռամսյա ժամկետի հաշվարկման համար ելակետային պահ պետք է դիտարկել ՀՀ վարչական դատարանի 20.12.2011 թվականի վճիռն հայցվորի կողմից ստանալու պահը: Այդ պահից սկսած հայցվորը կարող էր իրացնել իր իրավական պաշտպանության իրավունքն ընդդեմ վիճարկվող որոշման՝ դրա իրավաչափությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխի կանոններին համապատասխան վիճարկելու միջոցով: Մինչդեռ, հայցվորը, չօգտվելով իր իրավական պաշտպանության նշված միջոցից, բավարարվել է վերաքննիչ բողոքում փաստարկելով, որ Դատարանը պարտավոր էր վիճարկվող ենթաօրենսդրական ակտը կիրառելուց առաջ գնահատել դրա իրավաչափությունը: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը պաշտպանության նման միջոցը պատշաճ պաշտպանության միջոց չի համարում, քանզի նախ՝ դատարանը կաշկանդված է հայցի հիմքով և առարկայով, երկրորդ՝ նորմատիվ ակտերի իրավաչափությունը կարող է վիճարկվել միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխի կանոններին համապատասխան ներկայացված հայցադիմումի հիման վրա և դրանց իրավաչափությունը կարող է գնահատվել միայն 5 դատավորի կազմով դատարանի կողմից: Այլապես, միանձնյա դատավորի կողմից ենթաօրենսդրական ակտի իրավաչափության վերաբերյալ գնահատականը կհամարվի «ոչ օրինական դատարանի» կողմից տրված գնահատական:

Փաստորեն, հայցվորը ՀՀ վարչական դատարանի վճիռն ստանալուց հետո արդեն իսկ փորձել է իրացնել իր իրավունքների պաշտպանությունն ընդդեմ ենթադրյալ ոչ իրավաչափ նորմատիվ ակտի՝ այդ վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու շրջանակներում, ինչը նշանակում է, որ հայցվորն ինքն ի սկզբանե գտել է, որ իր իրավունքների՝ նորմատիվ ակ-

տով ենթադրյալ խախտման, իր նկատմամբ այդ ակտի կիրառման մասին պատշաճ կերպով տեղեկացել է ՀՀ վարչական դատարանի վճիռն ստանալու պահից և այդ պահից էլ համարել է, որ ՀՀ Կառավարության որոշումը խախտում է իր իրավունքները:

Վճռաբեկ դատարանը, այսպիսով, արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարանի վճիռն ստանալուց հետո հայցվորն իր տրամադրության տակ ունեցել է երեք ամիս ժամանակ ՀՀ Կառավարության որոշման իրավաչափությունը վիճարկելու համար, սակայն չի իրացրել այդ պաշտպանության միջոցից օգտվելու իր հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի 20.12.2011 թվականի վճիռն ստանալու պահը որպես եռամսյա ժամկետը հաշվարկելու հիմք դիտարկելու պարագայում էլ, այնուամենայնիվ, հայցվորը բաց է թողել նորմատիվ ակտի իրավաչափությունը վիճարկելու համար սահմանված եռամսյա ժամկետը, ինչը բաց թողնված ժամկետը վերականգնված համարելու վերաբերյալ միջնորդության բացակայության պարագայում հայցադիմումը վերադարձնելու հիմք է:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.9-րդ, 118.15-րդ և 118.17-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.05.2013 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/2431/03/12
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/2431/03/12
2013թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի փետրվարի 22-ին,
քննարկելով «Ձորագյուղ» ԱԿ-ի (այսուհետ՝ Կոոպերատիվ) տնօրեն Աշոտ Սուքիա-
յանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.06.2012 թվականի
որոշման դեմ ըստ հայցի Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան)
ընդդեմ Կոոպերատիվի տնօրեն Աշոտ Սուքիայանի՝ Կոոպերատիվի տնօրեն Աշոտ Սու-
քիայանի կողմից 772.800 ՀՀ դրամ վճարելու վճարման կարգադրություն արձակելու
պահանջի մասին, և հակընդդեմ հայցի՝ Քաղաքապետարանի 23.11.2011 թվականի թիվ
Վ-38/15 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Քաղաքապետարանը պահանջել է արձակել վճարման կարգա-
դրություն՝ Կոոպերատիվի տնօրեն Աշոտ Սուքիայանի կողմից 772.800 ՀՀ դրամ վճարել-
ու վերաբերյալ:

ՀՀ վարչական դատարանը 15.02.2012 թվականին արձակել է վճարման կարգադրու-
թյուն:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան)
18.05.2012 թվականի որոշմամբ Կոոպերատիվի տնօրեն Աշոտ Սուքիայանի հակընդդեմ
հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 13.06.2012 թվականի որոշմամբ Դատարանի
18.05.2012 թվականի «Հակընդդեմ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման
դեմ Կոոպերատիվի տնօրեն Աշոտ Սուքիայանի վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ,
իսկ 15.02.2012 թվականի վճարման կարգադրության դեմ բերված բողոքը վերադարձվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.06.2012 թվականի որոշմամբ Կոոպերատիվի տնօրեն Աշոտ Սուքիասյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 18.05.2012 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոոպերատիվի տնօրեն Աշոտ Սուքիասյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել Աշոտ Սուքիասյանի պատշաճ ծանուցման հարցին և հաշվի չի առել, որ Աշոտ Սուքիասյանը վճարման կարգադրության վերաբերյալ պատշաճ ծանուցում չի ստացել:

Ավելին, Աշոտ Սուքիասյանը չի ծանուցվել ՀՀ Դատարանների նախագահների խորհրդի 21.02.2006 թվականի թիվ 91 որոշմամբ հաստատված «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի և դրա փաստաթղթավորման օրինակելի կարգ»-ի 8-րդ կետի պահանջների պահպանմամբ:

2. Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի, 72-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վճարման կարգադրություն արձակելու դիմում ներկայացնելիս դատարանը պարտավոր է անվերապահորեն ստուգել՝ արդյոք վճարման կարգադրություն արձակելու հիմք հանդիսացող վարչական ակտը բողոքարկվում է, թե ոչ:

Ման պարագայում դատարանը վճարման կարգադրություն արձակելու դիմումը ստանալուն պես պարտավոր էր տեսնել, որ վճարման կարգադրությունը չի պարունակում տեղեկություններ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վերադատության կարգով բողոքարկելու վերաբերյալ, հատկապես այն դեպքում, երբ Կոոպերատիվի կողմից 25.01.2012 թվականին ներկայացված հայցադիմումը՝ Երևանի քաղաքապետի 23.11.2011 թվականի թիվ Վ-38/15 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, 26.01.2012 թվականի թիվ ՎԴ/0348/05/12 նույն դատարանի (դատավոր Ա. Դարբինյան) որոշմամբ ընդունվել է վարույթ: Իսկ այդ դեպքում Դատարանը պարտավոր էր գործերի վարույթը միացնել մեկ վարույթում, իսկ ներկայացված հայցադիմումն էլ դիտարկեր որպես հակընդդեմ հայց:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություն-

ներ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ ծանուցագրով դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին տեղեկացվում են դատավարության մասնակիցները: Նույն օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծանուցագրի հանձնումն իրականացվում է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

«Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հատուկ առաքում է համարվում փոստով կամ առձեռն հանձնմամբ հատուկ առաքումը, ընդ որում հատուկ առաքումը փոստով տեղի է ունենում միայն փոստային ազգային օպերատորի միջոցով: Իսկ նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առձեռն հանձնմամբ հատուկ առաքումը համարվում է կատարված, եթե ուղարկողի մոտ առկա են առաքման փայտեղ լիցենզիայի փաստաթղթերի պատճենները, որոնց յուրաքանչյուր էջը պարունակում է առաքման փայտեղի ընդունող անձի նշումը փայտեղի ստացման փաստի և ամսաթվի վերաբերյալ և նրա ստորագրությունը, իսկ առաջին էջը՝ սան առաքման փայտեղի ընդունող անձի անունը և ազգանունը:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ծանուցումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հանձնվում է առձեռն (այսուհետ՝ պատշաճ ձևով): Սա ենթադրում է վարչական դատավարության մասնակիցների՝ դատական նիստի կամ դատավարական գործողությունների մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն վերը նշված նորմերով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել վարչական դատավարության մասնակցին դատական նիստի կամ դատավարական գործողության մասին տեղեկացնելու փաստը:

Սույն գործով Դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով 20.02.2012 թվականի գրությամբ Կոռուպցիայի տնօրեն Աշոտ Սուքիասյանին է ուղարկել 15.02.2012 թվականի թիվ ՎԴ/2431/03/12 վճարման կարգադրությունը, Քաղաքապետարանի հայցադիմումը՝ կից փաստաթղթերով: Գործում առկա փոստային ծանուցագրից երևում է, որ վերը նշված վճարման կարգադրությունը և Քաղաքապետարանի հայցադիմումն Աշոտ Սուքիասյանը ստացել է 28.04.2012 թվականին, իսկ հակընդդեմ հայցը ներկայացրել է 16.05.2012 թվականին, այսինքն՝ օրենքով սահմանված երկշաբաթյա ժամկետի խախտմամբ: Ուստի, Դատարանը, մերժելով հակընդդեմ հայցադիմումի ընդունումը, թույլ չի տվել օրենքի խախտում:

2) Վճարել բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճարել դատարանը բողոքում բարձրացված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է համարում անդրադառնալ վճարման կարգադրության՝ որպես վարչական դատավարական ձևի օրենսդրական կարգավորման նպատակներին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի համաձայն՝ վճարման կարգադրություն արձակելու հայցադիմումը մերժվում է այն մասով, որով այն չի համապատասխանում սույն օրենսգրքի դրույթներին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը վճարման կարգադրության վարույթից անցում է կատարում հայցային վարույթի, եթե պատասխանողը հակընդդեմ հայց է ներկայացրել: Այս դեպքում վճարման կարգադրությունը վերանում է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն դեպքում, երբ պատասխանողի կողմից վճարման կարգադրության ստացման մասին հետադարձ ծանուցումն ստանալու օրվանից կամ նույն օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգով պատշաճ ծանուցումից հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դատարանը հակընդդեմ հայց չի ստանում, ապա վճարման կարգադրությունն ստանում է օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ և ենթակա է հարկադիր կատարման:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում, անդրադառնալով վճարման կարգադրությանը, նշել է, որ վճարման կարգադրություն արձակելու վարույթը, գտնվելով ընդհանուր դատավարական ձևի շրջանակներից դուրս, միաժամանակ դատավարական ինքնուրույն, հատուկ և պարզեցված տեսակ է, որը հարուցվում է հայցադիմումի հիման վրա: Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի ընթացակարգում միայն հակընդդեմ հայցն է, որ արգելակում է վճարման կարգադրության օրինական ուժ ստանալը և հարկադիր կատարումը, այն է՝ պատասխանողը վարչական ակտի վիճարկման իր իրավունքը կարող է իրականացնել հակընդդեմ հայց ներկայացնելու եղանակով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճարման կարգադրության դատավարական ձևի կիրառման հիմնական հատկանիշը վարչական ակտի և դրա հիման վրա բռնագանձվող գումարի անվիճարկելիությունն է:

Հետևաբար այն դեպքերում, երբ վճարման կարգադրության վարույթի ժամանակ արդեն իսկ բացակայում է վարչական ակտի և դրա հիման վրա բռնագանձվող գումարի անվիճարկելիության հատկանիշը, վճարման կարգադրության վարույթի ձևով գումարի բռնագանձման հարցը քննվել չի կարող, իսկ վճարման կարգադրություն արձակելու հայցադիմումը պետք է մերժվի կամ արձակված վճարման կարգադրությունը պետք է վերացվի:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճարման կարգադրություն արձակելու դեպքում դատարանը պետք է հաշվի առնի անձի՝ վարչական դատարան դիմելու իրավունքի և ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի պահանջները:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վարչական դատավարության շրջանակներում անձի իրավունքների պաշտպանությունն իրականացվում է ոչ միայն վճարման կարգադրության վարույթի շրջանակներում հակընդդեմ հայց ներկայացնելով, այլև անձի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 65-րդ հոդվածների հիման վրա վարչական ակտը վիճարկելով:

Հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 65-րդ հոդվածների հիման վրա վարչական ակտի վիճարկման պարագայում վճարման կարգադրության վարույթի կիրառումը չի բխի անձի՝ դատական կարգով իր իրավունքների պաշտպանության սահմանադրական իրավունքից, իսկ վճարման կարգադրության շրջանակներում առկա չի լինի վարչական ակտի և դրա հիման վրա բռնագանձվող գումարի անվիճարկելիության հատկանիշը:

Միաժամանակ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարան դիմելու արդյունավետ իրավունքի երաշխավորումը չի նշանակում ընդամենը միջամտության բացակայություն, այլ կարող է պահանջել, որ պետությունը ձեռնարկի որոշակի դրական քայլեր այդ ուղղությամբ (*Կրե՛ս, Էյրին ընդդեմ Իռլանդիայի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 09.10.1979 թվականի վճիռը, կետեր 25-26*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի՝ դատարան դիմելու իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, և դատարանը հայցադիմումի ընդունումը մերժելու հարցը քննարկելիս պետք է հաշվի առնի, որ հայցադիմումի ընդունումը մերժելու լիազորությունը սերտորեն կապված է անձի դատական պաշտպանության, ինչպես նաև խախտված սուբյեկտիվ իրավունքները վերականգնելու իրավունքների հետ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ իրավունքի գերակայության սկզբունքը պահանջում է, որ իրավունքները գործնականում իրականանալի լինեն և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը միշտ կիրառվի այնպես, որ ապահովվի այդ խնդրի կատարումը:

Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ գործող իրավակարգավորման պայմաններում վճարման կարգադրությունը վերանում է, երբ

անձը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ և 159-րդ հոդվածներով սահմանված կազմով հակընդդեմ հայց է ներկայացրել,

անձը մինչև վճարման կարգադրություն արձակելը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 65-րդ հոդվածների հիման վրա վիճարկում է վճարման կարգադրության հիմքում դրված վարչական ակտը:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածից, որի համաձայն՝ վարչական դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն: Հակառակ պարագայում անձը կարող է առանձին վիճարկել վճարման կարգադրություն արձակելու հայցադիմումի հիմքում դրված վարչական ակտը, սակայն վճարման կարգադրության վարույթի պայմաններում հնարավորություն չի ունենա ներկայացնել իր դիրքորոշումն այն պարագայում, երբ վճարման կարգադրությունն

արդեն արձակվել է: Նման իրավիճակը չի բխում արդարադատության արդյունավետությունից և հանգեցնում է անձի արդար դատաքննության իրավունքի խախտման:

Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը

Սույն գործով Երևանի քաղաքապետն իր 23.11.2011 թվականի թիվ Վ-38/15 որոշման հիման վրա դիմել է ՀՀ վարչական դատարան՝ Կոոպերատիվի տնօրեն Աշոտ Սուքիասյանից 772.800 ՀՀ դրամ բռնագանձելու համար և պահանջել է արձակել վճարման կարգադրություն: Երևանի քաղաքապետարանի հայցադիմումը վճարման կարգադրություն արձակելու մասին Դատարան մուտք է եղել 26.01.2012 թվականին, որն էլ բավարարվել է, և ՀՀ վարչական դատարանը 15.02.2012 թվականին արձակել է «Վճարման կարգադրություն» (գ.թ. 19), վճարման կարգադրության հետադարձ ծանուցման համաձայն, Կոոպերատիվի տնօրեն Աշոտ Սուքիասյանն այն ստացել է 28.04.2012 թվականին (գ.թ. 21): Կոոպերատիվի տնօրեն Աշոտ Սուքիասյանը հակընդդեմ հայցադիմում է ներկայացրել 16.05.2012 թվականին:

Միաժամանակ Կոոպերատիվը դեռևս 25.01.2012 թվականին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևան համայնքի՝ Երևանի քաղաքապետի 23.11.2011 թվականի թիվ Վ-38/15 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը և ՀՀ վարչական դատարանի 26.01.2012 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ (գործ թիվ ՎԴ/0348/05/12, դատավոր՝ Ա. Դարբինյան) (գ.թ.43):

Դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա մերժելով հակընդդեմ հայցադիմումի ընդունումը, պատճառաբանել է, որ ինչպես երևում է Կոտպերատիվի տնօրեն Աշոտ Սուքիասյանի կողմից վճարման կարգադրության հետադարձ ծանուցումից, վերջինս այն ստացել է 28.04.2012 թվականին: Սակայն, քանի որ Կոտպերատիվի տնօրեն Աշոտ Սուքիասյանը հակընդդեմ հայցադիմումը ներկայացրել է 16.05.2012 թվականին՝ օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, հետևաբար հակընդդեմ հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման: Բացի այդ, Դատարանն արձանագրել է, որ 14.05.2012 թվականի աշխատանքային օրը վճարման կարգադրությունն ստացել է գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ:

Վերաքննիչ դատարանը 13.06.2012 թվականի որոշմամբ պատճառաբանել է, որ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանը վճարման կարգադրության վարույթից անցում է կատարում հայցային վարույթի, եթե պատասխանողը հակընդդեմ հայց է ներկայացրել: Այս դեպքում վճարման կարգադրությունը վերանում է: Տվյալ դեպքում բողոքաբերի կողմից բողոքարկվում է այնպիսի դատական ակտ, որի գոյությունն ուղղակիորեն պայմանավորված է միջանկյալ դատական ակտի վերաքննության կարգով վերանայման արդյունքից: Այսինքն, հակընդդեմ հայցը հանդիսանալով վճարման կարգադրության օրինական ուժի մեջ մտնելը արգելակող հանգամանք, դրա ընդունմամբ կատարվի նախ վճարման կարգադրությունն օրինական ուժի մեջ չի մտել, հետևաբար գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ չունի և դրա դեմ վերաքննիչ բողոք բերվել չի կարող, երկրորդ՝ հակընդդեմ հայցի ընդունմամբ օրենքի ուժով վճարման կարգադրությունը վերանում է և հետևաբար գոյություն չունեցող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերվել նույնպես չի կարող: Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն մասով բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման»:

Վերաքննիչ դատարանը, 29.06.2012 թվականի որոշմամբ մերժելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ սույն գործով Դատարանի 15.02.2012 թվականի վճարման կարգադրությունը Աշոտ Սուքիասյանն ստացել է 28.04.2012 թվականին, իսկ հակընդդեմ հայցը վերջինս ներկայացրել է 16.05.2012 թվականին: Նշվածի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանի որոշման պատճառաբանությունները հիմնավոր են, քանի որ սույն գործի փաստերով հաստատվում է այն հանգամանքը, որ Կոտպերատիվի տնօրեն Աշոտ Սուքիասյանը Դատարանի կողմից արձակված վճարման կարգադրությունը ստանալուց հետո հակընդդեմ հայցադիմումը ներկայացրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված երկշաբաթյա ժամկետի ավարտից հետո, այսինքն՝ վերջինս բաց է թողել հակընդդեմ հայց ներկայացնելու ժամկետը, ինչի հետևանքով էլ նշված վճարման կարգադրությունն ստացել է օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ:

Վերոնշյալից հետևում է, որ Վերաքննիչ դատարանի 13.06.2012 թվականի և 29.06.2012 թվականի որոշումներում Վերաքննիչ դատարանը հակասական եզրահանգումներ է կատարել կապված՝ վճարման կարգադրության օրինական ուժի մեջ լինելու հանգամանքի հետ: Վերաքննիչ դատարանը 13.06.2012 թվականի որոշմամբ արձանագրել է, որ վճարման կարգադրությունը ուժի մեջ չի մտել, քանի որ առկա է հակընդդեմ հայցադիմում: Այնուհետև, Վերաքննիչ դատարանը, համաձայնվելով Դատարանի եզրահանգումների հետ, 29.06.2012 թվականի որոշմամբ արձանագրել է, որ Կոտպերատիվը բաց է թողել հակընդդեմ հայց ներկայացնելու ժամկետը, ինչի հետևանքով էլ նշված վճարման կարգադրությունն ստացել է օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով Կոտպերատիվը դեռևս 25.01.2012 թվականին հայցադիմում է մուտքագրել Դատարան՝ Երևանի քաղաքապետի 23.11.2011 թվականի թիվ Վ-38/15 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Նշված հայցադիմումը Դատարանի 26.01.2012 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ (գործ թիվ ՎԳ/0348/05/12, դատավոր՝ Ա. Դարբիկյան), Երևանի քաղաքապետարանի հայցադիմումը վճարման կարգադրություն արձակելու մասին Դատարան մուտք է եղել 26.01.2012 թվականին, իսկ Դատարանի 15.02.2012 թվականի որոշմամբ արձակվել է վճարման կարգադրություն, այսինքն՝ Դատարանը վճարման կարգադրություն արձակել է այն ժամանակ, երբ Կոտպերատիվի հայցադիմումը՝ Երևանի քաղաքապետի 23.11.2011 թվականի թիվ Վ-38/15 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, արդեն գտնվել է նույն դատարանի մեկ այլ դատավորի վարույթում:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետի 23.11.2011 թվականի թիվ Վ-38/15 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումի առկայության պայմաններում այդ ակտի հիման վրա վճարման կարգադրություն արձակվել էր կարող, քանի որ տվյալ դեպքում առկա չէ վճարման կարգադրության վարույթի այնպիսի հատկանիշ, ինչպիսին է Երևանի քաղաքապետի 23.11.2011 թվականի թիվ Վ-38/15 որոշման և դրա հիման վրա Կոտպերատիվի տնօրեն Աշոտ Սուքիասյանից 772.800 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի անվիճարկելիությունը: Այսինքն՝ մինչև վճարման կարգադրության հայցադիմումի ներկայացումն արդեն այդ ակտի վիճարկման հայց է ներկայացվել դատարան, որպիսի հանգամանքի առկայության պարագայում գործի քննությունը կարող էր իրականացվել միայն հայցային վարույթի կարգով:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը վճարման կարգադրության դեմ ներկայացված բողոքի ընթացքի հետ կապված հարցը լուծել է միանձնյա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վարչական վերաքննիչ դատարանում գործն ըստ էության լուծող վարչական դատարանի դատական ակտի դեմ բողոքները քննվում են կոլեգիալ, իսկ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի դեմ բողոքը՝ միանձնյա, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով:

Նույն օրենսգրքի 117.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող վարչական դատարանի դատական ակտի դեմ բողոքները քննվում են կոլեգիալ՝ 3 դատավորի կազմով, իսկ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով ներկայացված բողոքները՝ 5 դատավորի կազմով:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության և սույն որոշման մեկնաբանությունների համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճարման կարգադրությունների դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները, որպես գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ ներկայացված բողոքներ, ենթակա են քննության կոլեգիալ կազմով:

Մինդեռ սույն գործի փաստերից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը Դատարանի 15.02.2012 թվականի վճարման կարգադրության դեմ ներկայացված բողոքը վերադարձրել է միանձնյա կայացված որոշմամբ՝ անտեսելով վերը նշված կանոնակարգումները:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ Վերաքննիչ դատարանի կողմից հակընդդեմ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը, տառացի իրավական մեկնաբանմամբ անփոփոխ թողնելու դեպքում, սույն որոշման մեկնաբանությունների համատեքստում գրկում է բողոքաբերին իր իրավունքների դատական պաշտպանության իրավունքից: Նման մոտեցումն արդարացված չէ և նվազեցնում է արդարադատու-

թյան արդյունավետությունը: Մինչդեռ վերջինս պայմանավորում է այնպիսի միջոցների կիրառում և պայմանների ստեղծում, որ յուրաքանչյուր անձ ոչ միայն իրավաբանորեն, այլև գործնականում հնարավորություն ունենա իրացնելու անկախ և անաչառ դատարանի առջև լաված լինելու իրավունքը:

Նշված պատճառաբանությունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը պետք է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների հաշվառմամբ վերաքննիչ բողոքի պատշաճ քննություն իրականացնելու նպատակով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.9-րդ, 118.15-րդ և 118.17-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 12 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 700 օրինակ:

ԷԶԱԴՐՈՒՄ և ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ **Printinfo**
www.printinfo.am

ՀՀ, Երևան, Ծարուրի 37/1
հեռ.՝ (374 10) 465 382, 465 385
Էլ.փոստ՝ info@printinfo.am